


Հ Ա Շ Կ Ե Տ Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**2014 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 3**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԱԿԱՆԻՆ.....44** **ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2014**

**ՀՀ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԸ.....58**

    ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ և ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ..... 60

    ՊԵՏՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ..... 73

    ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ ..... 75

**ՀՀ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ .....77**

    ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ..... 77

    ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ ..... 77

    ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 79

    ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ..... 81

    ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 81

    ՊԵՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ..... 102

    ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ և ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆ ..... 103

    ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 106

    ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԵՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ..... 146

    ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԵՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ և ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 153

    ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ..... 159

    ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ և ԿՐՈՆ ..... 177

    ԿՐԹՈՒԹՅՈՒՆ..... 193

    ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ..... 211

    ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍԿՈՂ ՊԱՀՈՒՄՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ..... 226

    ՀՈՒՅԺ ԳԱՐՏԻ ..... 226

**ՀՀ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ..... 227**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ.....266**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ.....267**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ (գործառնական դասակարգմամբ).....268**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ (տնտեսագիտական դասակարգմամբ).....273**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ԿԵՐԱԲԵՐՅԱԼ .....277**

**ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....281**

**ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ.....121**

6

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ..... 1314**

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ (ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՐՈՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՄԲ).....2697**

**2014 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Արդյունաբերության ոլորտ**

ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակներում իրականացվում են 8 ոլորտային ռազմավարությունների (կոնյակագործություն, գինեգործություն, ճշգրիտ ճարտարագիտություն, դեղագործություն ու բիոտեխնոլոգիաներ, ոսկեգործություն, ադամանդագործություն, ժամագործություն և թեթև արդյունաբերություն) գործողությունների ծրագրերով նախատեսված աշխատանքները: 2014 թվականի պետական աջակցության ծրագրի շրջանակներում Արտադրական գործունեության վարկավորման գործիքով բավարարվել է 20 ընկերության հայտ, միջազգային սերտիֆիկացման համաֆինանսավորում գործիքով բավարարվել է 6 ընկերության 11 հայտ, ապահովվել է 68 ընկերությունների մասնակցությունը միջազգային 8 ցուցահանդեսների, կազմակերպվել են ավելի քան 70 մասնագետների վերապատրաստման դասընթացներ:

200 մլն դրամը գերազանցող ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծված սարքավորումների ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման նպատակով 2014 թվականի ընթացքում ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել 11 ներդրումային ծրագիր՝ 29.6 մլրդ ՀՀ դրամ ներդրումային ակնկալիքով: «Ժամանակավոր ներմուծում» ռեժիմի շրջանակում 2014 թվականի ընթացքում հավանության են արժանացել 17 ընկերությունների թվով 18 ծրագրեր, հետաձգվել են 6.8 մլրդ ՀՀ դրամ մաքսային արժեքով ապրանքների մաքսային վճարներ:

**Գործարար և ներդրումային միջավայրի բարելավումներ և ՓՄՁ զարգացմանն աջակցություն**

Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 2014 թվականի ծրագրի իրագործման շրջանակներում աշխատանքներ են իրականացվել՝ կապված թղթային եղանակով շրջանառվող փաստաթղթերի թվի և դրանց պատրաստման ժամանակի կրճատման, գույքահարկի և հողի հարկի համար մեկ միասնական հարկատեսակ սահմանելու, սնանկության գործընթացների քարտեզագրման, հարկ վճարողներին առավել պահանջված հարկային և մաքսային մարմինների սպասարկման ծառայությունները հասանելի դարձնելու, հարկ վճարողների համար դրամարկղային գրքերն էլեկտրոնային եղանակով վարելու հնարավորության ապահովման, շինարարության թույլտվությունների տրամադրման պարզ և հստակ համակարգի սահմանման, դատական համակարգի արդյունավետության բարձրացման, դատարանների կողմից մատուցված ծառայությունների բարելավման, առևտրային վեճերի դատական լուծման և կիրարկման վրա ծախսվող ժամանակի և ընթացակարգերի կրճատման հետ:

Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը 2015» զեկույցի տվյալներով Հայաստանը 189 երկրների շարքում զբաղեցնում է 45-րդ տեղը՝ բարելավվելով իր դիրքը 4 տեղով:

ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել Հայաստանում տեսչական համակարգի օպտիմալացման հայեցակարգը և գործողությունների համառոտ ծրագիրը: ՀՀ ԱԺ-ի

կողմից ընդունվել է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթը: Աշխատանքներ են տարվել ՀՀ ԿԳՆ Լեզվի պետական տեսչությունում ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ներդրման ուղղությամբ: Շահագրգիռ կողմերի հետ քննարկվել և լրամշակվել է «Ստուգումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, աշխատանքներ են տարվել մի շարք ոլորտային օրենքների ուղղությամբ:

Մշակվել են «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերի նախագծերը: Ստեղծվել է «Մերիդիան» ոսկերչական, ակնագործական և ժամագործական ազատ տնտեսական գոտին: «Ալյանս» ազատ տնտեսական գոտու շահագործողի թույլտվություն են ստացել «ԷՌԱ ՊՊ» ՍՊԸ-ն՝ լուսադիոդային սարքերի արտադրության ոլորտում, «ՖԱՐՄԱՏԵՔ» ՓԲԸ-ն՝ դեղագործության ոլորտում, «ԼԻՖՏՏԵԽՆԻԿ» ՍՊԸ-ն՝ վերելակների նախագծման և արտադրության ոլորտում:

Ստեղծվել է ՀՀ-ում ներկայումս իրականացվող ներդրումային ծրագրերի նախնական շտեմարան: Մոտ 60 ներդրումային ծրագրեր և առաջարկներ ՀՀ ԱԳՆ միջոցով փոխանցվել են ՀՀ արտասահմանյան դիվանագիտական ներկայացուցչություններին և ներկայացվել են օտարերկրյա ներդրողներին:

Փարիզում ՏՀԶԿ Եվրասիական շաբաթ 2014-ի շրջանակներում տեղի է ունեցել գործարար համաժողով, որտեղ ՀՀ էկոնոմիկայի նախարարը ներկայացրել է Հայաստանի տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները, ներդրումային միջավայրը և գործարար հնարավորությունները: ՏՀԶԿ հետ համատեղ իրականացրած աշխատանքների արդյունքում ներկայացվել է մրցունակության բարեփոխումների փորձագիտական գնահատման (peerreview) Հայաստանի զեկույցը «Անդրազգային ընկերությունների ներգրավում և Հայաստանի ՓՄՁ միջև կապերի ստեղծում շինարարական նյութերի ոլորտում» և «Հայաստանի ՓՄՁ-ները համաշխարհային արժեքի շղթային կապակցելը. անդրադարձ ազդոթիզմեսին» ոլորտներում:

ԱՄՆ ՄՁԳ Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության ծրագրի հետ համատեղ մշակվել և հրապարակվել են Դեղագործության և Սննդի վերամշակման ներդրումային ուղեցույցներ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության նախաձեռնությամբ ԱԶԲ Երկրի գործառնությունների գործարար ծրագրում ընդգրկվել են «Միջազգային ներդրումային ֆորում. Հայաստան» և «Արդյունաբերության զարգացման աջակցություն» տեխնիկական աջակցության ծրագրերը: Միջազգային ներդրումային ֆորումի իրականացման հետ կապված աշխատանքներն ընթացքի մեջ են:

ՓՄՁ պետական աջակցության 2014 թվականի ծրագրի շրջանակներում ֆինանսական (վարկային) և տեխնիկական աջակցության ուղղություններով 2014 թվականի ընթացքում 6200 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտի ցուցաբերվել է 14688 աջակցություն, որի շուրջ 90%-ը՝ ՀՀ մարզերում, առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում: Մասնավորապես՝ ցուցաբերվել է 13064 տեղեկատվական և խորհրդատվական, 500 ուսուցողական աջակցություն, 536 սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն, 235 վարկային երաշխավորությունների տրամադրում, 154 Ձեռնարկությունների եվրոպական ցանցի

հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում աջակցություն, 18 ոլորտային աջակցություն, 18 ոլորտային աջակցության ծրագրի շրջանակներում դրամաշնորհների տրամադրում:

***Արտահանման խթանում և զարգացման նպաստավոր պայմանների ապահովում***

Արտահանման արդյունավետ շուկաներ մուտքի հնարավորությունների ընդլայնում

Իրագործվել են Հայաստանի՝ Մաքսային միությանը և Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Ղաշնության միասնական տնտեսական տարածքին միանալու միջոցառումների ծրագրով («Ճանապարհային քարտեզով») մինչև ՀՀ անդամակցությունը նախատեսված 126 միջոցառումները: Շարունակական աշխատանքներ են տարվել ՀՀ նորմատիվաիրավական դաշտը Եվրասիական Տնտեսական Միության (ԵԱՏՄ) նորմատիվաիրավական դաշտին համապատասխանեցնելու ուղղությամբ: Համաձայնեցվել է այն ապրանքների և դրույքաչափերի ցանկը, որոնց նկատմամբ անցումային շրջանի ընթացքում ՀՀ հանդեպ կիրառվելու են միասնական մաքսային սակագների դրույքաչափերից տարբերվող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր:

Եվրոպական Միության (ԵՄ) կողմից «Շուկայական տնտեսության կարգավիճակ» ստանալու նպատակով եվրոպական կողմին է ներկայացվել համապատասխան չափանիշներին բավարարման վերաբերյալ ներկայացված հարցաշարի ամբողջական պատասխանը: Եվրոպական հանձնաժողովի (ԵՀ) կողմից մեկնարկել է ԵՄ «Արտոնությունների ընդլայնված և համալրված համակարգ (GSP+)» արտոնյալ առևտրային ռեժիմի մոնիտորինգի առաջին փուլը, որի շրջանակներում եվրոպական կողմին է ներկայացվել ռեժիմից օգտվելու նախապայման հանդիսացող 27 միջազգային կոնվենցիաների՝ ՀՀ-ում իրականացման ընթացիկ իրավիճակի վերաբերյալ համապարփակ գեկույց:

Բանակցվել և ստորագրվել են «Աջակցություն գյուղատնտեսության և գյուղի զարգացմանը» 2013թ. Բյուջետային աջակցության ֆինանսավորման համաձայնագիրը՝ 25 մլն եվրո արժեքով, Լրացում ԵՄ Բյուջետային աջակցության 2011թ. ֆինանսավորման համաձայնագրում՝ 21 մլն եվրո արժեքով: Բանակցվել և ստորագրվել է ԵՄ տեխնիկական աջակցության 4 համաձայնագիր՝ 21 մլն եվրո ընդհանուր արժեքով, որոնք վերաբերում են տարածքային զարգացմանը, միջուկային ոլորտի համագործակցությանը, միգրացիայի և սահմանների կառավարմանն աջակցությանը և ԵՄ-Հայաստան համաձայնագրերի իրականացմանն աջակցելուն: ԵՄ Բյուջետային աջակցության համատեղ կառավարման խորհրդի անդրանիկ նիստում ամփոփվել են ԵՄ բյուջետային աջակցության շրջանակներում իրականացված աշխատանքները, և հստակեցվել են հետագա անելիքները:

2014 թվականին ԵՄ հետ ստորագրվել է 2014-2017թթ. Հայաստանին տրամադրվելիք աջակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր, որով նախատեսվում է 140-170 մլն եվրոյի աջակցություն:

Ավարտվել է 6, մեկնարկել՝ 2, պայմանագրի մշակման փուլում է 1, մեկնարկի նախապատրաստական փուլում են 4 թվինինգ ծրագրեր: Թայեքս ծրագրերի մասով ստացվել է 20 հայտ, իրականացվել են 6 միջոցառումներ: Մեկնարկել են 2 Սիգմա ծրագրեր:

Անց են կացվել միջկառավարական հանձնաժողովների 3 նիստեր, իրականացվել են 80 երկկողմ և 17 բազմակողմ համաձայնագրերի կնքման, փորձաքննության և վավերացման ուղղությամբ համապատասխան աշխատանքներ:

#### Արտահանմանն աջակցող ինստիտուցիոնալ դաշտի կատարելագործում

ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի նիստում ընդունվել է «Արդյունաբերության զարգացման և Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամները միաձուլման ձևով վերակազմակերպելու և Հայաստանի զարգացման հիմնադրամ ստեղծելու, «Զարգացման հայկական գործակալություն» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» ՀՀ կառավարության որոշումը: 2014թ. դեկտեմբերի 17-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է ՀՀ և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված «Առևտրի խթանում և որակի ենթակառուցվածքներ» վարկային համաձայնագիրը:

#### ԵԱՏՄ-ի շրջանակներում իրավական կարգավորումների և պայմանների վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտներին խորհրդատվական և տեղեկատվական աջակցություն

2014 թվականին Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության հետ համատեղ կազմակերպվել են խորհրդակցություններ, քննարկումներ և աշխատաժողովներ՝ նվիրված ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցության, ԵԱՏՄ երկրներ Հայաստանի արտահանման հարցերին, որոնց մասնակցել են հասարակական կազմակերպություններ, գործարար համայնքի ներկայացուցիչներ:

#### ***Ինովացիոն գործունեության աջակցություն և խթանում***

Հաշվետու տարում տեղի է ունեցել Բիզնես ինովացիոն ֆորումը, որտեղ բացահայտվել են Հայաստանում ինովացիոն զարգացման մարտահրավերների, տեխնոլոգիական ոլորտում կրթության և աշխատուժի, ինչպես նաև տեխնոլոգիական ձեռներեցության հիմնախնդիրները և քննարկվել դրանց հաղթահարման ուղիները:

Գործարկվել է Գյումրու տեխնոլոգիական կենտրոնը, և կենտրոնի հիմնանորոգված շենք են տեղափոխվել ժամանակավոր (վարձակալված) տարածքում գործող լաբորատորիաները և մի շարք տեղական ու միջազգային ընկերություններ: Սեպտեմբերի 13-ին ՀՀ նախագահի մասնակցությամբ տեղի է ունեցել կենտրոնի պաշտոնական բացումը: Կենտրոնում ներկայումս տեղակայված են «Դ-Լինկ», «Դիջիթալ Փոնդգրաներ», «ՋիէնՍի-Ալֆա», «Ի-Վորքս», «Skyline ստուդիա», «Թայմ Փրոդաքշըն», Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն, «Գյումրու լեզուների տուն» կազմակերպությունները: ԳՏԿ-ն նախաձեռնել է «Start-up ակումբը», որի նպատակն է զարգացնել ձեռներեցությունը երիտասարդների շրջանում: Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում կազմակերպվել են մասնագիտական դասընթացներ, որոնց մասնակցել են 810 ուսանողներ և

մասնագետներ: Բիզնես աջակցություն ու խորհրդատվություն է տրամադրվել 176 ընկերությունների և թիմերի: ԳՏԿ-ում իրականացվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ Գյումրիում առաջին միջազգային խոշոր տեխնոլոգիական «iGyumri» համաժողովը:

Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնում Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի (ՀԱՄՀ) հետ համագործակցության շրջանակում Լուվենի կաթոլիկ համալսարանի (Բելգիա) հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոնում արտադրվելիք FDG [18F] իզոտոպը համալսարանի բժշկական դպրոցի նեյրոֆիզիոլոգիական լաբորատորիայի փորձերում օգտագործելու՝ Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի մասնագետների ներգրավմամբ, ինչպես նաև բժշկական անձնակազմի հատուկ ուսուցման և վերապատրաստման վերաբերյալ:

Կազմակերպվել է «Ցիկլոտրոն ծրագրի վերաբերյալ» պայմանագրի ֆինանսավորման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության (Վարկառու) և «KBC NV» բանկի (Վարկատու) միջև 2010թ. նոյեմբերի 23-ին կնքված վարկային համաձայնագրի վերջնաժամկետի երկարացումը:

ՀԱՄՀ առողջապահական գրասենյակի ղեկավարն այցելել է ՌԴ առողջապահության նախարարության Բժշկական ռադիոլոգիական հետազոտությունների կենտրոն (ք.Օբնինսկ): Պայմանավորվածություններ են ձեռք բերվել կենտրոնի բժշկական անձնակազմին գիտելիքների, փորձի և հմտությունների փոխանցման, հատուկ ուսուցման, վերապատրաստման և որակավորման բարձրացման վերաբերյալ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և IBA ընկերության միջև 2010թ. նոյեմբերի 23-ին կնքված «Ցիկլոտրոն ծրագրի վերաբերյալ» պայմանագրի շրջանակում մատակարարվող SPECT-CT համակցված համակարգը դեկտեմբերի 9-ին բերվել է Հայաստան:

«ԱՊՀ մասնակից պետությունների ինովացիոն ոլորտում մինչև 2020 թվականն ընկած ժամանակահատվածը համագործակցության միջպետական ծրագրի» շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում ձևավորել է Ազգային կոնտակտային կենտրոն, ապահովվել է ԱՊՀ երկրների Գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի 13-րդ և 14-րդ նիստերին մասնակցությունը և տեղի է ունեցել ծրագրի իրականացման 2015-16թթ. միջոցառումների նախագծի և ծրագրի շրջանակում երիտասարդական քաղաքականության հարցերի քննարկում:

### ***Ձրոսաշրջություն***

Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի հետ համագործակցության շրջանակում՝

Տպագրվել են Հայաստանը և հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնող անգլերեն լեզվով բրոշյուրներ և քարտեզներ: Բարելավվել և թարմացվել է [www.armeniainfo.am](http://www.armeniainfo.am) կայքը: «Գեղարդի հովտի ագրոտուրիզմի զարգացում» ՀԿ հետ համատեղ ապահովվել են Գառնիում գտնվող այցելուների տեղեկատվական կենտրոնի աշխատանքները: Ապահովվել է ՀՀ մասնակցությունը թվով 9 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսների: Ավանդական

տոնակատարությունների մասով անցկացվել են 6 փառատոններ: Երևանում նշվել է Զբոսաշրջության միջազգային օրը: Զբոսաշրջության ոլորտում նշանակալի ավանդ ներդրած կազմակերպություններ և անձինք պարգևատրվել են ՀՀ վարչապետի և ՀՀ էկոնոմիկայի նախարարի շնորհակալագրերով, ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ոսկե մեդալով»:

Մարդկային ռեսուրսների զարգացման ուղղությամբ «Հայ զբոսավարների գիլդիա» ՀԿ և Զբոսավարների ասոցիացիաների համաշխարհային ֆեդերացիայի միջև ստորագրվել է «Երևանում Զբոսավարների միջազգային ուսումնական կենտրոնի հիմնման մասին» համաձայնագիրը:

Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման և պարբերական գնահատման գործընթացի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները. «Արարատ» և «Օլիմպիա» հյուրանոցներում իրականացվել է հյուրանոցների որակավորման և վկայականների երկարաձգման գործընթաց: Դիլիջանում գտնվող «Մագնիտ» զբոսաշրջային տանը շնորհվել է «III կարգի զբոսաշրջային տուն» որակավորման կարգ, Երևանում գտնվող «Նոր Զորաբերդ» հյուրանոցին շնորհվել է «2 աստղ» որակավորման կարգ:

Միջազգային համագործակցության շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Փետրվարի 20-21-ը Երևանում կայացավ Հայաստանի և Իրանի միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության տեխնիկական հանձնաժողովի երկրորդ նիստը, որի ընթացքում քննարկվեցին զբոսաշրջության բնագավառում համագործակցության ամրապնդման նպատակով համապատասխան փաստաթղթի ստորագրման հարցեր:

Հունիսի 3-ին ՀՀ էկոնոմիկայի և ՀՀ արտաքին գործերի նախարարությունների, Լիբանանում Հայաստանի և Հայաստանում Լիբանանի դեսպանությունների աջակցությամբ և Հայաստանի ներգնատուրօպերատորների միության հրավերով Հայաստան է այցելել Լիբանանի զբոսաշրջային օպերատորների միության պատվիրակությունը:

Ադրբեջանի կողմից ներկայացված հակադարաբաղյան բանաձևի ընդունումը կանխելու ուղղությամբ 2014 թվականի հոկտեմբերի 1-4-ը Հայաստանի պատվիրակությունը Ուզբեկստանի Սամարղանդ քաղաքում մասնակցել է ՄԱԿ Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության Գործադիր Խորհրդի 99-րդ նստաշրջանի աշխատանքներին: Օրակարգում ներառված բանաձևի նախագծի միջոցով փորձ է արվել արգելափակել ԼՂՀ մասնակցությունը զբոսաշրջային ցուցահանդեսներին և այլ միջոցառումներին՝ միաժամանակ սահմանափակելով կամ արգելելով նրանց ներկայացումը որպես զբոսաշրջավայր: Կատարված համատեղ աշխատանքի արդյունքում օրակարգից հանվել է ադրբեջանական կողմի նախագիծը: Հարցի քննարկումը փոխանցվել է ՄԱԿ ԶՀԿ էթիկայի հանձնաժողովին:

Դեկտեմբերի 9-ին հաստատվել է «ՀՀ կառավարության և Վրաստանի կառավարության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը: Ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության և Սերբիայի Հանրապետության առևտրի, զբոսաշրջության և հեռահաղորդակցության նախարարության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիրը: Հայաստանը մասնակցել է Սևծովյան Տնտեսական Համագործակցության զբոսաշրջության նախարարների համաժողովին:



***Քաղաքացիական ավիացիայի ոլորտի բարեփոխումներ***

**Քաղաքացիական ավիացիայի ոլորտում ինստիտուցիոնալ նոր կարգավորման ամրագրում**

Ավիացիայի ոլորտի նկատմամբ պետական վերահսկողության նոր ինստիտուցիոնալ կառուցվածք սահմանելու նպատակով ՀՀ կառավարության որոշումներով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրությամբ ամրագրվել են համապատասխան գործառույթներ ու իրավասություններ, ինչպես նաև հստակեցվել են բնագավառում ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության լիազորությունները: Մշակվել է «Ավիափոխադրողի մասնագրի, կանոնավոր և ոչ կանոնավոր օդային փոխադրումների իրականացման, օդային ուղու շահագործման թույլտվությունների ստացման համար ներկայացված հայտերի քննարկման հետ կապված հարցերով խորհուրդ ստեղծելու, դրա աշխատակարգը և անհատական կազմը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Մշակվել և այժմ քննարկման փուլում է «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

**Քաղաքացիական ավիացիայի բնագավառում միջազգային իրավապայմանագրային հարաբերությունների վերանայում**

Նոյեմբերի 16-23-ը Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) հովանու ներքո Ինդոնեզիայում կայացած Օդային հաղորդակցությունների շուրջ բանակցությունների կոնֆերանսի շրջանակներում ՀՀ պատվիրակությունը բանակցություններ է վարել 13 պետության և ԵՄ Հանձնաժողովի պատվիրակության հետ: 11 գործընկեր պետության (Կատարի Պետություն, Լեհաստանի Հանրապետություն, Իսլանդիայի Հանրապետություն, Նիդերլանդների Թագավորություն, Քուվեյթի Պետություն, Շվեյցարիայի Համադաշնություն, Նորվեգիայի Թագավորություն, Հունաստանի Հանրապետություն, Հորդանանի Հաշիմյան Թագավորություն, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Թաիլանդի Թագավորություն) հետ ավիացիոն իշխանությունների միջև համաձայնությամբ հնարավորինս (կախված գործընկեր պետության որդեգրած ավիացիոն քաղաքականությունից) վերացվել են տարողության, ուղղությունների և հաճախականությունների սահմանափակումները, և ձեռք են բերվել պայմանավորվածություններ միջկառավարական համաձայնագրերի վերանայման շուրջ՝ դրանցում առկա սահմանափակումների վերացման նպատակով: Սինգապուրի Հանրապետության և Ավստրալիայի Միության ավիացիոն իշխանությունների հետ հանդիպման արդյունքում քննարկվել է օդային հաղորդակցությունների հաստատման հնարավորությունը: Եվրոպական Միության հետ Ընդհանուր ավիացիոն գոտու մասին համաձայնագրի կնքումը քննարկման փուլում է, 2015 թվականի փետրվարին տեղի է ունեցել ԵՀ Շարժունակության և Տրանսպորտի հարցերով գլխավոր տնօրինության փաստաթղթի ամրապնդման այցը ՀՀ:

***Գյուղատնտեսություն***

Ելնելով ոլորտի առանձնահատկություններից և երկրի պարենային անվտանգության խնդիրներից՝ 2014 թվականին շարունակվել է գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականությունը՝ ուղղված ագրարային ոլորտում իրավական հիմքի կատարելագործմանը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գործունեության բարենպաստ պայմանների ապահովմանը, գյուղատնտեսության սպասարկմանը, ենթակառուցվածքների ու անտառային տնտեսության զարգացմանը:

Վերջին տարիներին ծրագրավորված աջակցություն է ցուցաբերվել տնտեսավարող սուբյեկտներին բարձրորակ սերմերի, տոհմային և մթերատու բարձր հատկանիշներ ունեցող կենդանիների, հանքային պարարտանյութերի, դիզելային վառելանյութի մատչելի գներով մատակարարման, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման և այլ ուղղություններով:

2014 թվականին շարունակվել է գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացման միտումը: 2014 թվականին ցանքատարածությունը կազմել է 332.8 հազ. հա, որը գերազանցել է 2013 թվականի մակարդակը 14.7 հազ. հա-ով: Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը կազմել է 74.2 , նախորդ տարվա 71.0%-ի դիմաց:

Վերջին տարիներին որոշակիորեն բարձրացել է հացահատիկային տնտեսության և այգիների ինտենսիվացման մակարդակը: Դա պայմանավորված է սերմնաբուծության և սերմնապահվության վիճակի նկատելի բարելավման, խաղողի և պտղի իրացման հիմնախնդրի որոշակի լուծման, մասնավորապես՝ թարմ բուսաբուծական մթերքների արտահանման հնարավորությունների ընդլայնմամբ:

2014 թվականին էական (7.8%) աճ է գրանցվել անասնապահական մթերքների արտադրության բնագավառում:

Գործող վերամշակող ընկերությունների կայուն գործունեության արդյունքում որոշակիորեն բարելավվել է գյուղատնտեսական մթերքների իրացման վիճակը: 2014 թվականին հնարավորություն է ստեղծվել գնելու գյուղացիական տնտեսությունների կողմից առաջարկվող պտղի, բանջարեղենի և խաղողի որջ քանակությունը: 2014 թվականին մթերվել և վերամշակվել է 232.1 հազ.տոննա պտուղ-բանջարեղեն և խաղող, որը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 8.2 հազ. տոննայով կամ 3.6%-ով:

Շնորհիվ գյուղատնտեսական հումք արտադրողների և վերամշակող կազմակերպությունների միջև պայմանագրային հարաբերությունների արմատավորման, ապրանքի դիմաց վճարումները 2014 թվականին իրականացվել են գրեթե ամբողջությամբ՝ պտղի համար կազմելով 98.9%, իսկ խաղողի համար՝ 99.7%:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության առջև ծառայած խնդիրների լուծումները բխում են Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրից և «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունից»: Այդ խնդիրներից առանձնանում են՝

- Տնտեսավարման ձևերի, մասնավորապես՝ գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացում,

- Պարենային ապահովության մակարդակի բարձրացում, սննդամթերքի անվտանգության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացում,

- Տեղական արտադրության գյուղատնտեսական արտադրանքների մրցունակության բարձրացում, ըստ նպատակահարմարության ներմուծվող պարենամթերքների փոխարինում և արտահանման ուղղվածություն ունեցող գյուղատնտեսության զարգացում,

- Սննդամթերքի անվտանգության ապահովում,

- Հողօգտագործման արդյունավետության բարձրացում,

- Բուսաբուծության զարգացում, մասնավորապես՝ ագրոտեխնիկական առաջադիմական տեխնոլոգիաների ներդրում, բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի մշակության ընդլայնում, սելեկցիայի և սերմնաբուծության համակարգի զարգացում, սերմերի որակի հսկողության գործուն մեխանիզմների կիրառում, բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում,

- Անասնաբուծության զարգացում, մասնավորապես՝ տոհմային գործի զարգացման և հոտի վերարտադրության համալիր միջոցառումների իրականացում, անասնաբուծության համակարգի բարելավում և անասնաբուծական միջոցառումների արդյունավետության բարձրացում, անասնապահության կերի բազայի զարգացում,

- Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների զարգացում և արտադրության տեխնիկական հագեցվածության բարձրացում,

- Գյուղատնտեսական ռիսկերի մեղմացում,

- Ագրարային ոլորտի վարկավորման համակարգի կատարելագործում,

- Ագրարային ոլորտի խորհրդատվական համակարգի բարելավում,

- Գյուղատնտեսության հաշվառման համակարգի կատարելագործում:

Վերը նշված խնդիրների լուծումը կնպաստի գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գործունեության բարենպաստ պայմանների ստեղծմանը, արտադրության արդյունավետության բարձրացմանը:

2014 թվականին գյուղատնտեսության ոլորտում բյուջետային ծրագրերը շարունակվել են ուղղվել հետևյալ կոնկրետ նպատակների իրականացմանը.

- Հացահատիկային տնտեսության և հացահատիկային կերային մշակաբույսերի սերմնաբուծության զարգացում ու ինքնաբավության մակարդակի բարձրացում,

- Հողերի բերրիության պահպանում և բարձրացում,

- Բույսերի վնասակար օրգանիզմների բազմացման, զարգացման ու տարածման հետազոտությունների և պայքարի աշխատանքների կազմակերպման միջոցով դրանց տարածման շրջանակների նվազեցում և հետագա կանխարգելում,

- Գյուղատնտեսությունում տրամադրվող վարկերի մատչելիության բարձրացում (տոկոսադրույքի սուբսիդավորում),

- Գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների (հանքային պարարտանյութ, դիզելային վառելանյութ) մատչելիության բարձրացում,

- Կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պահպանություն և գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացում՝ կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելիչ պատվաստումների իրականացում, տոհմասելեկցիոն աշխատանքների կազմակերպում,
- Պարենային ապահովության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացում,
- Անտառային տնտեսության զարգացում, անտառպահպանության արդյունավետության բարձրացում՝ անտառվերականգնման աշխատանքների ծավալների մեծացում, անտառշինական նախագծերի կազմում, անտառային տարածքներում բույսերի պաշտպանության կենտրոնացված միջոցառումների իրականացում,
- Գյուղատնտեսությունում կայունացման և հետագա զարգացման նախադրյալների ստեղծում:

### *Սոցիալական պաշտպանություն*

2014 թվականը կարելի է համարել բեկումնային տարի արդյունավետ սոցիալական պաշտպանության համակարգերի ստեղծման, և ամենաբարդ տարին՝ բարեփոխումների իրականացման առումով, որոնք ուղեկցվեցին լարված բանավեճերով, բազմաբնույթ առաջարկներով և անհրաժեշտ հրատապ փոփոխություններով: Կարևորագույն ձեռքբերումն այն է, որ բոլոր դեպքերում՝ և՛ կուտակային կենսաթոշակային համակարգի, և՛ ժամանակավոր անաշխատունակության նպաստների, և՛ զբաղվածության նոր մոդելի շուրջ հանրային պահանջը հաշվի առնելու և բաց քննարկումների արդյունքում հնարավոր եղավ գտնել համապատասխան լուծումներ:

Տարվա երկրորդ կեսից սկսվեցին աշխատաշուկայի պետական կարգավորման նոր՝ ակտիվ ծրագրերի փորձարկման աշխատանքները: Շարունակական բնույթ են կրում կենսաթոշակառուներին մատուցվող ծառայությունների արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Ռազմավարական նոր մոտեցումներ են առաջարկվել հաշմանդամների հիմնախնդիրների ուղղությամբ: Շարունակվում են ուշադրության կենտրոնում մնալ մանկատների բեռնաթափման, մատուցվող ծառայությունների հասցեականության ու մատչելիության բարելավման, համակարգի կառավարման արդյունավետության բարձրացման, միջազգային համագործակցության ընդլայնման, տեղեկատվական բազաների արդիականացման հարցերը:

### Աշխատանք և զբաղվածություն

Զբաղվածության պետական կարգավորման ոլորտի բարեփոխումները նպատակ են հետապնդում պասիվ քաղաքականությունից անցում կատարել աշխատաշուկայի օբյեկտիվ

իրավիճակից բխող ձկուն քաղաքականության: «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքից բխող զբաղվածության քաղաքականության նոր մոդելի ներդրման համար ընթացիկ տարում ձևավորվել է ամբողջական ենթաօրենսդրական բազան: Նոր մոդելի ներքո գործում են պետական կարգավորման 13 ակտիվ ծրագրեր, այդ թվում՝ 5 նոր ծրագրերը ներդրվել են 2014 թվականի հուլիսից հետո: Զբաղվածության կարգավորման 2014 թվականի պետական ծրագրերում ընդգրկվել է 10406 անձ, իսկ ակտիվ ծրագրերում՝ 7296 աշխատանք փնտրող անձ, որոնցից 455-ը՝ հաշմանդամություն ունեցող: 2014 թվականին աշխատանքի է տեղավորվել 11495 անձ՝ աշխատանք փնտրողների 15.8%-ը: Աշխատանքի տեղավորվածներից 3319-ը երիտասարդներ են, իսկ 298-ը՝ հաշմանդամություն ունեցող անձինք: Գործազրկության մակարդակը 2014 թվականի 4-րդ եռամսյակում (ըստ ԱՎԾ-ի) կազմել է 17.8%:

Աշխատավարձի պետական կարգավորման նպատակով ընդունվել է «Նվազագույն աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով 2014 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձը սահմանվեց 50000 ՀՀ դրամ:

Ընդունվել է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի փաթեթը, որով ապահովվեց 2014 թվականի հուլիսի 1-ից պետական կառավարման մարմիններում ներդրվող վարձատրության միասնական համակարգի ամբողջական կիրառման մեխանիզմը: Բարեփոխումների արդյունքում պետական համակարգի շուրջ 162 հազար աշխատակիցների աշխատավարձերը բարձրացան միջինը 47%-ով:

Կանոնակարգման է ենթարկվել սոցիալական փաթեթի ծառայությունների տրամադրումը, ընդլայնվել է փաթեթի շահառուների շրջանակը: 2015 թվականի հունվարի 1-ից սոցիալական փաթեթի շահառուները անցնում են պարտադիր կանխարգելիչ բժշկական քննություն: Բացի այդ, տրամադրվող առողջապահական փաթեթում ընդգրկվել են նաև դժվարամատչելի հետազոտությունները՝ համավճարի սկզբունքով:

Հայաստանի կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով լրացումներ և փոփոխություններ են կատարվել նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքում: Սոցիալական գործընկերության հանրապետական մակարդակում աշխատանքներն է շարունակել Հանրապետական եռակողմ հանձնաժողովը:

#### Կենսաթոշակային ապահովություն

2014 թվականի հունվարի 1-ից ներդրվել է աշխատանքային կենսաթոշակների հաշվարկման նոր կարգ (բանաձև), ինչի արդյունքում հնարավոր եղավ ապահովել ցածր աշխատանքային կենսաթոշակ ստացող անձանց կենսաթոշակի չափի առաջանցիկ աճի տեմպ՝ համեմատաբար բարձր կենսաթոշակ ստացող անձանց կենսաթոշակի չափի նկատմամբ: Արդյունքում՝ ծայրահեղ աղքատության գծից ցածր աշխատանքային կենսաթոշակ ստացողների թիվը կնվազի շուրջ 32000-ով, իսկ միջին աշխատանքային կենսաթոշակը կավելանա մոտ 15%-ով:

2015 թվականի հունվարի 1-ից հիմնական կենսաթոշակի չափը սահմանվել է 16000 դրամ, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը՝ առաջին տասը տարվա համար 800 դրամ, տասը տարին գերազանցող յուրաքանչյուր տարվա համար՝ 500 դրամ: Արդյունքում՝ աշխատանքային կենսաթոշակի միջին չափը 2014 թվականի շուրջ 36000 դրամի փոխարեն 2015 թվականին կկազմի մոտ 41000 դրամ:

Ջինվորական կենսաթոշակների չափերի ավելացումն ի հաշիվ զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափի (14000 դրամից կդառնա 16000 դրամ) և զինվորական ստաժի մեկ տարվա արժեքի (1300 դրամից կդառնա 1500 դրամ) ավելացման, նախատեսվում է 2015 թվականի հուլիսի 1-ից:

Պետական պաշտոն զբաղեցրած անձանց վարձատրության նոր համակարգի ներդրման համատեքստում 2014 թվականի հուլիսի 1-ից նույնականացվել են առանձին կատեգորիայի պաշտոնատար անձանց տրվող սոցիալական երաշխիքների պայմաններն ու կարգը, վերանայվել է կենսաթոշակի (այդ թվում՝ զինծառայողների) չափը հաշվարկելու կարգը: Արդյունքում, մասնավորապես, զինվորական կենսաթոշակի միջին չափն ավելացել է շուրջ 15%-ով:

Առանձին կատեգորիայի կենսաթոշակառուների (զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների) սոցիալական պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու նպատակով 2014 թվականի օգոստոսի 1-ից 5000 դրամով ավելացվել է նրանց տրվող պարգևավճարի չափը:

2015 թվականի հունվարի 1-ից Հայրենական մեծ պատերազմում և Արցախյան ազատամարտում զոհված զինծառայողների ընտանիքների անդամների՝ մինչ այդ նշանակված 2 կենսաթոշակներից (կերակրողին կորցնելու դեպքում զինվորական և աշխատանքային կենսաթոշակ կամ սոցիալական նպաստ) մեկի՝ կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի փոխարեն նշանակվելում է պարգևավճար, որի չափը գերազանցում է նախկին կենսաթոշակի (նպաստի) չափը 40-50 տոկոսով:

Անցնող տարում ամբողջական ծանրաբեռնվածությամբ գործեց նորաստեղծ «Էլեկտրոնային կենսաթոշակ» համակարգը, որը հնարավորություն տվեց բեռնաթափել տվյալների բազաները սխալներից ու նվազագույնի հասցնել առաջիկայում հնարավոր սխալ մուտքագրումները: Արդյունքում միլիարդների հասնող խնայողությունները օգտագործվեցին քաղաքացիների համար պետական սոցիալական աջակցության մասնաբաժինը մեծացնելու նպատակով:

2014 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ նոր օրենքով վերջնական լուծում տրվեց օրենքի առանձին դրույթները ՀՀ Սահմանադրությանը համապատասխանեցնելու խնդրին:

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում ժամանակավոր անաշխատունակության (այդ թվում՝ հղիության և ծննդաբերության) դեպքում աշխատող անձանց տրվող նպաստին առնչվող իրավակարգավորումներում ներդրվել են նոր մեխանիզմներ: Բացի այդ, հղիության և ծննդաբերության նպաստը վերանվանվել է մայրության նպաստի և նախատեսվում է հղիության և ծննդաբերության դեպքում պետական աջակցություն ցուցաբերել նաև չաշխատող շուրջ 30000 կանանց:

### Սոցիալական աջակցություն

2014 թվականին պետական նպաստների բնագավառում կատարված փոփոխությունները նպատակ են ունեցել մեծացնել ծրագրերի հասցեականությունը՝ պահպանելով սոցիալական աջակցության տրամադրման սկզբունքները:

Շարունակվել են պետական նպաստների, այդ թվում՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում առցանց եղանակով ստացվող տվյալների շրջանակի ընդլայնմանն ուղղված աշխատանքները: 2014 թվականին ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված 134000 ընտանիքից ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստացել են ամսական միջինում 104130-ը՝ ընդհանուր հաշվառված ընտանիքների շուրջ 77.7%-ը, իսկ եռամսյակային հրատապ օգնություն՝ միջինում 8698 ընտանիք կամ ընդհանուր հաշվառվածների 6.5%-ը, նպաստի միջին չափը կազմել է 30350 դրամ (01.08.2014թ. նպաստի բազային մասը բարձրացել է 1000 դրամով): Ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքներին միանվագ դրամական օգնություն է տրվել երեխայի ծննդյան կապակցությամբ՝ 4934 ընտանիքի, երեխայի առաջին դասարան ընդունվելու կապակցությամբ՝ 10223 ընտանիքի, ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ 164 ընտանիքի: Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ է տրվել ամսական շուրջ 12500 ընտանիքի:

Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993թ. հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման իրավունք է տրվել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված «0»-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքների՝ մինչև 1929թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված անդամներին (վճարվել է 5128 ավանդատուների), ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակից (վճարվել է 1527 ավանդատուների), մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող՝ ՀՀ սահմանամերձ համայնքներում՝ բնակչության պետական ռեզիստրում 2014թ. օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված անձանց (վճարվել է 582 ավանդատուների):

Բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց կացարանների տրամադրման գործընթացի շրջանակներում 2014 թվականի ընթացքում կացարաններ են տրամադրվել 66 սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման փորձնական ծրագրի արդյունքներով՝ 2014 թվականին շարունակվել է մեկ պատուհանի սկզբունքով գործող 19 համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների (այսուհետ՝ ՀՄԾՏԿ) աշխատանքը, որոնք տեղակայվել են վերանորոգված, համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիաներով զինված շենքերում: Անհրաժեշտ աշխատանքներ են (համապատասխան տարածքներ ամրացնելու, անհատույց օգտագործման իրավունքով տարածքներ հատկացնելու, նախագծանախահաշվային և այլն) տարվում ևս շուրջ 20 ՀՄԾՏԿ-ներ տեղակայելու ուղղությամբ: ՀՄԾՏԿ-ն դիմումներն ընդունում է միասնական ընդունարանում, ունի փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ:

Փորձնական ծրագրի արդյունքների գնահատմամբ մշակվել և 2014 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունվել է նաև «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը:

#### Հաշմանդամների և տարեցների հիմնահարցեր

Մշակվել և ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որում հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բնագավառի քաղաքականության սկզբունքներն ու ուղղությունները բխում են սոցիալական ներառման նպատակից: Նախատեսվում է ներդնել անձի կարիքների և կարողությունների բազմակողմանի գնահատման վրա հիմնված նոր մոդել, որի շրջանակներում հաշվի կառնվեն անձի և շրջակա միջավայրի փոխհարաբերությունների վրա ազդող բոլոր գործոնները:

Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնմանն ուղղված միջոցառումներն արդյունավետ կազմակերպելու նպատակով կանոնակարգվել են վերականգնողական անհատական ծրագրի (ՎԱԾ) կազմման և դրանով նախատեսված միջոցառումների իրականացմանն առնչվող հարաբերությունները:

2014 թվականին իրականացվող պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամներին անվճար տրամադրվել են պրոթեզատրթոպեդիկ պարագաներ, սայլակներ, լսողական և ձայնաստեղծ սարքեր, աչքի պրոթեզ և այլ վերականգնողական պարագաներ: Տեսողությունը կորցրած անձանց համար իրականացվել է հատուկ տառատեսակներով գրքերի պատրաստման և խոսող գրքերի ձայնագրության ծրագիրը:

«Արթմեդ» բժշկական վերականգնողական կենտրոնում բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնման ծառայություն է ստացել 1030 անձ: Համաֆինանսավորման միջոցով պետական աջակցություն է ցուցաբերվել «Փրկություն» հասարակական կազմակերպությանը՝ մտավոր խնդիրներ ունեցող շուրջ 50 դեռահասի և երիտասարդի սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու համար:

2014 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշմանդամների հաշվառման հանրապետական շտեմարանում հաշվառված է 198619 հաշմանդամ: 2014 թվականի ընթացքում բժշկասոցիալական փորձաքննություն անցնելու նպատակով առողջապահական կազմակերպությունների կողմից ուղեգրվել է 17547 անձ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 352-ով: Նրանցից 4.4%-ին սահմանվել է հաշմանդամության 1-ին խումբ, 25.7%-ին՝ հաշմանդամության 2-րդ խումբ, 63.9%-ին՝ հաշմանդամության 3-րդ խումբ, իսկ 6.0%-ին՝ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ: Առաջին անգամ հաշմանդամ է ձանաչվել 15681 անձ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 689-ով: Առաջնակի մերժումների տոկոսը կազմել է 10.6%, որը նախորդ տարվա համեմատ աճել է 2.1%-ով:

Վերափորձաքննվել է 56293 անձ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 1224-ով, որոնցից 2.7%-ը վերափորձաքննության արդյունքում հաշմանդամ չեն ձանաչվել, որը նախորդ տարվա համեմատ աճել է 0.6%-ով:

Շարունակվել են տարեցների սոցիալական պաշտպանության բարելավմանն ուղղությամբ տարվող աշխատանքները, որոնց շրջանակներում նախատեսվում է ներդնել տարեցներին նոր,



Ժամանակակից մոտեցումների վրա հիմնված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության 4 տուն-ինտերնատում շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ է ստանում 1090 կենսաթոշակառու, իսկ ոչ պետական 4 տուն-ինտերնատում՝ 140 կենսաթոշակառու:

Քուվեյթի պետության կողմից նախարարությանը հատկացված դրամաշնորհային ծրագրի շրջանակում Երևանի թիվ 1 տուն-ինտերնատի տարածքում կառուցվում է անկողնային խնամք ստացող անձանց համար նախատեսված նոր մասնաշենք (կավարտվի 2015 թվականի հուլիսին): Արդյունքում կբարելավվեն 60 անկողնային խնամվողների կենցաղային և սոցիալական սպասարկման պայմանները:

Երևան քաղաքում տնային պայմաններում սպասարկվում է 1500 միայնակ տարեց ու հաշմանդամ քաղաքացի: Սոցիալական սպասարկման և խնամքի ծառայություններ են պատվիրակվել «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ին և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամին՝ համապատասխանաբար 4200 և 55 շահառուի համար:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 50 անձ սոցիալ-հոգեբանական վերականգնման ծառայություններ է ստանում Վարդենիսի հոգեկան առողջության ցերեկային կենտրոնում:

2014 թվականին համաֆինանսավորվել է հայ-դանիական «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ժամանակավոր կացարանում անօթևան մարդկանց շուրջօրյա խնամքի տրամադրման ծրագիրը, որի շրջանակում ապաստան և սնունդ է տրամադրվում շուրջ 100 անօթևան մարդու:

2014 թվականին ներդրվել է «Սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված և խնամք ստացող տարեցների ու հաշմանդամների հաշվառման տեղեկատվական համակարգը»:

#### Ուտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցեր

2014 թվականին շարունակվել է «Երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016թթ. ռազմավարական ծրագրով» նախատեսված միջոցառումների իրականացումը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող 6 մանկատանը խնամվել է առանց ծնողական խնամքի մանացած շուրջ 730 երեխա, որից 510 երեխա՝ 3 մասնագիտացված մանկատներում: Թեև ընդհանուր տիպի մանկատներում շարունակվում է նվազել խնամվող երեխաների թիվը, այդուհանդերձ, սոցիալ-տնտեսական ծանր պայմաններով թելադրված՝ ավելացել է առողջական խնդիրներ ունեցող երեխաների թիվը մասնագիտացված մանկատներում:

Հաստատություններից երեխաներին կենսաբանական ընտանիք վերադարձնելու (բեռնաթափում և կանխարգելում) ծրագրի շրջանակում Լոռու մարզում և 2014 թվականին՝ նաև Շիրակի մարզում, կենսաբանական ընտանիք է վերադարձել և կանխարգելվել է 100 երեխայի մուտքը հաստատություններ, ընտանիքներին տրամադրվել է դրամական օժանդակության փաթեթ՝ սննդի զամբյուղ, գրենական պիտույքներ և դասագրքեր, էներգետիկ ծառայությունների փոխհատուցում:

2014 թվականին «Հայաստանի Հանրապետության մանկատների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն» ծրագիրն իրականացվում է «Վանաձորի մանկատուն» և «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ների 18-23 տարեկան շրջանավարտների համար, 12 շրջանավարտի տրամադրվել է միանվագ դրամական օգնություն, իսկ 18-ին մատուցվել են մասնագիտական կողմնորոշման ծառայություններ, կազմակերպվել են ուսուցում, վերապատրաստում, բժշկական և իրավաբանական օգնության տրամադրում:

Երեխաների սոցիալական հոգածության 3 կենտրոնները ծառայություններ են տրամադրել ռիսկի ենթակա 6-18 տարեկան շուրջ 270 երեխայի և նրանց ընտանիքներին:

«Երևանի երեխաների «Ջատիկ» սոցիալական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան 13 երեխայի տրամադրվել է մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք:

Երեխաների խնամքի և պաշտպանության 8 գիշերօթիկ հաստատությունում խնամվել է սոցիալապես անապահով, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների դպրոցահասակ շուրջ 700 երեխա:

«Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության երեխաների 4 ցերեկային կենտրոնների կողմից (Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ) ծառայություններ են մատուցվել դժվար իրավիճակում հայտնված շուրջ 250 երեխայի:

Առանց ծնողական խնամքի մնացած 18 երեխա խնամվել է 16 խնամատար ընտանիքներում:

#### Ժողովրդագրության հիմնահարցեր

2014 թվականին կատարած աշխատանքները բխել են ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության և դրա իրականացումն ապահովող միջոցառումների դրույթներից՝ հաշվի առնելով հանրապետությունում անցած մեկ տարվա ընթացքում արձանագրված ժողովրդագրական զարգացումները: Մշակվել է «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2015-2017թթ. ազգային ծրագիրը», որում ներառված են բնակչության բնական աճի ապահովմանը՝ ծնունդների նյութական խրախուսմանը, մահացության կրճատմանը, երիտասարդ և բազմազավակ ընտանիքների աջակցությանն ուղղված միջոցառումներ:

2014 թվականի հունվարի 1-ից ներդրվել է ծնունդների խրախուսմանն ու բազմազավակ ընտանիքների կյանքի պայմանների բարելավմանն ուղղված՝ երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում ընտանիքներին տրամադրվող պետական աջակցության ծրագիրը, որի շրջանակներում 3-րդ և 4-րդ երեխայի ծննդյան դեպքում նպաստի չափը սահմանվել է 1 մլն դրամ, իսկ 5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1.5 մլն դրամ: Ընդ որում, երկու դեպքում էլ 500 հազար դրամը տրամադրվում է կանխիկ, իսկ մնացած մասը անկանխիկ՝ որպես ընտանեկան դրամազույգ:

*Տարածքային կառավարում*

Գնահատելով համայնքների վերաբերյալ տեղեկատվական բազայի կարևորությունը՝ հաշվետու ժամանակահատվածում ՀՀ մարզպետարանների միջոցով հավաքվել են համայնքների վերաբերյալ տեղեկատվությունները, ամփոփվել և մուտքագրվել են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից սպասարկվող Armdevinfo էլեկտրոնային ծրագիր: Իրականացված աշխատանքների արդյունքում յուրաքանչյուր համայնքի վերաբերյալ տեղեկությունները տեղադրվել են <http://www.armdevinfo.am/> կայքում:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ԵՄ-ի ֆինանսավորմամբ «Աջակցություն տարածքային կառավարման նախարարությանը տարածքային զարգացման ծրագրերի կազմման գործընթացում» ծրագիրը: Իրականացված աշխատանքների արդյունքում ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակիցների կարողությունները զարգացնելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ, ինչպես նաև մշակվել է տարածքային զարգացման նոր ռազմավարությունը:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և Կառավարության հավանությանն են ներկայացվել ՀՀ Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց ձորի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման երկրորդ՝ 2015-2018 թվականների քառամյա ծրագրերը, ՀՀ կառավարության կողմից Արագածոտնի և Արմավիրի մարզերի ծրագրերը 2014 թվականին հաստատվել են:

Միաժամանակ, ՀՀ կառավարության կողմից 11.12.2014թ. ընդունվել են «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» որոշումները: Հաշվետու ժամանակահատվածում հաստատվել են մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերով նախատեսված 2014 թվականի տարեկան աշխատանքային պլանները: Տարեկան աշխատանքային պլանի հիման վրա իրականացվել և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կայք-էջում հրապարակվել է ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի կիսամյակային հաշվետվությունների մոնիթորինգը:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքներում մի շարք հրատապ խնդիրների լուծման նպատակով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով հատկացվել է ընդհանուր առմամբ 6 մլրդ դրամ, որից 5 մլրդ դրամը՝ պետական բյուջեի վերաբաշխման արդյունքում, իսկ 1 մլրդը՝ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից: Նշված գումարն ուղղվել է հիմնականում դպրոցաշինությանը, ճանապարհաշինությանը և ավելի հրատապ լուծում պահանջող միջոցառումների իրականացմանը, մասնավորապես՝ ցրտահարությունից տուժած գյուղացիական տնտեսություններին աջակցություն ցուցաբերելու նպատակով որոշ մարզպետարանների (Արագածոտն, Արարատ, Արմավիր, Կոտայք, Սյունիք, Վայոց ձոր) տրամադրվել է 526,897.0 հազ դրամ, որն ուղղվել է տուժած գյուղացիական տնտեսությունների հողի հարկի ամբողջությամբ (160,750.0 հազ. դրամ) և ոռոգման ջրի վարձի 50%-ի (366,147.0 հազ. դրամ) փոխհատուցմանը: Հակակարկտային կայանների կառուցման համար ՀՀ Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերին հատկացվել է 105 մլն դրամ, որից ՀՀ Լոռու մարզին՝ 40 մլն դրամ 10 հակակարկտային կայաններ

կառուցելու համար, ՀՀ Կոտայքի մարզին՝ 45 մլն դրամ 10 կայանների համար և ՀՀ Շիրակի մարզին՝ 20 մլն դրամ 4 կայանների համար:

Համայնքներում գեներալային քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է հերթական «Լավագույն համայնք՝ գեներալային հարցերի լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխությունը: Գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով լրամշակվել է ՀՀ վարչապետի կողմից սահմանված «Լավագույն համայնք՝ գեներալային հարցերի լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխության հայեցակարգը:

2014 թվականին ՀՀ մարզերում վարչական հսկողություն է իրականացվել 232 համայնքներում: Հսկողության արդյունքների հիման վրա կազմվել են եռամսյակային հաշվետվություններ, որոնք տեղադրվել են ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության ինտերնետային կայք-էջում: Հսկողություն է սահմանվել արձանագրված խախտումների վերացման ուղղությամբ մարզպետների կողմից իրականացված աշխատանքների նկատմամբ: Արձանագրված խախտումները հիմնականում վերաբերել են «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Քաղաքաշինության մասին» և այլ օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի պահանջների չկատարմանը:

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի հետագա գործունեությունը բարեփոխելու նպատակով Համաշխարհային բանկի Երևանյան գրասենյակի աջակցությամբ մշակվել է նոր ռազմավարություն, որը, ըստ էության, տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման այլընտրանքային մոտեցումն է:

### ***Առողջապահություն***

#### **Բնակչության առողջության առաջնային պահպանում**

Առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ոլորտի զարգացումը շարունակում է մնալ առաջնահերթություն և այն դիտարկվում է որպես առողջապահության համակարգի բարեփոխումների հիմք և բնակչությանը ցուցաբերվող բժշկական օգնության առավել մատչելի հիմնական օղակ:

Շարունակել է շեշտը դրվել ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի դերի բարձրացման, կանխարգելիչ ուղղվածության ուժեղացման, բնակչության համար բուժօգնության այդ մակարդակում բժշկական օգնություն ստանալու մատչելիության ապահովման ու որակի բարելավման, ԱԱՊ ծառայություններ մատուցողների կողմից որակյալ բուժօգնության տրամադրման խրախուսման և ըստ կատարողականի փոխհատուցման մեխանիզմների ներդրման վրա:

Արդյունքում իրականացվել է՝

- ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում անվճար բուժօգնության և ծառայությունների մատուցման գործընթացի շարունակականության ապահովում, այն բնակչության համար առավել մատչելի դարձնելու նպատակով,

- առաջնային օղակում իրականացվող բուժօգնության և մատուցվող ծառայությունների որակի վերահսկում և բարելավում,

- առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման, ախտորոշման ու կանխարգելման ճանապարհով բնակչության առողջության հիմնական ցուցանիշների բարելավում: Այդ հիվանդությունների բարդությունների, հաշմանդամության և մահացության ցուցանիշների կրճատում,

- բնակչի կողմից առողջության առաջնային ծառայություններ մատուցող բժշկի ազատ ընտրության գործընթացի շարունակականության ապահովում և դրա հիման վրա ընտանեկան բժշկության անկախ պրակտիկաների ստեղծում:

Սահմանվել են պոլիկլինիկական հաստատությունների օրինակելի մոդելները և նեղ մասնագետների և դիսպանսերային ծառայություն մատուցող մասնագետների կողմից սպասարկվող բնակչության կողմնորոշիչ թվերը, որի նպատակն է սահմանել քաղաքային պոլիկլինիկական ծառայության կառուցվածքային առավել արդյունավետ մոդել, խթանել ընտանեկան բժշկության ներդրումը քաղաքային պոլիկլինիկաներում, բարելավել ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության որակն ու բարձրացնել ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարում պոլիկլինիկաների դերը:

2014 թվականի դրությամբ հանրապետությունում գործել են 5 ընտանեկան բժշկության անհատական և խմբային անկախ պրակտիկաներ, որոնք մատուցել են առողջության առաջնային պահպանման ծառայություններ պետական պատվերի շրջանակներում:

ԱԱՊ ծառայություններ մատուցողների կողմից որակյալ բժշկական օգնության տրամադրման խրախուսման և ըստ կատարողականի փոխհատուցման նպատակով վերանայվել, լրամշակվել և սահմանվել է առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցողների, ըստ կատարողականի, ֆինանսավորման նպատակով գործունեությունը գնահատող ցուցանիշների ցանկը: Նշյալ վերանայված ցանկում ընդգրկվել են թվով 28 ցուցանիշներ:

2014 թվականին առավել տարածված ոչ վարակիչ երեք հիվանդությունների կանխարգելմանն ուղղված զանգվածային սքրինինգային ծրագրերի նախապատրաստման նպատակով մշակվել և հաստատվել է «Ոչ վարակիչ հիվանդությունների կառավարում և բուժում» գործնական ուղեցույցը, որը բաշխվել է ՈՎՀ վերապատրաստումներում ընդգրկված բժշկական անձնակազմին: Երևանում և ՀՀ մարզերում կազմակերպվել են ԱԱՊ օղակում աշխատող բժշկական անձնակազմի՝ ՈՎՀ-ին նվիրված հնգօրյա վերապատրաստումները, որոնցում ընդգրկվել են ԱԱՊ օղակի շուրջ 2700 բժիշկներ:

#### Շտապ բուժօգնության ծառայության բարելավում

Շտապ բուժօգնության ծառայությունը (ՇԲԾ) հանդիսանում է առողջապահության համակարգի ամենաօպերատիվ և ամենամոբիլ կառույցը: Այն կարևոր է ինչպես տարաբնույթ հիվանդությունների և վնասվածքների հետևանքով կյանքին վտանգ սպառնացող անհետաձգելի իրավիճակների, այնպես էլ արտակարգ իրավիճակների և աղետների ժամանակ, երբ հիվանդության ելքը հիմնականում կախված է շտապօգնության արագ տեղ հասնելուց, տեղում կամ ճանապարհին

անհետաձգելի բուժօգնության կազմակերպումից, հիվանդին մասնագիտացված բուժհաստատություն ժամանակին տեղափոխելուց:

Ծառայության բարելավման խնդրում շեշտը դրվել է մեքենաների պարկի աստիճանական նորացման և անհրաժեշտ սարքերով ու դեղերով հագեցման, կանչերի գրանցման համակարգի արդիականացման, շտապ օգնության (ՇՕ) կանչերի իրականացման տևողության կրճատման, մասնագետների կրթման և մատուցվող ծառայությունների որակի վերահսկման վրա:

Այդ նպատակով ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մշակվել է ՇՕ տեղեկատվական-վերլուծական համակարգը, որը բաղկացած է շտապօգնության պորտալ/վեբկայքից և վերլուծական համակարգից: ՇՕ վերլուծական համակարգը իրականացնելու է մի քանի գործառույթներ, այդ թվում՝ շտապ օգնության կանչերի էլեկտրոնային դիսպետչերիզացիա՝ կանչի ավտոմատացված գրանցում, փոխանցում և ավարտված կանչի արդյունքների ներմուծում: Համակարգը հնարավորություն կտա միօրինականացնել ՇԲԾ վերաբերյալ հավաքագրվող տվյալների մուտքագրումը և ունենալ միասնական տվյալների բազա, ներդնել մշտադիտարկման մեխանիզմ՝ ՇԲԾ աշխատանքների կազմակերպչական և կլինիկական ոլորտների շուրջ համապատասխան որոշումներ կայացնելու նպատակով:

Հաշվետու տարում հաստատվել է շտապ բժշկական օգնության կանչի թերթիկը և վերջինիս լրացման (մուտքագրման) կարգը, ինչպես նաև սահմանվել է, որ լրացված շտապ բժշկական օգնության կանչի թերթիկը ենթակա է մուտքագրման Շտապ բուժօգնության տեղեկատվական վերլուծական համակարգ՝ բաղկացած տեղեկատվական պորտալից և կանչերի գրանցման, տեղեկատվական հոսքերի ապահովման համակարգից, ինչը հնարավորություն կստեղծի ավելի օպերատիվ դարձնել շտապ բուժօգնության ծառայությունը, միօրինականացնել հավաքագրվող տվյալների մուտքագրումը՝ ունենալով միասնական տվյալների բազա, ներդնել մշտադիտարկման մեխանիզմ աշխատանքների կազմակերպչական և կլինիկական ոլորտների շուրջ համապատասխան որոշումներ կայացնելու նպատակով:

Մշակվել են որակի կատարողականի գնահատման շուրջ 80 ցուցանիշներ, հաստատվել և ներդրվել են «Աջակցություն շտապ բուժօգնության ծառայություններին» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մշակված շտապօգնության տեղեկատվական-վերլուծական համակարգի առաջին տարվա գործարկման համար ընտրված 17 որակի գնահատման ցուցանիշները:

Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում շտապ բուժօգնության կանչերի գրանցման, տեղեկատվական հոսքերի ապահովման և պահպանման համակարգի (ՏՀԱՊՀ) ներդրման նպատակով, «Աջակցություն շտապ բուժօգնության ծառայություններին» ծրագրի կողմից պետական գումարների ընթացակարգին համապատասխան 2014 թվականին ձեռք են բերվել 2 սերվերներ, 78 համակարգիչներ, 93 տախիչ, 172 պլանշետներ և կապի միջոցներ, որոնք տրամադրվել են Երևանի և Հայաստանի Հանրապետության մարզեր շտապ բուժօգնության ծառայություններ ցուցաբերող բուժհաստատություններին:

Շուրջ 1000 բուժաշխատող, ներառյալ՝ բուժհաստատությունների ղեկավար անձնակազմը մասնակցել է Շտապ բուժօգնության ծառայության տեղեկատվական-վերլուծական համակարգի

օգտագործման վերաբերյալ դասընթացներին: Մշակվել են շտապ և ոչ շտապ կանչերը տարանջատող չափանիշները, ինչպես նաև մշակվել և ներդրվել է միասնական նոր կանչի թերթիկ:

2014 թվականին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության միջև ստորագրված «Աջակցություն շտապ բուժօգնության ծառայություններին» ուղղակի դրամաշնորհային ծրագիր իրականացնելու վերաբերյալ համաձայնագրի շրջանակներում իրականացվել են մի շարք աշխատանքներ՝ ուղղված շտապ բուժօգնության ոլորտում իրականացվող բարեփոխումների լուսաբանմանը, լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների շրջանում հանրային իրազեկվածության բարձրացմանը: Կազմակերպվել են հեռուստահաղորդումներ, մամլո ասուլիսներ, տպագրվել են հոդվածներ տպագիր և առցանց մամուլում:

#### Մոր և մանկան առողջության պահպանում

Մոր և մանկան առողջության պահպանումը առողջապահության ոլորտի կարևոր առաջնահերթություններից է: 2014 թվականին կարևորվել է կանանց և երեխաների բժշկական օգնության կազմակերպման անհրաժեշտ ծավալների և մատչելիության, ինչպես նաև հիվանդությունների կանխարգելման միջոցառումների ապահովումը՝ ուղղված երեխաների և մայրերի մահացության ու հիվանդացության ցուցանիշների նվազմանը:

Արդյունքում՝

- մանկական մահացության ցուցանիշը (0-1 տարեկան երեխաներ) կրճատվել է 1 պրոմիլային կետով՝ 2014 կազմելով 8.7‰ (375 դեպք), ինչի շնորհիվ Հայաստանը այժմ դասվում է ցածր մանկական մահացություն ունեցող երկրների շարքին, իսկ մանկական մահացության ցուցանիշի Հազարամյակի թիրախային նպատակը (2015 թվականին մանկական մահացության ցուցանիշի իջեցում՝ 2/3-ով) կանխատեսվում է որպես հնարավոր հասանելի:

- կրճատվել է նորածնային հիվանդացությունը և մահացությունը՝ նախածննդյան խնամքի ծառայությունների մատչելիության և որակի բարելավման, նորածնային սկրինինգային համակարգի ընդլայնման, նորածնների վերակենդանացման ծառայությունների բարելավման միջոցով:

- մայրական մահացության ցուցանիշը (միջին եռամյա կտրվածքով) կրճատվել է շուրջ 20%-ով:

- բարելավվել են վերարտադրողական առողջության ցուցանիշները հիվանդությունների կանխարգելման և վաղ հայտնաբերման սկրինինգային ծրագրերի (նախածննդյան ախտաբանություններ, նախաքաղցկեղային հիվանդություններ, անպտղություն և այլն) իրականացման միջոցով:

Մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում իրականացվել է՝

- հղիների նախածննդյան հսկողության ծառայությունների ուժեղացում,
- «Ծննդօգնության պետական հավաստագրի» և «Երեխայի առողջության պետական հավաստագրի» համակարգերի շարունակական զարգացում:

- բարձր ռիսկի հղիների հսկողություն և հիվանդանոցային ծառայությունների ուժեղացում, ուղեգրման համակարգի բարելավում, որի շնորհիվ մոտ 25%-ով կրճատվել են մարզերից Երևանի ծննդօգնության բժշկական կազմակերպություններում հղիության նորմալ ընթացքով ծննդաբերած հղիների թիվը: Այս միջոցառման շնորհիվ ավելացել են մարզերի ֆինանսական հոսքերը մոտ 130 մլն դրամով:

- երեխաների սնուցման վիճակի բարելավման նպատակով ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Երեխաների կրծքով սնուցման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության կողմից հաստատվեց «Երեխաների սնուցման բարելավման հայեցակարգը և հայեցակարգի իրականացման 2015-2020թթ. գործողությունների ծրագիրը»:

Շաքարային դիաբետով հիվանդ երեխաների բուժօգնության որակը բարելավելու նպատակով հաստատվել է «Շաքարային դիաբետով հիվանդ երեխաների բժշկական օգնության և սպասարկման բարելավման ծրագիրը և 2015-2020թթ. գործողությունների ժամանակացույցը»:

Մարզերում մանկական և նորածնային մահացության շարունակական կրճատման նպատակով կանոնակարգվել են Մանկական արագ արձագանքման արտագնա ծառայության գործառույթները, հստակեցվել գործընթացում ներգրավված կազմակերպությունների/անձերի պարտականությունները:

Բարելավվել է ֆենիլկետոնուրիայի նորածնային սկրինինգների գործընթացը. ֆենիլկետոնուրիայի նորածնային սկրինինգի իրականացումն ընդգրկել է Հայաստանի ողջ տարածքը, ինչը հնարավորություն կընձեռի վաղ հայտնաբերել բնածին ֆենիլկետոնուրիայով ծնված նորածիններին և համապատասխան բուժման միջոցով կանխարգելել հետագա հաշմանդամության զարգացումը:

#### Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովում

ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում աշխատանքներն իրականացվել են «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի և ոլորտը կանոնակարգող ենթաօրենսդրական իրավական ակտերի հիման վրա: Աշխատանքները նպատակաուղղվել են հանրային առողջության և բնակչության հիգիենիկ և հակահամաճարակային անվտանգության ապահովմանը:

ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովմանն ուղղված գործառույթներն առավել համակարգված և արդյունավետ իրականացնելու և ոլորտում միջազգային չափանիշներին համապատասխան ծառայություններ տրամադրելու նպատակով, համակարգի կազմակերպչական և կառուցվածքային բարեփոխումների համատեքստում, ՀՀ առողջապահության նախարարության թվով 20 պետական ոչ առևտրային կազմակերպություն միաձուլման և թվով 2 փակ բաժնետիրական ընկերություն՝ միացման կարգով վերակազմակերպվել են ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության՝ իր կազմում ներառելով կենտրոնական կառույցն իր ռեֆերենս լաբորատոր համակարգով, թվով 10 մարզային, ք.Երևանի թվով 4, «Օդային և գծային հաղորդակցություն», «Ակուստիկա գիտական կենտրոն» մասնաձյուղերը:



Հաշվետու ժամանակահատվածում բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման նպատակով իրականացվել է մոնիթորինգ այն ռիսկային բնագավառներում, որտեղ հնարավոր է մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի գործոնների վնասակար ազդեցություն ինչպես վարակիչ, այնպես էլ ոչ վարակիչ հիվանդությունների առումով:

Ղեղազործական գործունեության կազմակերպում, դեղերով և տեխնոլոգիաներով ապահովում

Բնակչությանը պատշաճ որակի բժշկական օգնության և սպասարկման ծառայություն մատուցելու գործում կարևոր նշանակություն ունի ՀՀ-ում անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերի առկայությունը և դրանց մատչելիությունը՝ համապատասխան տեսականիով (ՀՀ հիմնական դեղերի ցանկ): 2014 թվականին կարևորվել է ՀՀ հիմնական դեղերի ցանկում առկա, բայց ՀՀ-ում չգրանցված և ցածր պահանջարկ ունեցող, սակայն կենսականորեն անհրաժեշտ դեղերի՝ ՀՀ-ում առկայության ապահովման նպատակով պետական գրանցումը:

Ղեղազործական գործունեության կազմակերպման, դեղերով և տեխնոլոգիաներով ապահովման ոլորտում նախատեսվում է.

- իրավական դաշտի հետագա վերամշակում բնակչությանը անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերով ապահովելու նպատակով (դեղերի պիտակավորմանը ներկայացվող պահանջների սահմանում),
- անվճար և արտոնյալ պայմաններով հատկացվող դեղերի անվանական և քանակական լիարժեք ապահովում,
- ՀՀ հիմնական դեղերի ցանկում առկա, բայց ՀՀ-ում չգրանցված և ցածր պահանջարկ ունեցող, սակայն կենսականորեն անհրաժեշտ դեղերի՝ ՀՀ-ում առկայության ապահովման նպատակով դրանց գրանցում,
- բնակչությանը որակյալ դեղերով ապահովման նպատակով՝ դեղերի որակի պետական վերահսկողության իրականացում:

***Կրթություն և գիտություն***

2014 թվականին գործածության են երաշխավորվել ՀՀ հանրակրթական դպրոցներում նոր ուսումնական ծրագրերով փորձարկված 36 անուն դասագրքեր: Հաստատվել է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգը:

Երաշխավորված նվազագույն իննամյա կրթությունից անվճար տասներկուամյա (ներառյալ մասնագիտական) կրթությանն անցում ապահովելու նպատակով «Կրթության մասին» և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքներում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Հաստատվել են «Ազգային երգ ու պար» և «Երաժշտություն» առարկաների փորձնական ծրագրերը, որոնք իրականացվում են հանրապետության հանրակրթական 13 հիմնական դպրոցների 5-րդ դասարաններում:

2014 թվականին կարևորվել են ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար դպրոցներում ուսումնական բազայի բարելավման և կադրերի մասնագիտական զարգացման գործընթացները: Տպագրվել և դպրոցներին են տրամադրվել «Եզդիերեն» 1-ին, 6-րդ, 7-րդ, 11-րդ և «Քրդերեն» 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարանների դասագրքերը: Հանրակրթական դպրոցներում ազգային փոքրամասնությունների կարողությունների զարգացման նպատակով կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել է քրդերենի 16 ուսուցիչ:

Մշակվել և հաստատվել է «Առաջին դասարանի աշակերտներին անվճար համակարգիչ տրամադրելու՝ «Մեկ երեխա-մեկ համակարգիչ» փուլային ծրագիրը և փորձնական փուլի նկարագիրը, որի շրջանակներում 2015 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզի հանրակրթական դպրոցների առաջին դասարանի աշակերտներին նախատեսվում է անվճար տրամադրել «Արմթաք» պլանշետներ: Փորձնական ծրագիրը կիրականացվի 2015-2019թթ.՝ հնարավորություն ընձեռելով ծրագրում ընդգրկել ՀՀ Վայոց ձորի մարզի տարրական դպրոցի բոլոր դասարանները: 2019 թվականից նախատեսվում է ծրագրի աստիճանական ընդլայնում՝ ներառելով 1-ից 2 նոր մարզեր:

ՀՀ մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) գործընթացը կրեդիտային համակարգով կազմակերպելու նպատակով 2014-2015 ուստարվանից կրեդիտային համակարգը փորձնական ներդրվել է Երևանի տարածաշրջանային N1, Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային N2, Լոռու տարածաշրջանային և Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջներում:

Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների ընտրության, տնօրենների վերապատրաստման և հավաստագրման համակարգի, ինչպես նաև մանկավարժների վերապատրաստման նոր մեխանիզմների ներդրման նպատակով մշակվել և հաստատվել են մի շարք իրավական ակտեր:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում իրականացվել են մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվության արդյունավետ համակարգի ստեղծման աշխատանքներ:

2014 թվականին վերանայվել են ՀՀ-ում գործող մասնագիտությունների ցանկը և դրանց շնորհվող որակավորումները: Մշակվել է բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտային որակավորումների ազգային շրջանակի ձևավորման մեթոդաբանությունը: Իրականացված աշխատանքների արդյունքում հնարավորություն է ընձեռնվել աջակցել բուհերում սովորող սոցիալական խոցելի խմբերին: 2014 թվականի համար ուսման վարձի փոխհատուցում է տրամադրվել 1070 ուսանողի, որի համար սահմանված գումարը կազմել է 223800.8 հազար դրամ:

Կազմվել է 2014 թվականի բուհերի ազգային վարկանիշավորումը՝ ըստ վեց հիմնական չափորոշիչների: Պետական 10 բուհում իրականացվել է դրամաշնորհային նորարարական ծրագրերի իրականացման գործընթացը:

Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ներդրման նպատակով իրականացվել են համապատասխան ցուցանիշների գործարկման և վերանայման աշխատանքներ:

ՀՀ ԿԳ նախարարության պաշտոնական կայքի «Հակակոռուպցիոն ծրագրեր» տեղեկատվական էջում պարբերաբար լուսաբանվել է կրթության ոլորտում հակակոռուպցիոն ծրագրի իրականացման ընթացքը:

Հանրապետական ԶԼՄ-ներում լուսաբանվել է կրթության ոլորտում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի միջոցառումների համալիր ծրագրի ընթացքը՝ 28 լրատվական հեռուստառեպորտաժ, 14 հարցազրույց, տեղեկատվական բնույթի 56 հրապարակում:

Իրականացվել են ՀՀ կրթության ոլորտում 2015-2017թթ. կոռուպցիայի կանխարգելման միջոցառումների նախագծի մշակման աշխատանքները:

2014 թվականին աշխատանքներ են իրականացվել ՀՀ գիտական աստիճանաշնորհման համակարգում չափանիշների հստակեցման նպատակով: Սահմանվել են ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար գիտական հրատարակություններին ներկայացվող պահանջները: Հաստատվել է ՀՀ գիտական մասնագիտությունների նոր անվանացանկը, որոնց գծով շնորհվում են գիտական աստիճաններ և գիտական կոչումներ:

### ***Սպորտ և երիտասարդության հարցեր***

Սպորտի և երիտասարդության ոլորտում կառավարության վարած պետական քաղաքականության իրականացումը ենթադրում է մի շարք հիմնական խնդիրների լուծում, որոնք ներկայումս գտնվում են կառավարության ուշադրության կենտրոնում՝ զանգվածային ֆիզկուլտուրային-առողջարարական՝ համայնքային, տարածաշրջանային, մարզային և հանրապետական միջոցառումների, փառատոների անցկացում, հաշմանդամների տարբեր խմբերի շրջանում ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքների հետագա բարելավում, հաշմանդամ մարզիկների, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին հանրապետության մարզիկների մասնակցության աջակցություն, ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և առողջ ապրելակերպի արմատավորման քարոզմանն ուղղված համալիր միջոցառումների և ծրագրերի իրականացում, ոլորտը կարգավորող իրավական ակտերի մշակման գործընթացի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում բարեփոխումներ կատարելու, Եվրախորհրդի ծրագրերին, սպորտի Եվրոպական խարտիայի պահանջներից բխող հիմնահարցերին, խնդիրներին ծանոթացնելու նպատակով հանրապետական, մարզային, համայնքային սեմինար-խորհրդակցությունների անցկացում, բնակչության, մասնավորապես՝ ուսումնական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության անընդհատությանը, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության դաստիարակությանը նպաստող միջոցառումների անցկացում:

Կառավարության քաղաքականության առաջնահերթ խնդիրը և ուղղությունն են համարվում մարզական հերթափոխի պատրաստման համակարգի պահպանումն ու զարգացումը, մատուցվող ծառայությունների բարելավումը, դրանց որակի և արդյունավետության բարձրացումը, ինչն իր հերթին կնպաստի երեխաների և պատանիների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացման զարգացմանը:

2014 թվականին իրականացվել է մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների համար վերապատրաստման ծրագիր՝ 4492.5 հազ. ՀՀ դրամ արժեքով:

Ներկայումս հանրապետությունում գործող Երևանի և Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջներում (այսուհետ՝ քոլեջներ) սովորում են համապատասխանաբար 552 և 318 սովորող, որից 609-ը ստանում է կրթաթոշակ:

Քոլեջը եզակի նշանակություն ունեցող միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որը կոչված է հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցների լավագույն և հեռանկարային մարզիկների համար ապահովելու պայմաններ՝ մարզումները և կրթական գործընթացը համատեղելու, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի համար մասնագետներ պատրաստելու նպատակով: Քոլեջներում ուսուցումն իրականացվում է անվճար հիմունքներով:

Ուսումնական ծրագրերով դասավանդումը և շուրջամյա ուսումնամարզական աշխատանքները քոլեջներում կազմակերպում են 72 ուսուցիչ ու դաստիարակ, 70 մարզիչ-մանկավարժ, որոնցից 21-ն ունեն վաստակավոր մարզչի կոչում: Քոլեջների սաները աշխարհի և Եվրոպայի 2014 թվականի առաջնություններում նվաճել են 2 ոսկե, 3 արծաթե, 5 բրոնզե մեդալ, այդ թվում՝ Երևանի քոլեջի սաները՝ 4 բրոնզե մեդալ, Գյումրու քոլեջի սաները՝ 2 ոսկե, 3 արծաթե և 1 բրոնզե մեդալ:

Բարձրագույն սպորտի մեծ նվաճումների բնագավառում 2014 թվականին ՀՀ կառավարության իրականացրած քաղաքականությունն ուղղված է՝

- սպորտի բարձրագույն նվաճումների քաղաքականության ապահովմանը,
- սպորտի զարգացման նպատակային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը,
- մարզիչ-մանկավարժների վերապատրաստման աշխատանքների կազմակերպմանը,
- օլիմպիական շարժման զարգացմանը, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի և մարզական ֆեդերացիաների գործունեության աջակցմանը,
- մարզաձևերի զարգացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ամրապնդմանն ու զարգացմանը,
- միջազգային, այդ թվում՝ սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը,
- մարզաձևերի հավաքական թիմերի գիտամեթոդական աշխատանքների ապահովմանը,
- միջպետական մարզական հարաբերությունների զարգացմանը:

2014 թվականին մարզական միջոցառումների անցկացման համար պետական բյուջեից հատկացվել է 929809.7 հազ. դրամ: Անցկացվել են Հայաստանի Հանրապետության 90 առաջնություններ, որոնց մասնակցել են 9440 մարզիկներ: Աշխարհի և Եվրոպայի առաջնություններին, գավաթի խաղարկություններին և միջազգային մրցումներին նախապատրաստվելու նպատակով մարզաձևերի Հայաստանի Հանրապետության հավաքականներում ընդգրկված 2550 մարզիկների համար կազմակերպվել են 133 ուսումնամարզական հավաքներ: Տարբեր մարզաձևերից Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի 1900 մարզիկներ մասնակցել են աշխարհի և Եվրոպայի 156 առաջնությունների

և միջազգային մրցաշարերի՝ այդ թվում՝ Սոչիում կայացած 22-րդ ձմեռային օլիմպիական և Նան Ջինգի (Չինաստան) ամառային 2-րդ պատանեկան օլիմպիական խաղերին:

2014 թվականին Նան Ջինգի (Չինաստան) ամառային 2-րդ պատանեկան օլիմպիական խաղերին մասնակցել են 14 մարզիկներ և նվաճել են 2 ոսկե, 2 արծաթե և 3 բրոնզե մեդալներ:

Մասսայական և մանկապատանեկան սպորտի բնագավառում կառավարության իրականացրած քաղաքականությունն ուղղված է՝

- տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների մարզական ոլորտի աշխատանքների ակտիվացմանը,

- մարզական ակտիվի ներուժի օգտագործմանը, մարզական միջոցառումներում գյուղական երիտասարդության ներգրավմանը,

- հասարակության լիարժեք անդամներ հաշմանդամ-մարզիկների համար սպորտով զբաղվելու համապատասխան պայմանների ստեղծմանը:

Երիտասարդության ոլորտում կառավարության կողմից տարվող պետական քաղաքականությունը ենթադրում է զարգացնել մարզերում իրականացվող երիտասարդական պետական քաղաքականությունը, բարձրացնել հասարակական, քաղաքական զարգացումներին նրանց մասնակցության աստիճանը, նպաստել երիտասարդության գործունեությունն ապահովող իրավական դաշտի զարգացմանը, երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացմանը, ազատ ժամանցի ակտիվ և նպատակային կազմակերպմանը, ուսումնասիրել առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և բարելավել երիտասարդների կենսապայմանները, հայտնաբերել և խրախուսել տաղանդավոր երիտասարդներին, նպաստել երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակության, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը, ակտիվացնել, զարգացնել համագործակցությունը միջազգային երիտասարդական կառույցների հետ, ստեղծել պայմաններ երիտասարդությանը անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու համար, ստեղծել պայմաններ նրանց լիակատար ինքնադրսևորման համար:

### ***Էներգետիկա և բնական պաշարներ***

#### **Տարածաշրջանային ինտեգրում**

2014 թվականին իրականացվել են Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օղային գծի կառուցման նպատակով հողատարածքների ձեռքբերման աշխատանքներ: Հաշվետու տարում ՀՀ կառավարության կողմից ֆիզիկական անձանց սեփականություն հանդիսացող 166 հողակտորների նկատմամբ ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ: 2014 թվականին ձեռք են բերվել 421 հողակտորներ, որից 415-ը՝ պետական և համայնքային, 6-ը՝ ֆիզիկական անձանց հողակտորներ: Համապատասխան մարզպետարանների և համայնքների հետ շարունակվում է հողերի կատեգորիաները փոխելու և դրանց մի մասը սեփականության իրավունքով ձեռք բերելու գործընթացը:

Հաշվետու ժամանակահատվածում հենասյունների հիմքերի հողային և բետոնային աշխատանքեր չեն իրականացվել, քանի որ Իրանի արտահանման զարգացման բանկը կասեցրել է ծրագրի ֆինանսավորումը:

2014 թվականի հոկտեմբերին ՀՀ վարչապետի՝ Իրան կատարած այցի և 2014 թվականի դեկտեմբերի 15-16-ը Թեհրանում կայացած՝ հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի 12-րդ նիստի շրջանակներում տեղի ունեցած քննարկումների արդյունքում սկզբունքային պայմանավորվածություն է ձեռք բերվել ծրագրի ֆինանսավորումը վերսկսելու վերաբերյալ: Ըստ պայմանագրի՝ ֆինանսավորումը վերսկսելուց հետո աշխատանքները պետք է ավարտվեն 18 ամսվա ընթացքում:

2014 թվականին նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել Վրաստան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման ֆինանսավորման համաձայնագրի ստորագրման ուղղությամբ: Ավարտվել է FICHTNER խորհրդատվական ընկերության կողմից ծրագրի իրականացման տեխնիկատնտեսական հիմնավորումը:

Ծրագրի ամբողջ արժեքը, ըստ FICHTNER խորհրդատվական ընկերության նախնական գնահատման, կազմում է 326.9 մլն եվրո, որի 10%-ը վրացական կողմինն է: Նախատեսվում է ծրագրի առաջին փուլն ավարտել 2018 թվականին: Ծրագրի առաջին փուլի արժեքը, ըստ տեխնիկատնտեսական հիմնավորման, կազմում է մոտ 105.0 մլն եվրո:

Ծրագրի առաջին փուլի իրականացման նպատակով 2014թ. դեկտեմբերի 9-ին KfW բանկի, ՀՀ ֆինանսների նախարարության և «ԲԷՑ» ՓԲԸ-ի միջև կնքվել են «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ)» ծրագրի վարկային և ծրագրային համաձայնագրեր՝ 75.0 մլն եվրո և 10.2 մլն եվրո գումարի չափով: 2015 թվականի մարտի 16-ին ստորագրվել է վարկային համաձայնագիր Եվրոպական Ներդրումային բանկի հետ 10 մլն եվրոյի չափով: Նախատեսվում է նաև դրամաշնորհային ներդրում ծրագրում մինչև 10.0 մլն եվրոյի չափով, որը կհատկացվի Եվրամիության Հանձնաժողովի կողմից Հարևանության Ներդրումային Գործիքի («NIF») ներքո: Բացի այդ, Վարկառուի և Եվրոպական Ներդրումային Բանկի («ԵՆԲ») միջև նախատեսվում է ստորագրել վարկային համաձայնագիր մինչև 10.0 մլն եվրոյի չափով:

ՀՀ-ում ԳԴՀ դեսպանությունն իր 2014թ. դեկտեմբերի 19-ի հայտագրով հայտնել է, որ ԳԴՀ կառավարությունը Վերականգնման վարկերի բանկի միջոցով «Կովկասի էներգետիկ միություն II (Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդման գիծ, բարձրավոլտ էլեկտրակայաններ)» ծրագրի համար տրամադրելու է մինչև 100.0 մլն եվրո արտոնյալ վարկ, որի հետ կապված՝ 2015թ. հունվար ամսին տեղի է ունեցել բանկի փորձագետների այց Հայաստան:

2014 թվականին շարունակել է Հայկական ԱԷԿ-ի նոր էներգաբլոկի կառուցման համար ներդրողների ներգրավման ուղղությամբ բանակցային գործընթացը: Հայկական ատոմակայանի նոր էներգաբլոկի կառուցման ուղղությամբ կատարվող աշխատանքների մեկնարկը նախատեսված է 2018 թվականին, իսկ մինչև 1000 ՄՎտ հզորության նոր միջուկային էներգաբլոկի շահագործման հանձնումը՝ 2026 թվականին:

Ելնելով վերոնշյալ ժամկետներից՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը վերանայում է ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի նախագծի հիմքում դրված

սկզբունքային դրույթները, նկատի ունենալով, որ միջուկային էներգաբլոկների միջազգային շուկայում ի հայտ են եկել փոքր և միջին հզորության ռեակտորներով կահավորված առաջարկներ: Սկզբունքային դրույթների վերանայմանը զուգահեռ շարունակվում են բանակցությունները ռուսական կողմի և այլ հնարավոր ներդրողների հետ:

ԱՄՆ ՄՁԳ-ի աջակցությամբ կատարվել է միջուկային ռեակտորների միջազգային շուկայում առկա միջին և փոքր հզորության ճմշումային ռեակտորներով կահավորված ԱԷԿ-ների վերլուծություն և ՀՀ էներգետիկ համակարգի՝ նվազագույն ծախսերով զարգացման ծրագրի վերանայում: 2015 թվականին նախատեսվում է մշակել ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման պլան-ժամանակացույց, որում ամփոփված կլինեն մինչ օրս կատարված աշխատանքները, և կսահմանվեն միջուկային էներգաբլոկի կառուցման հիմնական փուլերի իրականացման ժամկետները:

Հաշվետու տարում իրականացվել են Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի սարքավորումների և շինությունների զննման և մնացորդային ռեսուրսի գնահատման աշխատանքներ: 2014թ. դեկտեմբերի 20-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Ռաշնության կառավարության միջև Հայկական ատոմային էլեկտրակայանի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման համագործակցության մասին» համաձայնագիրը: Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո կողմերը կնշանակեն լիազորված կազմակերպություններին:

Մշակել է «Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների իրականացման նպատակով ՀՀ կառավարությանը արտահանման վարկի տրամադրման մասին» ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև համաձայնագրի նախագիծը, որը ստորագրվել է 2015 թվականի հունվարին:

Վարկային համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո լիազորված կազմակերպությունների միջև կստորագրվի շրջանակային պայմանագիր՝ Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների իրականացման համար:

### ***Ջրային տնտեսություն***

2014 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքները՝ ջրային տնտեսության համակարգում կառուցվածքային փոփոխությունների, ջրամատակարարման տևողության ավելացման ու ջրի որակի բարելավման, մասնավոր կառավարման պայմանագրերի վերահսկման, ինստիտուցիոնալ բարեփոխումների խորացման, մատակարարված ջրի դիմաց վճարների հավաքագրման մակարդակի բարձրացման, համակարգում կորուստների նվազեցման և ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, ջրաչափական սարքերի տեղադրման և փոխարինման, բյուջետային, վարկային և դրամաշնորհային միջոցների արդյունավետ օգտագործման և նոր վարկային ու դրամաշնորհային միջոցների ներգրավման, կոյուղու մաքրման կայանները շահագործման հանձնելու և այլ ուղղություններով:

Ջրային տնտեսության ոլորտում 2014 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները:

1. «Հայջրնուղկոյուղի» («ՍԱՌԻՌ Ս. Ա. Ս.» կազմակերպության հետ), «Լոռի-ջրնուղկոյուղի», «Շիրակ-ջրնուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների («Էմ Վի Վի դեկոն Ջի Էմ քի էյջ (MVV-decon GmbH)», «Էմ Վի Վի Էներջի էյ Ջի (MVV Energie AG)», «Էյ-Ի-Ջի-Սերվիս», «ՍԱՌԻՌ Ս. Ա. Ս. (SAUR S. A. S.)» կոնսորցիումի հետ) մասնավոր կառավարման շարունակականության ապահովման նպատակով մինչև 2016 թվականի մայիսի 31-ը երկարաձգվել են ընկերությունների գործադիր մարմինների լիազորությունները մասնավոր կառավարիչներին փոխանցելու կառավարման պայմանագրերը, որոնց շրջանակներում ապահովվել է «Հայջրնուղկոյուղի», «Լոռի-ջրնուղկոյուղի», «Շիրակ-ջրնուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների արդյունավետ տնտեսական բնականոն գործունեությունը:

Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում պետական-մասնավոր գործընկերության հետագա զարգացման նպատակով ընդունվել են «Պետական-մասնավոր գործընկերության հետագա զարգացմանն ուղղված Հայաստանի խմելու ջրի ոլորտի բարեփոխումների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» և «Երևան Ջուր», «Հայջրնուղկոյուղի», «Լոռի-ջրնուղկոյուղի», «Շիրակ-ջրնուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների կողմից սպասարկվող տարածքներում պետական-մասնավոր գործընկերության ձևը և ժամկետը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումները:

2. Ոռոգում ջրառ իրականացնող «Սևան-Հրազդանյան-ջրառ» և «Ախուրյան-Արաքս-ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունների, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 42 ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունքներով ապահովվել է կայուն ջրամատակարարում: Ոռոգման ոլորտում նախատեսվել է կիրառել մասնավոր կառավարման խորհրդատվական ծառայություններ, որոնց ներգրավման ուղղությամբ աշխատանքները և դոնոր կազմակերպությունների հետ բանակցությունները սկսվել են:

3. Արու Ղաբիի զարգացման հիմնադրամի և ՀՀ կառավարության համաֆինանսավորման շրջանակներում Արփա-Սևան թունելի անհապաղ վերականգնողական աշխատանքների իրականացման համար 2014 թվականի ընթացքում կատարվել են վտանգավոր հատվածներում նոր ժամանակավոր ամրակապերի տեղադրում՝ 186.6 տ, երեսարկի կառուցում՝ 302.5 գծմ, ցեմենտային և ստուգիչ լցանդում՝ 3871.8 քմ: Արդյունքում հնարավորություն է ստեղծվել լուծել թունելի առավել վտանգավոր հատվածների անվտանգ շահագործման հարցերը:

4. Համակարգի կազմակերպությունների հիմնական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ իրագործվում են հաստատված ծրագրերը՝ տալով զգալի դրական տեղաշարժեր:

Հավաքագրումների գծով 2014 թվականի համակարգի գանձումը կազմել է շուրջ 21.29 մլրդ դրամ՝ 2013 թվականի 21.17 մլրդ դրամի փոխարեն կամ ավել է գանձվել 120 մլն դրամ:

Խմելու ջրի մասով գանձվել է շուրջ 17.17 մլրդ դրամ՝ 2013 թվականի 16,73 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 433 մլն դրամ, իսկ ոռոգման ոլորտում գանձվել է 4.12 մլրդ դրամ՝ 2013 թվականի 4.44 մլրդ դրամի դիմաց:

Խմելու ջրի ոլորտում գանձման տոկոսը 2014 թվականին կազմել է 96.63% (2013թ.՝ 98.07%), իսկ ոռոգման ոլորտում՝ 81.5% (2013թ.՝ 85.7%):



Հաշվի առնելով 2014 թվականի սակավաջրության և եղանակային անբարենպաստ գործոնները՝ համակարգն ունեցել է էլեկտրաէներգիայի գերաժախս: Միայն ոռոգման ոլորտում 21.6 մլն կՎտ/ժամով ավել էլեկտրաէներգիա է ծախսվել, իսկ խմելու ջրի ոլորտում ապահովվել է էլեկտրաէներգիայի խնայողություն:

5. 2014 թվականին ջրային տնտեսության համակարգի կազմակերպությունների կողմից ՀՀ պետական բյուջե են փոխանցվել շուրջ 5.8 մլրդ դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ:

6. 2014 թվականի ընթացքում «Երևան Ջուր», «Հայջրնուղկոյուղի», «Լոռի-ջրնուղկոյուղի», «Շիրակ-ջրնուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների սպասարկման տարածքներում տեղի են ունեցել ջրամատակարարման տևողության ավելացումներ՝ ապահովելով ՀՀ կառավարության գերակա խնդիրներով դրված պահանջը:

7. 2014 թվականին Սևանա լճից օրենքով սահմանված կարգով բաց է թողնվել 269.9 մլն մ<sup>3</sup> ջուր: Սևանա լիճ է տեղափոխվել 129.8 մլն մ<sup>3</sup> ջրաքանակ: Սևանա լճի մակարդակը 2014 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1900.13 մ՝ նախորդ տարեվերջի 1900.16 մ-ի դիմաց:

8. Կատարվել են ջրամատակարար կազմակերպությունների միջև գույքային հարաբերությունների և պարտավորությունների ճշգրտումներ, ինչպես նաև իրականացվել են կանոնադրությամբ վերապահված այլ լիազորություններ: Շարունակվել է բարելավվել հաշվառման համակարգը: Համակարգի խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների սպասարկման տարածքում բաժանորդների մոտ տեղադրված են 828374 հատ ջրաչափական սարք, որը 2013 թվականի համեմատությամբ ավել է 133260 հազարով: Ջրաչափությունը կազմում է 93.0%:

9. 2014 թվականի ընթացքում կառուցվել, վերականգնվել և վերանորոգվել են շուրջ 1500 կմ խմելու, կոյուղու և ոռոգման խողովակաշարեր, ջրանցքներ և ջրատարներ:

10. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Եվրոպական ներդրումային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի» շրջանակներում Ջերմուկ և Դիլիջան քաղաքներում կառուցվել են կեղտաջրերի մաքրման կայաններ:

Ջրամբարաշինության և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի նախապատրաստման ուղղությամբ, այդ թվում՝ առաջնահերթ 4 ջրամբարաշինական ծրագրերի մասով (Կապս, Վեդի, Մաստարա, Եղվարդ) իրականացվել են համապատասխան աշխատանքներ, այդ թվում՝

- Կապսի ջրամբարի մասով՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW) ֆինանսական աջակցության միջոցներով Կապսի ջրամբարի և ինքնահոս համակարգի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման նախնական ուսումնասիրությունը կավարտվի 2015 թվականին: Հաջորդ փուլով նախատեսվում է իրականացնել մանրամասն նախագծման և մրցութային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները, որի համար անցկացվելու է նոր մրցույթ, և ըստ նախնական գնահատման՝ նախատեսվում է նախագծման աշխատանքներն ավարտել 2015 թվականի դեկտեմբերի վերջին: Կապսի ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների մանրամասն նախագծման, շինարարության և շինարարության տեխնիկական վերահսկողության ընդհանուր ներդրումային ծախսերը կազմում են 60.0 մլն եվրո, այդ թվում՝ վարկի հաշին՝ 50.0 մլն եվրո: 2-րդ փուլով նախատեսվում է ճնշումային խողովակաշարի, ոռոգման

ներտնտեսային ցանցի և նոր տեխնոլոգիաների տեղադրման մանրամասն նախագծման, շինարարության և շինարարության տեխնիկական վերահսկողության աշխատանքների իրականացում, որոնց ընդհանուր ներդրումային ծախսերը կազմում են 70.0 մլն եվրո:

- Վեդու ջրամբարի մասով` Ջարգացման Ֆրանսիական Գործակալության (AFD) ֆինանսավորմամբ ավարտվել է Վեդու ջրամբարի և ոռոգման համակարգի շինարարության համար տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունը: Վերոնշյալ ուսումնասիրություններն իրականացնող Խորհրդատուն հաջորդ փուլով պետք է շարունակի իրականացնել ջրամբարի և ոռոգման համակարգի շինարարության համար մանրամասն նախագծման և մրցութային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները, որը նախատեսվում է ավարտել 2015 թվականի դեկտեմբերի վերջին: Վեդու ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների մանրամասն նախագծման, շինարարության և շին. տեխնիկական վերահսկողության ընդհանուր ներդրումային ծախսերը կազմում են 90.0 մլն եվրո, այդ թվում` վարկին հաշվին` 75.0 մլն եվրո: Ճնշումային խողովակաշարի, ոռոգման ներտնտեսային ցանցի և նոր տեխնոլոգիաների տեղադրման մանրամասն նախագծման, շինարարության և շին. տեխնիկական վերահսկողության ընդհանուր ներդրումային ծախսերը կազմում են շուրջ 30.0 մլն եվրո, որի համար բանակցություններ են ընթանում դոնոր կազմակերպությունների հետ:

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 4 և Քասախի ու Գեղարդալձի ջրամբարների մասով իրականացվել են տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ:

- Ոռոգման ոլորտում Համաշխարհային բանկի հետ իրականացվում են էլեկտրաէներգիայի ծախսի նվազեցման միջոցով մատակարարվող ոռոգման ջրի ինքնարժեքի նվազեցմանն ուղղված ծրագրեր: Մեղրու ինքնահոսի կառուցման շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են: Միաժամանակ սկսվել են Քաղցրաշենի, Նոյակերտի և Գեղարդալձի ինքնահոսների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները:

11. Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման և ընթացիկ նորոգման, կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման ծրագրերով իրականացվել են 156.3 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, ինչպես նաև 22.2 կմ ընդհանուր երկարությամբ դրենաժային ցանցի վերականգնման, նորոգման և մաքրման աշխատանքներ և Արարատյան հարթավայրում տեղադրված 450 դիտողական հորատանցքներում գրունտային ջրերի մշտական դիտարկումներ:

12. Մշակվել են ջրային տնտեսության ոլորտի հետագա զարգացման և կառավարման բարեփոխումների ծրագիրը, սակագնային ռազմավարությունը, ինչպես նաև կայուն ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ազգային ռազմավարությունը: Ավարտական փուլում են չհաշվառվող ջրի նվազեցման, ջրամատակարար կազմակերպությունների սպասարկման տարածքներից դուրս գտնվող բնակավայրերում ջրամատակարարման կառավարման բարելավմանն ուղղված ուսումնասիրությունները: Առաջին անգամ ֆինանսական միջոցներ են նախատեսվել (շուրջ 10.0 մլն եվրոյի չափով) ջրամատակարար կազմակերպությունների սպասարկման տարածքներից դուրս գտնվող բնակավայրերում ներդրումային ծրագրեր իրականացնելու ուղղությամբ: Ոռոգման

ոլորտում Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ սկսվել են ոռոգման ոլորտի ֆինանսական ռազմավարության մշակման աշխատանքները:

13. KfW բանկի, Եվրոմիության և Եվրոպական ներդրումային բանկի հետ սկսվել են լայնամասշտաբ ծրագրերի իրականացման աշխատանքները՝ շուրջ 73.0 մլն եվրոյի չափով, որից 17.5 մլն եվրոն նախատեսվել է հատկացնել դրամաշնորհի տեսքով: Գործողության մեջ են մտել մի շարք վարկային ու դրամաշնորհային ծրագրեր, որոնց իրականացումը սկսվել է, իսկ որոշների մասով տարվում են համապատասխան բանակցություններ:

Ջրային տնտեսության ոլորտում վերը նշված աշխատանքների իրականացման արդյունքում խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ինչպես նաև ջրահեռացման ոլորտներում 2014 թվականի ընթացքում ապահովվել է համակարգերի հուսալի և անվտանգ շահագործումը, բարելավվել է խմելու և ոռոգման ջրամատակարարումը, իրականացվել է համակարգի անվտանգ շահագործումը, կրճատվել են կորուստները, բարելավվել է ջրի և ծառայությունների մատուցման որակը, ապահովվել է ջրամատակարարման շարունակականության ավելացումը և այլն:

### ***Տրանսպորտ և կապ***

#### **Տրանսպորտի ոլորտ**

Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական և Մաքսային միություններին անդամակցության նպատակով կատարվել են ձանապարհային քարտեզով նախատեսված տրանսպորտի բնագավառի բոլոր միջոցառումները:

«Աժ է ներկայացվել օրենսդրական երկու փաթեթ՝ ծանրաքաշ և մեծ եզրաչափերով բեռնատարների երթևեկությունը կարգավորելու և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով շահագործվող տրանսպորտային միջոցների անվտանգությունն ապահովելու նպատակով:

Ընդունվել է Հայաստանի Հանրապետության տրանսպորտային անվտանգության ապահովման ազգային ռազմավարության 2014-2017 թվականների միջոցառումների ծրագիրը:

Օրենսդրական կարգավորում է ստացել տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների բնագավառը: Արդյունքում ֆիզիկական անձանց իրավունք է տրվել տաքսի ծառայություն մատուցել, կրճատվել են լրացուցիչ ծախսերը և վարչարարությունը, հանվել է դեղին հիմնագույնի համարանիշը, միաժամանակ բարձրացվել են ուղևորների շահերի պաշտպանությանը ներկայացվող պահանջները:

#### **Ձանապարհաշինության ոլորտ**

«Ա տրանսպորտի և կապի նախարարի նախագահությամբ ստեղծվել է ձանապարհային ոլորտը համակարգող խորհուրդ, որը քննարկել է ավտոմոբիլային ձանապարհների պահպանման և զարգացման առաջնահերթությունների որոշման հայեցակարգը, ինչպես նաև ավտոձանապարհների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման 2015 թվականի ծրագրի նախագիծը:

#### **Երկաթուղու բնագավառ**

Օրենսդրական կարգավորումներ են առաջարկվել երկաթուղու պաշտպանական գոտու չափերը և գործունեության կարգը սահմանելու, ինչպես նաև գծանցների կարգավորման վերաբերյալ:

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ-ի կողմից 2014 թվականին երկաթուղու ենթակառուցվածքում փաստացի իրականացվել են շուրջ 6.6 մլրդ դրամի ներդրումային ծախսեր: Իրանական կողմի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ Հարավային երկաթուղու շինարարության ծրագրի 30% առաջընթացի դեպքում վերջինս կսկսի Իրանի սահմանում գտնվող 60 կիլոմետրանոց հատվածի շինարարությունը:

#### Կապի բնագավառ

Կապի զարգացման ծրագրի շրջանակներում Հեռահաղորդակցության միջազգային միության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված 71.4°E ուղեծրային դիրքում կապի արբանյակի թողարկման ծրագրի իրականացման նպատակով բանակցություններ են տարվում տարբեր երկրների կապի ադմինիստրացիաների հետ, որի ամփոփումից հետո կձգտվի Հայաստանի արբանյակի ծածկույթի վերջնական քարտեզը և այն երկրների ցանկը, որոնք կներառվեն ՀՀ արբանյակի հաձախականությունների դիապագոնում:

ՀՀ կառավարության հավանությանն են արժանացել ինտերնետ կառավարման սկզբունքները, որի համաձայն այժմ ձևավորվում է ՀՀ ինտերնետ Կառավարման Համաժողով միջգերատեսչական խումբը:

2014 թվականին 5%-ով աճել է տարբեր տեխնոլոգիաներով ինտերնետից օգտվողների (բաժանորդների) թիվը: 12450 ՄԲԻԹ/վրկ-ով աճել է միջազգային ԱյՓի տարանցման ծառայության հոսքերի թողունակությունը: Միջոցառումների իրականացման արդյունքում ինտերնետից օգտվողների թիվը 2013 թվականի վերջի դրությամբ արձանագրված 45%-ից 2014 թվականի վերջին հասել է 50%-ի:

«Գլոբալ տնտեսական ֆորում-2014» զեկույցում ներկայացված համաշխարհային ցանցային պատրաստվածության բնագավառում ՀՀ դիրքը 2014 թվականին բարելավվել է 17 կետով՝ զբաղեցնելով 65-րդ տեղը:

Էլեկտրոնային եղանակով կատարվող առևտրի գործընթացը որոշացնելու նպատակով կատարվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ, և ներդրվել է մաքսային հայտարարագրերի հաշվառման էլեկտրոնային համակարգ:

Ավարտվել են հանրապետական գլխամասային մուլտիպլեքսավորման կենտրոնի (Երևանի մուլտիպլեքսավորման կենտրոն, թվով 10 մարզային մուլտիպլեքսավորման կայան) մոնտաժման, համալրման և թեստավորման աշխատանքները:

#### ***Պետական եկամուտների քաղաքականություն***

ՓՄՁ սուբյեկտների համար հարկման առավել նպաստավոր միջավայրի ստեղծման և ստվերային շրջանառությունների բացահայտմանն ու կրճատմանն ուղղված՝ հարկային մարմնի

գործիքակազմի ընդլայնման նպատակով 2014 թվականին մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են առևտրական գործունեությամբ զբաղվող ՓՄՁ սուբյեկտների հարկային բեռը նվազեցնելուն, ընտանեկան ձեռնարկատիրությամբ զբաղվող սուբյեկտներին հարկերից ազատելուն և իրացվող ապրանքների փաստաթղթավորման մակարդակի բարելավմանն ուղղված օրենքների փաթեթը, ինչպես նաև պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների ընդլայնմանն ուղղված օրենքները, որոնց շրջանակներում պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկը ընդլայնվել է 37 անուն ապրանքատեսակներով:

Գործարար միջավայրի բարելավման և երկրում տնտեսական ակտիվության մակարդակի բարձրացման նպատակով մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են մի շարք օրենքներ, որոնցով՝

1) սահմանվել է, որ սահմանամերձ գյուղական համայնքներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներն ազատվում են այդ գործունեության մասով առաջացող հարկերից,

2) վերացվել է ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծվող ապրանքների համար ՀՀ մաքսային սահմանին ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման համար կիրառվող շեմի մեծությունը,

3) սահմանվել է, որ բնակարանների ձեռք բերման համար ներգրավված հիպոթեքային վարկերի սպասարկման տոկոսավճարները հետ են վերադարձվում վարկառուի կողմից վճարված եկամտային հարկի գումարների չափով,

4) 2015 թվականից սկսած աստիճանական կարգով անցում է կատարվելու ԱԱՀ-ի գծով հաշվանցումների կատարման հաշվեգրման սկզբունքին: Նշյալ օրենքներով նախատեսվել է, որ 2015 թվականից ամբողջությամբ անցում է կատարվելու էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրս գրման համակարգին, իսկ 2016 թվականից՝ հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման էլեկտրոնային համակարգին:

ԵՏՍ-ին ՀՀ անդամացությամբ պայմանավորված՝ ՀՀ մաքսային և հարկային օրենսդրությունը ԵՏՍ օրենսդրությանը համապատասխանեցման աշխատանքների շրջանակներում մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են ՀՀ մաքսային և հարկային որոշ հարաբերություններ կարգավորող երկու ամբողջությամբ նոր օրենքներ և գործող օրենքներում փոփոխություններ և լրացումներ նախատեսող երկու օրենքներ:

Ստվերային տնտեսության կրճատման համար համապատասխան կարողությունների ձևավորման և հարկային օրենսդրությունը կանխամտածված խախտողների նկատմամբ խիստ հսկողության իրականացման համար անհրաժեշտ օրենսդրական և վարչարարական հիմքեր ձևավորելուն ուղղված աշխատանքների համակարգման նպատակով մշակվել է «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման 2015-2017 թվականների միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Մեկնարկել են հարկային օրենսգրքի նախագծի մշակման աշխատանքները, ձևավորվել է հարկային օրենսգրքի մշակման աշխատանքային խումբ, ինչպես նաև մշակվել է հարկային օրենսգրքի մշակմանն ուղղված աշխատանքների ժամանակացույց:

Կատարվել է ՀՀ հարկային օրենսդրությունում առկա արտոնությունների հետևանքով չհավաքագրվող պետական եկամուտների (հարկային ծախսերի) վերլուծություն և գնահատում, ինչի արդյունքում կազմվել է հարկային ծախսերի գնահատման վերաբերյալ հաշվետվություն, որը ներառվել է 2015 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի բացատրագրում՝ որպես առանձին հավելված:

### **Պետական գնումների ոլորտ**

Հաշվետու տարում «Գնումների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող հիմնական գնումների գործընթացի կազմակերպման կարգն ամբողջությամբ շարադրվել է նոր խմբագրությամբ: Մասնավորապես՝ հիշյալ կարգով կանոնակարգվել են արձանագրված հետևյալ հիմնական խնդիրները՝

- ներդրվել է հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնումներ կատարելու դեպքում մասնակիցների ընտրության մրցակցային ընթացակարգ.

- մեկ անձից գնումների կատարման ծավալի նվազեցման նպատակով ներդրվել է մինչև 20 մլն ՀՀ դրամ գին ունեցող գնումները շուրջ 10-15 օրացուցային օրում մրցակցային ձևով կազմակերպելու ընթացակարգ.

- գնման գործընթացը ոչ մրցունակ դարձնելու հնարավորությունը կարգավորելու նպատակով սահմանափակվել է պայմանագրի գործողության ժամկետը ցանկացած ժամկետով երկարաձգելու պատվիրատուի իրավասությունը՝ ժամկետի երկարաձգումը թույլատրելով իրականացնել մեկ անգամ, մինչև 30 օրացուցային օրով.

- միջնորդավորված գնումների ծավալը նվազեցնելու նպատակով ներդրվել է շրջանակային համաձայնագրերով գնումների կատարման յուրաքանչյուր դեպքում մասնակիցների նկատմամբ մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների կիրառման համակարգ: Նախկին կարգով մասնակիցը ներկայացնում էր միայն գնային առաջարկ.

- գնման գործընթացի հնարավոր մասնակիցների շրջանակի տեսանելիությունը և դրանով պայմանավորված՝ գործընթացի կառավարելիությունը սահմանափակելու նպատակով բացառվել է նախաորակավորման ընթացակարգի կիրառումը բանակցային ընթացակարգով գնումների կատարման ժամանակ.

- կոռուպցիոն հնարավոր դրսևորումների սահմանափակման նպատակով պարտադիր է դարձվել ապրանքների գնման դեպքում մասնակիցների կողմից հայտերով տեխնիկական բնութագրերի ներկայացումը և պատվիրատուի կողմից դրանց՝ իրենց կարիքի նկատմամբ համարժեքության գնահատումը և դրա ներառումը կնքվելիք պայմանագրում.

- ընտրանքային մեթոդը կանխելու նպատակով պարտադիր է դարձվել մրցույթում 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտքեր չունենալու վերաբերյալ ներկայացված հայտարարությունների իսկությունը պատվիրատուների կողմից ստուգելու պահանջը՝ պատկան մարմինների միջոցով.

- փոխվել է շինարարական աշխատանքների դեպքում կատարողականի դիմաց վճարումների իրականացման կարգը. վճարումները հաշվարկվում են նախահաշվային գնի նկատմամբ արձանագրված խնայողության տոկոսային հարաբերակցությունը բազմապատկելով փորձաքննություն անցած նախահաշվով նախատեսված աշխատանքի միավոր արժեքով: Արդյունքում մասնակիցները այլևս չեն ներկայացնում իրենց կողմից սահմանված գներով նախահաշիվներ, որոնցում այն առանձին տեսակի աշխատանքների գները, որոնք ենթակա են պարտադիր կատարման, այդ թվում՝ սկզբնական փուլերում, ներկայացվում են էականորեն բարձր, ինչն, ըստ էության, հանդիսանում է կանխավճար, իսկ այն աշխատանքները, որոնք պետք է կատարվեն վերջնական փուլում կամ հետագա տարիներին, ներկայացվում են փորձաքննված նախահաշվային գներից էականորեն ցածր գներով.

- սահմանվել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի համակարգում գործող պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կարիքների համար գումարները կենտրոնացված կարգով կատարելու հնարավորություն: Մասնավորապես, ներդրվել է մեխանիզմ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի կողմից սահմանված գումարների դեպքում նշված կազմակերպությունների կարիքների համար գումարների կազմակերպման գործառույթը կենտրոնացնելու վերաբերյալ՝ այդ կազմակերպություններին թողնելով գնման հայտերը հաստատելու, հայտերը գնահատելու, հաղթողին որոշելու, պայմանագրի արդյունքը ընդունելու և վճարումներ կատարելու գործառույթը: Առաջարկվող մեխանիզմի ներդրումը պայմանավորված է ոչ առևտրային կազմակերպությունների մոտ համապատասխան կարողությունների բացակայության, ինչպես նաև գումարները տնտեսապես շահավետ պայմաններով և էլեկտրոնային ձևով իրականացնելու անհրաժեշտությամբ.

- ապրանքների գնման դեպքում պարտադիր է դարձել որակի սերտիֆիկատի առկայությունը և գործարանային փաթեթավորումը.

- կանոնակարգվել են պայմանագրի արդյունքի ընդունման հետ կապված հարաբերությունները: Մասնավորապես, սահմանվում է, որ պայմանագրի առարկայի ընդունման ակտը կարող է հաստատվել, եթե առկա է դրա տեխնիկական բնութագիրը կազմողի կողմից տրամադրված դրական եզրակացություն: Միաժամանակ նախատեսվում է նաև ապրանքը պահեստ մուտքագրելու օրը ընդունման ակտը, եզրակացությունը և պահեստ մուտքագրման օրերը տրամադրել մարմնի ֆինանսական ծառայությանը, ինչը հնարավոր կդարձնի օպերատիվ կերպով հսկողություն իրականացնել ապրանքների փաստացի մատակարարված լինելու և դրա օրվա նկատմամբ.

- ներդրվել է ապրանքների մատակարարման պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտը որոշակի ժամանակահատվածը մեկ պայմանագրով սահմանված գների նվազեցման մեխանիզմ, եթե շուկայում տեղի է ունեցել տվյալ ապրանքի գնի նվազում.

- սահմանափակվել է պայմանագիր կնքած անձի կողմից պայմանագրային պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու դեպքում վերջինիս նկատմամբ առանց որևէ

պատասխանատվություն կիրառելու հանգամանքի պայմանագիրը դադարեցնելու պատվիրատուի հնարավորությունը.

- սահմանափակվել է գնման պահանջի դադարման հիմքով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու պատվիրատուի իրավասությունը, նախատեսելով, որ այն կարող է իրականացվել միայն ՀՀ կառավարության թույլտվությամբ: Բերված սահմանափակումն, ըստ էության, կբարձրացնի գնման գործընթացների պատշաճ կազմակերպման նկատմամբ պատվիրատուների պատասխանատվության աստիճանը, կբացառի ոչ պատշաճ վերաբերմունքի ցուցաբերումը գնումների պլանավորման և գործընթացների կազմակերպման նկատմամբ:

Նախատեսվում է, որ 2015 թվականի ապրիլի 1-ից պետական մարմինների կարիքների համար նաև պարզեցված ընթացակարգով, իսկ քաղաքային համայնքների կարիքների համար՝ բաց ու պարզեցված ընթացակարգերով և շրջանակային համաձայնագրերով կատարվող գնումներն իրականացվում են էլեկտրոնային ձևով: Գործող կարգի համաձայն էլեկտրոնային եղանակով իրականացվում են միայն պետական մարմինների կարիքների համար բաց ընթացակարգով և շրջանակային համաձայնագրերի միջոցով կատարվող գնումները:

Միաժամանակ նախաձեռնվել է էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի թվով երեք մոդուլների ձեռքբերման գործընթացը, որոնք վերաբերում են գնումների պլանավորմանը, գնման պայմանագրերի կառավարմանը և գնումների հաշվետվությունների պատրաստմանը: Մասնավորապես, մշակվել և հաստատվել է նշված մոդուլների գնման տեխնիկական առաջադրանքը, և հայտարարվել է մրցույթ, որը գտնվում է ամփոփման փուլում: Նշված մոդուլների ձեռք բերմամբ կավտոմատացվեն գնումների գործընթացի բոլոր փուլերը, ինչի արդյունքում կապահովվի գնումների գործընթացների առավել արդյունավետ և թափանցիկ իրականացումը:

Հաշվետու տարում ընդունվել են գնումների համակարգողների որակավորման շնորհման և գնումների որակավորված մասնագետների շարունակական մասնագիտական վերապատրաստման կարգերը, որոնցով կարգավորվում են գնումների համակարգողի որակավորման շնորհման նպատակով քննությունների կազմակերպման և անցկացման և գնումների որակավորված մասնագետների շարունակական մասնագիտական վերապատրաստման հետ կապված հարաբերությունները:

Նախաձեռնվել է Առևտրի համաշխարհային կազմակերպության «Պետական գնումների մասին» համաձայնագրի նոր տեքստի վավերացման գործընթացը, որը հաստատվել է ՀՀ Նախագահի հրամանագրով:

Այս կապակցությամբ 2014 թվականի ապրիլի 25-27-ը ՀՀ ֆինանսների նախարարությունը ԱՄՆ Առևտրի մասին օրենքի զարգացման ծրագրի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և ԱՀԿ Պետական գնումների համաձայնագրի քարտուղարության աջակցությամբ կազմակերպել է սեմինար-դասընթաց ԱՀԿ Պետական գնումների համաձայնագրի նոր տեքստի և տեքստից բխող պարտավորությունների մեկնաբանման նպատակով: Սեմինար-դասընթացին մասնակցել են պետական պատվիրատուների, հասարակական կազմակերպությունների, մասնավոր հատվածի ներկայացուցիչներ:



Ներդրվել է գնումների անվանացանկի կողավորման մեխանիզմը՝ Գնումների Միասնական Անվանացանկը (CPV): Նախկինում պետության կողմից կատարվող գնումների մասով ըստ գնման առարկաների հաշվառում և վիճակագրություն իրականացնելը բավական բարդ աշխատանք էր այն պատճառով, որ միևնույն գնման առարկան տարբեր պատվիրատուներ կարող էին բնութագրել կամ անվանել տարբեր կերպ: Նման դեպքերում հարկավոր էր իմանալ տվյալ գնման առարկայի բոլոր հնարավոր բնութագրերը, որպեսզի հնարավոր լիներ առանձնացնել պետական համակարգում այդ գնման առարկայի վերաբերյալ տեղեկատվությունը: Նոր ներդրված համակարգով այս խնդիրն ամբողջությամբ լուծվել է, քանի որ այն միասնական է բոլոր պատվիրատուների համար, ինչպես նաև պարունակում է համապատասխան կողավորում:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը 2014 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ՀՀ մարզերում կազմակերպել է սեմինար-դասընթացներ գնման գործընթացի հնարավոր մասնակիցների համար: Դասընթացների հիմնական նպատակն էր ծանոթացնել գործարար միջավայրին գնման ընթացակարգերին մասնակցության կանոններին, իրենց շահերի խախտման դեպքում դրանց պաշտպանության հնարավորություններին, ինչպես նաև էլեկտրոնային գնումներին մասնակցելու նպատակով գնումների էլեկտրոնային հարթակում գրանցվելու և դրանից օգտվելու կարգին:

ՀՀ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, վերջիններիս ենթակայությամբ գործող հիմնարկների, ՊՈԱԿ-ների ու ՓԲԸ-ների շուրջ 3000 գնումների համակարգողների համար կազմակերպվել են որակավորման քննություններ, որոնք հաջողությամբ հանձնել են շուրջ 650 գնումների համակարգողներ:

Սոնիթորինգի ընթացքում 2014 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին ուսումնասիրվել է ՀՀ ՖՆ գրանցման ներկայացված 20410 գնման պայմանագիր, որոնցից 3093-ի կամ 15.2% գրանցումը մերժվել է այնտեղ գտնված թերությունների պատճառով: Նշված թերությունները շտկվելուց հետո այդ պայմանագրերը վերցվել են հաշվառման: Պարբերաբար ուսումնասիրվել են տարվա ընթացքում ՀՀ պետական մարմինների կողմից կատարված գնումների գործարքները, և վերհանված թերությունները կամ շեղումները ներկայացվում են դրանք թույլ տված մարմինների ղեկավարներին, որոնք միջոցներ են ձեռնարկում դրանք շտկելու ուղղությամբ: Նշենք, որ 2014 թվականի ընթացքում նկատվել է բարելավում, մասնավորապես, եթե առաջին կիսամյակում բացահայտված թերությունների արդյունքում մերժված պայմանագրերի քանակը 2180 էր՝ դիտարկված 6808 գործարքներից, ապա երկրորդ կիսամյակում դիտարկված 13602 գործարքներից մերժվել է 913-ը:

	Առաջին կիսամյակ	Երկրորդ կիսամյակ	Ընդամենը
Դիտարկվածների քանակ	6808	13602	20410
Մերժվածների քանակ	2180	913	3093

Տեսակարար կշիռը	32%	6.7%	15.2%
-----------------	-----	------	-------

### **Ներքին աուդիտի ոլորտ**

2014 թվականին աշխատանքներ են իրականացվել ներքին աուդիտի ոլորտի իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ: Մասնավորապես՝ ՀՀ կառավարության կողմից հաստատվել են ներքին աուդիտորի որակավորման կարգը և հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար կազմակերպություններին ներկայացվող հիմնական պահանջները, ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման կարգը:

Պետական ներքին ֆինանսական հսկողության բարեփոխումներին աջակցության շրջանակներում 2014 թվականին Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերությունը (ԳՄՀԸ) իրականացրել է ՀՀ ՖՆ աշխատակազմի ՊՆՖՀ և ՊԳ մեթոդաբանության վարչության կարողությունների զարգացման միջոցառումներ:

Նշված միջոցառումների շրջանակներում կազմակերպվել են.

- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ներքին աուդիտի ստորաբաժանմանն աջակցելու նպատակով փորձնական ներքին աուդիտի իրականացում: Աշխատանքները մեկնարկել են 2014թ. նոյեմբերին և գտնվում են ընթացքի մեջ.

- «Կոռուպցիայի և խարդախության կանխարգելման խնդիրները ներքին աուդիտի տեսանկյունից» թեմայով երկօրյա վերապատրաստման դասընթաց Թբիլիսիում 2014թ. նոյեմբերի 7-8-ը,

- Գերմանիայի Ղաշնային Հանրապետության «ՀՖԿ ակադեմիայի» կողմից իրականացվող «Ներքին աուդիտի դերը կոռուպցիայի կանխարգելման հարցում» թեմայով հնգօրյա վերապատրաստման դասընթաց Բեռլինում 2014թ. դեկտեմբերի 1-5-ը:

Համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2014 թվականի ընթացքում կազմակերպվել են շարունակական մասնագիտական վերապատրաստման թվով 15 դասընթաց գործող որակավորված ներքին աուդիտորների համար և ներքին աուդիտորի որակավորման բարձրացման թվով 15 դասընթաց հանրային հատվածի սկսնակ ներքին աուդիտորների համար:

Մինևույն ժամանակ, 2014 թվականի ընթացքում անցկացված ներքին աուդիտորի որակավորման քննության թեստավորման փուլը հաջողությամբ հաղթահարել է 54 մասնակից:

### **Հանրային ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումներ**

Համաշխարհային բանկի կողմից Վստահության հիմնադրամի միջոցով՝ Հանրային ֆինանսների կառավարման բարելավման նպատակով տրամադրվել է աջակցություն (դրամաշնորհ)՝ ժամանակակից «Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի» (այսուհետ՝ ԿՖԿՏՀ) ներդրման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներին աջակցելու համար: Նշված աշխատանքների շրջանակներում կնքվել է խորհրդատվական

Ժառայությունների ձեռքբերման պայմանագիր, որի շրջանակում խորհրդատուի կողմից իրականացվել է ԿՖԿՏՀ-ի ներդրման համար անհրաժեշտ ՀՀ ֆինանսների նախարարության համար միջնաժամկետ տեղեկատվական տեխնոլոգիաների (IT) ռազմավարության մշակման, բիզնես գործընթացի համապարփակ նկարագրության և ԿՖԿՏՀ-ի տեխնիկական ու ֆունկցիոնալ առանձնահատկությունների մշակման և սահմանման աշխատանքների առաջին փուլը, որը ներառում է պետական ֆինանսների կառավարման բիզնես գործընթացների վերանայման և վերակազմակերպման, ԿՖԿՏՀ-ում ներառվող բիզնես գործընթացի մանրամասն վերակազմակերպման և նկարագրության, ՀՀ ֆինանսների նախարարության համար ՏՏ ռազմավարության և կառավարման համակարգի մշակման բաղադրիչները:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ**

2014 թվականի տարեկան տվյալների ամփոփումը ցույց տվեց, որ տնտեսության զարգացման միտումները շարունակվում են, սակայն նախորդ տարվա համեմատ ավելի դանդաղ տեմպերով՝ հիմնականում պայմանավորված արտաքին աշխարհի զարգացումների ազդեցությամբ և շինարարության ոլորտի անկմամբ: Տարվա առաջին երեք եռամսյակներին տնտեսական աճը արագացման միտումներ էր դրսևորել երրորդ եռամսյակում աճելով 5,3%-ով, սակայն տարեվերջին տնտեսական աճի տեմպն էապես դանդաղեց և տարեկան աճը կազմեց 3,4%՝ կրելով արտաքին պահանջարկի աճի տեմպերի դանդաղման, փոխարժեքի արժեզրկման, Ռուսաստանից ներհոսող դրամական փոխանցումների կրճատման արդյունքում տնօրինվող եկամտի աճի տեմպերի դանդաղման ազդեցությունը:

Արտաքին պահանջարկի աճի տեմպերի դանդաղման, համաաշխարհային շուկայում պղնձի գների անկման հետևանքով արձանագրվել է նաև ապրանքների արտահանման աճի տեմպի դանդաղում: Այդուհանդերձ, գրանցվեց արտաքին առևտրաշրջանառության փոքր՝ 1% աճ, որը հիմնականում պայմանավորված էր ներմուծման համեմատ արտահանման աճի առաջանցիկ տեմպով: 2014 թվականին միջին գնաճը կազմել է 3.0%: Արձանագրվել է պետական բյուջեի եկամուտների անվանական շուրջ 6.9% աճ, ծախսերի գծով՝ 8.1% աճ: Հարկաբյուջետային քաղաքականությունը 2014 թվականի արդյունքներով ամբողջական պահանջարկի վրա թողել է ընդլայնող ազդեցություն:

**Համախառն պահանջարկ:** 2014 թվականին վերջնական սպառումն իրական արտահայտությամբ աճել է 0.2%-ով: Վերջնական սպառման կառուցվածքում պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները 2014 թվականին կազմել են համապատասխանաբար 14.4% և 85.6%, ընդ որում իրական արտահայտությամբ պետական սպառումը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.9%-ով, իսկ մասնավորը աճել է 0.4% -ով:

Կապիտալ ներդրումները իրական արտահայտությամբ նվազել են 5.9%-ով՝ պայմանավորված հիմնականում մասնավոր հատվածի ներդրումների 8.4% իրական նվազմամբ, որն էլ կապված է շինարարության ոլորտում թողարկման ծավալների կրճատման հետ: Ներդրումներին դրական է նպաստել պետության կողմից կատարվող կապիտալ ծախսերի աճը, որի արդյունքում պետական ներդրումներն իրական արտահայտությամբ աճել են 6.8%-ով:


Ներդրումների նվազումը պայմանավորված էր անշարժ գույքի հետ կապված գործունեության, հանքագործական արդյունաբերության, էներգետիկայի և առևտրի ոլորտներում իրականացվող ներդրումների համապատասխանաբար 15.1%, 34.5%, 18% և 24.5% նվազմամբ:

2014 թվականին ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալները դրամային արտահայտությամբ աճել են 22.6%-ով՝ պայմանավորված, ինչպես ծառայությունների, այնպես էլ ապրանքների արտահանման աճերով: Մյուս կողմից, ապրանքների և ծառայությունների ներմուծումը իրական արտահայտությամբ 7.7% աճ է արձանագրել:

Այսպիսով՝ համախառն պահանջարկի շուրջ 3.4% աճին հիմնականում նպաստել է արտաքին պահանջարկը:

**Համախառն առաջարկ:** 2014 թվականին գրանցվել է ՀՆԱ-ի իրական արտահայտությամբ 3.4%-  
աճ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ: Ընդ որում տնտեսական աճին  
հիմնականում նպաստել են ծառայությունների և գյուղատնտեսության ճյուղերը՝  
համապատասխանաբար 2.2 և 1.5 տոկոսային կետով: Շինարարությունը 0.4 տոկոսային կետով  
բացասական նպաստում է ունեցել տնտեսական աճին: Արդյունաբերության նպաստումը ՀՆԱ աճին  
եղել է զրոյական:

**Գծապատկեր 1.** 2001-2014 թվականներին տնտեսության ճյուղերի ավելացված արժեքների  
նպաստումները ՀՆԱ-ի իրական աճին, տոկոսային կետ:



**Արդյունաբերություն<sup>1</sup>.** 2014 թվականին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի  
ծավալի 2.7% իրական աճ: Վերջինիս հիմնականում նպաստել է մշակող արդյունաբերության 6.1%  
աճը:

Մշակող արդյունաբերության աճն էապես պայմանավորված էր սննդամթերքի արտադրության  
(8.4%), հիմնային մետաղների արտադրության (10.3%) և ծխախոտի արտադրության (36.5%)  
աճերով: Մշակող արդյունաբերության աճին հիմնականում բացասական են նպաստել ոսկերչական  
արտադրատեսակների արտադրության (-45.2%), խմիչքների արտադրության (-3.1%) և  
շինանյութերի արտադրության (-2.7%) ծավալների նվազումը: Ընդ որում, տարեվերջին մշակող  
արդյունաբերության աճի տեմպն արագացել է (մասնավորապես՝ առաջին կիսամյակում ճյուղն աճել  
է 2.9%-ով, մինչդեռ տարվա արդյունքներով՝ 6.1%), որը հիմնականում արդյունք է արտահանման  
շուկաների փոփոխության և Ռուսաստան (ԵՄ-ից հետո մեծությամբ երկրորդ առևտրային գործընկեր)  
արտահանման ծավալների նվազումը որոշակիորեն տեղափոխվել է այլ երկրներ:

Աճ է արձանագրվել նաև «Զրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և  
վերամշակում» ենթաճյուղում (5.9%):

<sup>1</sup> Այսուհետ ներկայացված են ճյուղերի համախառն թողարկումների ցուցանիշները:

Արդյունաբերության աճին բացասական է նպաստել էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ նվազելով 0.7%-ով, որը հիմնականում պայմանավորված է, ինչպես տնօրինվող եկամտի նվազմամբ, այնպես էլ սակագների բարձրացմամբ:

2014 թվականին արդյունաբերության թողարկման՝ 2.7% ցածր աճին հիմնականում նպաստել է ներքին պահանջարկը: Մասնավորապես արդյունաբերական արտադրանքի իրացումն աճել է 9.3%-ով, ներքին շուկայում այն աճել է 14.1%-ով, իսկ այլ երկրներում իրացումն աճել է 2%-ով:

**Գյուղատնտեսություն:** 2014 թվականին գյուղատնտեսության և ձկնորսության համախառն թողարկումն աճել է իրական արտահայտությամբ 7.6%-ով: Բուսաբուծության ենթաճյուղն աճել է 6.9%-ով:

Բուսաբուծության աճին նպաստել են հացահատիկի (7.6%), կարտոֆիլի (11%), բանջարեղենի (9%), բոստանային մշակաբույսերի (18.1%) և խաղողի (8.5%) համախառն արտադրանքի աճը, իսկ պտուղ, հատապտուղի գծով նվազում է եղել (-13.9%)՝ պայմանավորված վաղ գարնան անբարենպաստ բնակլիմայական պայմաններով:

Անասնաբուծության ճյուղն աճել է 7.8%-ով, որը հիմնականում պայմանավորված էր կաթի արտադրության՝ 6.6%, մսի արտադրության՝ 11.2% և ձվի արտադրության 3.8% աճով: Ձկնորսությունն իրական արտահայտությամբ աճել է 24.6%-ով:

**Շինարարություն:** 2014 թվականին ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված շինարարության ծավալները կազմել են 433.2 մլրդ. դրամ՝ իրական արտահայտությամբ նվազելով նախորդ տարվա նկատմամբ 4.3%-ով: Ճյուղի նվազմանը հիմնականում նպաստել են բնակչության միջոցների (-18.9%) և պետական բյուջեի միջոցների (-13.5%) հաշվին իրականացված շինարարության անկման ցուցանիշները: Շինարարությանը դրական է նպաստել համայնքների միջոցների (61.9%) և կազմակերպությունների միջոցների (3.7%) հաշվին իրականացված շինարարության ծավալների իրական աճը:

Ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ շինարարության աճին 2014 թվականին հիմնականում նպաստել են մշակող արդյունաբերության (93.2%), կացության ու հանրային սննդի կազմակերպման (60.6%) ու ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում (33.4%) ենթաճյուղին ուղղվող շինարարության ծավալները:

Ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ 2014 թվականին շինարարությանը բացասական է նպաստել հիմնականում անշարժ գույքի հետ կապված գործունեությանը (-15.1%), ֆինանսական ու ապահովագրական գործունեությանը (-74.8%) և հանքագործական արդյունաբերությանն (-34.5%) ուղղվող շինարարության ծավալների նվազումը:

**Ծառայություններ և առևտուր:** 2014 թվականի ընթացքում մատուցված ծառայությունների ծավալը նախորդ տարվա նկատմամբ իրական արտահայտությամբ աճել է 7.8%-ով, որին հիմնականում նպաստել են մշակույթի, զվարճությունների և հանգստի, անշարժ գույքի հետ կապված գործունեության, տրանսպորտի և ֆինանսական ու ապահովագրական գործունեության հետ կապված ծառայությունների ենթաճյուղերի համապատասխանաբար 56%, 9.5% 8.2% և 8.1% աճը:

2014 թվականին առևտրի շրջանառությունը համադրելի գներով աճել է 1.6%-ով, որին նպաստում է ունեցել մեծածախ առևտրի 5% և ավտոմեքենաների առևտրի 3.9% աճը:

**Տրանսպորտ և կապ:** 2014 թվականին 2013 թվականի համեմատ հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը նվազել է 16.9%-ով: Այն պայմանավորված է եղել ավտոմոբիլային տրանսպորտով (-26.4%) և երկաթուղային տրանսպորտով (-6.6%) բեռնափոխադրումների ծավալների նվազմամբ: Ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալի նվազումը բացատրվում է ներհանրապետական բեռնափոխադրումների (-32.5%) և բեռնափոխադրումների արտահանման (-10.3%) կրճատմամբ: Մայրուղային խողովակաշարային տրանսպորտի բեռնափոխադրումների գծով արձանագրվել է 4.1% աճ, իսկ օդային բեռնափոխադրումների ծավալներն իրական արտահայտությամբ նախորդ տարվա նկատմամբ մնացել են նույնը:

2014 թվականի ընթացքում կապի ծառայություններից ստացված հասույթը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 1.7%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է հեռուստածրագրերի կազմման և հեռարձակման ծառայությունների 11.8% և հեռահաղորդակցության ծառայությունների 1.2% նվազմամբ:

**Գներ և սակագներ:** 2014 թվականի մինչև չորրորդ եռամսյակ, ձևավորված մակրոտնտեսական միջավայրին համապատասխան, ՀՀ ԿԲ-ն վարել է ընդլայնող դրամավարկային քաղաքականություն՝ թուլացնելով և մեղմելով դրամավարկային պայմանները, համախառն պահանջարկի ընդլայնմանը և գնաճի տեմպերի վերականգնմանը նպաստելու համար: Սակայն, տարեվերջում ՀՀ ԿԲ-ն ձգգրտել է դրամավարկային քաղաքականության ուղղությունները՝ ֆինանսական և արժույթային շուկաներում ձևավորված լարվածության մեղմման նպատակով: Արդյունքում, 2014 թվականի դեկտեմբերին արձանագրվել է 3.0% գնաճ՝ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1.1%-ի համեմատ), ձևավորելով գնաճային միջավայր, ինչի պարագայում 12-ամսյա գնաճը ավելացել է և ամսվա վերջին կազմել՝ 4.6%:

ՀՀ սպառողական շուկայում արձանագրված 4.6% 12-ամսյա գնաճն առավելապես պայմանավորվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչքը և ծխախոտը) ապրանքախմբում արձանագրված 6.3 տոկոս գնաճով (նպաստումը գնաճին՝ 3.4 տոկոսային կետ), իսկ ոչ պարենային ապրանքների խմբում արձանագրվել է 1.6 տոկոս գնաճ (նպաստումը գնաճին՝ 0.3 տոկոսային կետ) և բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է 3.0 տոկոս սակագների հավելաճ (նպաստումը գնաճին՝ 0.9 տոկոսային կետ):


2014 թվականի միջին գնաճը կազմել է 3.0%, որը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 2.2% աճով (նպաստումը գնաճին՝ 1.2 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գների 1.7% աճով (նպաստումը գնաճին՝ 0.3 տոկոսային կետ) և ծառայությունների սակագների 5.1% աճով (նպաստումը գնաճին՝ 1.6 տոկոսային կետ):

**Աշխատանքի շուկա:** 2014 թվականին գործազրկության մակարդակը նախորդ տարվա համեմատ աճել է 1.4 տոկոսային կետով՝ կազմելով 17.6%:

2014 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձը 2013 թվականի նկատմամբ աճել է 8.3%-ով՝ կազմելով 171298 դրամ<sup>2</sup>: Միջին ամսական անվանական աշխատավարձերը պետական և ոչ պետական հատվածներում աճել են 9.0% և 7.3%-ով՝ կազմելով համապատասխանաբար՝ 151547 և 199125 դրամ: Իրական աշխատավարձը 2013 թվականի համեմատ աճել է 5.1%-ով:

**Արտաքին հատված:** 2014 թվականին նախորդ տարվա համեմատ արձանագրվել է ապրանքների և ծառայությունների արտահանման աճի տեմպերի արագացում (20.6% աճ): Արտահանման աճի հետ մեկտեղ տարվա երկրորդ եռամսյակից արագացել է նաև սկզբնական եկամուտների աճը և տարվա համար կազմել է 2.8%: Արդյունքում, նշված գործոնները նպաստել են ընթացիկ հաշվի պակասուրդի<sup>3</sup> կրճատմանը և այն կազմել է ՀՆԱ-ի 7.9%-ը՝ նախորդ տարվա ցուցանիշը բարելավելով 0.1 տոկոսային կետով (տե՛ս Գծապատկեր 3):

Գծապատկեր 3. Ընթացիկ հաշվի դինամիկան (մլն ԱՄՆ դոլար)



2014 թվականին ապրանքների գծով բացասական մնացորդը նախորդ տարվա համեմատ նվազել է 1.1%-ով (23.4 մլն ԱՄՆ դոլարով) և կազմել ՀՆԱ-ի 19.0 տոկոսը՝ նախորդ տարվա 20.1%-ի դիմաց:

ՀՆԱ-ի նկատմամբ ապրանքների և ծառայությունների արտահանման կշիռը (միջին հակումը) 2014 թվականին կազմել է 30.3% (2013 թվականին՝ 26.2%): Ապրանքների և ծառայությունների ներմուծումը 2014 թվականին կազմել է ՀՆԱ-ի 50.2%-ը՝ նախորդ տարվա 47.3%-ի դիմաց:

<sup>2</sup> 2014թ. Միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշները նախնական են (այդ թվում պետական և ոչ պետական հատվածներինը), ներկայացված են աճողական կարգով: Ներառված չեն փոքր և գերփոքր կազմակերպությունների ցուցանիշները:

<sup>3</sup> Ներկայացված են վճարային հաշվեկշռի վերանայված տվյալները, որոնք հրատարակվել են 2015 մարտի վերջին:



Արտաքին առևտուր (դոլարային արտահայտությամբ)<sup>4</sup>: Արտաքին ապրանքաշրջանառությունը 2014 թվականի արդյունքներով կազմել է 5920.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 1.0%-ով: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման ծավալների աճ. արտահանումն աճել է 2.7%-ով՝ կազմելով 1519.3 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 0.4%-ով և կազմել 4401.6 մլն ԱՄՆ դոլար:

Ներմուծում: 2014 թվականին նախորդ տարվա համեմատ տեղի է ունեցել ներմուծման աճի տեմպի զգալի դանդաղում՝ հիմնականում պայմանավորված տարվա ընթացքում բնակչության իրական տնօրինվող եկամուտների աճի տեմպի դանդաղմամբ, ինչը հետևանք է աշխատողների դրամական փոխանցումների և անձնական տրանսֆերտների նվազեցման: 2014 թվականին ներմուծման 0.4% աճին հիմնականում նպաստել է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախումբը՝ 0.7 տոկոսային կետով: Տարվա ընթացքում արձանագրվել է ներդրումային բնույթի ապրանքների («Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ», «Տարբեր արդյունաբերական ապրանքներ» ապրանքային խմբեր) ներմուծման 4.8% աճ, որը 0.8 տոկոսային կետով նպաստել է ներմուծման աճին, ընդ որում, այդ ապրանքների տեսակարար կշիռն ընդհանուր ներմուծման մեջ կազմել է 16.2%՝ 0.7 տոկոսային կետով ավելանալով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մակարդակից (15.5%):

Ներմուծման աճի ամենամեծ բացասական նպաստումներն են ունեցել «Հանքահումքային արտադրանք» և «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի ներմուծումը՝ համապատասխանաբար 1.0 և 0.6 տոկոսային կետերով:

Արտահանում: 2014 թվականին նախորդ տարվա համեմատությամբ գրանցվել է արտահանման աճի տեմպի դանդաղում՝ պայմանավորված համաշխարհային տնտեսական զարգացումներով (գործընկեր երկրներում տնտեսական աճի սպասվածից ավելի ցածր տեմպերով և համաշխարհային շուկայում պղնձի գնի անկմամբ):


2014 թվականի արդյունքներով արտահանման 2.7% աճի ամենաբարձր դրական նպաստումը՝ 2.9 տոկոսային կետը, պայմանավորվել է «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբով: Արտահանման աճին նպաստել են նաև «Պատրաստի սննդի արտադրանք» (1.9 տոկոսային կետով) և «Մանածագործական իրեր» (0.8 տոկոսային կետով) ապրանքախմբերը: Արտահանման աճին 1.3 տոկոսային կետով հակադրել է «Հանքահումքային արտադրանք», և «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի արտահանման նվազումը:

Նորմալացված առևտրային հաշվեկշիռ<sup>5</sup>: Տնտեսական անվտանգությունը բնութագրող ցուցանիշներից է նորմալացված առևտրային հաշվեկշռի գործակիցը, որը հիմնականում պայմանավորված դոլարային արտահայտությամբ արտահանման առաջանցիկ աճով, հետձգնաժամային տարիներին բարելավվել և 2013 թվականին կազմել է -0.49: 2014 թվականին նորմալացված հաշվեկշռի գործակիցը մնացել է նույն մակարդակին (տե՛ս Գծապատկեր 4):

<sup>4</sup> Արտանահումը ՖՕԲ, ներմուծումը՝ ՄԻՖ գներով:

<sup>5</sup> Նշված ցուցանիշը հաշվարկվում է որպես առևտրային հաշվեկշռի և ապրանքաշրջանառության հարաբերակցություն և ցույց է տալիս, թե միավոր արտաքին ապրանքաշրջանառության մեջ որքան զուտ արտահանված ապրանք կա:


**Գծապատկեր 4.** Նորմալացված առևտրային հաշվեկշռի գործակիցը



Ներմուծման ծածկման գործակից: 2014 թվականին ներմուծման ծածկման գործակիցը նախորդ տարվա համեմատ աճել է 4.9 տոկոսային կետով. արտահանման հաշվին ֆինանսավորվել է ներմուծման 60.3% (տե՛ս Գծապատկեր 5):


**Գծապատկեր 5.** Ներմուծման ծածկման գործակիցը<sup>6</sup>, տոկոսներով

<sup>6</sup> Ներմուծման ծածկման գործակիցը հաշվարկված է որպես ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման հարաբերակցություն (ՖՕԲ գներով):



Ներձյուղային առևտուր: 2014 թվականի ՀՀ ներձյուղային<sup>7</sup> առևտրի մակարդակի վերլուծությունը վկայում է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Պատրաստի սննդի արտադրանք», «Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «Արվեստի ստեղծագործություններ» ապրանքախմբերի գծով հիմնականում երկկողմանի արտաքին առևտրի մասին (տե՛ս Գծապատկեր 6): Ընդ որում, նշված խմբերի երկկողմանի արտաքին առևտուրը վերջին տարիներին եղել է համեմատաբար կայուն:

Գծապատկեր 6. 2014 թվականի ներձյուղային առևտուրը



<sup>7</sup> Ներձյուղային առևտուրը տեղի է ունենում, երբ երկիրը և՛ ներմուծում, և՛ արտահանում է առանձին ճյուղում արտադրվող ապրանքատեսակներ: Ներձյուղային առևտրի գործակիցը իրենից ներկայացնում է արտահանման և ներմուծման բացարձակ արժեքով փոքրի հարաբերակցությունը մեծին: «0» նշանակում է լրիվ միակողմանի, իսկ «1»՝ լրիվ երկկողմանի առևտուր:

Գծապատկերում դրական և բացասական նշանները տրամադրում են լրացուցիչ տեղեկատվություն և պայմանավորված են համապատասխան ապրանքախմբերի արտաքին առևտրային հաշվեկշռի դրական կամ բացասական մնացորդով: «Արվեստի ստեղծագործություններ» (երկկողմանի առևտուր) ապրանքախմբի դրական առևտրային մնացորդը վկայում է մեր երկրի կողմից այդ ապրանքատեսակների գծով արտաքին աշխարհի պահանջարկը բավարարելու մասին:


Մնացած ապրանքախմբերով տեղի է ունեցել մեծ մասամբ միակողմանի առևտուր՝ ներքին պահանջարկը բավարարելու ուղղությամբ (բացասական առևտրային մնացորդ):

*Արտաքին առևտուրն ըստ գործընկեր երկրների:* 2014 թվականին ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունն ըստ ԱՊՀ և ԵՄ երկրների մասնաբաժինները կրճատվել են համապատասխանաբար 0.3 և 1.6 տոկոսային կետերով և կազմել՝ 28.7% և 26.6%: Արդյունքում այլ երկրների մասնաբաժինն ավելացել է 1.9 տոկոսային կետով, որը հիմնականում պայմանավորված է եղել դեպի Չինաստան արտահանման աճով: ՀՀ խոշոր առևտրային գործընկեր-երկրների շրջանակում ընդգրկված էին Չինաստանը (առևտրաշրջանառության 9.9%), Գերմանիան (7.5%), Իրանը (4.9%), Թուրքիան (3.9%), ԱՄՆ-ն (3.7%), Իտալիան (3.6%), Բելգիան (2.6%), ինչպես նաև ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը (23.7%) և Ուկրաինան (3.6%): Վերջիններիս բաժին է ընկել ՀՀ և ԱՊՀ երկրների միջև 2014 թվականի ընթացքում կատարված ապրանքաշրջանառության շուրջ 95.0%-ը: Հանրապետության թվով 38 հիմնական գործընկեր երկրները մեծամասամբ (մոտ 80%-ը) հանդիսանում են ԱՀԿ անդամ պետություններ:

*Երկկողմանի փոխարժեք:* 2014 թվականի ընթացքում ձևավորված ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկման միտումները նկատվել են և՛ տարեսկզբի փետրվար-ապրիլ ամիսներին, և՛ տարեվերջի երեք ամիսներին: 2014 թվականի վերջին՝ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին, արժեզրկում տեղի ունեցավ արագ տեմպերով, ինչի արդյունքում 2014 թվականի դեկտեմբեր ամսին փոխարժեքը կազմեց 463.53 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց, որը նախորդ տարվա դեկտեմբերին ձևավորված միջին փոխարժեքի (405.32) նկատմամբ արժեզրկվել է 12.6%-ով:

Իսկ տարեկան միջին փոխարժեքը կազմել է 415.92 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց (2013 թվականին՝ 409.63): Նախորդ տարվա միջին փոխարժեքի նկատմամբ գրանցվել է ԱՄՆ դոլարի համեմատ դրամի անվանական արժեքի 1.5% արժեզրկում՝ 2013 թվականի համապատասխան ցուցանիշի 1.9% արժեզրկման դիմաց: Ըստ էության փոխարժեքի նման վարքագիծը հիմնականում պայմանավորված էր համաշխարհային զարգացումներով:


**Գծապատկեր 7.** Դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքի փոփոխության (կուտակային) դինամիկան (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, %)



2014 թվականի ՀՀ դրամն արժեզրկման միտում է դրսևորել նաև եվրոյի նկատմամբ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արժեզրկվելով 1.5%-ով: Իսկ ռուսական ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը միջին հաշվով տարվա ընթացքում արժևորվել է 17.3%-ով:

*Արդյունավետ փոխարժեք:* Արտաքին առևտրի տեսանկյունից առավել կարևոր արժույթներից բաղկացած «զամբյուղի» նկատմամբ ՀՀ ազգային արժույթը 2014 թվականի նախորդ տարվա համեմատ արժևորվել է 8.8%-ով (անվանական արդյունավետ փոխարժեք), ինչը նշանակում է, որ ՀՀ դրամն արժևորվել է (դրամի դիրքերն ուժեղացել են) հիմնական արժույթների միավորված գնի համեմատ, քանի որ վերոնշյալ «զամբյուղում» ընդգրկված մնացած երկրների արժույթները միջին հաշվով դոլարի նկատմամբ արժեզրկվել են ավելի շատ (մոտ 10.3%-ով), քան ՀՀ դրամը (1.5%-ով): Հիմնականում պայմանավորված անվանական արդյունավետ փոխարժեքի վարքագծով՝ իրական արդյունավետ փոխարժեքի 2014 թվականի միջին արժևորումը կազմել է 7.2% (տե՛ս Գծապատկեր 8):

**Գծապատկեր 8.** Իրական արդյունավետ փոխարժեքի ամսական միջին շարժընթացը



**Ֆինանսական շուկա.** 2014 թվականի տարեվերջին փողի բազան կազմել է շուրջ 887 մլրդ դրամ՝ տարեսկզբի համեմատ նվազելով 0.1%-ով: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվները նվազել են 40%-ով, մինչդեռ զուտ ներքին ակտիվները՝ աճել 2 անգամ:

Նույն ժամանակահատվածում փողի բազայում ԿԲ-ից դուրս կանխիկը նվազել է 7.7%-ով (տեսակարար կշիռը փողի բազայում կազմել է շուրջ 46.5%), իսկ պարտադիր պահուստները դրամով և արտարժույթով աճել՝ 7.4%-ով (տեսակարար կշիռը փողի բազայում կազմել է շուրջ 53.1%):

2014 թվականի տարեվերջին փողի զանգվածը կազմել է 1,674.2 մլրդ դրամ՝ տարեսկզբի նկատմամբ աճելով 8.3%-ով, ինչին նպաստել է զուտ ներքին ակտիվների 30% աճը:

Փողի զանգվածում բանկային համակարգից դուրս կանխիկը նվազել է 9.4%-ով, դրամային ավանդներն ապահովել են փողի զանգվածի աճի ընդամենը 0.4 տոկոսային կետը, իսկ արտարժույթով ավանդները՝ 10.3 տոկոսային կետը<sup>8</sup>:

2014 թվականի ընթացքում ՀՀ դրամի արժեզրկումն իր արտացոլումն է գտել դոլարայնացման ցուցանիշում (արտարժույթային ավանդներ/փողի զանգված) նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ՝ աճելով 6 տոկոսային կետով: Դոլարային ավանդների կշիռն ընդհանուր ավանդների մեջ կազմել է 64.6% (աճը՝ 4.5%):

2014 թվականի դեկտեմբերին արտարժույթի նկատմամբ պահանջարկի կտրուկ ավելացման պայմաններում ավանդների կառուցվածքում տեղի են ունեցել փոփոխություններ, մասնավորապես. դրամային և արտարժույթային ժամկետային ավանդներից փոխարկում է եղել ցպահանջ արտարժույթային ավանդների: Միաժամանակ, ֆինանսական շուկայում իրացվելիության կտրուկ անկումը նպաստել է և՛ դրամային, և՛ արտարժույթային ավանդների տոկոսադրույքների աճին:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2014 թվականին նախորդ տարվա նկատմամբ աճել են 9%-ով: Սակայն, փոխարժեքի փոփոխության

<sup>8</sup> Նշենք, որ փողի ագրեգատներում ոչ ռեզիդենտների ավանդները չեն ընդգրկվում:

բացառման դեպքում ստացվում է, որ ավանդների ծավալները մնացել են գրեթե անփոփոխ: Դրամային ավանդների տոկոսադրույքների միջին ամսական մակարդակը (մինչև մեկ տարի ժամկետով) 2014 թվականի դեկտեմբերին կազմել է 12.53%, 2013 թվականի 10.42%-ի համեմատ:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները 2014 թվականին նախորդ տարվա նկատմամբ ավելացել են 22%-ով<sup>9</sup> 2013 թվականի՝ 12%-ի դիմաց (վարկավորման ընդհանուր կառուցվածքում գերակշռում են արտարժույթով վարկերը 66.5%): 2014 թվականի տարեվերջին նկատվել է դրամով վարկավորման տոկոսադրույքների աճ, այսպես, ՀՀ դրամով վարկավորման միջին ամսական տոկոսադրույքը 2014 թվականի դեկտեմբերին կազմել է 16.26%, 2013 թվականի նույն ամսում արձանագրված 15.04%-ի համեմատ:

Առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների և վարկերի միջին ամսական տոկոսադրույքների միջև սպրեդը 2014 թվականին 2013 թվականի նկատմամբ աճել է 0.15 տոկոսային կետով և կազմել 5.98 տոկոսային կետ:

2014 թվականի ընթացքում ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում նկատվել է տոկոսադրույքների նվազում (շուրջ 2.82 տոկոսային կետով): Այսպես, եթե 2013 թվականին տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 12.6%, ապա 2014 թվականին այն կազմել է 9.8%: Նույն ժամանակահատվածում տեղաբաշխված պետական արժեթղթերի ծավալը կազմել է 79.8 մլրդ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 109.8 մլրդ դրամի դիմաց, իսկ միջին ժամկետայնությունը՝ 2049 օր, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1909-ի համեմատ:

2014 թվականին պետական (շուկայական) պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը գերազանցել է թողարկման ցուցանիշը 2.45 անգամ, իսկ տեղաբաշխում/թողարկում հարաբերակցության միջին մեծությունը կազմել է 0.96:

**Աղյուսակ 1. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները 2014թ.**

Ամիսներ	2014											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Առևտրային բանկերի վարկեր*	15.9	17.1	16.7	15.8	17.0	16.5	15.8	17.1	16.4	15.1	17.4	16.3
Առևտրային բանկերի ավանդներ*	10.3	9.8	9.7	10.1	10.2	10.6	10.3	10.7	10.1	10.5	10.3	12.5
ՀՀ ԿԲ ռեպո գործառնություններ	7.75	7.5	7.5	7.5	7.25	7.0	7.0	6.75	6.75	6.75	6.75	8.5

\* Հաշվարկված է մինչև մեկ տարի ժամկետով, միայն դրամով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների համար (առանց միջբանկային շուկայի):

**Հարկաբյուջետային հատված**

Հարկաբյուջետային քաղաքականության մոտեցումը եղել է բազմակողմ և միաժամանակ հավասարակշռված: Ընդ որում, նպատակ է դրվել չափավոր նպաստել տնտեսական

<sup>9</sup> Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները և ռեպո համաձայնագրերը:

վերականգնմանը, որի պայմաններում չի խաթարվի մակրոտնտեսական և հարկաբյուջետային կայունությունը:

2014 թվականի արդյունքներով պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 25.3%-ը՝ նախորդ տարվա 25.1%-ի դիմաց, իսկ հարկային եկամուտները՝ ՀՆԱ-ի 23.5%-ը՝ նախորդ տարվա 23.4%-ի դիմաց: Նախորդ տարվա նկատմամբ պետական բյուջեի եկամուտների անվանական աճը կազմել է 6.9%, իսկ հարկային եկամուտներինը՝ 6.3%: Ընդ որում, հարկային եկամուտների աճը պայմանավորվել է հիմնականում ավելացված արժեքի հարկի, եկամտային հարկի և այլ հարկային եկամուտների աճերով:


ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի ծախսերի ցուցանիշը 2014 թվականի արդյունքներով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 0.6 տոկոսային կետով՝ կազմելով 27.3%: Ընթացիկ ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 24.3%-ը՝ նախորդ տարվա 23.8%-ի դիմաց, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 3%-ը՝ պահպանելով նախորդ տարվա նույն ցուցանիշը: Ընդ որում, ընթացիկ ծախսերը նախորդ տարվա նկատմամբ աճել են 8.5%-ով՝ հիմնականում պայմանավորված սոցիալական նպաստների և կենսաթոշակների ու ծառայությունների և ապրանքների ձեռքբերման գծով ծախսերի աճով: Իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի աճը կազմել է 5.9%:

2014 թվականին պետական բյուջեի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի 2%-ը, նախորդ տարվա 1.7%-ի համեմատ: Պետական բյուջեի պակասուրդը եղել է պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը կայունացնող համարվող մակարդակի շրջանակներում, սակայն 2014 թվականին արտաքին պարտք/ՀՆԱ ցուցանիշն աճել է նախորդ տարվա 37%-ի համեմատ՝ կազմելով 39.7%, իսկ պետական պարտքի ցուցանիշը ՀՆԱ-ի նկատմամբ աճել և կազմել է 46.6%՝ նախորդ տարվա 43.6%-ի դիմաց: Պարտքի նման աճին նպաստող հիմնական գործոնը 2014 թվականի տարեվերջում արձանագրված ՀՀ դրամի նշանակալի արժեզրկումն է եղել, քանի որ պետական պարտքի կառուցվածքում գերակշիռ մասն արտարժույթով է արտահայտված (85%), իսկ արժեզրկման բացակայությունը կնպաստեր պարտքի կրճատմանը:

**Հարկաբյուջետային ազդակը:** 2014 թվականին իրականացված հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա ունեցել է ընդլայնող ազդեցություն (1.13% ընդլայնող հարկաբյուջետային ազդակ), ընդ որում, եկամուտների՝ չեզոք (0.02%) և ծախսերի ընդլայնող (1.11%) ազդեցությամբ պայմանավորված:

#### **Գծապատկեր 9. Հարկաբյուջետային ազդակը 2008 թվականից**






**ՀՀ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեով, ելնելով 5.2% տնտեսական աճի կանխատեսումից, ծրագրվել էր ստանալ 1135.9 մլրդ դրամ եկամուտներ, որից 1115.9 մլրդ դրամը՝ ներքին աղբյուրներից, 20 մլրդ դրամը՝ արտաքին պաշտոնական դրամաշնորհների տեսքով: «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները ներառյալ, ինչպես նաև հաշվի առնելով կառավարության լիազորությունների շրջանակներում կատարված մյուս փոփոխությունները՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների ծրագիրն ավելացվել է շուրջ 52.9 մլրդ դրամով (4.7%-ով) և կազմել շուրջ 1188.8 մլրդ դրամ, որից 1163.6 մլրդ դրամը՝ ներքին աղբյուրներից ստացվող եկամուտների, 25.1 մլրդ դրամը՝ պաշտոնական դրամաշնորհների գծով: 2014 թվականի փաստացի եկամուտները կազմել են շուրջ 1144.8 մլրդ դրամ, որոնք 96.3%-ով ապահովել են ճշտված ծրագրի կատարումը և 6.9%-ով կամ 73.4 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա փաստացի ցուցանիշը: Հարկային եկամուտների և պետական տուրքերի տարեկան ծրագիրը կատարվել է 96.7%-ով, այլ եկամուտների ծրագիրը՝ 99.7%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհների կատարողականը կազմել է 68.7% կամ կանխատեսվածից պակաս է ստացվել 7.9 մլրդ դրամ: Նշենք, որ պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները կազմել են շուրջ 36.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100.7%-ը: Առանց արտաբյուջետային միջոցների՝ պետական բյուջեի եկամուտները կազմել են շուրջ 1108 մլրդ դրամ՝ ապահովելով 96.2% կատարողական:

**Գծապատկեր 10.** ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի եկամուտները




2014 թվականին ՀՆԱ-ի նկատմամբ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հարաբերակցությունը կազմել է 25.3%, որը 0.2 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը և 1.24 տոկոսային կետով՝ կանխատեսված ցուցանիշը<sup>10</sup>:

2013 թվականի համեմատ պետական բյուջեի եկամուտների 6.9%-ով աճը գերազանցապես պայմանավորված է հարկային եկամուտների 5.3%-ով կամ 51.2 մլրդ դրամ աճով: Հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատ աճ է արձանագրվել նաև մյուս եկամտատեսակների գծով, մասնավորապես՝ պետական տուրքերն աճել են 44%-ով (12 մլրդ դրամով), այլ եկամուտները՝ 10.9%-ով (6.2 մլրդ դրամով), իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ 30%-ով ( շուրջ 4 մլրդ դրամով):


**Գծապատկեր 11. ՀՀ պետական բյուջեի եկամուտների աճը, 2013=100%**

<sup>10</sup> ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի ուղերձում բյուջեի եկամուտներ/ՀՆԱ կանխատեսված ցուցանիշը կազմել է 24.05%:



Այլ եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների համեմատաբար բարձր աճի արդյունքում 2013 թվականի համեմատ 2014 թվականի պետական բյուջեի եկամուտներում 0.2 տոկոսային կետով ավելացել է այլ եկամուտների, 0.27 տոկոսային կետով՝ պաշտոնական դրամաշնորհների տեսակարար կշիռը, իսկ հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով նույն ցուցանիշը նվազել է 0.47 տոկոսային կետով:

Գծապատկեր 12. « Կետական բյուջեի եկամուտների կառուցվածքը




Հարկային եկամուտներ և պետական տուրքեր

« 2014 թվականի պետական բյուջեի եկամուտների 93%-ն ապահովվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի հաշվին, որոնք կազմել են ավելի քան 1064.1 մլրդ դրամ և 96.7%-ով ապահովել կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված տարեկան ծրագիրը: Նշված գումարից 1024.8 մլրդ դրամը կազմել են հարկային եկամուտները, 39.3 մլրդ դրամը՝ պետական տուրքերը: Դիտարկելով հարկային եկամուտների և պետական տուրքերի

ամսական շարժը՝ կարելի է արձանագրել, որ 2014 թվականին հարկային եկամուտներն ունեցել են հիմնականում կայուն վարքագիծ, տարվա գրեթե բոլոր ամիսներին արձանագրվել է մուտքերի աճ նախորդ տարվա համապատասխան ամիսների համեմատ:


**Գծապատկեր 13.** ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ ամիսների, 2013-2014թթ.



2014 թվականին ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների և պետական տուրքերի հարաբերակցության ցուցանիշը կազմել է 23.5%՝ 0.27 տոկոսային կետով գերազանցելով կանխատեսված և 0.1 տոկոսային կետով՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները: Հարկային սահունության գործակիցը 2013 թվականին կազմել է 1.1 (ՀՆԱ-ի աճի յուրաքանչյուր տոկոսային կետին բաժին է ընկել հարկերի և տուրքերի 1.1 տոկոսային կետով աճ)՝ 2013 թվականի 2.1-ի դիմաց:

2013 թվականի համեմատ հարկային եկամուտները և պետական տուրքերն աճել են 6.3%-ով կամ 63.2 մլրդ դրամով, որի գերակշիռ մասը՝ 51.2 մլրդ դրամը, բաժին է ընկնում հարկերին: Ընդ որում, նախորդ տարվա համեմատ աճ է արձանագրվել գրեթե բոլոր հարկատեսակների գծով, բացառությամբ շահութահարկի, ակցիզային հարկի և հաստատագրված վճարների: Աճի հիմնական աղբյուր են հանդիսացել ավելացված արժեքի հարկը, եկամտային հարկը և պետական տուրքը: Բացի այդ, 2014 թվականի հուլիսի 1-ից «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվել է նոր հարկատեսակ՝ նպատակային սոցիալական վճարը, որի գծով հաշվետու տարում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 4.8 մլրդ դրամ:

**Գծապատկեր 14.** ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքը, 2013-2014թթ.



2014 թվականին հարկային եկամուտների և պետական տուրքերի 41.4%-ն ապահովվել է *ավելացված արժեքի հարկի* հաշվին, որը կազմել է շուրջ 440.4 մլրդ դրամ: Նշված գումարից 267.9 մլրդ դրամը ստացվել է «Սահմանին հարկումից, 172.4 մլրդ դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջե մուտքագրված ԱԱՀ-ն աճել է 9.6%-ով կամ շուրջ 38.5 մլրդ դրամով: Հարկ է նշել, որ ԱԱՀ-ի մուտքերի աճն ապահովվել է ինչպես ներքին շրջանառությունից, այնպես էլ մաքսային սահմանին գանձված գումարների հաշվին: Մասնավորապես, ապրանքների ներմուծումից ստացված ավելացված արժեքի հարկը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է 7.3%-ով, իսկ ներքին շրջանառության գծով մուտքերի աճը կազմել է 13.3%: ԱԱՀ-ի աճի գործոններից է տնտեսավարող սուբյեկտների կողմից իրացման ծավալների աճը, որը պայմանավորված է նաև սպառողական գների 3 տոկոս աճով: ԱԱՀ-ի աճը պայմանավորված է նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով: 2014 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությամբ (ՀՕ-129-Ն, ընդունվել է 07.10.2010թ.) 2014 թվականի հունվարի 1-ից ծխախոտի արտադրանքի հարկումը հաստատագրված վճարներով հարկման համակարգից տեղափոխվել է հարկման ընդհանուր համակարգ, և սահմանվել է, որ ծխախոտի արտադրանքի ներմուծման և իրացման գործարքների՝ ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում ՀՀ կառավարության սահմանած կարգով մակնշված՝ ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գինը՝ առանց ԱԱՀ-ի:

2013 թվականի նոյեմբերի 12-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-110-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 1-ից) սահմանվել է, որ ՀՀ կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում, 200 մլն դրամը (նախկինում գործող 300 մլն դրամի փոխարեն) գերազանցող, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1 հոդվածում նշված ապրանքներից բացի, այլ ապրանքների ներմուծման դեպքում սահմանված կարգով մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը հետաձգվում է երեք տարի ժամկետով:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտների և պետական տուրքերի 9.7%-ն ապահովվել է *շահութահարկի հաշվին*՝ կազմելով 103.6 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի մուտքերը նվազել են 16.9%-ով կամ 21 մլրդ դրամով: Շահութահարկի նվազումը հիմնականում պայմանավորված է ոչ պետական ձեռնարկություններից, մեկ տոկոս դրույքաչափով վճարվող շահութահարկի և ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից վճարված շահութահարկի նվազմամբ: Շահութահարկի նվազման հիմնական պատճառներից են ՀՆԱ-ի կազմում շահութահարկի հիմնական բազա հանդիսացող տնտեսության ոլորտներում արձանագրված անկման միտումները: Մասնավորապես, հանքագործական արդյունաբերության և բաց հանքերի շահագործման ոլորտում արդյունաբերական արտադրանքի արտադրության ծավալները նվազել են 7.4%-ով, էլեկտրաէներգիայի արտադրության, հաղորդման և բաշխման ոլորտում՝ 2.5%-ով: Նվազագույն շահութահարկի մասով մուտքերի անկումը պայմանավորված է 2014 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությամբ (ՀՕ-238-Ն, ընդունվել է 19.12.2012թ.), ըստ որի 2014 թվականի հունվարի 1-ից վերացվել է նվազագույն շահութահարկի համակարգը: Ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից վճարված շահութահարկի նվազման պատճառ է հանդիսացել ֆինանսավարկային գործառնությունների ծավալների նվազումը:

2012 թվականի դեկտեմբերի 19-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-238-Ն օրենքի 8-րդ հոդվածով սահմանվել է, որ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է սեփականության իրավունքով հարկատուին պատկանող կամ վարձակալությամբ (այդ թվում՝ լիզինգով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված հիմնական միջոցների վրա կատարված սպասարկման ծախսերի չափով՝ դրանց կատարման տարվա ընթացքում:

2013 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-129-Ն օրենքի 1-ին հոդվածով սահմանվել է, որ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների կողմից «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վճարված պարբերական և միանվագ երաշխիքային վճարների, երաշխիքային ֆոնդի կողմից մասնակիցներին հատուցված և կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների նկատմամբ ձեռք բերված պահանջի հիման վրա դրանցից ստացված գումարների, ինչպես նաև կատարված ներդրումներից ստացված եկամուտների մասով «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված երաշխիքային ֆոնդի՝ շահութահարկի վճարումից ազատման արտոնությունը տարածվում է ոչ թե 2014 թվականի հունվարի 1-ից, այլ նաև 2013 թվականի հունվարի 1-ից հետո ստացված վերոնշյալ եկամուտների նկատմամբ:

2014 թվականին *չրջանառության հարկի* գծով ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 15.6 մլրդ դրամ (կազմելով հարկային եկամուտների և պետական տուրքերի 1.5%-ը), որը 16.7%-ով կամ 2.2 մլրդ դրամով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված այլ գործունեության (եկամուտների) տեսակներից և առևտրական (առք ու

վաճառքի) գործունեությունից ստացված մուտքերի աճով: Աճը պայմանավորված է նրանով, որ 2013 թվականի տարեկան մուտքերում հիմնականում մեկ եռամսյակի մուտքերի չափով եկամուտները բացակայում են, քանի որ նշված հարկատեսակն ուժի մեջ է մտել 2013 թվականի հունվարի 1-ից, իսկ շրջանառության հարկ վճարողները շրջանառության հարկի գումարը պետական բյուջե են վճարում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող առաջին ամսվա 20-ը: Շրջանառության հարկի գումարից 9.9 մլրդ դրամը մուտքագրվել է առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից, 1.4 մլրդ դրամը՝ արտադրական գործունեությունից ստացվող եկամուտներից, 770 մլն դրամը՝ ռեզիդենտների կողմից ստացվող պասիվ եկամուտներից, 260.2 մլն դրամը՝ նոտարական գործունեությունից և 3.3 մլրդ դրամը՝ այլ գործունեության տեսակներից ստացվող եկամուտներից:

2014 թվականի հունիսի 21-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-128-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2014 թվականի հոկտեմբերի 1-ից) առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար շրջանառության հարկի դրույքաչափը 3.5 տոկոսի փոխարեն սահմանվել է 1 տոկոս, և զուգահեռաբար սահմանվել է կատարվող ձեռքբերումները փաստաթղթերով հիմնավորելու պարտադիր պահանջ:

Հաշվետու ժամանակահատվածում *եկամտային հարկը* կազմել է շուրջ 289.2 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների և պետական տուրքերի 27.2%-ը: Եկամտային հարկից մուտքերը նախորդ տարվա համեմատ աճել են 15.2%-ով կամ 38.1 մլրդ դրամով, որը մասամբ պայմանավորված է 2014 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ (ՀՕ-157-Ն, ընդունվել է 12.12.2013թ.), որով բարձրացվեցին պետական ծառայողների աշխատավարձերը: Եկամտային հարկի աճի պատճառ է հանդիսացել նաև «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում կատարված 2014 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունը (ՀՕ-187-Ն, ընդունվել է 12.12.2013թ.), ըստ որի նվազագույն ամսական աշխատավարձը 45000 դրամից դարձավ 50000 դրամ: Նախորդ տարվա համեմատ եկամտային հարկի աճին նպաստել է նաև այն հանգամանքը, որ 2013 թվականի ընթացքում մեկ ամսվա եկամտային հարկի մուտքը գրեթե բացակայում է, քանի որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ է մտել 2013 թվականի հունվարի 1-ից, իսկ եկամտային հարկը պետական բյուջե է վճարվում ֆիզիկական անձանց եկամուտների հաշվարկման ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ: Եկամտային հարկի աճը պայմանավորված է նաև պասիվ եկամուտներից մուտքերի, մասնավորապես, գույքն օտարելու դիմաց ստացված եկամտային հարկի մուտքերի աճով:

2013 թվականի հունվարի 1-ից «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի ներդրմամբ փոփոխվել են «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ԱԱՀ վճարող հանդիսացող անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից ձեռնարկատիրական գործունեության մասով եկամտային հարկի դրույքաչափերը: Մասնավորապես՝ սահմանվել է, որ տարեկան մինչև 1440000 դրամ հարկվող եկամտի դեպքում ԱԱՀ վճարող հանդիսացող անհատ ձեռնարկատերերը և նոտարները



Եկամտային հարկը վճարում են հարկվող եկամտի 24.4 տոկոսի, իսկ տարեկան 1440000 դրամ հարկվող եկամտից ավել եկամուտների դեպքում՝ 351360 դրամին գումարած 1440000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսի չափով:

2014 թվականի հունիսի 21-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-134-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2014 թվականի հոկտեմբերի 1-ից) ընտանիքի անդամների կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը (ընտանեկան ձեռնարկատիրությունը) ազատվել է պետական հարկերից: Նշյալ օրենքով, մասնավորապես, սահմանվել է, որ

1. ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտներ են համարվում այն անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում բոլոր տեսակների մասով ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացումից հասույթը՝ առանց ԱԱՀ-ի չի գերազանցել 18 մլն դրամը,

2. ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված ընտանիքի անդամներին (այդ թվում՝ վարձու աշխատող համարվող) ընտանեկան ձեռնարկատիրության մասով հարկային գործակալի կողմից վճարվող հարկվող եկամուտներից եկամտային հարկը հաշվարկվում և վճարվում է յուրաքանչյուր անձի համար ամսական 5 հազար դրամի չափով, որը նրանց համար համարվում է եկամտային հարկի գծով վերջնական հարկային պարտավորություն:

2014 թվականին մինչև 2013 թվականն առաջացած պարտավորությունների գծով ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 171.5 մլն դրամ եկամտահարկ և 12.2 մլրդ դրամ պարտադիր սոցիալական ապահովության վճարներ:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 4.8%-ն ապահովվել է *ակցիզային հարկի* հաշվին՝ կազմելով շուրջ 50.6 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթակազմային ապրանքների հարկումից ստացվել է 32.2 մլրդ դրամ, հանրապետությունում արտադրվող ենթակազմային ապրանքների հարկումից՝ 18.3 մլրդ դրամ: 2013 թվականի համեմատ ակցիզային հարկի մուտքերը նվազել են 3%-ով կամ 1.5 մլրդ դրամով: Ընդ որում, ներմուծվող ապրանքների գծով մուտքերն արձանագրել են 14.1% անկում, մինչդեռ տեղական արտադրության ենթակազմային ապրանքների հարկումից ստացված մուտքերն աճել են 25.9%-ով: Ակցիզային հարկի նվազումը պայմանավորված է հիմնականում ՀՀ ներմուծվող ծխախոտի արտադրանքի ծավալների (ԱՏԳԱԱ 24022090011) նվազմամբ և նշված ԱՏԳԱԱ մասով ակցիզային հարկի դրույքաչափի նվազմամբ: Այսպես, «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի համաձայն 2013 թվականին ԱՏԳԱԱ 24022090011 ներմուծվող ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարը հազար հատի համար սահմանված էր 8000 դրամ, որի կազմում ակցիզային հարկի մասնաբաժինը կազմում էր 76.5 տոկոս, իսկ 2014 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխության (ՀՕ-126-Ն, ընդունվել է 07.10.2010թ.) համաձայն նշված ապրանքատեսակի ակցիզային հարկը 1000 հատի համար կազմում է 5000 դրամ: Ակցիզային հարկի նվազման պատճառներից է հանդիսացել նաև 2014 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած

օրենսդրական փոփոխությունը (ՀՕ-24-Ն, ընդունվել է 22.05.2014թ.), որով վերացվել է 25.0 մլն դրամից ավելի մաքսային արժեք ունեցող կամ մինչև 2 տարին ներառյալ թողարկման տարեթիվ և 4500 սմ<sup>3</sup> և ավելի շարժիչի աշխատանքային ծավալ ունեցող թեթև մարդատար ավտոմեքենաների ներմուծման համար սահմանված ակցիզային հարկը:

Հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 48.4 մլրդ դրամ մաքսատուրք՝ ապահովելով հարկերի և տուրքերի 4.5%-ը: Նախորդ տարվա համեմատ մաքսատուրքի գծով բյուջետային մուտքերն աճել են 4.5%-ով կամ 2.1 մլրդ դրամով՝ պայմանավորված, մասնավորապես, 2014 թվականին 2013 թվականի համեմատ 10 տոկոս մաքսատուրքի դրույքաչափով հարկվող ապրանքների ներմուծման ծավալների աճով: Նշենք, որ 2014 թվականին 2013 թվականի համեմատ ներմուծման ծավալներն աճել են ընդամենը 0.4 տոկոսով, իսկ դրամային մուտքերի աճը պայմանավորված է նաև դուլար/դրամ փոխարժեքի աճով: Մաքսատուրքի աճի պատճառներից է հանդիսացել նաև 2014 թվականի հուլիսի 5-ից ուժի մեջ մտած ՀՀ մաքսային օրենսգրքում կատարված փոփոխությունը (ՀՕ-46-Ն, ընդունվել է 20.05.2014թ.), համաձայն որի փոփոխվել է ֆիզիկական անձանց կողմից որպես ուղեկցող բեռ և միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների համար մաքսատուրքերի հաշվարկման համակարգը: Մասնավորապես, սահմանվել է, որ՝

1) ֆիզիկական անձանց կողմից որպես ուղեկցող բեռ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների համար մաքսատուրքը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով՝

ա) 0 տոկոս, եթե տեղափոխվող ապրանքների ընդհանուր քաշը չի գերազանցում 50 կիլոգրամը, իսկ ձեռք բերման արժեքը՝ 150 հազար դրամը,

բ) 2.5 տոկոս, եթե ներմուծվող ապրանքների ընդհանուր քաշը չի գերազանցում 50 կիլոգրամը, իսկ ձեռք բերման արժեքը գերազանցում է 150 հազար դրամը, բայց չի գերազանցում 300 հազար դրամը,

գ) 2.5 տոկոս, եթե ներմուծվող ապրանքների ընդհանուր քաշը գերազանցում է 50 կիլոգրամը, բայց ձեռք բերման արժեքը չի գերազանցում 300 հազար դրամը,

2) ֆիզիկական անձանց կողմից միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների համար մաքսատուրքը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով՝

ա) 0 տոկոս, եթե տեղափոխվող ապրանքների ընդհանուր քաշը չի գերազանցում 20 կիլոգրամը, իսկ ձեռքբերման արժեքը՝ 150 հազար դրամը,

բ) 2.5 տոկոս, եթե ներմուծվող ապրանքների ընդհանուր քաշը չի գերազանցում 20 կիլոգրամը, իսկ ձեռք բերման արժեքը գերազանցում է 150 հազար դրամը, սակայն չի գերազանցում 300 հազար դրամը:

Միաժամանակ, նույն հոդվածով հանվել է ֆիզիկական անձանց կողմից որպես ուղեկցող բեռ և միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար արտոնությունից օգտվելու՝ նախկինում սահմանված ժամկետային սահմանափակումը:

Օրենքի 21-րդ հոդվածով սահմանվել է, որ մաքսային մարմնի կողմից ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված կարգով նախնական որոշում (մաքսային մարմինների կողմից տրամադրվող՝ ներմուծվող կամ արտահանվող ապրանքների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող փաստաթուղթ) տրամադրելու համար գանձվում է 30 հազար դրամ մաքսավճար՝ յուրաքանչյուր նախնական որոշման համար:

2014 թվականին պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 4.9 մլրդ դրամ *հաստատագրված վճարներ*՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 0.5%-ը: Նշված ցուցանիշը նախորդ տարվա համեմատ նվազել է 56%-ով՝ հիմնականում պայմանավորված այն հանգամանքով, որ 2014 թվականի հունվարի 1-ից վերանայվել է խաղատների գործունեության կազմակերպման, շահումով խաղային ավտոմատների շահագործման, ինչպես նաև ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման հարկման համակարգը, և սահմանվել է, որ նշյալ գործունեության տեսակների կազմակերպիչները վճարում են ոչ թե հաստատագրված վճար, այլ պետական տուրք:

2014 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 35.2 մլրդ դրամ *բնապահպանական և բնօգտագործման վճարներ*՝ կազմելով հարկերի և տուրքերի 3.3%-ը: Նշված գումարից 12.1 մլրդ դրամը կազմել են բնապահպանական վճարները, 23 մլրդ դրամը՝ բնօգտագործման վճարները: Նախորդ տարվա համեմատ բնապահպանական և բնօգտագործման վճարների ընդհանուր գումարը գրեթե չի փոփոխվել, սակայն արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթիի գծով մուտքերը նվազել են 8.9%-ով կամ 2 մլրդ դրամով, իսկ այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու, ՀՀ-ում իրացվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների և ջրօգտագործման համար գանձվող վճարների գծով մուտքերն աճել են համապատասխանաբար 28.5%-ով, 59%-ով և 158.1%-ով:

2014 թվականին ջրօգտագործման վճարները կազմել են 467.2 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով մոտ 2.6 անգամ կամ 286.2 մլն դրամով, որի հիմնական պատճառներից մեկը 2014 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխություններն են (ՀՕ-123-Ն, ընդունվել է 12.12.2013թ.), ըստ որի ձկնաբուծական և խեցգետնաբուծական գործունեություն իրականացնող վճարողները ջրօգտագործման համար վճարի հաշվարկն իրականացնում են ոչ թե օգտագործվող ջրի ընդհանուր ծավալի 5 տոկոսի հիման վրա, այլ՝ ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում՝ ստորերկրյա ջրերի արդյունահանված պաշարի ընդհանուր ծավալի 50 տոկոսի, ինչպես նաև մակերևութային ջրերի օգտագործված ընդհանուր ծավալի 10 տոկոսի հիման վրա, ՀՀ մյուս տարածքներում՝ ստորերկրյա ջրերի արդյունահանված պաշարի, ինչպես նաև մակերևութային ջրերի օգտագործված ընդհանուր ծավալի 5 տոկոսի հիման վրա: Նույն օրենքով սահմանվել է նաև, որ ՀՀ ջրային օրենսգրքի համաձայն ջրօգտագործման թույլտվություն չունենալու (այդ թվում՝ ջրօգտագործման թույլտվություններում ջրօգտագործման ծավալները կամ ջրային ռեսուրսներ կամ դրանց ջրահավաք ավազաններ թափվող կեղտաջրերի թույլատրելի ծավալները կամ կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի մասին տվյալները

չնշվելու) դեպքում, «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերի եռապատիկի փոխարեն կիրառվում են նույն հոդվածով սահմանված դրույքաչափերի տասնապատիկը՝ ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում, հնգապատիկը՝ ՀՀ մյուս տարածքներում:

Պինդ օգտակար հանածոների, բացառությամբ մետաղական օգտակար հանածոների մարված պաշարների, ստորերկրյա քաղցրահամ ու հանքային ջրերի և աղի արդյունահանված պաշարների համար բնօգտագործման վճարից մուտքը կազմել է 1.5 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 9.8%-ով կամ 166.8 մլն դրամով: Նշված մուտքերի վրա ազդող բացասական գործոն է հանդիսացել ստորերկրյա քաղցրահամ ու հանքային ջրերի և աղի արդյունահանված պաշարների նվազումը, հանքագործական արդյունաբերության և բաց հանքերի շահագործման (բացառությամբ մետաղական հանքաքարի արդյունահանման) ոլորտի 9.2%-ով անկումը:

Ամրակայված աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական վճարի մուտքերը կազմել են շուրջ 170.5 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 19.2%-ով կամ 40.5 մլն դրամով, որի հիմնական պատճառ է հանդիսացել ամրակայված աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման ծավալների նվազումը:

Ավտոմեքենաներից, գյուղմեքենաներից և լողամիջոցներից վնասակար նյութեր արտանետելու համար բնապահպանական վճարի մուտքերը կազմել են 784.1 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 1.6%-ով կամ 12.6 մլն դրամով:

Ջրային ավազան վնասակար նյութերի և միացությունների արտանետման դիմաց բնապահպանական վճարի մուտքերը կազմել են 250.9 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.9%-ով կամ 2.3 մլն դրամով:

Շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների սահմանված կարգով տեղադրման համար բնապահպանական վճարը կազմել է շուրջ 99.4 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 1.9%-ով կամ 1.8 մլն դրամով:

Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման դիմաց վճարված բնապահպանական վճարը կազմել է 7.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 28.5%-ով կամ 1.6 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է այլ պետություններում հաշվառված՝ ՀՀ մուտք գործող ավտոտրանսպորտային միջոցների և, մասնավորապես, թողարկման ավելի հին տարեթիվ ունեցող ավտոմեքենաների թվաքանակի աճով:

Շրջակա միջավայրին վնաս պատճառող ՀՀ ներմուծվող ապրանքների համար վճարված բնապահպանական վճարը կազմել է 2.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 1.8%-ով կամ 42.4 մլն դրամով:

Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և իրացվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների դիմաց բնապահպանական վճարի մուտքերը կազմել են ավելի քան 1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 59%-ով կամ 376.9 մլն դրամով, որը պայմանավորված է «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ ՀՀ-ում արտադրվող ապրանքների իրացման շրջանառության աճով:

Կենսապաշարների օգտագործման վճարները կազմել են շուրջ 267.4 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 3.1%-ով կամ 8.4 մլն դրամով:

Արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթիից ստացված մուտքերը 2014 թվականին կազմել են շուրջ 20.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 8.9%-ով կամ ավելի քան 2 մլրդ դրամով: Նվազման պատճառ է հանդիսացել մետաղական հանքաքարի արդյունահանման ծավալների 7.3%-ով նվազումը և Լոնդոնի մետաղների բորսայի տվյալների հիման վրա հայտարարված պղնձի միջին տարեկան գների 6.4%-ով անկումը:

Հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել 24.7 մլրդ դրամի այլ հարկեր՝ կազմելով հարկերի և տուրքերի 2.3%-ը: Նախորդ տարվա համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն աճել է 67.4%-ով կամ 9.9 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված օրենսդրական փոփոխություններով: Մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ (ՀՕ-131-Ն, ընդունվել է 11.12.2013թ.) ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները, որոնք նախկինում հաշվառվում էին այլ եկամուտներում, 2014 թվականի հունվարի 1-ից ներառվել են հարկային եկամուտներում: Այլ հարկերի փաստացի ցուցանիշի վրա զգալի ազդեցություն է ունեցել նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխության համաձայն (ՀՕ-67-Ն, ընդունվել է 21.06.2014թ.) 2014 թվականի հուլիսի 1-ից նպատակային սոցիալական վճարների ներդրումը: Այլ հարկերում 6.7 մլրդ դրամ են կազմել արտոնագրային վճարները՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 2.1%-ով կամ 143.7 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրումների և ատամնաբուժական գործունեության ոլորտներում իրականացված գործունեության տեսակներից մուտքերի կրճատմամբ: 2014 թվականին ավելի քան 6.6 մլրդ դրամ են կազմել ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները՝ 26.2%-ով գերազանցելով նախորդ տարվա մուտքը: Շուրջ 3.7 մլրդ դրամ է մուտքագրվել ճանապարհային վճարների գծով, որոնք նախորդ տարվա համեմատ աճել են 5%-ով կամ շուրջ 173.9 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված այլ պետություններում գրանցված ծանրաքաշ տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար սահմանված ճանապարհային վճարի աճով: 1.4 մլրդ դրամ են կազմել հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները՝ 61.2%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: 332.2 մլն դրամ են կազմել դրոշմապիտակների իրացումից մուտքերը, որոնք 48.6%-ով գիջել են նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված 2013 թվականի հունվարի 7-ից ուժի մեջ մտած «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ (ՀՕ-252-Ն, ընդունվել է 19.12.2012թ.), ըստ որի օգտագործված դրոշմապիտակների ձեռք բերման համար վճարված գումարը (բացառությամբ այն դրոշմապիտակների ձեռք բերման համար վճարված գումարների, որոնք չեն օգտագործվել և չեն վերադարձվել) հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացվող՝ վերադաս հարկային մարմնի կողմից սահմանված ձևով դիմումի հիման վրա հաշվանցվում է հարկային պարտավորությունների դիմաց: Հաշվետու տարում 687.9 մլն դրամ է մուտքագրվել հանրային

ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների, շուրջ 4.8 մլրդ դրամ՝ նպատակային սոցիալական վճարների և 1.3 մլրդ դրամ՝ հարկային ծառայության մարմնի համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի գծով: Վերջիններս նախորդ տարվա համեմատ նվազել են 14%-ով կամ 204.4 մլն դրամով, որը պայմանավորված է հարկային ընթացակարգով հայտնաբերվող խախտումների նվազմամբ:

2014 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 39.3 մլրդ դրամ *պետական տուրքեր*՝ 100.3%-ով ապահովելով ՀՀ կառավարության տարեկան ծրագրի կատարումը: Պետական տուրքի բոլոր տեսակներն ամբողջությամբ ապահովել են կամ գերազանցել են ծրագրային ցուցանիշները: Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիության փոփոխման համար և մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տրամադրելու համար վճարվող տուրքերը համապատասխանաբար 27%-ով և 19.5%-ով գերազանցել են ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ պետական տուրքի մուտքերն աճել են 44%-ով կամ 12 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների, լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու և ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակության փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող տուրքերի աճով:

2014 թվականին դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական բյուջե է վճարվել շուրջ 1.8 մլրդ դրամ (որից շուրջ 240 մլն դրամը կազմում են պետական կառավարման մարմինների կողմից վճարված և պետական բյուջեից փոխհատուցված գումարները)՝ 100%-ով ապահովելով կանխատեսված ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերը նվազել են 19.1%-ով կամ շուրջ 424 մլն դրամով, որը պայմանավորված է դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճենների (կրկնօրինակների) քանակի նվազմամբ: Նշված մուտքերի վրա դրական ազդեցություն են ունեցել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությունները, որոնցով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի «բ» կետով սահմանվել է պետական տուրքը վերադարձնելու նոր կարգ, որի համաձայն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վճռաբեկ բողոքը վերադարձվելու կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվելու դեպքում պետական տուրքը, բայց ոչ ավելի, քան քսան հազար ՀՀ դրամ, չի վերադարձվում (լրացումն ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից):

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիության փոփոխման համար վճարվող տուրքերը կազմել են 48 մլն դրամ, որը 27%-ով գերազանցել է կանխատեսված ցուցանիշը և 58.8%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը՝ պայմանավորված ՀՀ քաղաքացիություն ստանալու և ՀՀ քաղաքացիության փոփոխման համար դիմողների քանակի աճով:

Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների դիմաց պետական բյուջե է վճարվել 2.1 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2013 թվականի համեմատ նշված տուրքերը նվազել են 3.9%-ով կամ 83.7 մլն դրամով, ինչը պայմանավորված է մատուցված հյուպատոսական ծառայությունների քանակի նվազմամբ:

Պետական տուրքերի 11.1%-ը բյուջե է վճարվել պետական գրանցումների դիմաց՝ կազմելով շուրջ 4.4 մլրդ դրամ, որը 100.2%-ով ապահովել է ծրագրային ցուցանիշը և 6.3%-ով գերազանցել նախորդ տարվա փաստացի մուտքերը: Նախորդ տարվա համեմատ պետական գրանցման համար գանձված տուրքերի աճը պայմանավորված է հիմնականում ավտոմեքենայի պետական համարանիշ տալու, կորցրած պետական համարանիշ վերականգնելու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենայի գրանցման, պետական համարանիշ տալու, ինչպես նաև կորցրած պետական համարանիշ վերականգնելու, ջրային փոխադրամիջոցների գրանցման, լիցենզառուների տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու և ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) և կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու համար տուրքերի աճով: Նշված մուտքերը կազմել են 3.2 մլրդ դրամ կամ ծրագրվածի 100.1%-ը և 7.4%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: Աճը պայմանավորված է նրանով, որ շահագործվող տրանսպորտային միջոցների զգալի մասը վարում են առքուվաճառքի պայմանագրով այլ քաղաքացիներ, սակայն արագաչափերի և տեսանկարահանող սարքերի միջոցով արձանագրված քաղաքացիների նկատմամբ վարչական իրավախախտումների որոշումներն ուղարկվում են այն քաղաքացիներին, որոնց անունով հաշվառված է տրանսպորտային միջոցը: Նման դեպքերից խուսափելու նպատակով քաղաքացիների մի մասը իր կողմից վարած տրանսպորտային միջոցը հաշվառումից հանել և իր անունով է հաշվառել, որի արդյունքում 2014 թվականին արձանագրվել է իրացված հաշվառման պետհամարանիշերի քանակի աճ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տրանսպորտային միջոցների յուրաքանչյուր հաշվառման գործողություն (համարանիշերի փոխանակում, վերասարքավորում, ավտոմոբիլի սեփականատիրոջ հասցեի փոփոխություն) հանգեցնում է ավտոմոբիլի (մոտոցիկլետի) հաշվառման վկայագրի փոփոխության, ավելացել է նաև հատկացված հաշվառման վկայագրերի քանակը: Պետական գրանցման դիմաց գանձված տուրքերից 911.9 մլն դրամը ստացվել է գույքի նկատմամբ պետական գրանցման համար, որը 1.4%-ով գերազանցել է ծրագրված և 3.6%-ով՝ նախորդ տարվա մուտքերը:

Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տրամադրելու դիմաց 2014 թվականին պետական բյուջե է վճարվել 1.1 մլն դրամ, որը 19.5%-ով գերազանցում է նախատեսվածը և 1.7%-ով զիջում է նախորդ տարվա փաստացի մուտքերը: 2013 թվականին մշակութային արժեքների արտահանման համար տրամադրված

վկայագրերի և դրանց կրկնօրինակների քանակը կազմել է 227՝ նախատեսված 190-ի և 2013 թվականի 230-ի դիմաց:

Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված գործողությունների համար հաշվետու տարում ՀՀ պետական բյուջե է վճարվել շուրջ 433.8 մլն դրամ պետական տուրք՝ 100%-ով ապահովելով կանխատեսված և 34.1%-ով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները, ինչը պայմանավորված է հայտատուների թվի ավելացմամբ:

Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակության փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար 2014 թվականին գանձվել է 5.6 մլրդ դրամ (պետական տուրքի մուտքերի 14.3%-ը)՝ 100.4%-ով ապահովելով կանխատեսված ցուցանիշը և 2.1 անգամ գերազանցելով նախորդ տարվա փաստացի մուտքերը, որը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ (8-րդ հոդվածի 2-րդ կետ) 2014 թվականի հունվարի 1-ից դադարեցվեց ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագրերի տրամադրումը (փոխանակումը), բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Դրանց փոխարեն պարտադիր կիրառության պայմանով տրամադրվում է նույնականացման քարտ և կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող անձնագիր: «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվել է, որ նույնականացման քարտ տալու համար պետական տուրքի վճարումից ազատվում են աղքատության ընտանեկան նպաստ ստացող ընտանիքի անդամ համարվող ՀՀ քաղաքացիները և առաջին անգամ նույնականացման քարտ ստացող ՀՀ այն քաղաքացիները, որոնք 16 տարին լրանալուց հետո չեն ստացել ՀՀ քաղաքացու անձնագիր (լրացումն ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 1-ից):

Հաշվետու տարում պետական բյուջե մուտքագրված պետական տուրքերի 22.6%-ը ստացվել է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար: Նշված աղբյուրից պետական բյուջե է մուտքագրվել 8.9 մլրդ դրամ՝ 100.6%-ով ապահովելով կանխատեսված և 73.6%-ով գերազանցելով նախորդ տարվա մուտքերը, որը հիմնականում պայմանավորված է շահումներով խաղերի կազմակերպման համար գանձված մուտքերի աճով: Վերջինս «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությունների արդյունք է, որի համաձայն 2014 թվականի հունվարի 1-ից վերանայվել է խաղատների գործունեության կազմակերպման, շահումով խաղային ավտոմատների շահագործման, ինչպես նաև ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման հարկման համակարգը, և սահմանվել է, որ նշյալ գործունեության տեսակների կազմակերպիչները վճարում են ոչ թե հաստատագրված վճար, այլ պետական տուրք՝ Ծաղկածոր քաղաքում իրականացվող գործունեության համար՝ տարեկան բազային տուրքի 150000-ապատիկի չափով, Սևան քաղաքում իրականացվող գործունեության համար՝ տարեկան բազային տուրքի 120000-ապատիկի չափով, Զերմուկ քաղաքում իրականացվող գործունեության համար՝ տարեկան բազային տուրքի 80000-



ապատիկի չափով, Մեղրի քաղաքում իրականացվող գործունեության համար՝ տարեկան բազային տուրքի 30000-ապատիկի չափով, այլ վայրում իրականացվող գործունեության համար՝ տարեկան բազային տուրքի 4500000-ապատիկի չափով: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերի աճը մասամբ էլ պայմանավորված է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաների համար գանձված մուտքերի աճով՝ լիցենզավորված անձանց թվի աճի արդյունքում, մասնավորապես՝ թվով երկու կազմակերպություն ստացել են ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման լիցենզիա: Նախորդ տարվա համեմատ լիցենզավորման գծով մուտքերի աճը պայմանավորված է նաև «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխություններով, որի համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության գործընթացի իրականացման համար սահմանվել է պետական տուրք՝ հիմնադրության փաստաթղթերի համար բազային տուրքի 500-ապատիկի չափով, իսկ նախատեսվող գործունեության Ա, Բ և Գ կատեգորիայի համար՝ համապատասխանաբար բազային տուրքի 500-ապատիկի, 400-ապատիկի և 15-ապատիկի չափով (ուժի մեջ է մտել 2014 թվականի օգոստոսի 9-ից):

2014 թվականին օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձվել են 16.1 մլրդ դրամ պետական տուրքեր՝ ապահովելով 100.1% կատարողական և պետական տուրքի մուտքերի 41%-ը: Նախորդ տարվա համեմատ օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձված տուրքերն աճել են 50.7%-ով կամ 5.4 մլրդ դրամով: Նախորդ տարվա համեմատ մուտքերի աճը մեծ մասամբ պայմանավորված է նշված խմբում մեծ տեսակարար կշիռ ունեցող՝ օդային տրանսպորտով ֆիզիկական անձանց ելքի համար բյուջե մուտքագրված տուրքերի աճով: Հաշվետու տարում նշված մուտքերը կազմել են շուրջ 14.2 մլրդ դրամ՝ 100%-ով ապահովելով կանխատեսված և 85.2%-ով գերազանցելով նախորդ տարվա փաստացի ցուցանիշը, որը պայմանավորված է փաստացի մեկնող ուղևորների քանակի աճով: Նախորդ տարվա համեմատ օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձված տուրքերի աճը պայմանավորված է նաև «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխություններով, որի համաձայն կերի օպերատորին գործունեության եզրակացություն տրամադրելու համար սահմանվել է պետական տուրք՝ բազային տուրքի հնգապատիկի չափով (լրացումն ուժի մեջ է մտել 2014 թվականի օգոստոսի 9-ից):

### **Պաշտոնական դրամաշնորհներ**

2014 թվականին արտաքին աղբյուրներից տրամադրվել են շուրջ 17.3 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրի 68.7%-ը, այսինքն՝ կանխատեսվածից պակաս է ստացվել շուրջ 7.9 մլրդ դրամ: Շեղումն առաջացել է նպատակային ծրագրերի կատարման աստիճանով պայմանավորված՝ դրամաշնորհային միջոցները չստանալու կամ նախատեսվածից պակաս ստանալու արդյունքում, որոնց շրջանակներում ստացվել է կանխատեսված գումարի 47%-ը՝ շուրջ 7.4 մլրդ դրամ: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է Եվրոպական միության Հարևանության ներդրումային ծրագրի և Եվրոպական

միության աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացման դրամաշնորհային ծրագրերի, ինչպես նաև Եվրոպական ներդրումների բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման (Տրանշ-3), Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման, Իրանի Իսլամական Հանրապետության աջակցությամբ իրականացվող Հայաստանի Հանրապետությունում Իրանի հետ սահմանամերձ բնակավայրերի գազի բաշխման ցանցի կառուցման և Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Հայջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր-Ակունք» ՓԲԸ-ների մասնավոր կառավարման շարունակության ապահովման դրամաշնորհային ծրագրերի կատարողականով, որի արդյունքում նախատեսված դրամաշնորհային միջոցները՝ 7.9 մլրդ դրամի չափով, չեն ստացվել:

Հաշվետու ժամանակահատվածում նպատակային դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ավելի քան 1.7 մլրդ դրամ (նախատեսվածի 66.4%-ը) հատկացվել է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի, շուրջ 2.8 մլրդ դրամ (նախատեսվածի 48.3%-ը)՝ Եվրոպական միության, 1.4 մլրդ դրամ (նախատեսվածի 52.5%-ը)՝ Համաշխարհային բանկի, 650.2 մլն դրամ (նախատեսվածի 64.9%-ը)՝ Դանիական Թագավորության, 257.8 մլն դրամ (նախատեսվածի 87.2%-ը)՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, 215.3 մլն դրամ (նախատեսվածի 80.8%-ը)՝ ԱՄՆ-ի, 48.9 մլն դրամ (նախատեսվածի 84.4%-ը)՝ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի, 15.5 մլն դրամ (նախատեսվածի 49.5%-ը)՝ Նիդերլանդների, 170.3 մլն դրամ (նախատեսվածի 100.9%-ը)՝ Ֆրանսիայի, 185.6 մլն դրամը (նախատեսվածի 119.3%-ը)՝ Ավստրիայի զարգացման գործակալության կողմից: Նշենք նաև, որ 2014 թվականին Եվրոպական ներդրումների բանկի և Իրանի Իսլամական Հանրապետության կողմից նախատեսված միջոցները չեն ստացվել:

2014 թվականին 7.1 մլրդ դրամ է ստացվել ոչ նպատակային ծրագրերի շրջանակներում՝ կազմելով ծրագրի 100.2%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից 5.9 մլրդ դրամ ստացվել է ԵՄ կողմից, որպես ՀՀ կառավարությանը աջակցություն՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա Ասոցիացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին՝ նախատեսված 7.1 մլրդ դրամի դիմաց: Ավելի քան 1.2 մլրդ դրամ ստացվել է ԵՄ կողմից Հայաստանում դատաիրավական բարեփոխումներին աջակցության ծրագրի 2-րդ փուլի շրջանակներում, որը 2014 թվականին նախատեսված չի եղել:

2014 թվականի ընթացքում 2.7 մլրդ դրամ է ստացվել ՀՀ պետական մարմինների արտաբյուջետային ծրագրերի շրջանակներում, որը կազմել է ծրագրի 119.2%-ը: Դրանց հիմնական մասը՝ 2.2 մլրդ դրամը, դոնորների կողմից հատկացվել է առողջապահական համակարգին: Ծրագրային ցուցանիշի գերազանցումը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» ծրագրի շրջանակներում նախատեսվածից 446.9 մլն դրամով ավել ստացված մուտքերով, ինչը պայմանավորված է Գլոբալ Հիմնադրամի կողմից գումարների փոխանցման կարգի փոփոխությամբ, որի հետ կապված՝ 2014

թվականին մեկ տարվա գումարի փոխարեն ՀՀ առողջապահության նախարարությանը հատկացվել է երկու տարվա գումար:

Նախորդ տարվա համեմատ պաշտոնական դրամաշնորհներից պետական բյուջեի մուտքերն աճել են 30%-ով կամ 4 մլրդ դրամով:

### Այլ եկամուտներ

2014 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 63.4 մլրդ դրամ այլ եկամուտներ, որը կազմում է բյուջեի եկամուտների 5.5%-ը՝ նախորդ տարվա 5.3%-ի դիմաց: Այլ եկամուտների՝ կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագրով սահմանված ցուցանիշն ապահովվել է 99.7%-ով: Այլ եկամուտներից 32.8 մլրդ դրամը կազմել են պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվների մուտքերը, որոնք ապահովվել են 99.4%-ով:

Հաշվետու տարում 18.7 մլն դրամ է մուտքագրվել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից՝ 100%-ով ապահովելով կանխատեսված և 68.5%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը:

Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության դիմաց 2014 թվականին ծրագրված միջոցները նույնպես ամբողջությամբ ստացվել են՝ կազմելով 794.2 մլն դրամ: Մասնավորապես՝ 791 մլն դրամ է մուտքագրվել ձեռնարկությունների և գույքի (բացառությամբ հողի) վարձակալության վարձավճարներից, 437.2 հազ. դրամ՝ պետական պահուստի հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարներից, 1.8 մլն դրամ՝ պետական անտառների և անտառային հողերի օգտագործման վճարներից և 937.8 հազ. դրամ՝ ՀՀ պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին և ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղադրումից վարձակալական վճարներից: Նախորդ տարվա համեմատ պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության վարձավճարները նվազել են 5.3%-ով կամ 44.9 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ձեռնարկությունների և գույքի (բացառությամբ հողի) վարձակալության վարձավճարների 4.9% կրճատմամբ:

Հաշվետու տարում բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվել են շուրջ 8.4 մլրդ դրամ տոկոսավճարներ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագիրը: 2014 թվականին ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքվել է թվով 95 ավանդային պայմանագիր՝ 568.6 մլրդ դրամ ընդհանուր գումարով, նախորդ տարվա 101 պայմանագրի և 860.9 մլրդ դրամի դիմաց: Այս տարբերությունը պայմանավորված է 2013 թվականին արտարժույթային պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված որոշ մասի ավանդադրմամբ: 2014 թվականին ներդրված ավանդների միջին ժամկետայնությունը կազմել է 52 օր՝ նախորդ տարվա 48 օրվա դիմաց: Ներդրված ավանդների միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 7.36%՝ նախորդ տարվա 9.14%-ի դիմաց: Հաշվետու տարում 2013 թվականի համեմատ բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացած տոկոսավճարների 17.2% աճը պայմանավորված է նրանով, որ 2013 թվականին ներդրված ավանդներից 2.8 մլրդ դրամ տոկոսագումար ստացվել է 2014 թվականին:

Իրավաբանական անձանց բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվել են 832.8 մլն դրամ շահաբաժիններ՝ 100%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը և 14.7%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Պետության տված վարկերի օգտագործման դիմաց 2014 թվականին նախատեսված տոկոսավճարներն ամբողջ ծավալով ստացվել են՝ կազմելով շուրջ 7.5 մլրդ դրամ, որից 7.3 մլրդ դրամը ստացվել է ռեզիդենտներին, 175.4 մլն դրամը՝ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց: Նախորդ տարվա համեմատ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարներն աճել են 27.9%-ով կամ շուրջ 1.6 մլրդ դրամով, իսկ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարները՝ նվազել 6%-ով կամ 11.1 մլն դրամով:

2014 թվականի ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել 1.2 մլրդ դրամ ոչ պաշտոնական դրամաշնորհներ՝ ամբողջությամբ ապահովելով տարեկան ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ ոչ պաշտոնական դրամաշնորհներից մուտքերն աճել են 38.6%-ով կամ 345.2 մլն դրամով՝ պայմանավորված արտաքին գործերի նախարարության արտաբյուջետային մուտքերի աճով:

Իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից ՀՀ պետական բյուջե է գանձվել 13.2 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 101.7%-ը և 14.5%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Տվյալ ցուցանիշը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումների բարձր կատարողականով, որին նպաստել է 2014 թվականի հունվարի 7-ից ուժի մեջ մտած «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-141-Ն ՀՀ օրենքի դրույթների կիրարկումը:

Հաշվետու տարում ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից ստացված եկամուտները կազմել են շուրջ 21.6 մլրդ դրամ՝ 98.1%-ով ապահովելով ծրագիրը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մուտքերի ցածր կատարողականով, ինչը պայմանավորված է 2014 թվականին գործարքների թվի նվազմամբ: Նախորդ տարվա համեմատ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից ստացված եկամուտները նվազել են 18.6%-ով կամ 4.9 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է նրանով, որ 2013 թվականին այս եկամտատեսակում ներառված են եղել նաև ռադիոհաձախականության օգտագործման պարտադիր վճարները շուրջ 5.3 մլրդ դրամի չափով, որոնք 2014 թվականին, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխության համաձայն, ներառվել են հարկային եկամուտներում:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների գծով պետական բյուջե է մուտքագրվել 9.9 մլրդ դրամ՝ 100.1%-ով կատարելով ծրագիրը և 2.8 անգամ գերազանցելով նախորդ տարվա մուտքերը:

**ՀՀ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ**

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր 1,246.4 մլրդ դրամ ծախսերի կատարում: Տարվա ընթացքում, հաշվի առնելով «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով, պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները, ինչպես նաև օրենքով ՀՀ կառավարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում կատարված փոփոխությունները ներառյալ՝ ՀՀ պետական բյուջեի ծախսերի ծրագիրը կազմել է շուրջ 1,294.5 մլրդ դրամ՝ ավելանալով 48.1 մլրդ դրամով (3.9%-ով): Վերջինիս դիմաց փաստացի ծախսերը կազմել են 1,235.1 մլրդ դրամ՝ ապահովելով պետական բյուջեի ծախսային ծրագրերի շրջանակներում պետական մարմինների կողմից սահմանված կարգով ստանձնած պարտավորությունների ամբողջական և ծրագրի 95.4% կատարողական: Շեղումը մասամբ պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով (70.3%), առանց որոնց ծախսերի կատարողականը կազմում է 97.9%, ինչպես նաև որոշ ծրագրերով նախատեսված միջոցների տնտեսմամբ և առանձին ծրագրերի շրջանակներում գնումների հետ կապված վճարումների հետաձգմամբ: Պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշվին 2014 թվականին կատարվել են 33.8 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրի 90.5%-ը:

2014 թվականին նախորդ տարվա համեմատ ՀՆԱ-ի անվանական մեծության 5.9% աճի պայմաններում ՀՀ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 8.1%-ով, ինչը հանգեցրել է ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի հարաբերակցության աճին. այն կազմել է 27.3%՝ կանխատեսված 26.4%-ի<sup>11</sup> և 2013 թվականի 26.7%-ի դիմաց:

**Տնտեսագիտական դասակարգում**

**Ընթացիկ ծախսեր**

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը տրամադրվել է 1,101.3 մլրդ դրամ, որը կազմում է տարեկան ծրագրի 97.3%-ը՝ հիմնականում պայմանավորված այլ ծախսերի, նպաստների և ծառայությունների ու ապրանքների գծով ծախսերի շեղումներով: Նախորդ տարվա համեմատ ընթացիկ ծախսերն աճել են 8.5%-ով՝ հիմնականում պայմանավորված սոցիալական նպաստների և կենսաթոշակների ու ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերի աճով:

Հաշվետու տարում ընթացիկ ծախսերի 10.8%-ը՝ շուրջ 118.7 մլրդ դրամ, տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը: Նշված ծախսերի գծով օգտագործվել է տարեկան նախատեսված միջոցների 98.6%-ը: Նախորդ տարվա համեմատ աշխատանքի վարձատրության ծախսերն ավելացել են 17.5%-ով: «Պետական պաշտոններ

<sup>11</sup> ՀՀ 2014 թվականի բյուջետային ուղերձում կանխատեսված ցուցանիշ:

զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՀ օրենքով 2014 թվականի հուլիսի 1-ից սահմանվել է պետական պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքի վարձատրության միասնական համակարգ, իսկ «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով 2014 թվականի հուլիսի 1-ից բարձրացվել է պետական պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը՝ սահմանվելով 66,140.0 դրամ:

2014 թվականին ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 237.4 մլրդ դրամ կամ բյուջեի ընթացիկ ծախսերի 21.6%-ը: Նշված ծախսերի տարեկան ծրագիրը կատարվել է 97.4%-ով: Նախորդ տարվա համեմատ ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերն ավելացել են 10.2%-ով՝ հիմնականում պայմանավորված պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերման և ընթացիկ նորոգման ու պահպանման ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 5.6%-ը՝ ավելի քան 61.6 մլրդ դրամ, ուղղվել է պետական պարտքի սպասարկմանը, որը կազմել է ծրագրված միջոցների 98.9%-ը: Ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերը կազմել են 33 մլրդ դրամ կամ կանխատեսված ցուցանիշի 99.5%-ը: Արտաքին պարտքի սպասարկմանը հաշվետու տարում ուղղվել է 28.6 մլրդ դրամ կամ կանխատեսվածի 98.2%-ը: Նախորդ տարվա համեմատ արձանագրվել է պետական պարտքի սպասարկման ծախսերի 31.9%-ով (14.9 մլրդ դրամով) աճ՝ պայմանավորված պետական պարտքի կազմի ու կառուցվածքի փոփոխությամբ: Մասնավորապես՝ 10.5%-ով (3.1 մլրդ դրամով) աճ է արձանագրվել ներքին պարտքի սպասարկման ծախսերում, իսկ արտաքին պարտքի սպասարկման ծախսերն աճել են 69.9%-ով (11.8 մլրդ դրամով): Ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճը պայմանավորված է ներքին պարտքի ծավալի աճով, իսկ արտաքին պարտքի սպասարկման ծախսերի աճը՝ արտարժույթային պետական պարտատոմսերի սպասարկմամբ: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ արտաքին պարտքի սպասարկման ծախսերի գծով առկա են եղել որոշակի տնտեսումներ՝ կապված 6-ամսյա ԱՄՆ դոլարի LIBOR-ի և 6-ամսյա EURIBOR-ի տոկոսադրույքների նվազման և արտաքին վարկերի՝ ծրագրից պակաս ստացումների հետ:

2014 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 28.3 մլրդ դրամի սուբսիդիաներ՝ կազմելով ընթացիկ ծախսերի 2.6%-ը, որից շուրջ 23.8 մլրդ դրամը հատկացվել է պետական կազմակերպություններին, 4.6 մլրդ դրամը՝ ոչ պետական կազմակերպություններին: Հատկացված սուբսիդիաներից 9.2 մլրդ դրամը տրամադրվել է հանգստի, մշակույթի և կրոնի, 5.8 մլրդ դրամը՝ տնտեսական հարաբերությունների, 5.7 մլրդ դրամը՝ սոցիալական պաշտպանության, 1.8 մլրդ դրամը՝ բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների, 1.7 մլրդ դրամը՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների, 411.4 մլն դրամը՝ կրթության, 81.9 մլն դրամը՝ շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառների կազմակերպություններին, և ևս 3.7 մլրդ դրամ տրամադրվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից: Սուբսիդիաների 2014 թվականի ծրագիրը կատարվել է 98.5%-ով: 2013 թվականի համեմատ պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաների գումարն աճել է 13.3%-ով, ընդ որում, 16.7%-ով ավելացել են պետական հատվածին

կատարված հատկացումները, իսկ ոչ պետական հատվածին կատարված հատկացումները նվազել են 1.7%-ով:

2014 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները կազմել են 139.4 մլրդ դրամ՝ ապահովելով 99.3% կատարողական և ընթացիկ ծախսերի 12.7%-ը: Մասնավորապես՝ 137.4 մլրդ դրամ է տրամադրվել պետական հատվածի այլ մակարդակներին, շուրջ 2 մլրդ դրամ՝ միջազգային կազմակերպություններին, 40.5 մլն դրամ՝ օտարերկրյա կառավարություններին: Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաները հատկացվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով շուրջ 39 մլրդ դրամ, որը 7.6%-ով կամ 2.8 մլրդ դրամով գերազանցել է նախորդ տարվա մակարդակը: 8.3 մլրդ դրամի սուբվենցիաներ են տրամադրվել համայնքների բյուջեներին՝ 99.9%-ով կատարելով ծրագիրը: 2013 թվականի համեմատ պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհներն աճել են 13.5%-ով՝ հիմնականում պայմանավորված այլ ընթացիկ դրամաշնորհների աճով՝ կապված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից կատարված և ավելացված արժեքի հարկի վերադարձի ծախսերի աճի հետ:

Հաշվետու տարում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 31.6%-ը կամ շուրջ 347.7 մլրդ դրամը կազմել են սոցիալական նպաստները և կենսաթոշակները, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 97.5%-ով: Նշված հատկացումներից 120.6 մլրդ դրամն ուղղվել է նպաստների, 227.1 մլրդ դրամը՝ կենսաթոշակների ծախսերի ֆինանսավորմանը, որոնք կատարվել են համապատասխանաբար 94.5 և 99.1 տոկոսով: Նախորդ տարվա համեմատ սոցիալական նպաստների և կենսաթոշակների ծախսերն աճել են 17.9%-ով կամ 52.8 մլրդ դրամով: Մասնավորապես՝ 24.8%-ով նպաստների աճը հիմնականում պայմանավորված է 2014 թվականին ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նախկինում վճարվող կենսաթոշակները 2014 թվականից սոցիալական նպաստների ծախսերում ներառելու հանգամանքով, ինչպես նաև երեխաների կամ ընտանեկան նպաստների ու մայրության նպաստների գծով ծախսերի աճով:

Կենսաթոշակների գծով ծախսերը հաշվետու տարում աճել են 14.5%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքային կենսաթոշակների ծախսերի աճով, ինչպես նաև 2014 թվականից կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման հետ կապված ծախսերով:

2014 թվականի պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 15.3%-ը կամ 168.2 մլրդ դրամը կազմել են այլ ծախսերը, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 93.8%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 19.7%-ով՝ հիմնականում պայմանավորված այն հանգամանքով, որ 2013 թվականին ՀՀ պետական բյուջեից միջոցներ էին հատկացվել «Հայրուսզագարդ» ՓԲԸ-ին՝ մատակարարված գազի արժեքի փոխհատուցման նպատակով:

### **Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ**

2014 թվականին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 133.7 մլրդ դրամ կամ ընդհանուր ծախսերի 10.8%-ը և տարեկան ծրագրի 82.1%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում արձանագրվել է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում այլ մեքենաների ու սարքավորումների, ինչպես նաև շենքերի և

շինությունների շինարարության ու կապիտալ վերանորոգման գծով ծախսերում: Առանց վերոհիշյալ ծրագրերի, պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների կատարողականը կազմում է 93.5%: 2013 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշն աճել է 4.9%-ով, ընդ որում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն աճել են 5.9%-ով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը՝ 87.7%-ով:

2014 թվականին ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 136.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 82.3%-ը: Նշված գումարից 119.7 մլրդ դրամը՝ նախատեսվածի 89.4%-ը, օգտագործվել է շենքերի և շինությունների ձեռքբերման, շինարարության և կապիտալ վերանորոգման, 13.2 մլրդ դրամը՝ նախատեսվածի 46.6%-ը, մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման, 3.7 մլրդ դրամը՝ նախատեսվածի 96.7%-ը, այլ հիմնական միջոցների ձեռքբերման նպատակով: 2013 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն աճել են 5.9%-ով կամ 7.6 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված շենքերի ու շինությունների շինարարության և ձեռքբերման ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում 2.9 մլրդ դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ կանխատեսված 3.1 մլրդ դրամի և նախորդ տարվա 1.6 մլրդ դրամի դիմաց: Նշված գումարից 64.9 մլն դրամը ստացվել է հողի, շուրջ 2.9 մլրդ դրամը՝ այլ ակտիվների օտարումից:



**Գործառական դասակարգում**

**Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ**

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից 217.3 մլրդ դրամ տրամադրվել է ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերին՝ ապահովելով ծրագրի 96.5% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով: 2014 թվականի համեմատ ոլորտի ծախսերն աճել են 15.5%-ով կամ 29.1 մլրդ դրամով: Աճի հիմնական մասը բաժին է ընկել պետական պարտքի սպասարկման, դրոշմապիտակների ձեռքբերման, ավելացված արժեքի հարկի վերադարձի և համայնքների բյուջեներին տրամադրվող տրանսֆերտների գծով ծախսերին:

«Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են 17.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 96.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 22.7%-ով՝ հիմնականում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի աճի արդյունքում, որը մեծ մասամբ պայմանավորված է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի համաձայն 2014 թվականի հուլիս 1-ից պետական ծառայողների աշխատավարձերի բարձրացմամբ:

2014 թվականին ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի և պատգամավորների պահպանման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 99.9%-ով՝ կազմելով շուրջ 3.6 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 27%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության, էլեկտրաէներգիայի և սակագների բարձրացմամբ:

Հաշվետու տարում ՀՀ վերահսկիչ պալատի պահպանմանը հատկացվել է 935.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 97.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 3.5%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը տրամադրվել է 8.8 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 98.7%-ը: Հատկացված միջոցներով իրականացվել է ՀՀ Նախագահի և կառավարության աշխատակազմերի, ինպես նաև մարզպետարանների պահպանումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 26.5%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության աճով և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

ՀՀ նախարարությունների պահպանման ծախսերը՝ նախարարների աշխատակազմերի մասով, 2014 թվականին կազմել են շուրջ 1.4 մլրդ դրամ, իսկ նախարարությունների (ՀՀ տարածքային կառավարման նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ սփյուռքի նախարարության) աշխատակազմերի մասով՝ 1.2 մլրդ դրամ, և ապահովել համապատասխանաբար 91.9% և 95.9% կատարողական: Նշված ծրագրերում առկա են տնտեսումներ, իսկ նախորդ տարվա համեմատ ծախսերն աճել են համապատասխանաբար 35.4%-ով և 39.7%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Վարչական օբյեկտների շինարարությանը տրամադրվել է շուրջ 40 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.5%-ը: Հատկացված միջոցներն ուղղվել են ՀՀ Նախագահի աշխատակազմի ավտոտնտեսության տարածքի շինարարական աշխատանքներին:

Վարչական օբյեկտների հիմնանորոգմանը տրամադրվել է 284.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 58.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ նախագահի աշխատակազմի վարչական շենքի գծով նախատեսված աշխատանքների հիմնական մասը 2015 թվական տեղափոխելու հանգամանքով: Իսկ ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ կառավարության գծով նախատեսված միջոցները գրեթե ամբողջությամբ օգտագործվել են:

Հաշվետու տարվա ընթացքում 837.6 մլն դրամ սուբվենցիա է հատկացվել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի պահպանմանը՝ ապահովելով ծրագրի 100%-ը և 39.5%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացմամբ:

ՀՀ վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդի գծով նախատեսված 19.1 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ և 2.7%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը տրամադրվել է 94.7 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 96.6%: Հատկացված միջոցներով ՀՀ Նախագահի և կառավարության աշխատակազմերի համար ձեռք են բերվել համակարգչային ծրագիր, սարքավորումներ, տնտեսական գույք:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում (նախարարությունների աշխատակազմերի մասով) նախատեսվել էր ՀՀ արդարադատության նախարարությանը տրամադրել 2 մլն դրամ՝ արտասահմանյան գրականության ձեռքբերման համար, սակայն պայմանագրեր չեն կնքվել, ինչով էլ պայմանավորված 2014 թվականին նախատեսված միջոցները չեն օգտագործվել:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են ՀՀ կառավարության գործունեության գնահատականների, կյանքի որակի և համայնքային կարիքների գնահատման հետազոտությունների ծախսերը, որոնք կազմել են 106.9 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2014 թվականին իրականացվել են մի շարք սոցիոլոգիական հետազոտություններ, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության գնահատականների (Government Success Index) 4 հետազոտություն (եռամսյակը մեկ անգամ), կյանքի որակի (Quality of Life Index) 1 հետազոտություն, համայնքային կարիքների գնահատման (Community Needs Assessment) 3 հետազոտություն: Այս հետազոտությունները հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության աշխատակազմի համար՝ բարեփոխումների ռազմավարության մշակման համար, և տալիս են օբյեկտիվ և ճգրիտ տեղեկատվություն ոլորտների զարգացման համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Արդարադատության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանման նպատակով 2014 թվականին տրամադրվել է 20.5 մլն դրամ՝ կազմելով

ծրագրի 86.1%-ը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Նշենք, որ Նախորդ տարիներին ԾԻԳ-ի պահպանման ծախսերն իրականացվել են արդարադատության ոլորտում իրականացվող վարկային ծրագրերի շրջանակներում հատկացված միջոցների հաշվին:

ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակին հատկացվել է 8.3 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 68.7%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 18.3%-ով՝ հիմնականում պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ: «Ավստրիայի զարգացման գործակալություն» ընկերության աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում կարգավորիչ գիյոտին» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կենտրոնի պահպանման համար նախատեսված 155.7 մլն դրամ դրամաշնորհային միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են: Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի գործունեության հիմնական նպատակը ՀՀ տնտեսական ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի վերանայման արդյունքում դրանց կրճատմանը, ինչպես նաև հստակեցմանը և պարզեցմանն ուղղված աշխատանքների և ծրագրերի իրականացման ապահովումն է: Համաձայն ՀՀ տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի բարեփոխումների խորհրդի կողմից հաստատված աշխատանքային ծրագրի, 2014 թվականի ընթացքում կենտրոնի կողմից ուսումնասիրվել են հողային հարաբերությունների, անշարժ գույքի կադաստրի, քաղաքացիության, ջրային տնտեսության կառավարման, էներգետիկայի և բնական պաշարների, գյուղատնտեսության, բնապահպանության, արդարադատության, իրավապահ մարմինների, սպորտի և երիտասարդության, կրթության ոլորտները կարգավորող իրավական ակտերը և համապատասխան բիզնես գործընթացները և խորհրդի քննարկմանն են ներկայացվել առաջարկվող փոփոխությունների իրավական ակտերի փաթեթները: Փաթեթների ընդունմամբ ուժը կորցրած կճանաչվեն և կբարելավվեն բազմաթիվ իրավական ակտեր և կկրճատվեն բիզնես գործընթացներ՝ դյուրացնելով ընթացակարգերը, պարզեցնելով ու բարձրացնելով քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակը և, որ ամենակարևորն է, նպաստելով բիզնեսի և քաղաքացիների համար ծախսերի էական կրճատմանը:

ՀՀ արդարադատության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծրագրի շրջանակներում իրականացվել են 263.4 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրի 88.6%-ը: Տվյալ միջոցները գոյանում են իրավաբանական անձանց պետական գրանցման, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման և ապոստիլ դնելու վճարովի ծառայությունների մատուցումից: Փաստացի ծախսերի շեղումը ծրագրվածից պայմանավորված է նրանով, որ արտաբյուջետային հաշվին մուտքագրվել են նախատեսվածից պակաս միջոցներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 38.7%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության և վարչական սարքավորումների ձեռք բերման ծախսերի աճով:

ՀՀ արդարադատության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին մատուցվող փորձագիտական ծառայությունների ծախսերը կազմել են 1.6 մլն դրամ կամ ծրագրի 100%-ը: Տվյալ

միջոցները ստացվում են նուտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու համար ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվող թարգմանչի որակավորման ստուգման անցկացման ժամանակ թարգմանությունների ճշտությունը ստուգող փորձագետների փորձագիտական աշխատանքի դիմաց դիմորդների կողմից կատարվող վճարումների հաշվին և հատկացվում են փորձագետներին: 2013 թվականին տվյալ ծրագրի շրջանակներում կատարվել են 1.7 մլն դրամի ծախսեր, որոնք ընդգրկված են եղել ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների (այլ դասերին չպատկանող) դասի ծախսերում:

*Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների* դասի ծրագրերին 2014 թվականին տրամադրվել է շուրջ 59.8 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 94.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ Եվրոպական միության Հարևանության ներդրումային ծրագրի և Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացման դրամաշնորհային ծրագրերը չեն իրականացվել: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերն աճել են 8.2%-ով կամ 4.5 մլրդ դրամով՝ պայմանավորված դրոշմապիտակների ձեռքբերման ծախսերով, որոնց գծով 2013 թվականին միջոցներ չէին հատկացվել, ինչպես նաև ավելացված արժեքի հարկի վերադարձի ծախսերի աճով:

Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության մարմինների պահպանման ծրագրին տրամադրվել է շուրջ 11.5 մլրդ դրամ, որն իրականացվել է 99.1%-ով: Միջոցներն ուղղվել են ՀՀ ֆինանսների նախարարության (նախկինում՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի) պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.4%-ով:

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների խրախուսման նպատակային ֆոնդը կազմել է 402.2 մլն դրամ կամ նախատեսվածի 92.2%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.8%-ով:

Ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման ծախսերը կազմել են 763.6 մլն դրամ՝ ապահովելով 90% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 43.4%-ով, որը պայմանավորված է ակցիզային դրոշմանիշերի պահեստավորված մնացորդի բացակայությամբ, ի տարբերություն նախորդ տարվա, երբ պահեստում առկա էին մեծ քանակությամբ տարբեր տարիների թվագրումներով դրոշմանիշեր:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը (նախարարությունների աշխատակազմերի մասով) տրամադրվել է ավելի քան 2.5 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 87.7%-ը՝ պայմանավորված տնտեսումներով: Միջոցներն ուղղվել են ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 74.9%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներով և աշխատավարձերի բարձրացմամբ:

Հաշվետու տարում ՀՀ գանձապետական համակարգի վճարահաշվարկային սպասարկումն ապահովելու նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 169.4 մլն դրամ՝ կազմելով ծրագրի

99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 15.9%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2013 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության առանձին գործառույթների ավտոմատացման համար մշակված և ներդրված ծրագրային ապահովումների հետագա զարգացման, ինչպես նաև որոշ դեպքերում դրանք միմյանց ինտեգրելու նպատակով ձեռք էին բերվել ծրագրային ապահովումների նոր մոդուլներ:

Նախատեսված ողջ ծավալով օգտագործվել են ավելացված արժեքի հարկի վերադարձի համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են 27.9 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11%-ով:

Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման գծով նախատեսված 50 մլն դրամից օգտագործվել է 4.5 մլն դրամը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ կատարողի կողմից պայմանագրով ստանձնված պարտավորությունները կատարվել են ոչ պատշաճ, ինչով էլ պայմանավորված՝ վճարումները չեն կատարվել:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը տրամադրվել է 272.8 մլն դրամ, որի կատարողականը կազմել է 100%, իսկ նախարարությունների աշխատակազմերի կարողությունների զարգացմանը տրամադրվել է 192.6 մլն դրամ, որի կատարողականը կազմել է 99.1%: Միջոցները տրամադրվել են ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ տրանսպորտային և վարչական սարքավորումների ձեռք բերման նպատակով:

Հարկային վարչարարության օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման և պարզավճարների տրամադրման նպատակով օգտագործվել է ավելի քան 1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 3.6%-ով:

Պարտքի գրանցման և կառավարման DMFAS 6.0 համակարգի տեխնիկական սպասարկման վճարը կազմել է 6 մլն դրամ կամ նախատեսվածի 98.8%-ը:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգովան» անցման կետերի արդիականացման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված ծախսերն իրականացվել են 134.7%-ով՝ կազմելով 6.1 մլրդ դրամ:

Դրոշմապիտակների ձեռքբերման ծախսերն իրականացվել են 96.7%-ով՝ կազմելով շուրջ 3.6 մլրդ դրամ: Նախորդ տարի նշված ծախսերն իրականացվել էին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից և կազմել էին 3.5 մլն դրամ:

Հարկային ծառայության մարմնի համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերը կազմել են 5.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 95.3%-ը: Նախորդ տարվա համեմատ դրանք նվազել են 35%-ով, որը պայմանավորված է հարկային մարմնի և տարածքային ստորաբաժանումների վերակազմավորումներով:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային մարմնից ձեռք բերվող հարկային հաշիվների ձևերի տպագրությանը տրամադրվել է 6.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.8%-ը և 67.7%-ով զիջելով 2013 թվականի մակարդակը: Ծախսերի նվազումը պայմանավորված է հարկատուների կողմից էլեկտրոնային եղանակով կատարվող գործարքների աճով:

Արտաբյուջետային միջոցների հաշվին ՀՀ ֆինանսների նախարարության կարողությունների զարգացմանը հատկացվել է 3.4 մլն դրամ կամ նախատեսվածի 5.8%-ը: Նշված ցուցանիշը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի նախահաշիվը հաստատվել է 2014 թվականի հոկտեմբերի ամսին, և ծրագիրը USAID-ի կողմից ֆինանսավորվել է 23.2%-ով:

Հաշվետու տարում 13.2 մլրդ դրամ է տրամադրվել *արտաքին հարաբերությունների* դասի ծրագրերին, որը կազմել է նախատեսված հատկացումների 98.7%-ը: Արտաքին հարաբերությունների ծախսերը 2013 թվականի համեմատ ավելացել են 8.5%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման (այդ թվում՝ արտաբյուջետային միջոցների հաշվին), ինչպես նաև միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարների ծախսերի աճով:

Արտաքին հարաբերությունների դասում 7.9 մլրդ դրամ պետական բյուջեի հաշվին և 1.3 մլրդ դրամ՝ արտաբյուջետային միջոցների հաշվին ուղղվել է ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանմանը, որոնք օգտագործվել են նախատեսված ծավալով: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի հաշվին կատարված ծախսերն աճել են 5%-ով՝ պայմանավորված Շվեդիայում նոր բացվող ՀՀ դեսպանության պահպանման, 3 ծառայողական ավտոմեքենայի ձեռքբերման, դիվանագետների ապահովագրական ծախսերի համար միջոցների հատկացմամբ, ինչպես նաև ներկայացուցչական ծախսերի և փոխարժեքի աճով: Արտաբյուջետային միջոցների հաշվին ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերն ավելացել են 67.5%-ով:

Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարների գծով ծախսերը կազմել են շուրջ 2 մլրդ դրամ (99.8%): Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է 93 միջազգային կազմակերպությունների և ԱՊՀ կառույցների: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 22%-ով՝ հիմնականում պայմանավորված արտարժույթի փոխարժեքի աճով, ինչպես նաև 2 կազմակերպությունների՝ Եվրոգեոգրաֆիկա և Սահմանադրական արդարադատության համաշխարհային կոնֆերանս կազմակերպություններին ՀՀ անդամակցության վճարների ավելացմամբ:

Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների և արտասահմանյան պաշտոնական գործուղումների նպատակով հաշվետու տարում օգտագործվել է համապատասխանաբար 167 մլն դրամ և 509.9 մլն դրամ, որոնք կատարվել են 52.2%-ով և 98.4%-ով:

ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալության պահպանմանը տրամադրվել է 164.3 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 97.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծրագրի շրջանակներում ՀՀ արտաքին գործերի նախարարությանը տրամադրվել է ավելի քան 1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.6% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են դեսպանությունների շենքերի գնման ծախսերը, որոնք կազմել են 35.6 մլն դրամ: Գումարն ուղղվել է Բրյուսելում ՀՀ դեսպանության շենքի գնման նպատակով վերցված վարկի գծով 2014 թվականի չափաբաժնի մարմանը: Նշված ծախսերը 2013 թվականի համեմատ աճել են 4.5%-ով՝ պայմանավորված արտարժույթի փոխարժեքի աճով:

Հայաստանի Հանրապետությանը սուվերեն վարկանիշ շնորհելու կապակցությամբ կազմակերպությունների մատուցած ծառայությունների դիմաց վճարման ծախսերը կազմել են 87.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագիրը նախատեսված է ՀՀ տնտեսական, քաղաքական և ֆինանսական ցուցանիշների գնահատման, գնահատականների հիման վրա վարկանիշի շնորհման նպատակով վարկանիշ շնորհող հեղինակավոր միջազգային ընկերությունների հետ արդյունավետ համագործակցության իրագործման համար: Ծրագրի նպատակն է միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ներքին ու արտաքին աղբյուրներից պետական բյուջեի պակասուրդի կայուն, հուսալի և ոչ ռիսկային ֆինանսավորման համար բարենպաստ պայմանների ապահովումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.8%-ով՝ հիմնականում պայմանավորված արտարժույթի փոխարժեքի աճով:

Հաշվետու տարում 601 մլն դրամ է տրամադրվել *աշխատակազմի (կադրերի) գծով ընդհանուր բնույթի ծառայությունների* դասի ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրի 95.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո իրականացվող Սևծովյան ավազանի երկրների համատեղ գործողությունների 2007-2013թթ. դրամաշնորհային ծրագրի կատարողականով, ինչպես նաև պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում լիազոր ներկայացուցիչների պահպանման համար նախատեսված միջոցները չօգտագործելու հանգամանքով: 2013 թվականի համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 51%-ով՝ հիմնականում պայմանավորված քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման և քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրության ծախսերի աճով:

Տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 245 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.5% կատարողական: Միջոցներն ուղղվել են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 30.3%-ով, որը պայմանավորված է աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրության հետ կապված ծախսերը կազմել են 98.7 մլն դրամ կամ նախատեսվածի 98.7%-ը և 93.4%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: 2014 թվականին քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցվել է 264 քաղաքացիական ծառայող՝ նախորդ տարվա 155-ի դիմաց:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացումը ֆինանսավորելու նպատակով հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջեից տրամադրվել է 252.5 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.4%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 62.5%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում լիազոր ներկայացուցիչների պահպանման ծախսերի գծով 2014 թվականին նախատեսվել է 6.7 մլն դրամ, որը չի օգտագործվել: Նկատի ունենալով մինչև 50% պետական բաժնեմաս ունեցող ընկերություններում պետական բաժնեմասի հետագա պահպանման նպատակահարմարության կամ դրանցում լիազոր ներկայացուցիչների ինստիտուտի ներդրման հարցը, նշված ծրագիրն ինչպես 2013 թվականին, այնպես էլ 2014 թվականի ընթացքում չի գործել:

Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո իրականացվող Սևծովյան ավազանի երկրների համատեղ գործողությունների 2007-2013թթ. դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված ծախսերն իրականացվել են 24.9%-ով՝ կազմելով 4.7 մլն դրամ: 2014 թվականին Եվրամիության կողմից՝ ԵՀԳԳ միջոցներով ֆինանսավորում չի իրականացվել, քանի որ ծրագրի մասնակից ոչ բոլոր կազմակերպություններն են սահմանված ժամկետում ներկայացրել աուդիտորական եզրակացություններ: Ծախսերը կատարվել են նախորդ տարի տրամադրված միջոցների և ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին, որոնք ուղղվել են աշխատավարձի, գործուղման, ներկայացուցչական և գովազդային ծառայություններին:

«Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ» դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են 1.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.2%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 41.5%-ով՝ հիմնականում պայմանավորված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման և պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ծախսերի աճով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 873.9 մլն դրամ կամ ծրագրի 98.6%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 37.6%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ծախսերը կազմել են 566.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 66%-ով, ինչը նույնպես հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների ծախսերը կազմել են 77.6 մլն դրամ կամ նախատեսվածի 97%-ը և 3%-ով զիջել 2013 թվականի ցուցանիշը՝ պայմանավորված մրցույթների արդյունքում ավելի ցածր գներով ապրանքների և ծառայությունների ձեռքբերմամբ: 2014 թվականին ծրագրի շրջանակներում հարցումներ են իրականացվել ոլորտում



գործող 200 ընկերությունների շրջանում, կատարվել է տվյալների վերլուծություն և պատրաստվել է ՏՀՏ ոլորտի 2014 թվականի հաշվետվությունը: Հետազոտության արդյունքների համաձայն՝ ոլորտի ընկերությունների թվաքանակը նախորդ տարվա համեմատ աճել է և կազմել 396, ոլորտի շրջանառությունը ևս ավելացել է և կազմել 474.9 մլն ԱՄՆ դոլար, զբաղվածների թվաքանակը նույնպես աճել է և կազմել 11560 մասնագետ: 2014 թվականի հոկտեմբերի 3-5-ը «Երևան Էքսպո» ցուցահանդեսային կենտրոնում տեղի է ունեցել միջազգային ամենամյա «Ղիջիթեք Էքսպո 2014» տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների ցուցահանդեսը, որին մասնակցել են տեղական և արտասահմանյան 130 կազմակերպություններ: 2014 թվականի դեկտեմբերի 4-ին «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում տեղի է ունեցել վենչուրային համաժողով, որը հնարավորություն ընձեռեց ծանոթանալու «Գաղափարից դեպի բիզնես» դրամաշնորհային մրցույթի 1-ին փուլի արդյունքում տեղեկատվական, հաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների, ճարտարագիտության, գյուղատնտեսություն, մաքուր տեխնոլոգիաների ոլորտների 65 ծրագրերից ընտրված 15 ներդրումային ծրագրերին: Գնահատման արդյունքում նշված ծրագրերից հաղթող ձանաչվեցին 5 ծրագրեր, որոնք արժանացան դրամական մրցանակների: Կազմակերպվել են չորս «ՏՀՏ լիդերներն առանց փողկապների» խորագրով հանդիպում-քննարկումներ, այդ թվում՝ 1 բիզնես ինովացիոն ֆորում: Կազմակերպվել է «Խելացի լուծումներ՝ խելացի երկրների համար» խորագիրը կրող 7-րդ ամենամյա «Ղիջիթեք Բիզնես» ֆորումը: 2014 թվականի սեպտեմբերի 26-ին Նյու Յորքում տեղի է ունեցել 7-րդ ամենամյա «Արմեթեք 2014» համաժողովը: Համաժողովի ընթացքում ՀՀ կառավարության անունից ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Մայքրոսոֆթ» ընկերության միջև ստորագրվեց հետագա համագործակցությանն ուղղված փոխըմբռնման հուշագիր: Համաժողովի շրջանակում Հայաստանում գործող վենչուրային ֆոնդի կառավարիչ «Գրանատուս Վենչուրս» ընկերության կողմից ստորագրվեցին երկու պայմանագրեր «WiCastr» և «SoloLearn» ընկերությունների հետ: Հայ-հնդկական ՏՀՏ ուսումնական կենտրոնում կազմակերպվել են 58 կարճաժամկետ և երկարաժամկետ դասընթացներ, որոնց մասնակցել է 586 մասնակից: Կենտրոնում կազմակերպվել են նաև 20 սեմինարներ, որոնց մասնակցել է 350 մասնակից: Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնում (ՄԻԿ) կազմակերպվել են 26 երկարաժամկետ դասընթացներ՝ ներգրավելով 530 ուսանող: ՄԻԿ-ը մասնավոր ընկերությունների հետ համատեղ կազմակերպել է իր 7-րդ պրակտիկայի ծրագիրը՝ հավաքագրելով 34 երիտասարդ մասնագետ/ուսանող: ՄԻԿ-ի կողմից շարունակվել է նաև աքսելերացիոն ծրագրերի իրականացումը: Շարունակվել են աշխատանքները «Ինթել» ընկերության հետ ստորագրված հուշագրում ամրագրված դրույթների իրականացման ուղղությամբ: «Սիսկո» ընկերության հետ համագործակցության շրջանակում Հայ-հնդկական ՏՀՏ ուսումնական կենտրոնի տարածքում կազմակերպվել են CISCO տեխնոլոգիաների դասընթացներ: «Նեյշնլ Ինսթրումենթս»-ի հետ համատեղ իրականացվող Հայկական ազգային ճարտարագիտական լաբորատորիայի (ANEL) ծրագրի շրջանակում 4000 ուսանողներ մասնակցել են ANEL-ի կողմից կազմակերպված դասընթացներին, նախածեռնվել են 55 հետազոտական ծրագրեր: «Նոկիա» ընկերության հետ համատեղ իրականացվող Մոբայլ լուծումների տարածաշրջանային լաբորատորիայի ծրագրի շրջանակում կազմակերպվել են մի շարք թեմատիկ դասընթացներ, որոնց մասնակցել են ավելի քան 90 երիտասարդ մասնագետներ և ուսանողներ: Իրականացվել են

Հայաստանում «IBM»-ի նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի տարածքի հիմնադրման և ներքին ցանցերի նախագծման աշխատանքները:

Աշխատանքի միջազգային կազմակերպության և ՄաստերՔարդ հիմնադրամի Work4Youth ծրագրի ծախսերը կազմել են 37.6 մլն դրամ՝ ապահովելով 92.7% կատարողական՝ հիմնականում պայմանավորված գործուղման ծախսերի տնտեսմամբ:

*Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների* դասին հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 969.3 մլն դրամ, որից 447.1 մլն դրամը՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների (438.1 մլն դրամը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության, 9 մլն դրամը՝ Այլ մարմինների), 4.5 մլն դրամը՝ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանմանը, որոնց կատարողականը կազմել է համապատասխանաբար 98.2% և 98%: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են համապատասխանաբար 33.2%-ով և 3.7%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին պետական աջակցությունը տրամադրվել է նախատեսված ծավալով՝ կազմելով 153.3 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.7%-ով, որը պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ:

Պետական աջակցությունը «Սպասարկում» ՊՈԱԿ-ին կազմել է 364.3 մլն դրամ կամ ծրագրի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 20.8%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

2013 թվականի համեմատ ընդհանուր բնույթի այլ ծառայությունների դասի ծախսերն աճել են 19.1%-ով՝ հիմնականում պայմանավորված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների և «Սպասարկում» ՊՈԱԿ-ին պետական աջակցության ծախսերի ավելացմամբ:

2014 թվականին «*Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք*» դասին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 9.3 մլրդ դրամ, որը կազմել է նախատեսված ցուցանիշի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.8%-ով՝ հիմնականում պայմանավորված գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծախսերի աճով:

Գիտաաշխատողներին գիտական աստիճանների համար 2014 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 366.8 մլն դրամ հավելավձարներ՝ ապահովելով 98.7% կատարողական և 4.2%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված հավելավձար ստացող գիտնականների թվի ավելացմամբ:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակներում 14.4 մլն դրամ տրամադրվել է ՀՀ սփյուռքի նախարարությանը, որի հաշվին պատվիրվել են սփյուռքին վերաբերող թվով 12 գիտական հետազոտություններ: Միջոցներն օգտագործվել են նախատեսված ծավալով: Նախորդ

տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 33.3%-ով՝ պայմանավորված հետազոտությունների քանակի աճով:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծախսերը կազմել են ավելի քան 7.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 8.7%-ով՝ հիմնականում պայմանավորված գիտաժողովների թվի ավելացմամբ:

«Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման և գիտական ներուժի արդիականացման ծրագրի ծախսերը կազմել են 714.1 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանության համար նախատեսված միջոցները նույնպես ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 823.1 մլն դրամ: Ծրագրում ընդգրկված են Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը, Երեւանի պետական համալսարանը և ՀՀ ԳԱԱ մի շարք կազմակերպություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 5.6%-ով՝ հիմնականում պայմանավորված Մատենադարանի պահպանման և սպասարկման ծախսերի ավելացմամբ:

Ամբողջությամբ կատարվել են նաև «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամին պետական աջակցության ծախսերը, որոնք կազմել են 271.1 մլն դրամ: «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամում կատարվում են աշխատանքներ՝ ուղղված 3-րդ սերնդի սինքրոտրոնային ճառագայթման աղբյուրի ստեղծմանը: Այն հնարավորություն կտա հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ իրականացնել ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, նյութագիտության, նանոէլեկտրոնիկայի և այլ բնագավառներում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 13.4%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ԱՐԵԱԼ գծային արագացուցչի կառուցման համար հիմնական թանկարժեք սարքավորումները ձեռք են բերվել 2013 թվականի ընթացքում: 2014 թվականին ավարտին են հասցվել կարգաբերման աշխատանքները, և մայիսին գործարկվել է արագացուցիչը:

2014 թվականին *ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների* դասի ծախսերը կազմել են 1.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 61.5%-ով՝ հիմնականում պայմանավորված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների ծախսերի աճով: Խմբի ծախսերի զգալի մասը՝ 1.5 մլրդ դրամ, տրամադրվել է նշված ծրագրին, որի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 99.9%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 73.6%-ով՝ պայմանավորված ֆինանսավորվող թեմաների քանակի աճով:

Տվյալ դասում ընդգրկված՝ գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններին հատկացումներն իրականացվել են ամբողջությամբ, որոնք կազմել են 181 մլն դրամ և 1.5%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

*Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների (այլ դասերին չպատկանող)* դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են 9.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 76.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության վարկային ծրագրի, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի պահպանման ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ այլ դասերին չպատկանող ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների դասի ծախսերը նվազել են 12.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է 2013 թվականին ՀՀ Նախագահի և Երևան քաղաքի ավագանու անդամների ընտրությունների անցկացմամբ:

Հաշվետու տարվա ընթացքում 825.8 մլն դրամ է տրամադրվել այս դասում ընդգրկված պետական կառավարման մարմինների՝ ՀՀ հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պահպանմանը, որը կազմել է ծրագրի 95.9%-ը՝ պայմանավորված տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 27.1%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Փորձաքննությունների ծառայությունների ձեռքբերման նպատակով ՀՀ դատախազությանը և ՀՀ արդարադատության նախարարությանը տրամադրվել է 403.3 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 96%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 8.4%-ով՝ հիմնականում պայմանավորված փորձաքննությունների քանակի աճով, ինչպես նաև փորձագետների աշխատավարձի բարձրացմամբ:

Աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքներին տրամադրվել է 27.6 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 100%-ը և 24.8%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: 2014 թվականին իրականացվել են թվով 294 պետական գույքի աճուրդով վաճառքի կազմակերպում և անցկացում՝ նախորդ տարվա 93-ի փոխարեն:

Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների և գնահատման աշխատանքների իրականացման ծախսերը կազմել են 37.2 մլն դրամ, որոնք նույնպես նախատեսված ծավալով իրականացվել են և 2.2%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությանը հաշվետու տարում տրամադրվել է 653 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 100%-ը և 37.6%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող պետական հատվածի բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 694 մլն դրամ կամ նախատեսվածի 82.2%-ը: Ծրագրի նպատակն է կատարելագործել հանրային հատվածի կառավարման իրականացումը և ծառայությունների մատուցումը՝ քաղաքականության մշակման ոլորտում գերատեսչական հզորությունների ուժեղացման, մարդկային կապիտալի

արդյունավետությունն առավելագույնի հասցնելու և ներքին աշխատանքային հոսքերի և արտաքին հաղորդակցության համար տեղեկատվական համակարգերի ստեղծման միջոցով: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Քաղաքականության ձևավորման և ծառայությունների մատուցման ձևաչափում գերատեսչական կարողությունների զարգացում,

- Հանրային հատվածում մարդկային ռեսուրսների գործունեության արդյունավետության բարձրացում,

- Կատարողականի և թափանցիկության բարելավման նպատակով համակարգերի մշակում,

- Ժամանակին պահանջվող տեխնիկական աջակցություն,

- Ծրագրի կառավարում և իրականացում:

2014 թվականին ծրագրի շահառուների, Համաշխարհային Բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոնի մասնագետների կողմից մշակված գնումների ժամանակացուցի և այլ փաստաթղթերի հիման վրա իրականացվել են գնումների բնականոն ընթացքի համար անհրաժեշտ աշխատանքներ: Ծրագրի կատարողականը հիմնականում պայմանավորված է հետևյալով: Ծրագրի շրջանակներում առողջապահական էլեկտրոնային համակարգի ձեռքբերման և տեղադրման նպատակով ստորագրված պայմանագրի առաջին փուլի իրականացման համար նախանշված ժամկետը երկարաձգվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պահանջվեց ավելի երկար ժամանակ՝ ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից ստեղծված աշխատանքային խմբի ուսումնասիրության արդյունքում ներկայացված հաշվետվության շրջանակներում ի հայտ եկած անճշտությունները մատակարարի կողմից վերացնելու համար, և ՀՀ կառավարության աշխատակազմն այդ փուլն ընդունեց մոտ 5 ամիս ուշացումով: Վերոնշյալ պայմանագրի առաջին փուլով նախատեսվում էր մշակել առողջապահական էլեկտրոնային համակարգի համար ձեռք բերվող սարքավորումների մասնագրերը: Համապատասխանաբար տարկետվեց նաև նախատեսվող մոտ ԱՄՆ 1,000,000 դոլար արժողությամբ սարքավորումների ձեռքբերումը: Նախատեսվում էր խորհրդատվական ծառայությունների իրականացում հետևյալ ուղղություններով՝ պաշտոնի գնահատման համակարգի մեթոդաբանության, գործընթացների, ստանդարտացված շտեմարանների մշակում և կիրառման կարողությունների ձևավորում ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդում և նախարարությունների մարդկային ռեսուրսների կառավարման ստորաբաժանումներում, դասընթացների անցկացման համար տեղական դասախոսների հիմնական խմբի վերապատրաստում և քաղաքականության վերլուծության, մոնիթորինգի, գնահատման և կառավարման մեթոդների 7 ուսումնական մոդուլների, ինչպես նաև Կառավարչական անհատական հմտությունների ուսումնական ձեռնարկի մշակում: ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից որոշակի հայեցակարգերի ճշգրտման պատճառով գործընթացը երկարաձգվեց, և տեխնիկական առաջադրանքները ներկայացվեցին 2014 թվականի հոկտեմբերին, որից հետո միայն հայտարարվեցին մրցույթները:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին

կոմիտեի համակարգի պահպանման ծախսերը կազմել են 3.1 մլրդ դրամ կամ ծրագրի 87.9%-ը: Ծեղունը հիմնականում պայմանավորված է ծախսերի տնտեսման և որոշ պայմանագրեր ավելի ցածր արժեքով կնքելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.5%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի ավելացմամբ:

ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 91.2 մլն դրամ կամ նախատեսվածի 94.3%-ը: 2014 թվականին շարունակվել է ծրագրի Ջրից դեպի շուկա բաղադրիչի իրականացումը: Ծրագրով նախատեսված աշխատանքները կատարված են, և ծրագրից 5.7% շեղումը հանդիսանում է պահպանման ծախսերի խնայողություն:

Տվյալ դասում ընդգրկված՝ պետական կառավարման մարմինների կարողությունների զարգացման ծախսերին տրամադրվել է 52.4 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 87.1%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցները տրամադրվել են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի կարողությունների զարգացմանը տրամադրվել է 538.2 մլն դրամ կամ նախատեսվածի 95.4%-ը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 1.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 42.3%-ը: Ծրագիրն ուղղված է էլեկտրոնային հասարակության և ինովացիոն ծրագրի նախապատրաստմանը օժանդակելուն, նպատակներն են՝ տնային տնտեսությունների, բիզնեսի և պետական կազմակերպությունների համար համացանցի, համակարգիչների և էլեկտրոնային ծառայությունների մատչելիությունը և հասանելիությունը, գիտելիքահեն և տեխնոլոգիահեն հատվածի ծավալների ու սլյալ հատվածում զբաղվածության աճը, ինչպես նաև հասանելիությունը շուկաներին, ֆինանսներին, հմտություններին:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- էլեկտրոնային հասարակության ենթակառուցվածքների զարգացում,
- Ձեռնարկությունների ինովացիոն ենթակառուցվածքների խթանում,
- Ծրագրի կառավարում և իրականացում:

2014 թվականին մշակված գնումների ժամանակացույցի և այլ փաստաթղթերի հիման վրա իրականացվել են գնումների բնականոն ընթացքի համար անհրաժեշտ աշխատանքներ: Ծրագրի կատարողականը հիմնականում պայմանավորված է նրանով, որ ծրագրի իրականացման ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից առաջարկվել էին որոշ կառուցվածքային փոփոխություններ, որոնք քննարկվել և համաձայնեցվել էին Համաշխարհային Բանկի հետ: Քանի որ ծրագրով նախատեսված Ազգային լայնաշերտ համացանցն արդեն իսկ ձևավորվում էր մասնավոր հատվածի միջոցով, անհրաժեշտություն էր առաջացել առաջին բաղադրիչով համացանցի ստեղծման համար նախատեսված միջոցները վերաբաշխել: Նախատեսվել էր այդ միջոցների մի փոքր մասը հատկացնել ՀՀ սահմանամերձ գյուղերում ինտերնետ հասանելիության ապահովման

ենթածրագրին, իսկ միջոցների զգալի մասը նպատակահարմար է համարվել ուղղել Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնի մոդելով Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի հիմնադրմանը: Հաշվի առնելով նաև այն, որ բավականին արդյունավետ է իրականացվում ծրագրի Կարողությունների զարգացման ենթաբաղադրիչը, նպատակահարմար է համարվել վերաբաշխվող գումարներից մի մասն էլ ուղղել IBM ընկերության հետ համատեղ Նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի ստեղծմանը: 2013 թվականի փետրվարի 20-ին և ապրիլի 20-ին ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել էր Համաշխարհային Բանկին՝ վարկային համաձայնագրում միջոցների վերաբաշխման և ժամկետի երկարաձգման խնդրանքով: 2014 թվականի նոյեմբերի 10-ին Համաշխարհային Բանկի կողմից և 2014 թվականի դեկտեմբերի 2-ին ՀՀ ֆինանսների նախարարի կողմից ստորագրվեց վարկային համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին նամակ-համաձայնագիրը, որը հաստատվեց ՀՀ Նախագահի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 13-ին: Այդ իսկ պատճառով վերոնշյալ ուղղություններով վերաբաշխվող գումարները չէին կարող ծախսվել 2014 թվականի ընթացքում՝ մինչև նշված փոփոխության հաստատումը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հարկային վարչարարության արդիականացման ծրագրի իրականացման համար ծախսվել է շուրջ 1.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 85.8%-ը: Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանի եկամուտների վարչարարության համապարփակ արդիականացմանը: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվում են ՏՀՏ ենթակառուցվածքում հույժ կարևոր ներդրումները, որպեսզի հնարավորություն ընձեռվի արդիականացնել բիզնես գործընթացները, ընդլայնվի էլեկտրոնային կառավարման կիրարկումը, այդ թվում՝ նաև հարկային հայտարարագրերի էլեկտրոնային եղանակով ներկայացումը, ինչպես նաև առավել թիրախավորված, ռիսկի վրա հիմնված պարտավորությունների իրականացման ռազմավարության ներդրումը՝ հիմնվելով պարտավորությունների կամավոր իրականացման վրա: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Ինստիտուցիոնալ զարգացում և փոփոխության կառավարում,
- Գործընթացի արդիականացում և պարտավորությունների կատարման կառավարում,
- ՏՏ ենթակառուցվածքի և համակարգերի արդիականացում,
- Ծրագրի կառավարում և իրականացում:

Ներդրվել է սերվերային երկու համակարգ՝ Երևանում և Դիլիջանում: Դիլիջանում տեղակայված սերվերային համակարգը վթարների կամ աղետների դեպքում կապահովի աշխատանքների շարունակականությունը: Վերջնական արդյունքում ՀՀ ֆինանսների նախարարությունը կունենա վերազինված, ISO27001 ստանդարտներին համապատասխան ՏՏ ենթահամակարգեր, որը կնպաստի էլեկտրոնային համակարգերի արագ և արդյունավետ աշխատանքին, հարկ վճարողների համար կապահովի անխափան կապ և տվյալների անվտանգության բարձր մակարդակ: Մեկնարկել են տպագրական սարքավորումների ներդրման աշխատանքները, որոնք կավարտվեն 2015 թվականին: Արդյունքում ՀՀ ֆինանսների նախարարությունը կունենա նորագույն տեխնիկայով զինված տպարան, որտեղ կտպագրվեն ուսումնական նյութեր, ձեռնարկներ, իրազեկման նպատակով բուկլետներ, հարկային և մաքսային տեղեկատուներ և այլ նյութեր: Մշակվել են տեխնիկական մասնագրեր «Հարկատու 3» համակարգի

յոթ մոդուլների համար, որը թույլ կտա սկսել դրանց ծրագրավորման գործընթացը: Ծրագրի կատարողականի պատճառներից հիմնականն այն է, որ 2014 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության ՏՏ սարքավորումների տվյալների մշակման կենտրոնների և ներքին ցանցի վերազինման համար սարքավորումների ձեռքբերման մրցույթը երկարաձգվել է հայտատուների բացակայության պատճառով: Արդյունքում հետաձգվել է գնման գործընթացը: 2014 թվականի հուլիս ամսին կնքվել է ՀՀ ֆինանսների նախարարության ՏՏ սարքավորումների տվյալների մշակման կենտրոնների և ներքին ցանցի վերազինման համար սարքավորումների ձեռքբերման պայմանագիրը: Ապրանքների մեծ մասն արդեն մատակարարվել է, սարքավորումների տեղադրման աշխատանքները կավարտվեն 2015 թվականին, որի արդյունքում պայմանագրով նախատեսված գումարն ամբողջությամբ կվճարվի: ՀՀ ֆինանսների նախարարության Ուսումնական կենտրոնի համար նախատեսված տպագրական սարքավորումների գնման համար մրցույթը վերահայտարարվել է գնային առաջարկների բացակայության պատճառով: Արդյունքում վերանայվել են մրցութային փաստաթղթերը՝ հայտատուների հետաքրքրվածությունը բարձրացնելու նպատակով, և նշված սարքավորումների գնման գործընթացը հետաձգվել է մոտ երկու ամսով: Ներկայումս կնքվել է վերը նշված սարքավորումների ձեռքբերման պայմանագիրը: Ապրանքների մի մասն արդեն մատակարարվել է:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող հանրային հատվածի վերահսկողության (Վերահսկիչ պալատի) կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի իրականացման համար ծախսվել է 127.2 մլն դրամ կամ նախատեսվածի 83.9%-ը: Ծրագրի նպատակն է աջակցել պետական հատվածի արտաքին աուդիտի կողմից կարողության ստեղծման ռազմավարության ու գործողությունների ծրագրի ընդունմանը և աուդիտի ստանդարտացված մեթոդների մշակմանն ու կիրառմանը: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Կարողության գնահատում և ռազմավարության մշակում,
- Աուդիտի համապատասխան ստանդարտների և մեթոդների մշակում,
- Ծրագրի աուդիտ:

Ծրագրի կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ վերահսկիչ պալատի վերապատրաստողների ուսուցման նպատակով սարքավորումների ձեռքբերման մրցույթը չի կայացել: Ծրագրի շրջանակներում կնքվել է պայմանագիր «Քորփորեյթ Սոլուշնս Քոնսալթինգ Լիմիտիդ» (Corporate Solutions Consulting Limited) և «Փի-Էյչ-Փի Աուդիտ» ՓԲԸ համատեղ ձեռնարկության (ՀԶ) հետ, որի արդյունքում առաջացել է խնայողություն: Բացի այդ, ՀԶ-ն ուշացրել է տեխնիկական առաջադրանքով նախատեսված աշխատանքների հերթական փուլի իրականացումը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ ֆինանսների նախարարության կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի գծով նախատեսված 60.1 մլն դրամից օգտագործվել է 6.9 մլն դրամը: Ծրագրի նպատակն է հզորացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համապատասխան վարչությունների կարողությունները, որոնք պատասխանատու են ֆինանսական շուկայի զարգացման և փողերի լվացման դեմ պայքարի քաղաքականությունների համար:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.



- Ինստիտուցիոնալ զարգացման առաջխաղացում,
- Ֆինանսական շուկայի զարգացում,
- Ծրագրի աուդիտ:

Իրականացվել է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտի ՀՀ օրենսդրության և այդ ոլորտի միջազգային լավագույն փորձի համեմատություն, հայտնաբերված բացերի հիման վրա մշակվել է գործողությունների ծրագիր, ինչպես նաև խաղային գործի բնագավառում գործող կազմակերպությունների համար ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացման ենթակա պարբերական հաշվետվական ձևերը: Օրենսդրական դաշտի կատարելագործմանն ուղղված միջոցառումների նպատակն է խաղային գործի բնագավառում առկա ռիսկերը դարձնել տեսանելի և կառավարելի: Մեկնարկել է ՀՀ ֆինանսների նախարարությունում ներկայումս գործող «Հարկատու-3» էլեկտրոնային կառավարման համակարգում լիցենզիաների վարման մոդուլի ընդգրկումը, որի արդյունքում կավտոմատացվեն լիցենզավորման ենթակա գործունեության բոլոր տեսակների լիցենզիաների վարման գործընթացները: Արդյունքում կունենանք հարկ վճարողների, մասնավորապես՝ շահումով խաղերի կամ խաղատների գործունեությամբ զբաղվելու լիցենզիա ստացած կազմակերպությունների, հարկային և այլ պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողության գործընթացի կատարելագործված և ավտոմատացված համակարգ, մարդկային գործունի և կոռուպցիոն ռիսկերի նվազեցում, մարդկային ռեսուրսների և ժամանակի խնայողություն: Ծրագրի շրջանակներում մեկնարկել են ՀՀ-ում կենսաթոշակային համակարգի վերլուծության, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության աշխատանքները, և վերջինիս համաձայն նախատեսվում է մշակել կենսաթոշակային համակարգի բարեփոխումների ծրագրեր:

Ծրագրի կատարողականը հիմնականում պայմանավորված է հետևյալով.

- «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համար իրավական և կանոնակարգային միջավայրի բարելավում» պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման և վճարման ժամանակացույցը հետաձգվել է օրենսդրական փոփոխությունների պատճառով.

- Կենսաթոշակային համակարգի բարեփոխումների ուսումնասիրության, վերլուծության, բարելավման և համապատասխան աջակցող շուկաների իրավական և կանոնակարգային շրջանակի ձևավորման համար խորհրդատվական ընկերության ընտրության գործընթացը ժամանակավորապես կասեցվել էր՝ տեխնիկական առաջադրանքի անհրաժեշտությունը վերանայելու, ինչպես նաև նոր գնահատող հանձնաժողով ստեղծելու նպատակով: Գնահատման արդյունքում առաջին տեղը զբաղեցրած ընկերությունը հրաժարվեց ներկայացնել համատեղ տեխնիկական և ֆինանսական առաջարկ, երկրորդ տեղը զբաղեցրած ընկերությունը ներկայացրել է առաջարկը, որի ընդունման արդյունքում կկնքվի պայմանագիր 2015 թվականին.

- Վերանայվել է ծրագրով նախատեսված մեկ այլ տեխնիկական առաջադրանքի բովանդակությունը՝ համաձայնեցնելով Համաշխարհային Բանկի հետ: Ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կողմից մշակվել է «ՀՀ ՖՆ համապատասխան բաժիններում շահումով խաղերի վերահսկողական ընթացակարգերի հզորացման, մոնիթորինգի և գնահատման ավտոմատացված

համակարգի մշակման վերաբերյալ» խորհրդատվական ծառայության տեխնիկական առաջադրանքը: Ներկայումս մրցույթը գնահատման փուլում է:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի կառավարության կարգավորող բարեփոխումների գրասենյակի կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 53.6 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 36.1%-ը: Ծրագրի նպատակն է հզորացնել ՀՀ կառավարության կարգավորիչ բարեփոխումների ստորաբաժանման կարողությունները, որը պատասխանատու է գործարարների և քաղաքացիների գործունեության վրա ազդող իրավական նորմերի զույգագրման և վերանայման և անօգուտ կամ ավելորդ հանդիսացողների վերացման կամ պարզեցման միջոցով կարգավորիչ «գիյոտինի» ծրագրի իրականացման համար:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Կարգավորիչ բարեփոխումների ստորաբաժանման (ԿԲՍ) կարողությունների հզորացում,
- Մշտադիտարկման և գնահատման (Մ և Գ) համակարգի մշակում և ներդրում,
- Ծրագրի աուդիտ:

Ծրագրի կատարողականը հիմնականում պայմանավորված է հետևյալով:

Ծրագրի շրջանակներում «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կարողությունների հզորացում» տեխնիկական առաջադրանքի իրականացման նպատակով 2013 թվականի հուլիսի 4-ին կնքվել է պայմանագիր «Յաքոբս, Կորդոբա և ընկերները» Ինք.-ի ("Jacobs, Cordova and Associates" Inc.) հետ: Պայմանագրի համաձայն 2014 թվականի դրությամբ ընկերությունը պետք է ներկայացներ 3 հաշվետվություն: Սակայն 2014 թվականի հուլիսին ստացվել է միայն 1-ին հաշվետվությունը, որի դիմաց էլ կատարվել է վճարում:

Ծրագրի շրջանակներում «Մշտադիտարկման (մոնիթորինգի) գնահատման և ազդեցության գնահատման» տեխնիկական առաջադրանքի իրականացման նպատակով 2013 թվականի նոյեմբերի 15-ին կնքվել է պայմանագիր «Ալֆաիլաս քոնսալթինգ» ՍՊԸ-ի և «Ջարգացման ցանց» ՀԿ (Հայաստան) ՀԶ-ի հետ: Պայմանագրի համաձայն 2014 թվականի դրությամբ ընկերությունը պետք է ներկայացներ 3 հաշվետվություն: Ընկերության կողմից ներկայացվել է 2 հաշվետվություն, 1-ին հաշվետվությունը ընդունվել է ուշացումով պատվիրատուի կողմից, որի դիմաց կատարվել է վճարում: Ընկերության կողմից 2015 թվականին ներկայացվել է 2-րդ հաշվետվությունը, որն ընդունվել է, և կատարվել է վճարում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի հանրային ֆինանսական կառավարման հզորացման դրամաշնորհային ծրագրի գծով նախատեսված 282.6 մլն դրամի դիմաց կատարվել են 76.2 մլն դրամի ծախսեր: Ծրագրի նպատակն է քաղաքականության վրա հիմնված բյուջետավորման խորացման և Հայաստանում պետական ներդրումների կառավարման համակարգի հզորացումը:

Կնքված պայմանագրերի շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարությանը և այլ համապատասխան գերատեսչություններին աջակցություն է տրամադրվել բյուջեի մշակման, այդ թվում՝ կապիտալ ներդրումների բյուջետավորման կատարելագործված ընթացակարգերի

նախագծման և գործարկման հարցում: Իրականացվել է քաղաքականության վրա հիմնվող բյուջետավորման խորացում, որի շրջանակներում իրականացվել է նոր հաշվային պլանի ծրագրային սեգմենտի մշակում, ինչպես նաև ծրագրի ծախսակազմում: Միջոցառումներ են նախաձեռնվել պետական ներդրումների կառավարման հզորացման ուղղությամբ:

Մեկնարկել է «Հայաստանի Հանրապետության պետական ծախսերի կառավարման համակարգի ֆունկցիոնալ, տեխնիկական և տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման ներուժի բարձրացման և կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի իրականացման» տեխնիկական առաջադրանքը: Կնքված պայմանագրի շրջանակում խորհրդատվական կազմակերպության կողմից ներկայացվել է առաջին փուլի հաշվետվությունը, որն իր մեջ ներառում է հետևյալ բաղադրիչները.

- Պետական ֆինանսների կառավարման բիզնես գործընթացների վերանայում և վերակազմակերպում,
- Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգում (ԿՖԿՏՀ) ներառվող բիզնես գործընթացի մանրամասն վերակազմակերպում և նկարագրություն,
- ՀՀ ֆինանսների նախարարության համար ՏՏ ռազմավարության և կառավարման համակարգի մշակում:

Ծրագրի 27% կատարողականը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի ավարտը նախանշվում էր 10.10.2014թ., սակայն այն երկարաձգվել է մինչև 10.10.2015թ., և աշխատանքների մի մասը տեղափոխվել է 2015 թվականի հետևյալ պատճառներով.

- ՀՀ օրենսդրական փոփոխությունները, որոնք հանգեցրել են նախարարության գործառնությունների և պայմանագրի շրջանակում նախատեսված բիզնես պրոցեսների փոփոխությանը, որի արդյունքում «Բիզնես գործընթացի ուսումնասիրություն և ԿՖԿՏՀ-ի համար տեխնիկական մասնագրերի մշակում» պայմանագրով ներկայացված հաշվետվությունը վերանայվել է ստեղծված աշխատանքային խմբի կողմից, նաև ուղարկվել են ՀԲ-ին՝ կարծիքի.

- դրամաշնորհի շրջանակում կնքվել են Քաղաքականության վրա հիմնված բյուջետավորման խորացման, Հայաստանում պետական ներդրումների կառավարման համակարգի հզորացման և Բիզնես գործընթացի ուսումնասիրության և ԿՖԿՏՀ-ի համար տեխնիկական մասնագրերի մշակման պայմանագրերը, որոնց ավարտը սահմանված էր 2014 թվականի հոկտեմբեր ամսին, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ֆինանսների նախարարության և խորհրդատուի միջև քննարկումների արդյունքում պատվիրատուն առաջարկել է դիտարկել պետական կապիտալ ծախսերի պլանավորումը և բյուջետավորումը կարգավորող գործող օրենսդրությունում փոփոխություններ կատարելու հնարավորությունը, ինչպես նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել ծրագրի երրորդ փուլով նախատեսված՝ ՀՀ ֆինանսների նախարարության և ճյուղային այլ գերատեսչությունների աշխատակիցների վերապատրաստման սեմինարներն անցկացնել հունվար-փետրվար ամիսներին՝ հաշվի առնելով, որ այդ ժամանակահատվածում համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցները բյուջետային գործընթացում համեմատաբար քիչ են ծանրաբեռնված և վերապատրաստման դասընթացներին ներգրավվելու ավելի մեծ

հնարավորություն ունեն, դրամաշնորհի ավարտը երկարաձգվել է, և կատարվել են պայմանագրերի փոփոխություններ:

Գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և հաշվետվողականության մոդուլների ինտեգրված էլեկտրոնային համակարգի մշակման (150,000 ԱՄՆ դոլար դրամաշնորհի միջոցներից) տեխնիկական առաջադրանքը հաստատվել է ՀԲ-ի և կոլեգիայի կողմից, որից հետո մրցույթի հրավերը հայտարարվել է:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսաթոշակների մասին հանրային իրազեկման և գրագիտության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 101.5 մլն դրամ կամ նախատեսվածի 71.6%-ը: Ծրագրի նպատակն է ուժեղացնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև վերջինիս սոցիալական ապահովության պետական ծառայության կարողությունները՝ բարելավելու լայն հասարակության և հատուկ թիրախային խմբերի իրազեկումը կենսաթոշակային բարեփոխման մասին և ֆինանսական գրագիտությունը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

- Իրազեկման և ֆինանսական գրագիտության բարձրացման կարողությունների կատարելագործում,
- Ղասախոսների վերապատրաստման շնորհիվ դասախոսների դյուրաշարժ խմբերի կազմավորում:

Ծրագրի կատարողականը հիմնականում պայմանավորված է հետևյալով: Կենսաթոշակային պորտալի և թեժ գծի համար սարքավորումների ձեռք բերման մրցույթը հայտարարվել է երկրորդ անգամ (առաջին անգամ չկային համապատասխանող հայտեր), որի գնահատումն ու ամփոփումը կատարվել է 2014 թվականի վերջին, իսկ պայմանագրի ստորագրումը և իրականացումը կատարվել են 2015 թվականին: Կենսաթոշակային պորտալի ստեղծման նպատակով կնքված պայմանագրի շրջանակում 2014 թվականի հոկտեմբերին պետք է ավարտվեր երրորդ փուլը, որի վճարումը պետք է կատարվեր մինչև տարեվերջ: Սակայն, քանի որ այդ փուլով [www.epension.am](http://www.epension.am) պորտալի Սոցիալական մեկ պատուհան/էլեկտրոնային ընդունարան բաժնում նախատեսված էր ստեղծել առցանց ռեժիմում աշխատող մի շարք էլեկտրոնային գործիքներ, որոնք մասնակի էին տեղակայված պորտալում և լիարժեք չէին աշխատում, հնարավոր չէր ավելի վերջնական ընդունումը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքաշինական թույլտվությունների էլեկտրոնային մշակման և մեկ պատուհանից տրամադրման ծրագրի համար ԻԶՀ դրամաշնորհային ծրագրի միջոցներից օգտագործվել է 34.5 մլն դրամ կամ նախատեսվածի 35.5%-ը: Ծրագրի նպատակն է բարելավել բիզնես միջավայրը՝ կրճատելով քաղաքաշինական թույլտվությունների հետ կապված ընթացակարգերի իրականացման համար անհրաժեշտ ծախսերը և դրանց համար պահանջվող ժամանակը՝ այս ընթացակարգերի պարզեցման և ավտոմատացման միջոցով: Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

- Մեկ պատուհանի միջոցով քաղաքաշինական թույլտվությունների արդիականացված մշակում,
- Տվյալների էլեկտրոնային մշակման և ծառայությունների մատուցման ներդրում:

Ծրագրի շրջանակներում «Հայաստանի Հանրապետությունում շինարարական թույլտվությունների էլեկտրոնային միասնական համակարգի մշակում» խորհրդատվական ծառայության իրականացման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքում 2014 թվականի սեպտեմբերի 25-ին կնքվել է պայմանագիր, որի արդյունքում առաջացել է խնայողություն, իսկ կատարողականի հիմնական պատճառը միայն 1-ին փուլի իրականացումն է:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի գյուղատնտեսական հաշվառման պիլոտային ծրագրի համար վիճակագրական կարողությունների զարգացման և իրականացման աջակցման դրամաշնորհային ծրագրի միջոցներից օգտագործվել է 63.8 մլն դրամ կամ նախատեսվածի 73.4%-ը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ պատվիրատուի կողմից մատակարարման 2 պայմանագրի համար տեխնիկական մասնագրեր չեն տրամադրվել: Գնումների պլանով նախատեսված էր պայմանագրերի կատարումն ավարտել 2014 թվականին, սակայն դրանք փաստացի կիրականացվեն 2015 թվականին: Բացի այդ, գնումների պլանով 2014 թվականին նախատեսված ուսումնական այցը պատվիրատուի կողմից տեղափոխվել է 2015 թվական: Կնքված պայմանագրերի շրջանակներում առաջացել է նաև 50,000 ԱՄՆ դոլարի չափով խնայողություն:

Ընտրական վարչարարության փորձի ուսումնասիրման, ընտրական վարչարարության բարձրացման, կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերազինման և ընտրական օրենսդրությանը վերաբերող նյութերի հրապարակման աշխատանքներին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի արտաբյուջետային միջոցներից տրամադրվել է 17.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 60.7%-ը: Տնտեսումը պայմանավորված է գործուղումների և այցերի կրճատմամբ:

2014 թվականին *պետական պարտքի* գծով գործառնությունների դասի ծախսերը կատարվել են 98.9%-ով և կազմել 61.6 մլրդ դրամ: Նշված գումարից 32.9 մլրդ դրամը տրամադրվել է պետական արժեթղթերի (գանձապետական պարտատոմսերի) սպասարկմանը, որի կատարողականը կազմել է 99.5%: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 10.8%-ով՝ պայմանավորված ներքին պարտքի ծավալների աճով:

Օտարերկրյա պետություններից, միջազգային կազմակերպություններից և այլ արտաքին աղբյուրներից ստացված վարկերի սպասարկմանը տրամադրվել է 11.6 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 95.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 31.3%-ով՝ պայմանավորված արտաքին վարկերի՝ ծրագրից պակաս ստացումներով, ինչպես նաև այն հանգամանքով, որ 2013թ. հոկտեմբերին ՌԴ նկատմամբ պարտքի ամբողջական մարման և ԱՄՀ-ի կողմից տրամադրված “Stand-by-Arrangement” վարկի գծով կատարված մայր գումարի մարումների արդյունքում տնտեսվել են տոկոսավճարներ:

Մուրհակների սպասարկմանը տրամադրվել է 2.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.9%-ը: 106.1 մլն դրամ է տրամադրվել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի նկատմամբ պարտավորությունների սպասարկմանը, որը կազմել է նախատեսվածի 93.5%-ը:

Իռլանդական ֆոնդային բորսային Հայաստանի Հանրապետության անունից թողարկվող արտարժույթային պետական պարտատոմսերի ցուցակման համար վճարվել է 1.1 մլն դրամ (97.3%):

Արտարժութային պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերը կազմել են 17 մլրդ դրամ (100%), ինչով էլ հիմնականում պայմանավորված է պետական պարտքի գծով գործառնությունների դասի ծախսերի 31.9%-ով կամ 14.9 մլրդ դրամով աճը:

2014 թվականին ՀՀ պետական բյուջեից կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտները ֆինանսավորվել են 99.9%-ով՝ կազմելով 41 մլրդ դրամ: Նշված գումարից 39 մլրդ դրամը տրամադրվել է համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և Ազգային ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ֆինանսավորմանը, որը կատարվել է 100%-ով: Բացի նշված միջոցներից, տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվել է ևս 2 մլրդ դրամ պետական աջակցություն՝ կազմելով նախատեսվածի 98.8%-ը: Նախորդ տարվա համեմատ կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներն աճել են 13.1%-ով:

### Պաշտպանություն

2014 թվականին պաշտպանության բնագավառում ՀՀ պետական բյուջեից կատարվել են 190 մլրդ դրամ ծախսեր՝ կազմելով ծրագրի 98%-ը: Նախորդ տարվա համեմատ ոլորտի ծախսերն աճել են 4.6%-ով՝ հիմնականում պայմանավորված ռազմական կարիքների բավարարման ծախսերի ավելացմամբ:

Հաշվետու տարում 183.5 մլրդ դրամ ուղղվել է ռազմական պաշտպանության ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրի 98.1%-ը: Նշված գումարից 183.1 մլրդ դրամը հատկացվել է ռազմական կարիքների բավարարմանը, որը կազմել է ծրագրի 98.1%-ը: ՀՀ ռազմական կցորդների պահպանմանը տրամադրվել է 341.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 100%-ը: ՀԱՊԿ-ում ՀՀ զինված ուժերի ներկայացուցչի ծախսերը կազմել են 35 մլն դրամ կամ ծրագրի 85.7%-ը: 2013 թվականի համեմատ ռազմական պաշտպանության ծախսերն ավելացել են 4.6%-ով:

Արտաքին ռազմական օգնությանը տրամադրվել է 159.2 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 100%-ը: Այս դասում ներառված՝ ՆԱՏՕ-ում Հայաստանի Հանրապետության առաքելությունում պաշտպանության հարցերով պետական խորհրդականի պահպանման ծախսերը կազմել են 55.8 մլն դրամ: ՆԱՏՕ-ում (ռազմավարական հրամանատարությունների) ռազմական համագործակցության վարչությունում Հայաստանի Հանրապետության փոխգործակցության սպայի պահպանման ծախսերը կազմել են 44.4 մլն դրամ: ՆԱՏՕ-ում Հայաստանի Հանրապետության առաքելությունում Հայաստանի Հանրապետության ռազմական ներկայացուցչի պահպանման նպատակով տրամադրվել է 49.4 մլն դրամ: Երևանում ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի տարածքի վարձակալության նպատակով բյուջեից հատկացումները կազմել են 9.6 մլն դրամ: Արտաքին ռազմական օգնության ծախսերը 10.8%-ով գերազանցել են 2013 թվականի ցուցանիշը:

Պաշտպանության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքների դասում ներառված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և

փորձակոնստրուկտորական աշխատանքների գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով 99.5% կատարողական և նախորդ տարվա համեմատ ավելանալով 9.9%-ով:

Պաշտպանության՝ այլ դասերին չպատկանող ծախսերը կազմել են 5.3 մլրդ դրամ կամ ծրագրվածի 96.3%-ը, որից 56 մլն դրամը (ծրագրվածի 100%-ը) տրամադրվել է զորակոչիկներին վարորդական իրավունքի վկայականների տրման և քննությունների ընդունման նպատակով, 139.2 մլն դրամը (ծրագրվածի 96.1%-ը)՝ հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայությունների կազմակերպմանը, 5.1 մլրդ դրամը (ծրագրվածի 100%-ը)՝ պաշտպանության բնագավառի այլ ծախսերին: Այլ ծախսերի գծով արտաբյուջետային միջոցների հաշվին օգտագործվել է 80 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 28.5%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 4.4%-ով:

**Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն**

Հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառներին 2014 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 104.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 98%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 14.7%-ով կամ 13.4 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված ոստիկանության, Ազգային անվտանգության և փրկարար ծառայության դասերի ծախսերի աճով:

Բաժնի ծախսերի 72.3%-ը կամ 75.7 մլրդ դրամ կազմել են հասարակական կարգի և անվտանգության խմբի ծախսերը, որոնց ծրագիրը կատարվել է 98.3%-ով: Նշված գումարից 57.1 մլրդ դրամը կազմել են ոստիկանության, 18.6 մլրդ դրամը՝ Ազգային անվտանգության դասի ծախսերը, որոնք կատարվել են համապատասխանաբար 98.9%-ով և 96.8%-ով:

2013 թվականի համեմատ ոստիկանության դասի ծախսերն աճել են 15.5%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է հասարակական կարգի պահպանության ապահովման ծախսերի աճով:

2014 թվականին հասարակական կարգի պահպանության ապահովմանը տրամադրվել է 33.8 մլրդ դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 22.2%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության և նյութերի ձեռքբերման ծախսերի աճով:

Պետավտոհամարանիշների ձեռքբերման համար պետական բյուջեից տրամադրվել է 236.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

ՀՀ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների շենքերի և շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանության ծախսերը նույնպես ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 1.6 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.9%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

2014 թվականին 7.8 մլրդ դրամի ծախսեր են կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության գծով իրականացվող ծառայությունների դիմաց ստացվող արտաբյուջետային միջոցների հաշվին, որոնք կազմել են նախատեսվածի 97.3%-ը և 6%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված նոր պայմանագրերի կնքման հանգամանքով:

Ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումներից, գրանցման-քննական ծառայությունների դիմաց վճարումների և այլ վճարովի ծառայությունների մատուցումից ստացված միջոցների հաշվին կատարված ծախսերը կազմել են 12.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.7%-ը, որոնք նախորդ տարվա համեմատ աճել են 10.9%-ով:

Քաղաքացիներին բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների մատուցման նպատակով տրամադրվել է 4 մլն դրամ կամ նախատեսվածի 28.8%-ը և 34.6%-ով նվազելով նախորդ տարվա համեմատ, որը պայմանավորված է առանձին գնման առարկաների համար հայտարարված մրցույթների չկայանալու հանգամանքով:

ՀՀ քաղաքացու անձնագիր տալու կամ փոխանակելու վճարովի ծառայության մատուցումից ստացվող միջոցներն օգտագործվել են 93%-ով՝ կազմելով 863.7 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 28.9%-ով՝ պայմանավորված ՀՀ քաղաքացիների կողմից սեղմ ժամկետներում քաղաքացու անձնագիր և նույնականացման քարտ ստանալու համար դիմողների թվի ավելացման արդյունքում տվյալ արտաբյուջետային հաշվի մուտքերի աճով:

2013 թվականի ընթացքում Ազգային անվտանգության բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 18.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 96.8%-ը: 2013 թվականի համեմատ Ազգային անվտանգության դասի ծախսերն աճել են 10.6%-ով կամ 1.8 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված Ազգային անվտանգության ապահովման ծախսերի աճով: 15.7 մլրդ դրամ տրամադրվել է Ազգային անվտանգության ապահովման ծրագրին, որը կատարվել է 96.7%-ով: 2013 թվականի համեմատ տվյալ ծախսերն աճել են 11.3%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով: Պետական պահպանության ապահովման ծախսերի կատարողականը կազմել է շուրջ 2.5 մլրդ դրամ կամ 99.9%: Նախորդ տարվա համեմատ պետական պահպանության ապահովման ծախսերն աճել են 7.4%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով: ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի պահպանման նպատակով օգտագործվել է 406.9 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 95.3%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 10.8%-ով, որը նույնպես պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով: ՀՀ կառավարական կապի անվտանգության ապահովման նպատակով իրականացվել են 31.3 մլն դրամի ծախսեր, որոնք ապահովել են ծրագրի 41.7% կատարողական և 27.3%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցելու դիմաց ստացվող միջոցների հաշվին պետական պահպանության ապահովման ծախսերը կազմել են 6.1 մլն դրամ կամ նախատեսվածի 40.5%-ը և 51.6%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված 2014 թվականի ապրիլի 1-ից պայմանագրի խզման հանգամանքով:



Հայաստանի փրկարար ծառայության համակարգի պահպանման նպատակով հաշվետու տարում ծախսվել է 7.3 մլրդ դրամ՝ ապահովվելով ծրագրային հատկացումների 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 27.3%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով: Այս դասում ընդգրկված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը կազմել են 905.2 մլն դրամ՝ ապահովվելով 99.9% կատարողական: Միջոցներն ուղղվել են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 38.2%-ով: Նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանմանը տրամադրվել է 43.8 մլն դրամ՝ ապահովվելով 87.3% կատարողական և 89.6%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված 2014 թվականին հաստիքների համալրմամբ և աշխատավարձերի բարձրացմամբ: Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանման ծախսերը կատարվել են 99.9%-ով՝ կազմելով 6.3 մլրդ դրամ և նախորդ տարվա համեմատ աճելով 25.6%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Ղատարանների դասի ծրագրերին ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 8.6 մլրդ դրամ՝ 91.6%-ով ապահովվելով ծրագրի կատարումը և 12%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, ինչը նույնպես պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով: 7 մլրդ դրամ տրամադրվել է ՀՀ ղատարանների պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի 93%-ը և 19.1%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: 475.3 մլն դրամ է տրամադրվել ՀՀ սահմանադրական ղատարանի պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի 98.9%-ը և 24.4%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Հաշվետու տարում 1 մլրդ դրամ է տրամադրվել դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պահպանմանը, որը կազմել է նախատեսվածի 94.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 30.7%-ով:

ՀՀ սահմանադրական ղատարանի և ՀՀ ղատարանների պահուստային ֆոնդերից օգտագործվել է համապատասխանաբար 9.4 մլն դրամ և 134.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի համապատասխանաբար 97.8%-ը և 89.3%-ը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Փաստաբանների դպրոցի վերապատրաստման կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսվել էին 189.2 մլն դրամի ծախսեր, որոնք չեն կատարվել: Ծրագրի ֆինանսավորումը կասեցվել է Համաշխարհային Բանկի կողմից համապատասխան մասնագետների բացակայության պատճառով և վերսկսվել է 2014 թվականի սեպտեմբերին: 2014 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են խորհրդատվական ծառայությունների գնումների ընթացակարգեր, սակայն վճարումներ չեն իրականացվել:

Հաշվետու տարում պետական բյուջեից 518.5 մլն դրամ է տրամադրվել իրավական պաշտպանության դասի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 98%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պահպանման ծախսերը 2014 թվականին կազմել են 213.7 մլն դրամ կամ նախատեսվածի 97.4%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 26.6%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով 275.5 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 5.9%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կարողությունների զարգացման նպատակով նախատեսված 3.8 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է, որով ապահովվել են համակարգչային ցանցի համալրումն ու անխափան շահագործումը:

Ղատավարություններին ընդգրկված թարգմանիչների, փորձագետների և վկաների վարձատրության փոխհատուցման ծախսերը կազմել են 15.5 մլն դրամ (100%): 2013 թվականի համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Անվճարունակության գործերով կառավարիչներին իրենց մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են 10.1 մլն դրամ կամ նախատեսվածի 67.4%-ը՝ 11.2%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրից շեղումը պայմանավորված է ավարտված գործերի փաստացի քանակով՝ նախատեսված 500-ի փոխարեն այն կազմել է 337, իսկ նախորդ տարվա համեմատ ծախսերի աճը՝ գործերի քանակի աճով:

2013 թվականին 3.04 մլրդ դրամ է տրամադրվել դատախազության դասի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 99.5%-ը: Հատկացված միջոցներից շուրջ 3 մլրդ դրամը (նախատեսվածի 99.5%-ը) տրամադրվել է ՀՀ դատախազության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 20.8%-ով, որը հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով: ՀՀ դատախազության պահուստային ֆոնդի հաշվին նախատեսված միջոցներն օգտագործվել են 99.3%-ով՝ կազմելով 66.3 մլն դրամ:

Հաշվետու տարում քրեակատարողական համակարգի պահպանության ծախսերը կազմել են 9.2 մլրդ դրամ կամ 99.1%: 2013 թվականի համեմատ դրանց 10.3%-ով աճը նույնպես հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

2014 թվականի պետական բյուջեից ՀՀ հատուկ քննչական ծառայության պահպանմանը տրամադրվել է 364.4 մլն դրամ կամ նախատեսվածի 99.5%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 33.5%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

### **Տնտեսական հարաբերություններ**

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի ծախսերի 6.7%-ը տրամադրվել է տնտեսական հարաբերությունների բաժնին՝ կազմելով շուրջ 83.3 մլրդ դրամ և 75.1%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով: Հատկացված ֆինանսական միջոցների հիմնական մասն ուղղվել է

տրանսպորտի (65.9%) և գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության ու որսորդության (24.6%) բնագավառների ծրագրերի իրականացմանը:

Հաշվետու տարում *ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերությունների* դասի ծախսերը կազմել են 3.5 մլրդ դրամ՝ 95.9%-ով ապահովվելով ծրագրի կատարումը և 22.4%-ով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված որակի ենթակառուցվածքների բարեփոխման, հիդրոոդերևութաբանական ծառայությունների և գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերի աճով:

Ղասում ընդգրկված են 15 ծրագրեր, որոնցից հետևյալ վեցի գծով արձանագրվել է 100% կատարողական:

Հաշվետու տարում հիդրոոդերևութաբանության ծառայությունների ձեռք բերման ծախսերը կազմել են 762.6 մլն դրամ, որն օգտագործվել է «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից հիդրոոդերևութաբանական դիտարկումների իրականացման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 28.3%-ով կամ 168.3 մլն դրամով՝ պայմանավորված 2014 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Տնտեսական գործունեության աջակցման ծառայությունների մատուցման ծախսերը կազմել են 122.2 մլն դրամ: Ծրագիրն իրականացվել է «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի կողմից: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավմանը, արտահանման զարգացմանը, գործարար միջավայրի բարելավմանը և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրին հատկացվել է շուրջ 152 մլն դրամ: ՓՄՁ սուբյեկտներին աջակցության 2014 թվականի ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և տեխնիկական աջակցության ուղղություններով բավարարվել է 14688 աջակցության հայտ. ընդ որում՝ աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 5.3%-ը գործում են Երևան քաղաքում, 94.7%-ը՝ ՀՀ մարզերում, առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 0.8%-ով կամ 1.2 մլն դրամով: Հարկ է նշել, որ ՓՄՁ սուբյեկտներին աջակցության 2014 թվականի ծրագրի իրականացման համար, բացի ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից հատկացված գումարից, լրացուցիչ ֆինանսական միջոցներ են ներգրավվել նաև միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության շրջանակներում:

2014 թվականին «Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի» (ՀԱՄՀ) կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը պետական աջակցության ծախսերը կազմել են 252 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 3.6%-ով կամ 9.3 մլն դրամով: Ծրագրի շրջանակներում Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամն աշխատանքներ է

իրականացրել Հայաստանի ազգային մրցունակության բարձրացման ուղղությամբ: Մասնավորապես՝ իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Ջրոսաշրջության շրջանակներում Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը պատշաճ կերպով ներկայացրել է Հայաստանը (նաև Արցախը) մի շարք միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին: 2014 թվականի մայիսին Շվեյցարիայի Ցյուրիխ քաղաքում տեղի է ունեցել Շվեյցարիա-Հայաստան գործարար համաժողովը, Հիմնադրամի կողմից համաժողովում ներկայացվել են ՀՀ զբոսաշրջության խթանման և ավիացիայի ոլորտի ազատականացման գործողությունները: ՀԱՄՀ-ը հուլիսին մասնակցել է Թբիլիսիում տեղի ունեցած ՄԱԿ-ի Ջրոսաշրջային համաշխարհային կազմակերպության (UNWTO) «Մետաքսի ճանապարհ» 4-րդ համաժողովին: ՀԱՄՀ-ը աշխատանքներ է իրականացրել Հայաստանն ու Հայաստանի զբոսաշրջային արդյունքը ներկայացնող գովազդային բրոշյուրների՝ իսպաներեն (1500 օրինակ), գերմաներեն (2000 օրինակ), ռուսերեն (1500 օրինակ) լեզուներով և Հայաստանի ու Երևանի քարտեզների՝ իսպաներեն (1500 օրինակ), գերմաներեն (2000 օրինակ), ռուսերեն (3300 օրինակ) ֆրանսերեն (1000 օրինակ) լեզուներով վերատպագրելու ուղղությամբ: Բրոշյուրները և քարտեզները բաշխվել են միջազգային ցուցահանդեսներին, արտերկրում Հայաստանի դեսպանատներին, միջազգային զբոսաշրջային կազմակերպություններին և գործակալություններին, արտասահմանյան պատվիրակություններին և պետական մարմիններին: ՀԱՄՀ-ը ԱՄՆ ՄԶԳ Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության ծրագրի գործընկերների հետ համատեղ տպագրել է Վայոց Ձորի մարզի զբոսաշրջային տեղեկագիրքը և քարտեզը: Ավարտին են հասցվել «Вокруг света» հրատարակչության կողմից Հայաստանի մասին տպագրվող ուղեցույցի աշխատանքները, այն կտպագրվի 10000 օրինակ և կվաճառվի առաջատար գրախանութներում և օդանավակայաններում.

- Ջանգվածային և հասարակության հետ կապեր: Այս միջոցառման շրջանակներում կազմակերպվել են լրագրողական-ձանաչողական այցեր Հայաստան, մասնավորապես՝ մայիսին Ֆրանսիայի նախագահի պետական այցի շրջանակներում Հայաստանում կազմակերպվել է ձանաչողական այց ֆրանսիական զբոսաշրջային 50 գործակալների և ԶԼՄ-ների 10-ից ավելի ներկայացուցիչների համար: Հունիսին Հայաստան են այցելել ֆրանսիական հեղինակավոր «Lagardere» մեդիահոլդինգի դուստր ձեռնարկության՝ «Election libre» անդամները: Այցի շրջանակներում նկարահանվել է Հայաստանը ներկայացնող ֆիլմ, որը կցուցադրվի Ֆրանսիայի հանրային և մի շարք այլ հեռուստաալիքներով: Սեպտեմբերին ՀԱՄՀ-ի և «Պեռնո Ռիկար Արմենիա» ՓԲԸ-ի համատեղ ջանքերով Հայաստան են այցելել ռուսական հեղինակավոր ամսագրերի և առցանց կայքերի 9 լրագրողներ: Այցի նպատակն է բարձրացնել Հայաստանի զբոսաշրջային գրավչության ձանաչելիության մակարդակը ռուսաստանյան շուկայում՝ լայն լսարանին ներկայացնելով Հայաստանի ազգային խոհանոցը, խոհարարական ավանդույթները և ավանդական ուտեստների առանձնահատկությունները:

- Առողջապահության ծրագրի շրջանակներում արդյունավետ ընթացք է ապահովվել ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի ստեղծման ուղղությամբ: Ամբողջովին կատարվել են սահմանված շինարարական, ճարտարապետական և տեխնիկական աշխատանքները, ներկրվել են ռադիոհզոտոպների արտադրության կենտրոնում տեղադրվելիք

միջուկային բժշկության կարիքների համար պետության կողմից ձեռք բերված համապատասխան սարքավորումները:

- Տաթևի վերածնունդ միջոցառման շրջանակներում իրականացվել է «Տաթև» վանական համալիրի վերականգնման, համայնքային զարգացման և «Տաթևի վերածնունդ» բրենդի առաջնդման աշխատանքներ: Մշակվել է «Տաթև» զբոսաշրջային կենտրոնի զարգացման ծրագիրը: «Տաթև»-ը ներկայացվել է Մադրիդում, Նյու-Դելիում, Բեռլինում և Մոսկվայում միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին:

- Կրթության ծրագրի շրջանակներում իրականացվել են ֆոնդահայթաթման աշխատանքներ կրթության ծրագրի իրականացման նպատակով:

- Իրականացվել են նաև «Բաց երկնքի» քաղաքականությանն ուղղված աշխատանքներ, այն ներկայացվել է միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին: Մշակվել են ՀՀ կառավարության և Ավստրիայի Հանրապետության կառավարության, ինչպես նաև Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև օդային տրանսպորտի մասին համաձայնագրերի նախագծեր:

«ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխում և Հավաքագրման ազգային մարմնի ստեղծում» ծրագրով պետական աջակցության ծախսերը կազմել են 13.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Ծրագրի շրջանակներում կատարվել են մի շարք աշխատանքներ, որոնք ուղղված են եղել Հավատարմագրման ազգային մարմնի կայացմանը և ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխմանը: Հատկացված գումարն ուղղվել է «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի աշխատակիցների աշխատանքի վարձատրությանը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքո գործող տեսչական բարեփոխումների քարտուղարության պետական աջակցության ծախսերը կազմել են շուրջ 10.7 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում կատարվել են մի շարք աշխատանքներ, որոնք ամրագրված են եղել ՀՀ կառավարության 2014 թվականի ծրագրով: Հատկացված գումարն ուղղվել է տեսչական բարեփոխումների քարտուղարության աշխատանքի վարձատրությանը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը չեն փոփոխվել:

Հաշվետու տարում 97.7% կատարողական են ապահովել գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը՝ կազմելով շուրջ 286.6 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 7.6%-ով կամ 20.3 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի համաձայն 2014 թվականի հուլիս 1-ից պետական ծառայողների աշխատավարձերի բարձրացմամբ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը (նախարարությունների աշխատակազմերի մասով) կազմել են 762.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 97.7%-ը: Շեղումը պայմանավորված է

տնտեսումներով: Միջոցներն ուղղվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 28%-ով կամ 166.9 մլն դրամով, որը նույնպես հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ:

98.3% կատարողական է արձանագրվել ստանդարտների մշակման ծառայությունների ծախսերի գծով, որոնք կազմել են շուրջ 14.1 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ նախատեսվածից 1 ստանդարտ պակաս է մշակվել. այն գտնվում է նախագծման փուլում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.6%-ով:

Հաշվետու տարում շուրջ 98 մլն դրամ է տրամադրվել արտասահմանում առևտրային ներկայացուցչությունների պահպանմանը: Ծրագրի ծախսերի 90.6% կատարողականը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.2%-ով կամ 4.9 մլն դրամով՝ պայմանավորված արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Առևտրի Համաշխարհային Կազմակերպությունում ՀՀ մշտական ներկայացուցչի (նստավայրը՝ Շվեյցարիայի Համադաշնություն, Ժնև) և Եվրամիության երկրներում ՀՀ առևտրական ներկայացուցչի (նստավայրը՝ Բելգիայի Թագավորություն, Բրյուսել) պահպանման ծախսերը:

Հաշվետու տարում ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերությունների դասում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման նպատակով 329.5 մլն դրամ օգտագործվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության արտաբյուջետային միջոցներից՝ ապահովելով ծրագրի 84.8%-ը, ինչը պայմանավորված է որոշ մրցույթներ չկայանալու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.5%-ով կամ 22.9 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության և հիմնական միջոցների ձեռք բերման ծախսերի աճով:

Որակի ենթակառուցվածքների բարեփոխման ծախսերը կազմել են 171.6 մլն դրամ՝ ապահովելով 87.1% կատարողական՝ պայմանավորված մրցույթների արդյունքում նախատեսվածից ցածր գներով ապրանքների և ծառայությունների ձեռքբերմամբ: Ծրագիրը սկսել է գործել 2014 թվականից: Ծրագրի շրջանակներում կատարվել են մի շարք աշխատանքներ, որոնք ուղղված են եղել որակի ենթակառուցվածքների բարեփոխմանը, մասնավորապես.

- տեխնիկական կանոնակարգման ոլորտում համապատասխանության գնահատման ընթացակարգերի մոտարկման տեսանկյունից վերանայվել են գործող 17 տեխնիկական կանոնակարգեր, իրականացվել են միջազգային նմանատիպ գործող տեխնիկական կանոնակարգերի ուսումնասիրություններ և թարգմանություններ, իրականացվել է նաև 2 տեխնիկական կանոնակարգերի մոտարկում միջազգային պահանջներին,
- ստանդարտացման ոլորտում իրականացվել են տեխնիկական կանոնակարգերի պահանջներն ապահովող ստանդարտների ներդաշնակեցման աշխատանքներ, հիմնվել է ստանդարտացման փաստաթղթերի էլեկտրոնային տեղեկատվական համակարգ և առցանց էլեկտրոնային խանութ, մշակվել և հրապարակվել է Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարումն ապահովող ստանդարտների ցանկ,

ինչպես նաև լաբորատոր կարողությունների զարգացման նպատակով ձեռք է բերվել ծծմբի վերլուծիչ լաբորատոր սարք,

- չափագիտության ոլորտում իրականացվել են էտալոնային համակարգերի տեխնիկական սպասարկման, ելակետային չափման միջոցների տրամաչափարկման աշխատանքներ, KOOMET-ի անդամ երկրների չափագիտական ինստիտուտներում թվով 30 տրամաչափարկման աշխատանքների վճարում, ձեռք են բերվել սարքեր և համակարգեր՝ ֆիզիկաքիմիական չափումների և բժշկական նշանակության սարքերի ստուգաչափման և տրամաչափարկման համար, ինչպես նաև՝ կենցաղային ջրաչափերի ստուգաչափման կայանք,

- շուկայի վերահսկողության ոլորտի բարեփոխումների շրջանակում ձեռք է բերվել խաղալիքների փորձարկման լաբորատորիա,

- հավատարմագրման ոլորտում իրականացվել են մի շարք աշխատանքներ, որոնք ուղղված են եղել Հավատարմագրման ազգային մարմնի կայացմանը և ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխմանը, գործարկվել է պաշտոնական կայքը, ինչպես նաև ստեղծվել է տվյալների շտեմարան՝ հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների, գնահատողների, փորձագետների, համապատասխանության սերտիֆիկատների, համապատասխանության հայտարարագրերի վերաբերյալ: Որակի ենթակառուցվածքների բարեփոխման ծրագրի շրջանակներում ոլորտում աշխատող մասնագետների համար մասնագիտական կարողությունների զարգացման և միջազգային փորձի ուսումնասիրության նպատակով ապահովվել են վերապատրաստման դասընթացների և ուսուցողական այցերի մասնակցություն արտերկրում:

2014 թվականին տեխնիկական կանոնակարգի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողության պետական ծրագրի ծախսերը կազմել են ավելի քան 4 մլն դրամ կամ նախատեսվածի 13.5%-ը՝ պայմանավորված նրանով, որ փորձարկման լաբորատորիաների կողմից իրականացվել են նախատեսվածից ավելի քիչ փորձարկումներ: Ծրագրի շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Շուկայի վերահսկողության պետական տեսչության կողմից իրականացվել են ստուգումներ 283 տնտեսվարող սուբյեկտներում: Ստուգված տնտեսավարող սուբյեկտներից 195-ում հայտնաբերվել են խախտումներ, որի համար խախտումներ թույլ տված պատասխանատու անձանց նկատմամբ կիրառվել է վարչական տուգանք, որից մի մասը մուտքագրվել է պետական բյուջե, մնացած մասը գտնվում է բռնագանձման տարբեր փուլերում: Հսկողություն է իրականացվել 70 մլն դրամի շրջանառությունը չգերազանցող 26 տնտեսվարող սուբյեկտների մոտ, որի արդյունքներով նշանակվել է վարչական տուգանք: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են մոտ 4 անգամ կամ 3 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է իրականացված փորձարկումների քանակի ավելացմամբ:

2014 թվականին ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության ծախսերը կազմել են շուրջ 563.6 մլն դրամ՝ ապահովելով 98.9% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 21.5%-ով կամ 99.7 մլն դրամով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ ավելացել են արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորման

ծավալները, միջազգային ցուցահանդեսներին մասնակցությունները, ինչպես նաև Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի ստեղծմանն ուղղված միջոցառումները: Ծրագիրն ուղղված է արդյունաբերական արտադրանքի արտահանելի հատվածի ընդլայնմանը և արտահանման ներուժ ունեցող կազմակերպությունների կարողությունների զարգացմանը: Ծրագրի շրջանակներում մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ ստացել են պետական աջակցություն տարբեր ուղղություններով, ինչը դրական է ազդել նրանց արտահանման և արտադրության ծավալների աճի վրա, ինչպես նաև կազմակերպվել են մի շարք միջոցառումներ: Մասնավորապես՝

- հանրաճանաչ միջազգային արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների ներգրավման և մուտքի ապահովման միջոցառումների իրականացում, այդ թվում՝ ազատ տնտեսական գոտում: Սփյուռքահայերի տեղեկատվական բազայի ստեղծման ենթածրագրի շրջանակներում 2014 թվականին կազմակերպվել են մի շարք համաժողովներ և աշխատաժողովներ, ինչպես նաև աջակցություն է ցուցաբերվել «Արենի գինու փառատոնի» և «Երևան շուու-2014» ոսկերչական միջազգային ամենամյա ցուցահանդեսի կազմակերպման հարցում:

- «Արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում» ենթածրագրի շրջանակներում 2014 թվականին տրամադրվել է վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման աջակցություն ռազմավարությամբ ընտրված ոլորտների 21 ընկերությունների:

- «Շուկայական տեղեկատվության ապահովում, հայկական ապրանքների նպատակային շուկաներում առաջնորդման գործունեության իրականացում, հայկական ապրանքների ներկայացում» ենթածրագրի շրջանակներում 2014 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ Փարիզում կայացած CPHI Worldwide 2014 ամենամյա դեղագործական էքսպոյի շրջանակներում իրականացվել է ոլորտային շնորհանդես, աջակցություն է ցուցաբերվել 2014 թվականի սեպտեմբերի 1-6-ը ՉԺՀ Ուրումչի քաղաքում կայացած «Զինաստան-Եվրասիա» չորրորդ միջազգային ցուցահանդեսի շրջանակներում հայկական թվով 7 ընկերությունների արտադրանքի ներկայացմանը:

- «Միջազգային սերտիֆիկացման համաֆինանսավորում» ենթածրագրի շրջանակներում 2014 թվականին բավարարվել է թվով 7 ընկերության 13 հայտ:

- «Միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովում» ենթածրագրի շրջանակներում 2014 թվականին ցուցահանդեսներին մասնակցության աջակցություն է տրամադրվել 60 սուբյեկտի:

- «Արտասահմանյան դիստրիբյուտորների և այլ օժանդակ կառույցների ներկայացուցիչների այցելություններ Հայաստան և (կամ) արտերկիր, գործարար կապերի հաստատում» ենթածրագրի շրջանակներում 2013 թվականին կազմակերպվել է արտահանմանն օժանդակող կառույցների/դիստրիբյուտորների ավելի քան 20 ներկայացուցիչների այցելություն Հայաստան:

- «Արտահանմանն ուղղված արտադրատեսակների արտադրության ներուժի բացահայտմանն ուղղված հետազոտության իրականացում» ենթածրագրի շրջանակներում սկսվել և իրականացման փուլում են գտնվում հետազոտության աշխատանքները:

- Հայաստանի Հանրապետության Նախագահի մասնակցությամբ տեղի է ունեցել Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի պաշտոնական բացումը: Կենտրոնի տարածքում տեղակայված ուսումնական, հետազոտական և ինկուբացիոն լաբորատորիաներում իրականացվել են



ուսումնական և պրակտիկ ծրագրեր, կազմակերպված մասնագիտական դասընթացներին մասնակցել են 1100 ուսանողներ և մասնագետներ, բիզնես աջակցություն ու խորհրդատվություն է տրամադրվել շուրջ 210 ընկերությունների, թիմերի և անհատ ձեռներեցների: Իրականացվել է Գյումրիում առաջին միջազգային խոշոր տեխնոլոգիական «iGyumri» համաժողովը, որին մասնակցել է պետական, մասնավոր, գիտակրթական և այլ ոլորտների շուրջ 400 ներկայացուցիչ Հայաստանից ու արտերկրից: Կենտրոնում ներկայումս տեղակայված են «Դ-Լինկ», «Դիջիթալ Փոնդգրանթ», «ՋիէնՍի-Ալֆա», «Ի-Վորքս», «Skyline ստուդիա», «Թայմ Փրոդաքշն», Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն, «Գյումրու լեզուների տուն» կազմակերպությունները, մեկ հարկաբաժին հատկացվել է «Թունո» ուսումնակրթական կենտրոնին:

«Ժամանակավոր ներմուծում վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների չափերի փորձաքննության համար 900 հազ. դրամի նախատեսված միջոցները չեն օգտագործվել՝ պայմանավորված նրանով, որ փորձաքննություն չի իրականացվել՝ վերամշակման արդյունքում գոյացած թափոնների և կորուստների չափերի 20 և ավելի տոկոս գերազանցման դեպքերի բացակայության պատճառով: ՀՀ կառավարության 27.03.2001թ. թիվ 239 որոշմամբ հաստատված՝ ««Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակության սահմանման» կարգի 17-րդ կետի համաձայն, լիազոր մարմնի որոշմամբ հայտատուի ներկայացրած տվյալները կարող են ենթարկվել փորձաքննության, եթե ապրանքների վերամշակումից գոյացած թափոնների և կորուստների չափերը գերազանցում են նմանատիպ ապրանքների համար հաստատված և կիրառվող չափի 20 և ավելի տոկոսը:

2014 թվականի ընթացքում *գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնաբուծության և որսորդության* բնագավառներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 20.5 մլրդ դրամ կամ ծրագրվածի 80.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության և ոռոգման բնագավառներում արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի կատարողականով:

Հաշվետու տարում *գյուղատնտեսության* դասի ծախսերը կազմել են շուրջ 9.7 մլրդ դրամ կամ ծրագրվածի 75%-ը: Նախորդ տարվա համեմատ գյուղատնտեսության դասի ծախսերն աճել են 3.4%-ով կամ 318.8 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Գյուղատնտեսության ոլորտին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 28 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աջակցությամբ ֆինանսավորվել են 3 վարկային և 7 դրամաշնորհային ծրագրեր:

Հաշվետու տարում Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող՝ «Գյուղական կարողությունների ստեղծում» վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 541.9 մլն դրամ: Ծրագրի ծախսերը 61.2%-ով գիջել են նախատեսված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է կլաստերային սկզբունքով

հողերի ընտրության և գյուղացիների հետ վարձակալության պայմանագրերի կնքման, տվյալ գյուղատնտեսական գոտու համար պտղատեսակների ընտրության և համապատասխանեցման գործընթացի ձգձգումների հանգամանքով: Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող պտղի և ընկուզեղենի արտադրությանը աջակցության ծրագիրն իրականացվում է Հայկական միրգ ԲԲԸ կողմից: Ծրագրի նպատակն է՝ նվազեցնել աղքատությունը Հայաստանի Հանրապետության գյուղական տարածքներում: Ծրագրի խնդիրն է ստեղծել պտղի և ընկուզեղենի տնտեսապես կայուն արտադրություն, որը կապված կլինի գյուղական մանրածավալ արտադրող ֆերմերների հետ: Ծրագիրն ունի 3 հիմնական բաղադրիչ՝ «Աջակցություն պտղի և ընկուզեղենի արտադրությանը», «Գյուղական ենթակառուցվածքներ» և «Ծրագրի կառավարում»: Ծրագիրը հանդիսանում է ԳԶՄՀ-ի կողմից ֆինանսավորվող վեցերորդ ծրագիրը Հայաստանում և առաջինն է «Հայկական Միրգ» բաժնետիրական ընկերության ստեղծման գործում՝ աջակցելով գյուղական տարածքներում աղքատության նվազեցմանը, որը նորարական է և՛ Հայաստանի, և՛ ԳԶՄՀ-ի համար: Ծրագրի շրջանակներում 2014 թվականի ընթացքում «Հայկական Միրգ» ԲԲԸ-ն իրականացրել է շինարարության և գյուղատնտեսական, տեխնիկական աջակցության, ուսուցման և խորհրդատվության աշխատանքներ, ձեռք են բերվել ապրանքներ, սարքավորումներ և տնկանյութեր:

Վերոհիշյալ վարկային ծրագրին աջակցելու նպատակով ԳԶՄՀ-ի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 14.9 մլն դրամ: Ծրագրի ծախսերի 19.3%-ով կատարումը պայմանավորված է վարկային ծրագրի կատարողականով, որի արդյունքում 2014 թվականի ընթացքում նոր խորհրդատվական ծառայությունների գնում կատարելու նպատակով կազմակերպություններ վարձելու անհրաժեշտություն չի առաջացել: Ծրագրի շրջանակներում «Հայկական Միրգ» ԲԲԸ-ն կնքել է պայմանագիր օտարերկրյա «Մակֆերսոն» ընկերության հետ, որը մատուցել է մասնագիտական խորհրդատվական ծառայություններ «Հայկական Միրգ» ԲԲԸ-ին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 1.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.7%-ը: Ծրագրի հիմնական նպատակն է աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքներին արոտօգտագործման/անասնապահական առավել մրցունակ և կայուն համակարգերի ստեղծման հարցում: Սա հնարավոր կլինի կաթնատվության և կենդանիների օրական քաշաճի ավելացմանը զուգահեռ անասնապահական մթերքի ծավալների մեծացման և որակի բարձրացման, արոտավայրերի վարձակալությունից համայնքի բյուջետային եկամուտների ավելացման միջոցով համայնքների արոտավայրերի կառավարման արդյունավետության բարձրացման և անասնապահությունից ստացվող զուտ եկամտի ավելացման միջոցով: Ծրագիրն իրականացվել է չորս բաղադրիչներով՝ «Համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ», «Գյուղատնտեսությանն աջակցող ծառայությունների հզորացում», «Մրցակցային դրամաշնորհների ծրագիր» և «Ծրագրի իրականացում, մոնիտորինգ և գնահատում»: «Համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ» բաղադրիչի նպատակն է

ընտրված անասնապահական ուղղվածություն ունեցող բարձր լեռնային և սահմանամերձ համայնքներում իրականացնել արոտագտագործման և կերարտադրության վրա հիմնված անասնապահական մթերքի արտադրության արդյունավետ և կայուն համակարգ, որը կկառավարվի համայնքներում ստեղծվող արոտագտագործողների միավորումների (սպառողական կոոպերատիվների) կողմից: Ընտրվում են բարձր լեռնային այն համայնքները, որտեղ անասնապահությունը ապրուստի հիմնական միջոց է հանդիսանում և որտեղ համայնքները մեծապես շահագրգռված են բարելավելու սեփական արոտավայրերից ստացվող արտադրանքը: Այս նպատակի իրականացումը պահանջում է գյուղամերձ արոտներում կենդանիների գերարածեցման մեծապես աճող տեմպերի կասեցում, համայնքների հեռագնա արոտների օգտագործման հնարավորությունների ստեղծում, վարելահողերի առավել արդյունավետ օգտագործում, կերարտադրության ու կենդանիների կերակրման և տոհմային աշխատանքների բարելավում, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացում: Այս բաղադրիչի շրջանակներում սկսվել են աշխատանքները ՀՀ 6 մարզերի (Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք) 23 համայնքում, յուրաքանչյուր համայնքում կազմակերպվել է 6-8 հանդիպում, մշակվել և Համաշխարհային բանկ են ներկայացվել «Համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման» պլանները, հիմնադրվել են «Համայնքի արոտագտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ ու «Համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման» հանձնաժողովներ, ավարտվել են արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները (51 կմ ջրագիծ, 48 հատ խմոց), 9 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները գտնվում են իրականացման փուլում (26 կմ ջրագիծ, 24 հատ խմոց), 39 համայնքի արոտագտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է 190 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ 57 անիվավոր տրակտոր և 133 միավոր այլ գյուղգործիքներ, 2 մարզի 15 համայնքի կոոպերատիվների անդամների, կոոպերատիվների խորհրդի, համայնքների արոտների կառավարման և անասնապահության զարգացման հանձնաժողովների և համայնքապետարանի ներկայացուցիչների համար իրականացվել է ուսուցում՝ կապված արոտագտագործման, կոոպերատիվի բյուջեի կազմման, ֆինանսական հոսքերի կառավարման, հաշվապահական հաշվառման, կոոպերատիվի անդամների իրավունքների ու պարտականությունների մանրամասն ներկայացման, էկոլոգիայի վրա բացասական ազդեցության կանխման և դեգրադացիայի դեմ պայքարի ու արոտների բարելավման, ինչպես նաև համապատասխան օրենսդրական դաշտի ներկայացման և այլ թեմաներով:

«Գյուղատնտեսությանն աջակցող ծառայությունների հզորացում» բաղադրիչի նպատակն է բարձրացնել անասնապահական մթերքի արտադրողականությունը և բարելավել արոտավայրերի վիճակը անասնապահությամբ զբաղվող ֆերմերներին մատուցվող խորհրդատվական և կենդանիների առողջությանն ուղղված ծառայությունների բարելավման միջոցով: Այս նպատակին հասնելու համար աջակցություն կտրամադրվի անասնապահության արդյունավետության բարձրացմանն ուղղված գյուղատնտեսական խորհրդատվական ծառայությունների և կենդանիների առողջությանն ուղղված ծառայությունների հզորացմանը: Այս բաղադրիչն իրականացվել է

«Գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ» և «Համայնքներում կենդանիների առողջությանն ուղղված ծառայություններ» ենթաբաղադրիչների միջոցով: «Գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ» ենթաբաղադրիչի շրջանակներում ՀՀ 10 մարզում իրականացվել է «Տեխնոլոգիաների գնահատման ծրագրեր» (ՏԳԾ) գիտական հաստատությունների կողմից մշակված նորարարական առաջարկությունները ֆերմերային տնտեսություններում ներդնելու, ցուցադրելու և տարածելու նպատակով: Ներկայումս ծրագրերը գտնվում են հետազոտողների կողմից տեղեկատվական թերթիկների մշակման փուլում: «Գյուղատնտեսական աջակցության հանրապետական կենտրոնի» կողմից տպագրվել են 26 տեղեկատվական թերթիկներ 12900 տպաքանակով 2013 թվականին իրականացված ՏԳԾ-ների վերաբերյալ և տրամադրվել են «Գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոններին» ֆերմերային տնտեսություններին բաժանելու նպատակով: ՀՀ 10 մարզի ԳԱՄԿ-երի գյուղատնտեսության գծով տեղական խորհրդատուների մասնագիտական գիտելիքների կատարելագործման ԳԱՀԿ-ի կողմից կազմակերպել են ուսուցողական դասընթացներ, որին մասնակցել են 252 մարդ: «Համայնքներում կենդանիների առողջությանն ուղղված ծառայություններ» ենթաբաղադրիչի շրջանակներում ավարտվել է «Մասնավոր անասնաբույժների մոբիլիզացում» խորհրդատվական ծառայության մատուցման գործընթացը, մրցույթով հաղթող ձևաչված «Ագրոբիզնեսի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամն իրականացրել է ընտրված անասնաբույժների ուսուցում և ստեղծել անասնաբուժական ասոցիացիաներ: ՀՀ Սյունիքի մարզում՝ Խնձորեսկ և ՀՀ Արագածոտնի մարզում՝ Արտաշավան համայնքներում անասնաբուժական կենտրոնի կառուցման շինարարական աշխատանքներն ավարտվել են, իսկ Ճամբարակ համայնքում շինարարական աշխատանքներն իրականացվել են 40%-ով, որը պայմանավորված է եղանակային անբարենպաստ պայմաններով, ուստի իրականացվող շինարարական աշխատանքները կավարտվեն 2015 թվականին: Կառուցվող անասնաբուժական սպասարկման կենտրոնների համար ձեռք են բերվել գույք և սարքավորումներ, ինչպես նաև ուսուցում անցած անասնաբույժների համար՝ անասնաբուժական սարքավորումներ և գործիքներ:

«Մրցակցային դրամաշնորհների ծրագիր» բաղադրիչի նպատակն է իրականացնել այնպիսի ծրագրեր, որոնք կնպաստեն գյուղատնտեսության և անասնապահության ոլորտներում արտադրվող գյուղատնտեսական արտադրանքի որակական հատկությունների բարձրացմանը, գյուղատնտեսական բիզնեսի շուկայավարման կատարելագործմանը՝ ներառյալ գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը, վերամշակումը, պահեստավորումը և նոր տեխնոլոգիաների ներդրումը, գյուղական բիզնեսի կառավարման բարելավմանը, կատարելագործմանը և բիզնեսի լավագույն փորձի զարգացմանն ու տարածմանը, գյուղատնտեսական ոլորտում կոոպերացիայի զարգացմանը, շուկայական կապերի ընդլայնմանը և ամրապնդմանը, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքի իրացման խնդիրների լուծմանը և ՀՀ տարածաշրջանների կամ մարզերի կտրվածքով գյուղատնտեսական արտադրանքի նոր տեսակների ու նոր տեխնոլոգիաների ներդրմանը, տարածմանը և զարգացմանը: 2014 թվականի մարտի 1-ին հայտարարվել է մրցակցային դրամաշնորհների (ՄԴ) ծրագրի վեցերորդ փուլի մրցույթը, մայիսի 25-ին ՄԴ հանձնաժողովի կողմից հաղթող են ձանաչվել 16 ծրագրեր: Համաձայն ՄԴ ծրագրերի

ընթացակարգի՝ իրականացվել են ֆերմերների կողմից ներկայացված 16 ծրագրերի վերաբերյալ ներդրումների հավաստագրում, նրանց գնահատում, ծրագրերի բնապահպանական կատեգորիաների դասակարգում և բնապահպանական կառավարման պլանների կազմում: Այնուհետև իրականացվել են ՄԴ ծրագրի 6-րդ փուլի մրցույթի ժամանակացույցով սահմանված բոլոր մնացած դրույթները և հաղթող ճանաչված 16 ծրագրերի ղեկավարների (ֆերմերների) հետ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին կնքվել են համապատասխան պայմանագրեր: Ներկայումս 16 ծրագրերը գտնվում են իրականացման փուլում: Հոկտեմբերի 10-ին և 11-ին ՀՀ ք. Երևանում տեղի ունեցավ «Դրամաշնորհային ծրագրերի իրականացումը Հայաստանում» 3-րդ համաժողով-ցուցահանդեսը, որի աշխատանքներին մասնակցում էին մոտ 250 ֆերմերներ և գյուղացիական տնտեսություններ, որոնք ներկայացնում էին իրենց կողմից արտադրված գյուղատնտեսական մթերքը, հոտեմբերի 17-ին հայտարարվել է (ՄԴ) ծրագրի յոթերորդ փուլի մրցույթը, ՀՀ 10 մարզում կազմակերպվել են հանդիպումներ (տեղեկատվական ժողովներ) շուրջ 650-700 ֆերմերի (պոտենցիալ հայտատուների) հետ, ՄԴ ծրագրի յոթերորդ փուլի մրցույթում ՀՀ 10 մարզերի ֆերմերների կողմից ներկայացվել են 27 հայտ: Համաձայն ՀԲ-ի ժամանակացույցի և ՄԴԾ ընթացակարգի՝ յոթերորդ փուլի մրցույթը նախատեսվում է ավարտել 2015 թվականի մայիսին: Ավարտված ծրագրերի իրականացման շնորհիվ մեկ ծրագրի հաշվով միջինը ստեղծվել են 6-7 աշխատատեղեր, գործող ֆերմերների և ֆերմերային տնտեսությունների եկամուտներն ավելացել են 25-55 տոկոսով:

«Ծրագրի իրականացում, մոնիտորինգ և գնահատում» բաղադրիչի շրջանակներում ֆինանսավորումն ուղղված է ծրագրի կառավարմանը, անձնակազմի վերապատրաստմանը, տարեկան աուդիտին, գործառնական ծախսերին, ինչպես նաև ծրագրի մոնիտորինգին և գնահատմանը: Իրականացվել են ԾԻԳ-ի պահպանման, ինչպես նաև տեխնիկական աջակցության, վերապատրաստման և գործուղումների ծախսերը, ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա, կատարվել է ծրագրի տարեկան ֆինանսական աուդիտ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի կողմից տրամադրված Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 118.4 մլն դրամ: Ծրագրի ծախսերի 58%-ով կատարումը պայմանավորված է դեգրադացված արոտների վերականգնման աշխատանքների բնույթի և ուղղվածության մասին Համաշխարհային բանկի առաջարկության վերաբերյալ քննարկումների երկար տևողությամբ: Ծրագրի նպատակն է բարելավել ագրոհամակարգի ծառայությունների մատուցման գործընթացը, որը թույլ կտա պահպանել համայնքների բնակչության կենսամակարդակը, ինչպես նաև պաշտպանել բնական ռեսուրսները գյուղատնտեսության ոլորտի մրցակցային հողագործության հետևանքով առաջացող ճնշումից: Ծրագիրը բաղկացած է երեք բաղադրիչներից՝ «Համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ», «Օժանդակ ծառայությունների ուժեղացում» և «Ծրագրի կառավարում, մոնիտորինգ և գնահատում»: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ 6 մարզի՝ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի 55 համայնքի գյուղամերձ արոտների գնահատման աշխատանքներ, և մշակվել են դեգրադացված

տարածքների վերականգնմանն ուղղված միջոցառումներ, սկսվել են ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի 17 համայնքի գյուղամերձ արոտների վերականգնման աշխատանքները, որոնք կշարունակվեն 2015 թվականին, իրականացվել են 2 համայնքի (Բերդաշեն, Աղին) արոտագտագործողների կոոպերատիվների կողմից իրականացված կերարտադրության տարածքների չափագրում և տվյալների մուտքագրում համայնքային քարտեզներում, կատարվել է ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերի արոտավայրերում առկա ջրարբիացման համակարգերի, լոկալ ցանցերի, ջրաղբյուրների, ջրաելքերի, գետային ցանցերի, խմելու ջրագծերի գույքագրում, որոնք շարունակվելու են 2015 թվականին, խորհրդատուի կողմից ՀՀ չորս մարզի (Արագածոտն, Գեղարքունիք, Շիրակ, Տավուշ) տասներկու գյուղական համայնքի «Արոտագտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվների անդամների, վարչության և համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման հանձնաժողովի անդամների և ՄԱԹ-ի համար՝ ընդամենը շուրջ 1975 մարդ, իրականացվել են արոտավայրերի պահպանության, վերականգնման, արդյունավետ օգտագործման, արոտների կառավարման իրավական դաշտի, արոտների արդյունավետ կառավարման, կոոպերատիվի հիմնական սկզբունքների, կոոպերատիվի անդամների, վարչության և նախագահի իրավունքների ու պարտականությունների, կոոպերատիվի աշխատանքային պլանի և բյուջեի կազման, ֆինանսական հոսքերի կառավարման և հաշվապահական հաշվառման հետ կապված թեմաներով ուսուցումներ, իրականացվել է «Ուսուցում ուսուցանողների համար» ծրագիր «Գյուղատնտեսական աջակցության հանրապետական կենտրոնի», ՀՀ 8 մարզերի «Գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոնների», ՀՀ 6 մարզերի մարզային աջակցության թիմերի և թիրախային համայնքների կոոպերատիվների ներկայացուցիչների համար:

ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Գյուղական կարողությունների ստեղծում» վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 1.3 մլրդ դրամ: Ծրագրի ծախսերի 37.7%-ով կատարումը պայմանավորված է շինարարական աշխատանքների՝ նախատեսվածից պակաս ծավալներով: Ծրագրով նախատեսված էր շինարարական օբյեկտների նախագծման աշխատանքներն իրականացնել առաջին կիսամյակի ընթացքում, որից հետո հնարավոր կլիներ հայտարարել մրցույթներ և ընտրել շինարարական կազմակերպություններ: Սակայն դոնոր կազմակերպությունների կողմից նախագծային կազմակերպությունների հետ պայմանագրեր կնքելու թույլտվությունները տրվել են ավելի ուշ, քան նախատեսված էր, ինչի արդյունքում նախագծային պայմանագրերն առաջին կիսամյակի փոխարեն պատրաստ են եղել 2014 թվականի հոկտեմբեր ամսին, որից հետո հայտարարվել են համապատասխան մրցույթներ, ընտրվել շինարարական կազմակերպություններ: Շինարարական աշխատանքները կիրականացվեն 2015 թվականին: Ծրագրով նախատեսվում է ներդրումներ կատարել գյուղական ենթակառուցվածքների ոլորտում գյուղական անապահով համայնքների բնակիչների կենսամակարդակը բարելավելու, տնտեսական աճ ապահովելու և տնտեսական ներուժի առավել արդյունավետ կիրառությանն օժանդակելու նպատակով: Ծրագրի շրջանակներում ներդրումներ են իրականացվել ՀՀ Տավուշի, Արագածոտնի, Սյունիքի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում: Շինարարարական պայմանագրերը կնքվել են թվով 5 շինարարական կազմակերպությունների հետ, շինարարարական աշխատանքներն

իրականացվել են բոլոր 32 շինարարական օբյեկտներում, որից 30-ը՝ գազաֆիկացում, 2-ը՝ ջրամատակարարում, ավարտվել են 28 օբյեկտների շինմոնտաժային աշխատանքները, ավարտվել է 28 օբյեկտների ընդունման հանձնման գործընթացը, ստորագրվել և հաստատվել են ընդունման հանձնման ակտերը, լիարժեք ավարտվել են 4 համայնքներում գազաբաշխիչ ցանցերի շինարարական աշխատանքները:

Դանիական թագավորության աջակցությամբ իրականացվող՝ «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 420.6 մլն դրամ՝ մոտ 2.5 անգամ գերազանցելով նախատեսված ցուցանիշը: Դրամաշնորհի փակման օրը սկզբնապես նախատեսվել էր 2013 թվականի դեկտեմբերի 31-ը, սակայն համաձայնագրում կատարված փոփոխությամբ այն երկարաձգվել է ևս մեկ տարով: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է ծրագրում 2014 թվականի հուլիսի 4-ին կատարված փոփոխությամբ, որի համաձայն տրամադրվել է լրացուցիչ ֆինանսավորում: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Ծրագրի խնդիրն է նախաներդրումային, ներդրումային և հետներդրումային տեխնիկական օժանդակության տրամադրումը Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի (ՖՐԵԴԱ) միջոցով ֆինանսավորվող ձեռնարկություններին, ՖՐԵԴԱ-ին մասնագիտացված տեխնիկական օժանդակության ցուցաբերումը: 2014 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում տեխնիկական օժանդակություն է ցուցաբերվել ՖՐԵԴԱ-ի շահառու ընկերություններին ֆինանսական հաշվետվությունների աուդիտի, սերտիֆիկացման, հաշվառման և հաշվետվությունների կազմման, հարկային օրենսդրության և հարկային պլանավորման ոլորտում խորհրդատվական ծառայությունների մատուցման, ցուցահանդեսների ֆինանսավորման և այլ մասնագիտական ծառայությունների գծով, ինչպես նաև կատարվել են ներդրումներ ՖՐԵԴԱ-ի շահառու ընկերություններում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սննդի անվտանգության կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2014 թվականին ծախսվել է 87.3 մլն դրամ: Ծրագրի ծախսերի 80.2%-ով կատարումը պայմանավորված է ծրագրի շրջանակներում իրականացվող «Կենդանիների հիվանդությունների վերահսկողության կարողությունների զարգացման» պայմանագրի շուրջ Համաշխարհային բանկի հետ բանակցությունների երկար տևողությամբ և «Կենդանիների հիվանդությունների տնտեսական վերլուծության գծով խորհրդատուի» ընտրության մրցույթին մասնակցության ոչ բավարար հայտերի պատճառով երկրորդ անգամ մրցույթ հայտարարելով: Վերոնշյալ աշխատանքները կկատարվեն մինչև դրամաշնորհային ծրագրի ավարտը՝ 2015 թվականի հոկտեմբերի 30-ը: Ծրագրի նպատակն է աջակցել սննդամթերքի անվտանգության ապահովման ժամանակակից համակարգի ստեղծմանը՝ հիմնվելով միջազգային չափանիշների և լավագույն փորձի վրա: Աջակցությունը լինելու է շարունակական, որը նաև խթան կհանդիսանա սննդամթերքի անվտանգության ոլորտում հետագա բարեփոխումների իրականացման համար: Ծրագրի երեք հիմնական ուղղություններն են ՀՀ իրավական դաշտի բարելավումը՝ միջազգային և ԵՄ սննդամթերքի անվտանգության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով, պետական կառույցների աշխատակիցների համար

անհրաժեշտ ուսուցումների մեթոդաբանության մշակումը և ռիսկերի ու տնտեսական վերլուծության կարողությունների զարգացումը՝ պետական կառույցների կողմից ազգային և միջազգային մակարդակով սննդամթերքի անվտանգության ոլորտում իրականացվող քաղաքականությունը և որոշումները ԵՄ Ազատ Առևտրի Համաձայնագրին օժանդակող ԱՀԿ ՍՖՍ (սանիտարական և ֆիտոսանիտարական) սկզբունքներին համապատասխան ապահովելու նպատակով: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել երեք բաղադրիչներով՝ «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում», «Տեխնիկական կարողությունների զարգացում» և «Թարգմանություն և աուդիտ»: Սննդամթերքի անվտանգության ոլորտի ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման բաղադրիչով իրականացվել է սանիտարական և բուսասանիտարական (ՍԲՍ) ոլորտի օրենսդրության բարելավում՝ ՀՀ իրավական ակտերի մոտարկում Եվրամիության իրավական ակտերին: Կնքվել է պայմանագիր «ԱՄ Փարթնըրզ քանասալթինգ քամփնի» խորհրդատվական կազմակերպության հետ, որն իրականացնում է այդ աշխատանքները: ՀՀ ԳՆ սննդի անվտանգության պետական ծառայության համար մշակվել է սննդի անվտանգության ոլորտի հաղորդակցության ռազմավարություն և դրա իրականացման գործողությունների պլան: Աշխատանքները կատարելու համար ընտրվել են հաղորդակցության գծով միջազգային և տեղական խորհրդատուներ, որոնց կողմից վերլուծվել և գնահատվել է ոլորտի ներկա իրավիճակը: Հաղորդակցության ռազմավարությունը և դրա իրականացման գործողությունների պլանը քննարկվել են շահագիրգիր կողմերի հետ, միջազգային խորհրդատուի կողմից կազմված փաստաթղթերի ողջ փաթեթը տրամադրվել է ծառայությանը: Ընթացքի մեջ են սննդի անվտանգության իրազեկվածության վերաբերյալ սոցիոլոգիական հարցման համար տեղական խորհրդատվական կազմակերպության ընտրության աշխատանքները:

Տեխնիկական կարողությունների զարգացման բաղադրիչի շրջանակներում մշակվել է ծառայության կարիքների համար նախատեսված էլեկտրոնային միասնական կառավարման համակարգ: Աշխատանքների իրականացման համար անցկացված մրցույթի արդյունքում ընտրվել են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի միջազգային և տեղական խորհրդատուներ: Խորհրդատուներն իրականացրել են ծառայության կարողությունների վերլուծություն ու գնահատում, և դրա հիման վրա մշակվել են էլեկտրոնային միասնական կառավարման համակարգի տեխնիկական պայմանները, որոնք համաձայնեցվել են ծառայության աշխատակազմի հետ: Էլեկտրոնային միասնական կառավարման համակարգի մշակման և ներդրման համար մրցույթով ընտրվել է համապատասխան մասնագետ, որը մշակել է համակարգը: Իրականացվել է նաև ծառայության անձնակազմի ուսուցանում: Ծառայության կարիքների համար գնվել է 5 համակարգիչ: Կենդանիների հիվանդությունների վերահսկողության կարողությունների հզորացման նպատակով մրցույթի հիման վրա ընտրվել է խորհրդատվական կազմակերպություն, որի կազմում ընդգրկված միջազգային և տեղական փորձագետների կողմից իրականացվել է ոլորտի ներկա իրավիճակի ուսումնասիրություն և կազմվել ու ներկայացվել է հաշվետվություն: Կենդանիների հիվանդությունների կանխարգելման կամ պայքարի ռազմավարությունների, ինչպես նաև հիվանդությունների ազդեցության տնտեսական վերլուծության աշխատանքների իրականացման համար ընտրվել է միջազգային խորհրդատու, որն աշխատանքները սկսել է 2015 թվականի



հունվարից: «Թարգմանություն և աուդիտ» բաղադրիչի շրջանակներում ընտրվել են խորհրդատուներ, որոնք իրականացրել են անհրաժեշտ թարգմանությունը, այդ թվում՝ ԵՄ և ՀՀ իրավական ակտերի թարգմանություններ, միջազգային փորձագետների համար բանավոր և գրավոր թարգմանություններ, ինչպես նաև ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ թարգմանություններ: Ծրագրի աուդիտը կկատարվի դրամաշնորհի ավարտի վերջին տարում՝ 2015 թվականին:

«Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր» նախապատրաստման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 218 մլն դրամ: Ծրագրի ծախսերի 88.3%-ով կատարումը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրով նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են: Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը և ԳԾԻԳ-ին՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր» նախապատրաստական աշխատանքների իրականացման գործում: Ծրագիրը բաղկացած է երեք բաղադրիչներից՝ «Կարողությունների զարգացում և համապատասխան ուսումնասիրությունների իրականացում», «Ծրագրի փաստաթղթերի մշակում» և «Գործառնական ձեռնարկի մշակում»: Ծրագրի շրջանակներում իրականացվել են իրենց զարգացման կարիքների մշակման նպատակով գործող արոտագտագործողների միավորումներ սպառողական կոոպերատիվների թվի, բնույթի և արդյունավետության գնահատման, արոտագտագործողների միավորումներ սպառողական կոոպերատիվների ստեղծման օրենսդրության ուսումնասիրության, նոր արոտագտագործողների միավորումներ սպառողական կոոպերատիվների ստեղծման համար ընտրության չափանիշների մշակման և վերանայման, սննդամթերքի բիզնեսով զբաղվողների ուսումնասիրության, ընտրված մշակաբույսերի արժեքային շղթայի վերլուծության, ծրագրի իրականացման համար բաղադրիչների հաստատման, գնումների պլանի մշակման, վարձվող խորհրդատուների լիազորությունների շրջանակի ուսումնասիրության, գնառաջարկների փաստաթղթերի և ոլորտի կարևորագույն ցուցանիշների մշակման, բնապահպանական և սոցիալական երաշխիքների ապահովման փաստաթղթերի մշակման աշխատանքները: Ծրագրի շրջանակներում աջակցություն է տրամադրվել նաև երկրորդ վարկային ծրագրի գործառնական ձեռնարկի մշակման համար, որում ներառվել են ծրագրի իրականացման բոլոր ուղղությունները, ինչպես նաև առաջարկվող երկու նոր բաղադրիչները:

Ղանիական թագավորության աջակցությամբ իրականացվող «Գյուղական կարողությունների ստեղծում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է 15.2 մլն դրամ, որը որպես կանխավճար տրամադրվել է խորհրդատուին: Ծրագրի ծախսերի 10.2%-ով կատարումը պայմանավորված է նրանով, որ ծրագիրն ուշ է հաստատվել, և ծրագրի իրականացման համար պայմանագիրը նախատեսված ժամկետից ուշ է կնքվել: Միջպետական համաձայնագիրը ստորագրվել է 2013 թվականի նոյեմբեր ամսին, հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2014 թվականի փետրվար ամսին: ԳԶՄՀ-ն կասեցնում էր բաղադրիչի իրականացումը, քանի դեռ հստակեցված չէր այն իրականացնող կազմակերպության՝ Գյուղական ֆինանսավորման կառույցի (ԳՖԿ) կարգավիճակը: 2014թ. օգոստոսին ՀՀ կառավարությունը հաստատեց ԳՖԿ-ի միավորումը

ԾԻԳ-ին և վերջինիս կանոնակարգը: Դրանից հետո ծրագրի կառուցվածքը և վարկային պրոդուկտը մշակելու նպատակով խորհրդատուի տեխնիկատնտեսական առաջադրանքը հաստատվել է ԳԶՄՀ կողմից (2014թ. հոկտեմբեր ամսին), ինչի հիման վրա էլ հայտարարվել է խորհրդատուի ընտրության մրցույթ: Դեկտեմբերի վերջին խորհրդատուի հետ կնքվել է պայմանագիր, և վճարվել կանխավճար: Խորհրդատուի կողմից ծրագիրը մշակվել է 2015 թվականին: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Ծրագիրը նախատեսված է շահառուներին բանկերի և վարկային կազմակերպությունների միջոցով այգեգործական վարկերի տրամադրման համար, որոնց ֆինանսավորումը պետք է իրականացվի ԾԻԳ-ի կազմում գտնվող Գյուղական ֆինանսավորման կառույցի միջոցով:

Գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստական աշխատանքների կազմակերպման և անցկացման ծախսերը կազմել են 139 մլն դրամ՝ ապահովելով 98.1% կատարողական: Վերոհիշյալ ծրագրին աջակցելու նպատակով ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության կողմից տրամադրվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը, որոնք իրականացվում են արտաբյուջետային միջոցների հաշվին, կազմել են 79.9 մլն դրամ կամ նախատեսվածի 98.6%-ը: Նշված երկու ծրագրերը սկսել են գործել 2014 թվականին, որոնց շրջանակներում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես.

- Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականին անցկացվելիք գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի հավանությամբ և ՀՀ ԱՎԾ ներկայացմամբ ՀՀ կառավարության կողմից ընդունվել է որոշում՝ 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման ծրագիրը (հարցաշարը) հաստատելու մասին,

- նախապատրաստվել և հրավիրվել են ՀՀ 2014 թվականի ԳՀՀ կազմակերպման և անցկացման համապետական հանձնաժողովի նիստեր,

- փորձնական ԳՀՀ արդյունքների հիման վրա կատարված լրամշակումներից հետո, ՀՀ ՎՊԽ որոշումներով հաստատվել են ԳՀՀ նախապատրաստման, կազմակերպման և անցկացման գործընթացները կանոնակարգող թվով 60 փաստաթղթեր՝ ձևաթղթեր, ցուցումներ, հրահանգներ, հարցաթերթեր, հուշատետրեր, մեթոդաբանական դրույթներ, որոնցից 4-ը գրանցվել են ՀՀ արդարադատության նախարարության կողմից,

- ավարտվել են ՀՀ գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմերի կողմից «Համայնքներում բնակավայրերի, համայնքի տարածքում գտնվող այլ բնակատեղերի և դրանցում առկա տնտեսությունների ցուցակների կազմման աշխատանքները, որոնք տրամադրվել են ՀՀ ԱՎԾ մարզային (տարածքային) գործակալություններին (բաժիններին),

- իրականացվել են ՀՀ քաղաքային համայնքների (թվով՝ 48 և Երևանի 12 վարչական շրջանների) ու 3000 և ավելի բնակչություն ունեցող գյուղական համայնքների (թվով 223 գյուղական համայնք) տնտեսությունների ցուցակների կազմման աշխատանքները՝ 522 հրահանգավորված ցուցակագրողների կողմից,

- ՀՀ 2014 թվականին գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման մարզային հանձնաժողովների նիստերի ժամանակ տեղեկատվություն է ներկայացվել

ՀՀ քաղաքներում և գյուղերում տնտեսությունների ցուցակների կազմման աշխատանքների ավարտից հետո, ՀՀ քաղաքային և գյուղական համայնքներում սահմանների ճշգրտման, փողոցների անվանումների, թաղամասերի և տների համարակալման կարգավորման, համարանիշերի և անվանացույցերի տեղադրման գործընթացում առկա թերությունների վերաբերյալ,

- ՀՀ 10 մարզերում և Երևան քաղաքում անց են կացվել ՀՀ 2014 թվականի ԳՀՀ նախապատրաստման ու անցկացման մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովների նիստեր՝ համայնքների և Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ներկայությամբ, որոնց մասնակցել են ՀՀ ԱՎԾ նախագահը, ՀՀ ՎՊԽ անդամները և ՀՀ ԱՎԾ աշխատանքային խումբը: Նիստերի ընթացքում ներկայացվել է ԳՀՀ կարևորությունը, քննարկվել մարզային հանձնաժողովների և համայնքապետերի կողմից ցուցաբերվելիք օժանդակության և ԳՀՀ նախապատրաստման աշխատանքների ընթացքի մասին հարցերը,

- տնտեսությունների ցուցակների հիման վրա կազմվել են ՀՀ 2014 թվականի ԳՀՀ մարզային (տարածքային) կազմակերպական պլանները, որով հաստատվել են ԳՀՀ անցկացման համար հաշվային, հրահանգչական և հաշվառման տեղամասերի կազմն ու կառուցվածքը, դրանց աշխատակազմի տեղակայման համար անհրաժեշտ տարածքների թիվը,

- համաձայն ՀՀ 2014 թվականի ամփոփ կազմակերպական պլանի, ՀՀ ողջ տարածքում հաստատվել են 91 հաշվառման, 894 հրահանգչական և 4 462 հիմնական հաշվային տեղամասեր,

- նախատեսված գրաֆիկով իրականացվել են ԳՀՀ փաստաթղթերի և ԳՀՀ լուսաբանող զանգվածային նյութերի տպագրումն ու առաքումը մարզեր,

- իրականացվել է ԳՀՀ ժամանակավոր աշխատողների հավաքագրումն ու նրանց հետ աշխատանքային պայմանագրերի կնքումը,

- կատարվել են ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունների և դրանց տարածքային բաժինների պատասխանատու անձանց և ԳՀՀ աշխատանքները մարզերում համակարգողների, հաշվառման տեղամասերի վարիչների և նրանց օգնականների հրահանգավորումներ՝ ՀՀ 2014 թվականի ԳՀՀ-ն հարցաթերթը լրացնելու կարգի մասին հրահանգի և ժամանակավոր ներգրավվող աշխատողների պարտականություններին առնչվող մնացած բոլոր փաստաթղթերի ուսուցում,

- հոկտեմբերի 8-10-ն ընկած ժամանակաընթացքում հաշվարարների կողմից տների նախնական շրջայցի, հոկտեմբերի 11-31-ը ՀՀ ԳՀՀ-ն տվյալների հավաքագրման (անցկացման) և նոյեմբերի 1-4-ը ընտրանքային վերահսկիչ շրջայցի ընթացքում օգնության կարգով ԳՀՀ վարչության աշխատակիցները գործուղվել են ՀՀ մարզեր և տարածքներ,

- գյուղատնտեսությամբ զբաղվող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից լրացվել և ՀՀ ԱՎԾ-ին է տրամադրվել 3-ԳՀՀ հարցաթերթը,

- ՀՀ 866 գյուղական և 49 քաղաքային համայնքների ղեկավարների կողմից լրացվել և ՀՀ ԱՎԾ-ին է տրամադրվել 3-ԳՀՀ հարցաթերթը,

- կարևորելով ԳՀՀ արդյունքներով ստացված տվյալների որակն ու ամբողջականությունը, հաշվառման միավորների ծածկույթը և հաշվառման գործընթացում առաջացած անճշտությունների տեսակներն ու չափերը գնահատելու նպատակով ԳՀՀ տվյալների հավաքագրումն ավարտելուց հետո, 2014 թվականի նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 14-ը ներառյալ անցկացվեց

հետզյուղատնտեսական հաշվառում (ՀԳՀ), որն անկախ վիճակագրական հետազոտություն / հարցում է: Պատահական ընտրանքի միջոցով այն իրականացվեց հանրապետության 10 մարզերի 134 գյուղական և քաղաքային համայնքներում:

Հաշվետու տարում գյուղատնտեսության դասում ընդգրկված հետևյալ 10 ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական:

Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների իրականացման նպատակով ծախսվել է 57.8 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննությունների, գրանցամատյանի վարման, օրիգինատորի հաշվառման, բույսերի սորտերի նկարագրությունների և բնութագրերի կազմման, սերմերի որակի լաբորատոր հետազոտությունների և փաստաթղթավորման, բույսերի նոր սորտերի տեղեկագրերի և գրանցամատյանների հրատարակման, ինչպես նաև բույսերի նոր սորտերի փորձարկումների աշխատանքներ: Լաբորատոր հետազոտությունների են ենթարկվել 16653.8 տոննա գյուղատնտեսական մշակաբույսերի սերմեր, որոնք ստացել են համապատասխան դասային գնահատում և փաստաթղթավորում: Ընդհանուր առմամբ հետազոտվել են հացահատիկային, հատիկաընդեղենային, բանջար-բոստանային, կերային, դեկորատիվ, անտառային բույսերի սերմեր և կարտոֆիլի տնկանյութ: Ընդունվել և հետազոտվել են շուրջ 1545 նմուշներ, սպասարկվել են 723 տնտեսավարող սուբյեկտներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11.4%-ով կամ 5.9 մլն դրամով՝ պայմանավորված գյուղատնտեսական մշակաբույսերի 567.2 տոննայով ավելի սերմերի ստուգմամբ:

Գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման ծախսերը կազմել են 4.5 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 12%-ով՝ պայմանավորված պահպանվող սերմնահեղուկի քանակով:

Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծախսերը կազմել են 62.3 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2014 թվականին իրականացվել են գյուղատնտեսական մշակովի հողերի ագրոքիմիական դաշտային հետազոտություններ 172 համայնքներում, հետազոտված 90173 հեկտար տարածքից վերցված 30058 հողանմուշներում կատարվել են 76048 լաբորատոր փորձաքննություններ, որոշվել է ազոտի, ֆոսֆորի և կալիումի պարունակությունը հողի մեջ, կազմվել և համայնքներին են հանձնվել 172 ագրոքիմիական քարտեզներ և մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրեր, որոնցում հստակ նշվել են պարարտանյութերի տեսակները, պարարտացման նորմաները՝ ըստ կուլտուրաների, պարարտացման ժամկետները և հանձնվել են համայնքներին: Ծրագրով նախատեսված համայնքների ընդհանուր թվի 70%-ում կատարվել են հողի ռեակցիայի, մեխանիկական կազմի, հունուսի փորձաքննություններ՝ ՊՈԱԿ-ի սեփական միջոցների հաշվին: ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի N971-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ 2010-2014 թվականների ցորենի և սերմնարտադրության զարգացման ծրագրի» իրականացման նպատակով 2014 թվականին փաստացի 131 շահառուների 1950 հեկտարից վերցված 650 նմուշից կատարվել է 1950 փորձաքննություն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 28.1%-ով կամ 13.7 մլն

դրամով՝ պայմանավորված նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացմամբ և իրականացվող աշխատանքների ծավալով:

ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անասնաբուժական ոստիկանական դասակի կողմից կարանտինային սահմանափակումների իրականացման նպատակով տրամադրվել է 49.8 մլն դրամ: Միջոցներն ուղղվել են ՀՀ ոստիկանության հասարակական կարգի ապահովման վարչության կազմում ստեղծված ոստիկանության հատուկ դասակի պահպանությանը, որը համաճարակային բռնկումների ժամանակ գյուղատնտեսական կենդանիների հիվանդություններն օջախներում լոկալիզացնելու, ինչպես նաև դրանց հետագա տարածումները կանխելու նպատակով իրականացնում է կարանտինային սահմանափակումներ: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

Գյուղական խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման նպատակով կատարվել են շուրջ 346.5 մլն դրամի ծախսեր: Ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայություններ մատուցող Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ-ների) և Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնների (ԳԱՀԿ-ների) միջոցով ագրոտեխնիկական կանոններին և նոր տեխնոլոգիաներին համապատասխան գյուղատնտեսության վարման նպատակով գյուղացիական տնտեսություններին մատուցվել են խորհրդատվական ծառայություններ՝ 21817 խորհրդատվական միջոցառումներ, 1094 սեմինար, 843 դաշտային ուսուցման և 151 փորձացուցադրական աշխատանքների կազմակերպում, լրատվական և տեղեկատվական ծառայությունների մատուցում, 87 ռադիոհեռուստահաղորդում, 448 անուն տեղեկատվական թերթիկների տպագրում և տարածում՝ 113090 տպաքանակով, 158 համար թերթերի թողարկում՝ 211500 տպաքանակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 16.6%-ով կամ 49.3 մլն դրամով՝ պայմանավորված նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացմամբ և իրականացված աշխատանքների ծավալով:

Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտներում ծառայությունների մատուցման ծախսերը կազմել են 128.4 մլն դրամ: Ծրագիրն ապահովում է Հայաստանի Հանրապետությունում բույսերի վնասակար օրգանիզմների հետազոտությունների, բույսերի պաշտպանության, ինչպես նաև պատվաստված անասնազլխաքանակի կայուն ֆոնի և գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումների իրականացումը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 244375 հեկտար տարածքների դաշտային հետազոտություններ, որը նախորդ տարվա համեմատ 715 հա-ով ավելի է՝ կապված նոր վարելահողերի ձեռքբերման հետ: ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի թիվ 189-Ն որոշմամբ ՀՀ Արմավիրի մարզի Գայի և Աղավնատուն համայնքներում կարանտին վնասատու ֆիլոքսերայով վարակված 0.77 հա խաղողի այգիներում իրականացվել են քանդման աշխատանքներ, իսկ ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 3-ի թիվ 391-Ն որոշմամբ ՀՀ Արմավիրի և Արարատի մարզերի 191 համայնքների մորմազգի մշակաբույսերի ցանքատարածություններում տեղադրվել են կարտոֆիլի ցեցի 400 և լոլիկի ականող ցեցի 2500 հատ ֆերոնոնային թակարդներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4%-ով կամ շուրջ

4.9 մլն դրամով՝ պայմանավորված նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացմամբ և իրականացված աշխատանքների ծավալով:

Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի, բույսերի կարանտինի, գյուղմշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննությունների իրականացման համար ծախսվել է 293 մլն դրամ: Ծրագրի նպատակն է կենդանիների վարակիչ հիվանդությունների համաճարակային վիճակի բարելավումը, մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդություններից բնակչության պահպանումը և անասնաբուժական տեսակետից բարձրորակ անասնապահական արտադրանքի ապահովումը: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 22.5%-ով կամ 53.8 մլն դրամով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցության ծախսերը կազմել են 550 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում սերմնարտադրության ծրագրի զարգացման համար ծրագրում ընդգրկված շահառուներից գնվել է 2985.165 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու: Տեղական սերմարտադրողներից ձեռք է բերվել 223.8 տոննա սերմացու, որը բաշխվել է Հայաստանի Հանրապետության մարզերի հողօգտագործողներին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Սննդամթերքի լաբորատոր փորձաքննությունների ծախսերը կազմել են 10 մլն դրամ՝ պահպանվելով նախորդ տարվա մակարդակին:

Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծախսերը կազմել են շուրջ 872.5 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում գյուղացիական տնտեսություններին հինգ բանկերի միջոցով տրամադրվել են սուբսիդավորված վարկեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 37.5%-ով կամ 238 մլն դրամով՝ պայմանավորված նախորդ տարվա ընթացքում տրամադրված վարկերի տոկոսների մարմամբ:

Գյուղատնտեսության դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 712.6 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը և ապահովել 97.8% կատարողական, որը պայմանավորված է քաղաքացիական ծառայողների թափուր պաշտոնների առկայության և գնումների գործընթացի ընթացքում առաջացած խնայողություններով: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 42.2%-ով կամ 211.5 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի համաձայն 2014թ. հուլիսի 1-ից աշխատավարձերի բարձրացմամբ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը (նախարարությունների աշխատակազմերի մասով) կազմել են շուրջ 405.5 մլն դրամ՝ ապահովվելով 96.5% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցները հատկացվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն

աճել են 30%-ով կամ 93.6 մլն դրամով, ինչը նույնպես հիմնականում պայմանավորված է պետական ծառայողների աշխատավարձերի և նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Բույսերի պաշտպանության միջոցառումների գծով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 68.3 մլն դրամ կամ նախատեսվածի 59.5%-ը: Շեղումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ ծախսերի 29.6%-ով նվազումը հիմնականում պայմանավորված են 2014 թվականի բուսասանիտարական վիճակով և 2013 թվականին ձեռք բերված և պահեստավորված նյութերի օգտագործմամբ: Ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական մշակաբույսերի առավել վնասակար օրգանիզմների դեմ իրականացվել են մի շարք միջոցառումներ: Օգտագործված միջոցներից շուրջ 34.9 մլն դրամով ձեռք են բերվել թունաքիմիկատներ համայնքներին բաշխելու նպատակով: 33.4 մլն դրամը ծախսվել է ավիացիոն ծառայությունների իրականացման համար անտառի վնասակար օրգանիզմների (մկնանման կրծողներ, մորեխներ) դեմ պայքարելու նպատակով: Արագածոտնի մարզի «Արագածոտնի անտառտնտեսություն», Վայոց ձորի մարզի «Վայոց ձորի անտառտնտեսություն», Կոտայքի մարզի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաձյուղերի 6300 հա անտառային տարածքների վրա իրականացվել են ավիացիոն քիմիական պայքարի միջոցառումներ: Համայնքների միջոցով մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումների բաղադրիչի շրջանակներում ՀՀ մարզպետարաններին անհատույց հատկացվել է 6591.6 կգ ցինկի ֆոսֆիդ մկնասպան միջոց՝ 54930 հա առավել վարակված գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ իրականացնելու համար: Համայնքներին բաշխելու նպատակով միջատասպան թունանյութի ձեռքբերման բաղադրիչի շրջանակներում ձեռք է բերվել 782.5 լիտր «Կռալ» տեսակի բույսերի պաշտպանության միջատասպան թունանյութ, որից ՀՀ Արարատի մարզի համայնքներին անհատույց տրամադրվել է 119.25 լիտր: Համայնքի հողօգտագործողների կողմից քիմիական պայքարի միջոցառումներ են իրականացվել 795 հա վրա՝ մորեխներով առավել վարակված գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում: Հանրապետությունում մորեխներով վարարկվածության ցածր մակարդակի պատճառով ձեռք բերված միջատասպան թունանյութը պահեստավորվել է հետագայում օգտագործելու նպատակով:

Բուսասանիտարական համակարգի բարելավման և մասնագիտական գիտելիքների բարձրացմանն աջակցության ծախսերը կազմել են շուրջ 5.8 մլն դրամ՝ ապահովելով 99.2% կատարողական: Միջոցները հատկացվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանին: Ծրագրի նպատակն է ուսուցողական դասընթացների կազմակերպումը, որը կնպաստի մասնագիտական պատրաստվածության աստիճանի բարձրացմանը: 2013 թվականին ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են 42 աշխատակիցներ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը փոփոխություն չեն կրել:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերը, որոնք իրականացվում են արտաբյուջետային միջոցների հաշվին, կազմել են 221.6 մլն դրամ կամ ծրագրվածի 89.8%-ը: Ֆոնդում գոյացած միջոցների 70 տոկոսն օգտագործվում է ծառայության աշխատողների նյութական խրախուսման, իսկ 30 տոկոսը՝ ծառայության համակարգի զարգացման և

հսկիչ գնումների ֆինանսավորման համար: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է գնումների անվանացանկով նախատեսված ապրանքների և ծառայությունների մասնակի ձեռք բերմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 28%-ով կամ 48.5 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ներմուծված սննդամթերքի և (կամ) կենդանական ծագման մթերքի, ինչպես նաև ծառայության համակարգի զարգացմանն ուղղված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծավալների աճով:

Ներմուծվող սննդամթերքի և (կամ) կենդանական ծագման մթերքի լաբորատոր փորձաքննության վճարների ծախսերը, որոնք իրականացվում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության արտաբյուջետային միջոցների հաշվին, կազմել են շուրջ 82.5 մլն դրամ կամ ծրագրվածի 72.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ փաստացի ներմուծված սննդամթերքի և (կամ) կենդանական ծագման մթերքի՝ նախատեսվածից փոքր ծավալներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 12.6%-ով կամ 11.9 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված նրանով, որ 2014 թվականի ընթացքում ներմուծվող սննդամթերքը և (կամ) կենդանական ծագման մթերքը լաբորատոր փորձաքննության են ենթարկվել ըստ ռիսկայնության աստիճանի՝ համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի N 218-Ն որոշման:

Գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծախսերը կազմել են ավելի քան 1.1 մլրդ դրամ՝ ապահովելով 98.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծախսերն աճել են 2.7%-ով կամ շուրջ 29 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ձեռք բերված պատվաստանյութերի ծավալների աճով: Ծրագրի շրջանակներում նախատեսվել է իրականացնել կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման, կենդանիների և մարդու համար ընդհանուր հիվանդություններից ազգաբնակչության պաշտպանության, անասնահակահամաճարակային կանխարգելիչ աշխատանքներ՝ Հայաստանի Հանրապետությունում հակահամաճարակային կայուն իրավիճակի ստեղծման նպատակով: Ծրագրի շրջանակներում նախատեսվել էր իրականացնել գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված 9383799 հատ անասնահակահամաճարակային միջոցառումներ: Նշված աշխատանքներն իրականացվել են անասնաբույժ մասնագետների և համաճարակաբանների կողմից 935 համայնքներում, փաստացի իրականացվել են 9060597 հատ անասնահակահամաճարակային միջոցառումներ:

Հաշվետու տարում ավելի քան 1 մլրդ դրամ է տրամադրվել *անտառային տնտեսության* դասին՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերն աճել են 30.1%-ով կամ 237.4 մլն դրամով՝ պայմանավորված անտառապահպանական ծառայությունների ձեռք բերման ծախսերի աճով: 2014 թվականին անտառային տնտեսությանը կատարված հատկացումների հաշվին իրականացվել են երկու ծրագրեր, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեն անտառապահպանական ծառայություններին կատարված հատկացումները: Նշված ծառայությունների ձեռքբերման համար նախատեսվել է 971.8 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Այն տրամադրվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ին՝ որպես դրամաշնորհ, իր իրավասության ներքո գտնվող 344.2 հազար հեկտար տարածքների պահպանության



աշխատանքների դիմաց վճարման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 32.3%-ով կամ 237.3 մլն դրամով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ և իրականացված աշխատանքների ծավալով:

Անտառային պետական մոնիթորինգի նպատակով նախատեսված շուրջ 54.6 մլն դրամը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է, որը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել: Հատկացված գումարների հաշվին շուրջ 370 հազար հա անտառտնտեսություններում, ազգային պարկերում, արգելավայրերում և բնության հատուկ պահպանվող տարածքների անտառներում իրականացվել են անտառպահպանության և անտառօգտագործման բնագավառում իրականացված աշխատանքների արդյունքների ուսումնասիրում, փայտանյութի սպառման շուկայի, մթերման և արտահանման, ապօրինի հատումների և դրա արդյունքում բնափայտի տեղափոխումների, իրացման վերաբերյալ տվյալների հավաքում, մշակում, վերլուծություն և գնահատում: Ներդրված հեռահար զոնդավորման ծրագրային համակարգի միջոցով վերծանվել են անտառածածկ տարածքների փոփոխությունների ուսումնասիրությունները:

2014 թվականին շուրջ 9.8 մլրդ դրամ տրամադրվել է *ոռոգման* դասի ծախսերին՝ կազմելով ծրագրվածի 85.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող Ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման վարկային ծրագրի կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել է 10 ծրագիր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են մեկ վարկային և երեք դրամաշնորհային ծրագրեր:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 1.9 մլրդ դրամ: Ծրագրի ծախսերի 60.3%-ով կատարումը պայմանավորված է նրանով, որ Համաշխարհային բանկի ընթացակարգերի համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» (ՇՄԱԳ) հաշվետվությունը պետք է ներկայացված լինի մրցութային փաթեթի մեջ, իսկ վերջինիս հաստատումը ՀԲ-ից ուշ է ստացվել, որի հետևանքով Մեդրիի ինքնահոս ոռոգման համակարգի շինարարական աշխատանքներն ուշ են մեկնարկել: Ծրագրի նպատակներն են կրճատել էլեկտրաէներգիայի սպառումը, բարելավել ոռոգման ջրի տեղափոխման արդյունավետությունն ընտրված ոռոգման համակարգերում, բարելավել ոլորտին առնչվող կարևոր տեղեկատվության առկայությունը և հուսալիությունը՝ որոշում կայացնողների և այլ շահագրգիռ կողմերի համար: Ծրագիրը բաղկացած է 3 մասից.

- ոռոգման համակարգի բարելավում՝ մեխանիկական ոռոգման փոխարկումը ինքնահոսի չորս ինքնահոս համակարգի կառուցման միջոցով: Մեխանիկական եղանակով ստացած ջուր տեղափոխող, հեռացնող և այլ ջրանցքների վիճակի բարելավում՝ տասներեք ընտրված պոմպակայանների հեռացնող ջրանցքների մոտ 52 կմ վերականգնման միջոցով.
- կառավարման տեղեկատվություն՝ տեխնիկական ուսումնասիրությունների իրականացում ոռոգման կազմակերպությունների շահագործման և պահպանման ու կապիտալ նորոգման կարիքները վերլուծելու և «Զրառ» կազմակերպությունների և ԶՕԸ-ների տեխնիկական աուդիտ իրականացնելու նպատակներով: Կարգավարական հսկողության և տվյալների ձեռք բերման

համակարգի (SCADA) տեղադրում շուրջ յոթանասուն դիտակետում՝ մայր ջրանցքների և ջրառների ընտրված կետերի վրա:

- ծրագրի կառավարում և ՋՕԸ-ների աջակցություն՝ աջակցության տրամադրում ԾԻԳ-ին ծրագրի կառավարման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման աշխատանքներում՝ ապրանքների, խորհրդատվական ծառայությունների, այդ թվում՝ աուդիտի և գործառնական ծախսերի ապահովման միջոցով: Աջակցության տրամադրում ՋՕԸ-ների ղեկավարությանը, անձնակազմին և անդամներին, ուղղված նրանց տեխնիկական, գործառնական, ֆինանսական և կազմակերպչական կարողությունների և աշխատանքի բարելավմանը՝ խորհրդատվական ծառայությունների և ուսուցման միջոցով:

Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի շրջանակներում 2014 թվականին սկսվել են Մեղրիի ինքնահոս ոռոգման համակարգի կառուցման աշխատանքները՝ տեղադրվել է 5143 մ խողովակաշար, գլխամասում կատարվել են 1260 մ<sup>3</sup> բետոնային աշխատանքներ: Սկսվել և ավարտվել են Գեղարդալձի և Քաղցրաշենի ինքնահոս համակարգերի կառուցման նախագծման աշխատանքները:

Ֆրանսիայի կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցման ուսումնասիրության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է 254.7 մլն դրամ՝ ապահովելով 100.6% կատարողական: Ջարգացման ֆրանսիական գործակալության ֆինանսավորմամբ 2014 թվականին ավարտվել են Վեդու ջրամբարի կառուցման նպատակով նախատեսված տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները: Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են Վեդու ջրամբարի և ոռոգման ջրանցքների, խողովակաշարերի տեղանքի տոպոգրաֆիա ու մորֆոլոգիա, հիդրոլոգիա, նյութերի ծավալների որոշում, հիդրավլիկական ուսումնասիրություններ, սոցիալական ու բնապահպանական նախնական գնահատում, ֆինանսատնտեսական հետազոտություն և այլն: Խորհրդատուի կողմից ներկայացվել է «Պատվարի և ոռոգման համակարգի» տեխնիկատնտեսական հիմնավորման վերջնական հաշվետվությունը, որի հիման վրա կսկսվեն Վեդու ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման համար նախատեսվող մանրամասն նախագծի և մրցութային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ԵՎԲ-ի կողմից ֆինանսավորվող ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են 21 մլն դրամ: Ծրագրի 8.3%-ով կատարումը պայմանավորված է հիմնական խորհրդատուի հետ պայմանագրի՝ նախատեսված ժամկետից ուշ կնքելու հանգամանքով: Պայմանագիրը կնքվել է 2014 թվականի վերջին: Ծրագրի շրջանակներում 2014 թվականին սկսվել են ոռոգման համակարգի արդիականացման ծրագրի տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների անցկացման և ծրագրային փաստաթղթերի նախապատրաստման աշխատանքները: Աշխատանքների նախապատրաստման փուլում ջրօգտագործողների ընկերություններից ստացվել են սպասարկման տարածքների ոռոգման համակարգերի մասին տեխնիկական, տնտեսական և ֆինանսական ցուցանիշներ: Կատարվել են ստացված տվյալների վերլուծություններ և իրականացվել են ոռոգման համակարգերի տվյալների

տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություններ, որի արդյունքում կկատարվի վերանորոգման ենթակա ոռոգման համակարգերի ընտրություն՝ ելնելով դրանց խիստ վթարային լինելու, առաջնային ու եկամտաբերության բարձր նորմա ունենալու չափորոշիչներից: Աշխատանքները կրում են շարունակական բնույթ, և կիրականացվեն 2015 թվականին:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 457.5 մլն դրամ: Ծրագրի ծախսերը կատարվել են 77.2%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է փաստացի աշխատանքների ծավալներով: Ծրագիրը կավարտվի 2015 թվականի առաջին կիսամյակում: Ծրագրի նպատակն է իրականացնել գոյություն ունեցող ոռոգման համակարգերի համալիր տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություններ, ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում և պատվարի, Կապսի ջրամբարի թասի հատվածում գետտեխնիկական ու երկրաբանական հետազոտություններ՝ ջրի մատչելիության բարելավման և արդյունավետ ոռոգման տեխնոլոգիաների ներդրման միջոցով արտադրության ավելացման ընդունելի հայեցակարգ մշակելու համար: Կապսի ջրամբարի և ինքնահոս համակարգի կառուցման դրամաշնորհային ծրագիրն ուժի մեջ է մտել 2013 թվականին: 2014 թվականի ընթացքում խորհրդատուի կողմից իրականացվել են նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և ուսումնասիրության աշխատանքներ, որոնք գտնվում են ավարտման փուլում: Հաջորդ փուլով նախատեսվում է իրականացնել պատվարի և ինքնահոս համակարգի կառուցման համար մանրամասն նախագծման և մրցութային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները: ՏՏՀ ուսումնասիրության արդյունքների համաձայն նախատեսվում է սկսել Կապսի ջրամբարի կառուցման 1-ին փուլը, որի համար KfW բանկի կողմից տրամադրվելու են 50.0 մլն եվրո վարկային և 2.0 մլն եվրո դրամաշնորհային միջոցներ:

2014 թվականին ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին նախատեսված ավելի քան 4.7 մլրդ դրամ աջակցությունն ամբողջությամբ տրամադրվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 6.4%-ով աճը պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ: 2014 թվականին ծառայություններ են մատուցվել 42 ջրօգտագործողների ընկերությունների: Համակարգի հետագա զարգացման և ջրօգտագործողների ընկերությունների՝ որպես կենսունակ հաստատությունների կայացման հարցում միջնաժամկետ հեռանկարում մեծ դեր է վերագրվում պետական օժանդակությանը: Ոռոգման համակարգին պետական ֆինանսական աջակցության շրջանակների հստակեցումը և տրամադրման մեխանիզմների բարեփոխումն է՛լ ավելի են կարևորվում աղքատության հաղթահարման միջոցառումների համատեքստում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոռոգման ջրի կանոնավոր հասանելիությունը զգալիորեն նվազեցնում է աղքատության ռիսկը գյուղական բնակավայրերում: Ջրօգտագործողների ընկերություններին պետական ֆինանսական աջակցության բարեփոխումների հիմնական նպատակներն են ջրօգտագործողներին աջակցությունն ու մասնակցային կառավարման ամրապնդումը, ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացումն ու ինքնաձախսաձածկման մակարդակի աստիճանական ավելացումը, ոռոգման ջրի կորուստների

կրճատումը, ինչպես նաև պետական ծախսերի կանխատեսելիության ու բաշխման արդյունավետության աճը:

Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման, գրունտային ջրերի մակարդակների ու որակի որոշման աշխատանքների իրականացման համար 2014 թվականի պետական բյուջեից ծախսվել է 94.7 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ոռոգելի հողերի մեխորատիվ վիճակի բարելավման նպատակով միջոցառումների մշակման համար իրականացվել են 1067.418 կմ ընդհանուր երկարությամբ բաց կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Ոռոգում ջրառ իրականացնող կազմակերպություններին 2014 թվականին տրամադրվել է շուրջ 1.1 մլրդ դրամ ֆինանսական աջակցություն, որը կատարվել է նախատեսված չափով: Աջակցության հիմնական նպատակն է ոռոգում ջրառ իրականացնող կազմակերպությունների վնասների փոխհատուցման արդյունքում կազմակերպությունների տեխնիկական և ֆինանսական կայունության ապահովումը, որը թույլ կտա կազմակերպություններին իրականացնել կնքված պայմանագրերով ոռոգման ջրի մատակարարումը և կատարել ստանձնած պայմանագրային պարտավորությունները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 88.9%-ով կամ 514.6 մլն դրամով՝ պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ և սակավաջրության հետևանքով սեզոնին մեխանիկական ջրի միջոցով հողի ոռոգմամբ:

« 2014 թվականի պետական բյուջեից ոռոգման համակարգերի հիմնանորոգմանն ուղղվել է շուրջ 998.3 մլն դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: Ծրագրի շրջանակներում վերականգնվել և վերանորոգվել են ընդհանուր երկարությամբ շուրջ 20 կմ ջրանցքներ ու խողովակաշարեր: Ոռոգման ոլորտի կազմակերպությունների կողմից շահագործվող տնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամբարների, գլխամասային կառուցվածքների, ջրանցքների, պոմպակայանների և այլ ջրային համակարգերի ամենամյա կապիտալ նորոգումների համար պահանջվում են համապատասխան ֆինանսական միջոցներ: Նշված ջրային համակարգերի կամ դրանց առանձին մասերի կապիտալ նորոգումների չիրականացումն ավելացնում է վթարավտանգ իրավիճակների հավանականությունը, ինչպես նաև արդյունավետ ջրամատակարարման հետ կապված առաջացնում է որոշակի խնդիրներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 43.1%-ով կամ 300.9 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված շինարարական աշխատանքների ծավալների ավելացմամբ:

Կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և ընթացիկ նորոգման համար տրամադրվել է 221.2 մլն դրամ կամ նախատեսվածի 98.3%-ը: Ծրագրի իրականացման արդյունքում պահպանվում և շահագործվում են հանրապետությունում առկա կոլեկտորադրենաժային ցանցերը՝ մաքրվում և վերանորոգվում են կոլեկտորադրենաժային ցանցերի մի մասը, որոնցով հնարավորություն է տրվում Արարատյան հարթավայրի հողերի գրունտային ջրերի մակարդակները պահպանել թույլատրելի խորությունների վրա՝ 19.0 հազար հեկտարից ոչ ավելի: 2014 թվականին նախատեսվել էր իրականացնել կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրում և

նորոգում, դրանց մաքրման և նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն, ինչպես նաև տեխնիկական վիճակի պահպանում և շահագործում: Տարվա ընթացքում իրականացվել է 156.3 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի, 22.2 կմ ընդհանուր երկարությամբ դրենաժային ցանցի մաքրման ու նորոգման և Արարատյան հարթավայրում տեղադրված 450 դիտողական հորատանցքներում գրունտային ջրերի մշտական դիտարկումների աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Ջրատեխնիկական կառույցների ուսումնասիրությունների ծախսերը կազմել են շուրջ 10.6 մլն դրամ կամ ծրագրի 90.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է որոշակի ծառայությունների և նյութական արժեքների ձեռք բերման ծախսերի տնտեսումներով: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

*Վառելիքի և էներգետիկայի* բնագավառի ծախսերը 2014 թվականին կազմել են շուրջ 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով 15.6% կատարողական: Վերջինս հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցները չօգտագործելու հանգամանքով:

2014 թվականին *միջուկային վառելիքի* դասի ծախսերը կազմել են շուրջ 223.1 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի պահպանմանը՝ ապահովելով 98.6% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11.7%-ով կամ 23.4 մլն դրամով՝ պայմանավորված աշխատավարձի բարձրացմամբ:

*2014 թվականին վառելիքի այլ տեսակների* դասի ծախսերը կազմել են 339.3 մլն դրամ կամ ծրագրվածի 24%-ը, որը հիմնականում պայմանավորված է Իրանի Իսլամական Հանրապետության աջակցությամբ իրականացվող Հայաստանի Հանրապետությունում՝ Իրանի հետ սահմանամերձ բնակավայրերի գազի բաշխման ցանցի կառուցման դրամաշնորհային ծրագրի կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին ֆինանսավորվել են արտաքին աջակցությամբ իրականացվող երեք դրամաշնորհային ծրագրեր:

Մասնավորապես՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էներգախնայողության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է 278.5 մլն դրամ: Ծրագրի ծախսերի 57.8%-ով կատարումը պայմանավորված է խորհրդատվական ծառայությունների համար նախատեսված գումարների տնտեսմամբ: Ազգային էներգախնայողության գործողությունների պլանի մշակման խորհրդատվական ծառայության իրականացման պայմանագիրը օբյեկտիվ պատճառներով նախատեսված ժամկետներում չի կնքվել: Նշված խորհրդատվական ծառայությունների մատուցումն ու դրանց դիմաց համապատասխան վճարումները տեղափոխվել են 2015 թվական: Գնումների պլանով նախատեսված որոշ խորհրդատվական աշխատանքների մասով տնտեսումներ են արձանագրվել, ինչը պայմանավորված է նրանով, որ էներգախնայողության ոլորտի միջազգային փորձագետի պայմանագիրը վաղաժամկետ ավարտվել է, և նրա ծառայությունների կարիքը չի առաջացել: Էներգախնայողության խնդիրների վերաբերյալ միջազգային միջոցառումներին մասնակցության

մասով նույնպես առկա է խնայողություն, քանի որ նմանատիպ միջոցառումներին մասնակցության ծախսերը հիմնականում ֆինանսավորել է հրավիրող կողմը: 2012 թվականից ՀՀ կառավարությունը Համաշխարհային բանկի օժանդակությամբ ձեռնամուխ է եղել էներգախնայողության ծրագրի իրականացմանը: Ծրագիրն ուղղված է հանրային նշանակության օբյեկտներում (դպրոցներ, այլ ուսումնական հաստատություններ, մանկապարտեզներ, հիվանդանոցներ, վարչական շենքեր, մշակույթի տներ, բնակավայրերի արտաքին լուսավորություն և այլն) էներգախնայողական միջոցառումներ իրականացնելուն: Ծրագրի զարգացման նպատակն է՝ կրճատել սոցիալական և հանրային նշանակության այլ կառույցների էներգասպառման մակարդակը: Գլոբալ բնապահպանական նպատակն է՝ կրճատել ջերմոցային գազերի արտանետումները պետական ոլորտում էներգախնայողության մեջ ներդրումների համար արգելքների վերացման միջոցով: Ծրագիրն ունի 2 հիմնական բաղադրիչ՝ «էներգախնայողական ներդրումներ հանրային օբյեկտներում» և «Ծրագրի տեխնիկական աջակցություն»: Առաջին բաղադրիչի շրջանակներում էներգախնայողության ներդրումներ են կատարվելու սոցիալական և հանրային նշանակության այլ օբյեկտներում, օրինակ՝ դպրոցներում, մանկապարտեզներում, հիվանդանոցներում, վարչական շենքերում, փողոցային լուսավորությունում: Երկրորդ բաղադրիչի շրջանակներում վերացվելու են էներգախնայողության ներուժի իրացման առկա խոչընդոտները, և ստեղծվելու է նպաստավոր միջավայր պետական հատվածում էներգախնայողության համար: 2014 թվականին առաջին բաղադրիչի շրջանակներում կատարվել են վճարումներ հանրային օբյեկտներում էներգախնայողության միջոցառումներ իրականացնելու նպատակով: Երկրորդ բաղադրիչի շրջանակներում իրականացվել են տեխնիկական վերակակողության, հանրային իրազեկման և էներգետիկայի շաբաթի կազմակերպման, հայտատուների կողմից հաշվարկի նախապատրաստման համար ծրագրի պատրաստման աշխատանքներ, կատարվել է ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, վճարվել է անհատ խորհրդատուներին, էներգախնայողությունը չափելու և հաշվարկելու համար ձեռք են բերվել սարքավորումներ, կատարվել են նախագծային աշխատանքներ և ուսուցման ծախսեր:

Իրանի Իսլամական Հանրապետության աջակցությամբ իրականացվող Հայաստանի Հանրապետությունում՝ Իրանի հետ սահմանամերձ բնակավայրերի գազի բաշխման ցանցի կառուցման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 18.4 մլն դրամ: Ծրագրի ծախսերի 2.4%-ով կատարումը հիմնականում պայմանավորված է իրանական կողմից ծրագրի ֆինանսավորման կասեցմամբ: Ծրագրի շրջանակներում վճարումներ են կատարվել ներկրված սարքավորումների համար նախատեսված հարկերի ու տուրքերի գծով: Ծրագիրը կնպաստի բազմաթիվ բնակարանների, առողջապահական, կրթական, մշակութային և այլ հաստատությունների կողմից էկոլոգիապես մաքուր վառելիքի օգտագործմանը, գազի առկայությունը կնպաստի նաև անտառահատումների, էկոլոգիայի և դրանից բխող խնդիրների լուծմանը: Ծրագրի շրջանակներում շահառուներն ընտրվում են համաձայն Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև 2011 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված փոխըմբռնման հուշագրի:

2014 թվականին Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 42.4 մլն դրամ: Ծրագրի ծախսերի 26.4%-ով կատարումը պայմանավորված է նրանով, որ ընտրված խորհրդատվական կազմակերպությունների իրականացրած ուսումնասիրության հաշվետվությունները Համաշխարհային Բանկի կողմից 2014 թվականին չեն հաստատվել, և վճարումները չեն կատարվել: Ծրագրի տեխնիկատնտեսական ուսումնասիրություն, մրցութային փաստաթղթերի պատրաստում, ինչպես նաև շրջակա մրջավայրի և սոցիալական հարցերի վրա ազդեցության գնահատում իրականացող խորհրդատվական ընկերությունները իրականացրել են համապատասխան պայմանագրով նախատեսված ծառայությունները: Հաշվետու ժամանակահատվածում խորհրդատվական ընկերությանը վճարվել է կանխավճար, ինչպես նաև ծրագրում ներգրավված «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ և «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ աշխատակիցները մասնակցել են մասնագիտական կարողությունների բարձրացմանն ուղղված դասընթացներին: Ծրագրի նպատակն է «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրի նախապատրաստման միջոցառումների իրականացումը, մասնավորապես՝ ծրագրի տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը, շրջակա միջավայրի և սոցիալական հարցերի վրա ազդեցության գնահատումը, գլխավոր կապալառուի ընտրության մրցութային փաստաթղթերի պատրաստումը, ինչպես նաև ծրագիր իրականացնող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարողությունների ամրապնդումը և բարձրացումը:

Հաշվետու տարում *էլեկտրաէներգիայի* դասի ծախսերը կազմել են շուրջ 613.8 մլն դրամ՝ ապահովելով 10.4% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված շուրջ 5.3 մլրդ դրամի միջոցները չօգտագործելու հանգամանքով: Վերջինս պայմանավորված է «Որոտանի ՀԷԿ» ՓԲԸ-ի գույքի առուվաճառքի գործընթացով, որի հետևանքով ծրագրի իրականացումը կասեցվել է:

613.8 մլն դրամը տրամադրվել է գործադիր իշխանության, պետական կառավարման մարմինների պահպանմանը (նախարարությունների աշխատակազմերի մասով)՝ ապահովելով ծրագրի 99.3% կատարողական: Միջոցները հատկացվել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 32.8%-ով կամ 151.6 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ:

Հաշվետու տարում *լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության* ոլորտներին պետական բյուջեից հատկացվել է 6.1 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է և ուղղվել ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայություններին: Ծրագրի շրջանակներում իրականացվում են ՀՀ ընդերքի պահպանման, հաշվառման և գրանցման, դրա վերաբերյալ ձգարիտ տեղեկատվության տրամադրման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.8%-ով:

2014 թվականին տրանսպորտի բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 54.9 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 76.6%-ով: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ տրանսպորտի բնագավառում բյուջետային ծախսերն արձանագրել են 44.9% աճ՝ հիմնականում պայմանավորված ճանապարհային տրանսպորտի ծախսերի աճով:

Ճանապարհային տրանսպորտի դասի ծախսերը կազմել են շուրջ 50.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 80.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 13 ծրագրեր, որոնցից վեցը վարկային ծրագրեր են:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 2.1 մլրդ դրամ: Ծախսերի 81.8% կատարողականը պայմանավորված է նրանով, որ 2014 թվականի ծրագրով նախատեսվում էր վճարել 2013 թվականին ավարտված և շահագործման ընդունված օբյեկտների պահված ետավարտական երաշխիքային գումարները, սակայն կապալառուները 2013 թվականի վերջին ներկայացրել են համապատասխան բանկային երաշխիքները, և պայմանագրի դրույթների համաձայն վճարումը կատարվել է 2013 թվականի դեկտեմբեր ամսին: Ծրագրով նախատեսվում էր նաև հաջորդ տարիների ընթացքում վերականգնման ենթակա ճանապարհների նախագծման պայմանագրի կնքում և վճարում, սակայն վերականգնման ենթակա ճանապարհների ավելի էժան (գրունտային կամ ավազակոպձային) ծածկեր կիրառելու նպատակով Համաշխարհային Բանկի հետ քննարկման և համապատասխան համաձայնություն ստանալու գործընթացի ձգձգման արդյունքում պայմանագիրը նախատեսված ժամկետից ուշ է կնքվել: 2014 թվականին կատարվել է պայմանագրի 45%-ը, իսկ 2015 թվականի առաջին եռամսյակում իրականացվել է պայմանագրի մնացած 55%-ը: Շեղումը մասամբ էլ պայմանավորված է տնտեսմամբ, որն առաջացել է անհարթությունը չափող սարքի ձեռքբերման պայմանագիրն ավելի ցածր գնով կնքելու արդյունքում: Ծրագրի շրջանակներում վերականգնվել և շահագործման են հանձնվել 39.45 կմ ճանապարհահատվածներ, մատակարարվել է ճանապարհների անհարթությունը չափող 1-ին դասի լազերային սարքավորումը, իրականացվում են 2015-2017 թվականների վերականգնման համար ընտրված ճանապարհահատվածների (շուրջ 118 կմ ընդհանուր երկարությամբ) հետազոտման և նախագծման աշխատանքները, ընթացքի մեջ է «Ճանապարհների ֆինանսավորման ուսումնասիրություն» խորհրդատվական ծառայությունների իրականացումը: ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման մայրուղու վերականգնման ծրագիրը, որի հիմնական նպատակն է հիմնանորոգել և վերակառուցել Հայաստանի Հանրապետության կենտրոնը Վրաստանի Հանրապետության հետ կապող, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման 92 կմ ընդհանուր երկարությամբ հիմնական տարանցիկ մայրուղին: Տվյալ ծրագրի ֆինանսավորումն ապահովելու նպատակով համաձայնություն է ձեռք բերվել, որ Եվրոպական Ներդրումային Բանկը կֆինանսավորի ծրագրի գումարի 50%-ը՝ շուրջ 46 մլն եվրո, իսկ Համաշխարհային բանկը ծրագրի ֆինանսավորման համար կհատկացնի շուրջ 19 մլն դոլար:



Մնացած գումարի վերաբերյալ այժմ վարվում են բանակցություններ այլ դոնոր կազմակերպությունների հետ:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված 5.1 մլրդ դրամի դիմաց ծախսվել է 12.7 մլրդ դրամ: Ծրագրի ծախսերը 2.5 անգամ գերազանցել են նախատեսված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ նախորդ տարիների ընթացքում պլանավորված, բայց չկատարված աշխատանքներն ամբողջովին իրականացվել են 2014 թվականի ընթացքում: Ծրագրի շրջանակներում ամբողջությամբ իրականացվել են Տրանշ 1-ի (Երևան-Արտաշատ, Երևան-Աշտարակ հատվածներ) շուրջ 31 կմ ընդհանուր երկարությամբ բետոնե ծածկի աշխատանքները, որից հետո նախատեսվում է երթևեկությունը տեղափոխել աջակողմյան հատված՝ ձախակողմյան հատվածում համապատասխան կահավորման աշխատանքները, ինչպես նաև արձանագրված թրությունների վերացումը և ըստ անհրաժեշտության որոշ աշխատանքների վերակատարումն իրականացնելու համար, մեկնարկել են լաբորատոր փորձարկումները և թեստավորումները, իրականացվում են ենթակառուցվածքների, արտաքին լուսավորության, կահավորման և այլ աշխատանքները: Տրանշ 1-ով ծրագրի սկզբից կապալառուին վճարվել է շուրջ 46.0 մլն ԱՄՆ դոլար:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրի 2-րդ տրանշի շրջանակներում ծախսվել է ավելի քան 8.4 մլրդ դրամ: Ծրագրի 58.4% կատարողականը պայմանավորված է նրանով, որ ըստ Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) վճարումների ժամանակացույցի և ընթացակարգերի՝ ԱԶԲ-ն տվյալ տարվա վճարումներն իրականացնում է մինչև դեկտեմբերի 8-ը ներառյալ ներկայացված մասհանման հայտերի համար, իսկ դեկտեմբերի 8-ից հետո ներկայացվածների վճարումներն իրականացվում են հաջորդ տարվա հունվարին: Շեղումը պայմանավորված է նաև նրանով, որ տրանշ 2 ծրագրով իրականացվում է նաև հողերի օտարման և տարաբնակեցման ծրագիր՝ շինհրապարակը տրամադրվում է կապալառուին առանձին ենթահատվածներով, ըստ երրորդ կողմի իրավունքներից ազատման փաստի: Ծրագրի՝ Աշտարակ-Թալին հատվածի շուրջ 42 կմ շինարարական աշխատանքների պայմանագրային գինը 179.6 մլն ԱՄՆ դոլար է, որից 18 մլն դոլարի աշխատանքներն արդեն իրականացվել են: Ծրագրով նախատեսվում է բետոնե ծածկի աշխատանքները մեկնարկել 2015 թվականից, իսկ աշխատանքների վերջնական ավարտի ժամկետն է 2016 թվականի տարեվերջը: Ծրագրի սկզբից կապալառուին վճարվել է 37.5 մլն ԱՄՆ դոլար: Ընդհանուր առմամբ Տրանշ 1-ի և Տրանշ 2-ի շրջանակներում ծրագրի սկզբից փաստացի իրականացված աշխատանքների արժեքը կազմել է 65.0 մլն ԱՄՆ դոլար, որի դիմաց վճարվել է 42.5 մլն ԱՄՆ դոլար և տրամադրվել է 41.0 մլն ԱՄՆ դոլարի կանխավճար, ընդամենը՝ 83.5 մլն ԱՄՆ դոլար:

Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորության) շրջանակներում ծախսվել է շուրջ 4.8 մլրդ դրամ: Ծրագրի ծախսերի 80.4% կատարողականը պայմանավորված է խորհրդատվական ընկերությունների

ընտրության, նախագծման, հողի օտարման և տարաբնակեցման շրջանակների փաստաթղթի հաստատմանն առնչվող առանձին սկզբունքային հարցերի վերաբերյալ առկա անհամաձայնությունների, հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի կազմման և փոխհատուցումների վճարման ժամկետների հետաձգմամբ: Ծրագրի շրջանակներում կատարվել են խորհրդատվական ծառայությունների համար վճարումներ, հողի օտարման և տարաբնակեցման աշխատանքներ, և վճարվել է աշխատավարձ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ճանապարհների բարելավման երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 1.6 մլն դրամ կամ նախատեսվածի 97.5%-ը: Ծրագիրը 2014 թվականին ավարտվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են շուրջ 190 կմ ճանապարհների վերականգնման, վերոնշյալ ճանապարհների նախագծերի, բնապահպանական և սոցիալական կառավարման համապատասխան փաստաթղթերի մշակման ծառայությունների ձեռքբերման, տեխնիկական հսկողության աշխատանքներ: 2014 թվականին ծրագրով նախատեսվում էր կատարել ֆինանսական աուդիտ և վերջինիս դիմաց վճարումը: Աշխատանքներն ավարտվել են, կատարվել է համապատասխան վճարում:

Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն» անցման կետի կամրջի վերակառուցման վարկային ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 1.3 մլն դրամ կամ բյուջեով հատկացված գումարի 0.1%-ը, ինչը պայմանավորված է համաձայնագրի` նախատեսված ժամկետից ուշ ստորագրմամբ: Ծրագրի երկկողմ համակարգման, ինչպես նաև տեխնիկական և ընթացակարգային խնդիրների հստակեցման նպատակով հայկական կողմը նախապատրաստել է «Հյուսիսային միջանցքի արդիականացման ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև պետական սահմանի Բագրատաշեն անցման կետի տարածքում նոր կամրջի կառուցման վերաբերյալ» համաձայնագրի նախագիծը, որը ստորագրվել է 2014 թվականի դեկտեմբերի վերջին: Միջոցներն օգտագործվել են պահպանման ծախսերի, այդ թվում` խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման և գրասենյակային տարածքի վարձակալության համար:

Եվրոպական ներդրումային բանկի և Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման վարկային և դրամաշնորհային ծրագրերի 3-րդ տրանշի շրջանակներում նախատեսված ավելի քան 10.1 մլրդ դրամի միջոցները (որից 3.9 մլրդ դրամը Եվրոպական ներդրումային բանկի վարկային միջոցները, 2.5 մլրդ դրամը` դրամաշնորհային միջոցները և 3.8 մլրդ դրամը` Ասիական զարգացման բանկի վարկային միջոցները) չեն օգտագործվել, ինչը պայմանավորված է նրանով, որ ծրագրերը ուշ են հաստատվել, և դրանց իրականացման համար պայմանագրերը նախատեսված ժամկետից ուշ են կնքվել: Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) հետ վարկային համաձայնագիրը, որի պայման է նաև դրամաշնորհը, ստորագրվել է Երևանում` 2013 թվականի նոյեմբերի 07-ին և Լյուքսեմբուրգում` նոյեմբերի 18-ին, իսկ ՀՀ ԱԺ կողմից վավերացվել է 2014 թվականի հունիսի 10-ին, որից հետո ուժի մեջ է մտել օգոստոսի 27-ին: Ասիական զարգացման բանկի հետ վարկային համաձայնագիրը

ստորագրվել է 2014 թվականի մարտի 11-ին, իսկ ՀՀ ԱԺ կողմից վավերացվել է հունիսի 10-ին, որից հետո ուժի մեջ է մտել հուլիսի 24-ին: Նշված ծրագրերի շրջանակներում նախատեսվում է հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացում, որի նպատակով թվով 1017 հողերի նկատմամբ ձանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ: Ծինարարական աշխատանքների նախագծերի համալիր փորձաքննության եզրակացությունը հաստատվել է ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 50-21 արձանագրային որոշմամբ: Ծրագրերի շրջանակներում համապատասխան ծախսերը նախատեսվում է կատարել 2015 թվականին:

Հաշվետու տարում տրանսպորտի բնագավառում ընդգրկված՝ «Համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրում» ծրագրի գծով արձանագրվել է 100% կատարողական՝ կազմելով շուրջ 3.3 մլրդ դրամ, որն օգտագործվել է Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ձաքալցման աշխատանքների համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

«Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ին պետական աջակցության ծախսերը կազմել են շուրջ 26.4 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Հաշվետու տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության նպատակով «Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ի կողմից կատարվել են ձանապարհային քարտեզով նախատեսված տրանսպորտի բնագավառի բոլոր միջոցառումները, մշակվել և ՀՀ ԱԺ է ներկայացվել օրենսդրական փաթեթ, որով կարգավորվում է ծանրաքաշ և մեծ եզրաչափերով բեռնատարների երթևեկությունը՝ նպատակ ունենալով բարելավել ձանապարհների վիճակը և կրճատել ձանապարհաշինության ծախսերը, մշակվել է օրենսդրական փաթեթ (որի ընդունման արդյունքում դաշտը կդառնա լիարժեք վերահսկելի և առավել անվտանգ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով շահագործվող տրանսպորտային միջոցների անվտանգությունը բարձրացնելու նպատակով, ընդունվել է Հայաստանի Հանրապետության տրանսպորտային անվտանգության ապահովման ազգային ռազմավարության դրույթների իրականացումն ապահովող 2014-2017 թվականների միջոցառումների ծրագիրը, որի հիման վրա բոլոր պետական կառավարման մարմիններն իրականացնում են տրանսպորտային պատահարներից վնասվածքների և մահացության մակարդակի նվազեցման, փոխադրումների բնագավառում տրանսպորտային ծախսերի կրճատման, հասարակությանը բարձրորակ տրանսպորտային ծառայություններ մատուցելու, արտակարգ իրավիճակներով պայմանավորված քաղաքական և տնտեսական ռիսկերի կառավարման միջոցառումներ, օրենսդրական կարգավորում է ստացել տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների բնագավառը: Արդյունքում ֆիզիկական անձանց իրավունք է տրվել տաքսի ծառայություն մատուցել, կրճատվել են լրացուցիչ ծախսերը և վարչարարությունը, հանվել է դեղին հիմնագույնի համարանիշը, միաժամանակ բարձրացվել են ուղևորների շահերի պաշտպանությանը ներկայացվող պահանջները: Նախորդ տարվա համեմատ «Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ին պետական աջակցության ծախսերը չեն փոփոխվել:

2014 թվականին ավտոձանապարհների պահպանման և շահագործման ծախսերը կազմել են շուրջ 5.8 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 99.3%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 3842 կմ ձանապարհների ձմեռային և շուրջ 2929 կմ ձանապարհների ամառային

պահպանման աշխատանքները: Բացի դրանից, 16 տարածաշրջաններում տեղադրվել են 1966 հատ նոր ճանապարհային նշաններ, նշագծվել է 1826 կմ ճանապարհ, պահպանվել են 482 կմ արգելափակոցներ, որից շուրջ 33 կմ-ը հիմնանորոգվել է, տեղադրվել են 60 հազար հատ նոր տիպի լուսանդրադարձիչ, իրականացվել են 3 թունելների և 5 կամուրջների պահպանումը և շահագործումը: Նախորդ տարվա համեմատ ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծախսերն աճել են 5.4%-ով կամ 296 մլն դրամով՝ պայմանավորված ճանապարհների պահպանման և շահագործման ծավալների ավելացմամբ:

Հաշվետու տարվա պետական բյուջեից շուրջ 12.8 մլրդ դրամ է տրամադրվել պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգմանը՝ ապահովելով նախատեսված ծախսերի 98.2%-ը՝ պայմանավորված մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են թվով 32 օբյեկտների հիմնանորոգման աշխատանքներ, որոնցից 31-ում՝ 62.2 կմ երկարությամբ ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են: Անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով Վազաշեն-Պառավաքար 3.2 կմ երկարությամբ ճանապարհի կառուցման աշխատանքները դեռևս չեն ավարտվել: Բացի այդ, Շիրակի մարզում ավագակոպձային ծածկով իրականացվել է նաև 5.3 կմ ավտոճանապարհի վերանորոգում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.3 անգամ կամ շուրջ 9 մլրդ դրամով՝ պայմանավորված ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ծավալով: 2014 թվականին հիմնանորոգվել է 62.2 կմ ճանապարհ՝ նախորդ տարվա 32.9 կմ-ի դիմաց:

Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման նպատակով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 724 մլն դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 94.8%-ը, ինչը պայմանավորված է պայմանագրի լուծարումից մինչև նոր պայմանագրերի կնքման ժամանակահատվածում աշխատանքները չկատարելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության ուղղություններով աշխատանքներ են կատարվել հանրապետության բոլոր մարզերում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.9%-ով կամ 13.9 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքների ծավալների նվազմամբ:

Հաշվետու տարում տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծախսերը կատարվել են 100%-ով՝ կազմելով 43.9 մլն դրամ: Ծրագրի տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ենթածրագրի շրջանակներում վերականգնվել է 1 կամուրջ, այլ ճանապարհների հիմնանորոգման ենթածրագրի շրջանակներում հիմնանորոգվել է Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի Սոթք-Քարվաճառ խաչմերուկի 1-ին տեղամասի 13.05 կմ երկարությամբ հատվածը, աշխատանքներ են իրականացվել նաև նախագծման և տեխնիկական հսկողության ենթածրագրի շրջանակներում: Ծրագրով նախատեսված թվով 7 ճանապարհահատվածներից մեկի հիմնանորոգումն ավարտված է: Նախորդ տարվա համեմատ տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծախսերը նվազել են 62.3%-ով կամ շուրջ 72.7 մլն դրամով՝ պայմանավորված հիմնանորոգման ենթակա օբյեկտների քանակի կրճատմամբ:

Հաշվետու տարում ՀՀ-ում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆի) համակարգի ստեղծման և ներդրման ծախսերը կազմել են 27.8 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են բեռնատար տրանսպորտային միջոցների վրա հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆ) համակարգի անընդհատ և անխափան աշխատանքները, տրամադրվել է 66 տախոգրաֆի քարտ՝ նախորդ տարվա 43-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 10.4%-ով կամ 2.6 մլն դրամով, որը պայմանավորված է եվրոյի փոխարժեքի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում *երկաթուղային տրանսպորտի* դասի ծախսերը կազմել են 535.4 մլն դրամ և ապահովել 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերն աճել են 43.7%-ով կամ 162.8 մլն դրամով, որը պայմանավորված է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց տրամադրված սուբսիդիայի աճով: Նշված ծախսերը կազմել են 496.5 մլն դրամ, որոնք կատարվել են նախատեսված ծավալով: Հայաստանի Հանրապետության և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի միջև կնքված կոնցեսիոն պայմանագրի համաձայն կոնցեդենտը սուբսիդավորում է (մասնակի փոխհատուցում է) համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումների կոնցեսիոնների տարեկան վնասը՝ անկախ աուդիտորի կողմից այդ վնասների հաստատված հաշվարկների ներկայացման պարագայում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 51%-ով կամ 167.7 մլն դրամով, որը պայմանավորված է ներդրումների ծավալի ավելացման հետևանքով ուղևորափոխադրումներից ստացված վնասի աճով:

Հաշվետու տարում 38.9 մլն դրամի սուբսիդիա է հատկացվել «Երկաթուղու շինարարություն» ՓԲԸ-ին՝ կազմելով ծրագրված հատկացումների 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 11.1%-ով կամ 4.9 մլն դրամով, որը պայմանավորված է աշխատավարձի գծով հավելավճարի ծախսերի կրճատմամբ: Ծրագրի շրջանակներում 2013 թվականի հունվարի 18-ին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի և «ՌԱՍԻԱ» ՖԶԷ-ի միջև կնքվել է Փոխընթերցման Հուշագիր՝ երկու երկրները իրար կապող երկաթուղու տեխնիկատնտեսական հիմնավորման, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, նախագծման և կառուցման նախապատրաստական փուլի վերաբերյալ: Կողմերը համագործակցելու են տեխնիկական, առևտրային, տնտեսական, սոցիալական, բնապահպանական, ինչպես նաև իրագործելիությանը և նախագծմանը վերաբերող այլ տեղեկատվության փոխանակման հարցում, որպեսզի Կոնցեսիոններին հնարավորություն ընձեռվի կազմել Հայաստանի Հարավային երկաթուղու իրագործելիության լիարժեք ուսումնասիրություն: Ծրագրի իրականացման նպատակով ավարտվել է տեխնիկատնտեսական հիմնավորման նախապատրաստումը, և «ՌԱՍԻԱ» ՖԶԷ-ի կողմից ներկայացվել են Իրան-Հայաստան երկաթգծի շինարարության ծրագրի և տեխնիկատնտեսական հիմնավորման հայերեն և ռուսերեն տարբերակները: Ներկայացված տարբերակով ծրագրի ինքնաձախսածածկումը կտևի մոտ 24 տարի՝ 3.5 մլրդ դոլար արժողությամբ, իսկ երկաթգծի շանարարությունը տևելու է 6 տարի: Երկաթգծը, որի երկարությունը կազմելու է 305 կմ, պետք է ունենա 19.6 կմ ընդհանուր երկարությամբ 86 կամուրջ և 102.3 կմ ընդհանուր երկարությամբ 60 թունել:

2014 թվականին *օդային տրանսպորտի* գծով պետական բյուջեի ծախսերում արձանագրվել է 81.7% կատարողական՝ կազմելով շուրջ 568.5 մլն դրամ: Շեղումը հիմնականում առաջացել է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության արտաբյուջետային միջոցներով իրականացվող ծախսերի գծով, որոնք 27.5%-ով գիջել են ծրագիրը՝ կազմելով 282.4 մլն դրամ, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ անհատ անձանց և կազմակերպություններին, հիմնականում՝ մշակույթի բնագավառի ներկայացուցիչներին, բարեգործական նպատակով նախատեսված օգնությունները նախատեսվածից պակաս են կազմել, ինչպես նաև նախատեսվածից քիչ միջոցներ են հատկացվել «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ին ուսումնավարժանքային թռիչքների համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.7%-ով կամ 4.7 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ընթացիկ դրամաշնորհների աճով:

192.1 մլն դրամ է ծախսվել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պահպանման համար՝ ապահովելով ծրագրի 97.7%-ը, որը տնտեսումների արդյունք է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 42.2%-ով կամ 57 մլն դրամով՝ պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Հաշվետու տարում մարդասիրական բեռներ փոխադրող օտարերկրյա օդանավերի աերոնավիգացիոն սպասարկման, թռիչք-վայրէջքի, օդանավերի կանգառի և վերգետնյա սպասարկումների ու մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են ավելի քան 9.7 մլն դրամ՝ ապահովելով 97.3% կատարողական: Ծրագիրը նախատեսվել է «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության ու Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության կողմից համատեղ իրականացվող բարեգործական ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ մարդասիրական օդանավերի սպասարկման դիմաց փոխհատուցումների իրականացման համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.7%-ով:

ՀՀ օդանավակայաններում ՌԴ զորամիավորումների օդանավերի սպասարկման և մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են ավելի քան 84.2 մլն դրամ՝ ապահովելով 84.2% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 23.5%-ով կամ 25.9 մլն դրամով:

2014 թվականին *խողովակաշարային և այլ տրանսպորտի* գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 3.1 մլրդ դրամ՝ ապահովելով 39.9% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ վարկային ծրագրի և վերջինիս գծով Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցները՝ համապատասխանաբար 1.7 մլրդ դրամի և 1.4 մլրդ դրամի չափով, չօգտագործելու հանգամանքով, որը պայմանավորված է միջազգային պայմանագրերի բացակայությամբ, ինչպես նաև Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցության մասով նախատեսված միջոցների (այդ թվում՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման) 5.5% օգտագործման հանգամանքով: Ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքների համար պայմանագրեր չեն կնքվել, ինչի արդյունքում նախատեսված շուրջ 1.7 մլրդ դրամի դիմաց ծախսվել է

92.3 մլն դրամ: Գումարն ուղղվել է ջրահեռացման պոմպային համակարգերի արդիականացման աշխատանքներին:

Խողովակաշարային և այլ տրանսպորտի դասում ընդգրկված երկու ծրագրերը կատարվել են նախատեսված ծավալով: Մասնավորապես՝ 2.5 մլրդ դրամ սուբսիդիա է տրամադրվել Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.3%-ով կամ 56.5 մլն դրամով, որը պայմանավորված է «Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ նվազագույն աշխատավարձի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

466.9 մլն դրամ սուբվենցիա է տրամադրվել Երևանի քաղաքապետարանին՝ վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայությունների շրջանակներում: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 14.3%-ով կամ 58.5 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

2014 թվականին *կապի* ոլորտին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 395.7 մլն դրամ, որն ամբողջությամբ ծախսվել է և ուղղվել հեռահաղորդակցության ու կապի կանոնակարգման ծառայությունների ձեռքբերմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ հաճախականությունների բաշխումների աղյուսակի կազմման, ռադիոէթերի մոնիթորինգի, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախականության սարքավորումների տեղադրման, փորձաքննության և չափումների անցկացման, կապի շինարարական աշխատանքների տեխնիկական նորմերին համապատասխանության ընդունման, եթերի խանգարման աղբյուրների հայտնաբերման և վերացման գործառույթները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.4%-ով կամ 16.6 մլն դրամով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի և էլեկտրաէներգիայի սակագնի աճով:

2014 թվականի ընթացքում «Այլ բնագավառներ» խմբի ծախսերը կազմել են 59.8 մլն դրամ՝ ապահովելով 79.8% կատարողական: Միջոցներն ուղղվել են զբոսաշրջության աջակցության ծառայություններին: Ծրագրից շեղումը պայմանավորված է նախատեսվածից ավելի ցածր գներով ապրանքների և ծառայությունների ձեռք բերման հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 30.1%-ով կամ 13.8 մլն դրամով, որը պայմանավորված է զբոսաշրջային միջազգային ցուցահանդեսներին Հայաստանի մասնակցությամբ, հանրապետության տարածքում կազմակերպվող փառատոնների քանակի ավելացմամբ, Հայաստանի և Երևանի քարտեզների 2000 օրինակով ավել տպագրությամբ, ինչպես նաև Երևանում՝ տարածաշրջանում միակ զբոսավարների ուսումնական միջազգային կենտրոնի բացմամբ:

2014 թվականի ընթացքում *տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների* շրջանակներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 122.5 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ նշված խմբի ծախսերն աճել են 3.6%-ով կամ 4.2 մլն դրամով՝ պայմանավորված պետական կարիքների համար ապրանքների, աշխատանքների (ծառայությունների) կողմնորոշիչ գների մեթոդաբանական, վերլուծական և տեղեկատվական ծառայությունների ծախսերի աճով: Խմբում ընդգրկված են 2

ծրագրեր: Մասնավորապես՝ տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններին հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 42.4 մլն դրամ: Ծրագիրն իրականացվում է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որի գործունեությունն ուղղված է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տեխնաժին վթարների կանխարգելմանը, դրանց հետևանքների վերացմանը, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցմանը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.2%-ով:

Պետական կարիքների համար ապրանքների, աշխատանքների (ծառայությունների) կողմնորոշիչ գների մեթոդաբանական, վերլուծական և տեղեկատվական ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 80.1 մլն դրամ: Ծրագիրը նախատեսված է պետական կարիքների համար ապրանքների, ծառայությունների և աշխատանքների կողմնորոշիչ գների մեթոդաբանական, վերլուծական և տեղեկատվական ծառայությունների արդյունավետ իրականացմանը: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 6.9%-ով՝ պայմանավորված աշխատավարձի բարձրացմամբ:

2014 թվականին այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների գծով փաստացի ցուցանիշը կազմել է 2.6 մլրդ դրամ՝ 22.7%-ով գերազանցելով ծրագիրը, որը պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի երրորդ լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրի կատարողականով և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ծրագրվածից պակաս մուտքերով: Խմբում ընդգրկված ծրագրերի գծով կատարվել են 4.2 մլրդ դրամի ծախսեր՝ 8.1%-ով գերազանցելով ծրագիրը, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվել է 1.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 90.1%-ը: Նախորդ տարվա համեմատ այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների գծով ծախսերը նվազել են 46%-ով՝ հիմնականում պայմանավորված արտաքին աջակցությամբ իրականացվող ծախսերի և ՀՀ պետական բյուջեից հարկերի ու տուրքերի փոխհատուցման ծախսերի նվազմամբ: Հաշվետու տարում տվյալ խմբում կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 10 ծրագրեր, որոնցից երկուսը վարկային ծրագրեր են:

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ վարկային ծրագրի երրորդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 1.8 մլրդ դրամի ծախսեր՝ 25.5%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը, որը պայմանավորված է իրականացված շինարարական աշխատանքների՝ նախատեսվածից ավել ծավալներով (նախատեսվել է ավարտել շինարարական աշխատանքները 22 օբյեկտներում, ավարտվել է 24 օբյեկտներում): Ծրագիրը սկսվել է 2012 թվականին և ավարտվելու է 2015 թվականին: Ծրագրի նպատակն է բարելավել աղքատ համայնքների և ամենախոցելի խմբերի համար համայնքային ենթակառուցվածքների որակն ու մատչելիությունը՝ ի արձագանք բացահայտվող կարիքների: Ծրագիրն ընդգրկում է հանրակրթական, հատուկ, արվեստի, երաժշտական և մարզական դպրոցների, մանկապարտեզների, մանկատների, ծերանոցների, համայնքի հասարակական կենտրոնների, ջրային տնտեսության օբյեկտների և



առողջապահական հիմնարկների վերակառուցում և վերանորոգում, նախատեսված է նաև կահույքի ձեռքբերում դպրոցների, մանկապարտեզների և համայնքային կենտրոնների համար: Ծրագրի շրջանակներում սկսվել են շինարարական աշխատանքները 9 նոր օբյեկտներում, ավարտվել՝ 24 օբյեկտներում, դպրոցների, մանկապարտեզների, համայնքային և առողջապահական կենտրոնների համար ձեռք է բերվել կահույք, մշակվել է 10 նոր նախագիծ, բոլոր ընթացող շինարարական աշխատանքները վերահսկվել են տեխնիկական վերահսկիչների կողմից, ֆինանսավորվել են գրասենյակի գործառնական ծախսերը:

Բելգիական Քեյ Բի Սի Էն Վի բանկի աջակցությամբ իրականացվող ռադիոհիզոտոպների արտադրության արտադրամասի ստեղծման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 374.6 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 7-ի «Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոն ստեղծելու ծրագրին հավանություն տալու, «Ռադիոհիզոտոպների արտադրության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 19-ի N 310-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1424-Ն որոշմամբ հավանություն է տրվել Հայաստանի Հանրապետությունում ռադիոհիզոտոպների արտադրության համալիրից, պոզիտրոնային էմիսիոն տոմոգրաֆներով համալրված ավտորոշիչ կենտրոնից և ուռուցքաբանական կլինիկայից բաղկացած ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի ստեղծման ծրագրին: Նույն որոշմամբ Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի (այսուհետ՝ ՈՒԳՀԿ) ստեղծման ծրագրի շրջանակում հիմնադրվել է «Ռադիոհիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ն, որի հարյուր տոկոս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը (ՀՀ կառավարության 15.01.2015թ. N 15-Ն որոշմամբ «Ռադիոհիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ հարյուր տոկոս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահվել է ՀՀ առողջապահության նախարարությանը): ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 807-Ն որոշմամբ հավանություն է տրվել ՈՒԳՀԿ ստեղծման նորացված ծրագրին, որտեղ ներկայացված է վերոնշյալ ծրագրի միասնական եռափուլ իրականացման մոտեցումը, համաձայն որի ծրագրի առաջին փուլում ստեղծվելու է ռադիոհիզոտոպների արտադրության կենտրոն՝ որպես ՈՒԳՀԿ բաղադրիչներից մեկը: ՈՒԳՀԿ ծրագրի երկրորդ փուլով նախատեսվում է ստեղծել ճառագայթային բուժման կենտրոն (Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային ծրագրի շրջանակում), և երրորդ փուլում կառուցվելու է ներհիվանդանոցային վիրաբուժության և քիմիաթերապիայի կենտրոն: Ծրագրի շրջանակներում իրականացվում են ռադիոհիզոտոպների արտադրության արտադրամասի ստեղծման աշխատանքները, համապատասխան սարքավորումներն արդեն իսկ ներկրվել են Հայաստանի Հանրապետություն: 2014 թվականի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում իրականացվել են ռադիոհիզոտոպների արտադրության արտադրամասի համար ներմուծված սարքավորումների մաքսազերծման հետ կապված աշխատանքները, ավարտվել են մասնաշենքի կառուցման աշխատանքները, իսկ ներքին հարդարման և համապատասխան ինժեներական համակարգերի

ծեռքբերման, ինչպես նաև սարքավորումների տեղակայման և մոնտաժման աշխատանքները նախատեսվում է ավարտել 2015 թվականի ընթացքում, որից հետո կենտրոնը կսկսի իր գործունեությունը:

Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության գծով նախատեսված 300 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.5%-ով կամ 1.5 մլն դրամով:

Պետական ռեզերվների գործակալության համակարգի հիմնարկների պահպանման ծախսերը ևս ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 211.2 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 31.6%-ով կամ 50.7 մլն դրամով:

Հաշվետու տարում նյութական ռեսուրսների ՀՀ պետական պահուստի ձևավորման ու պահպանման ծախսերը կազմել են 5.2 մլն դրամ կամ նախատեսվածի 20.2%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 79%-ով:

458.2 մլն դրամ են կազմել գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը՝ 93.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցները հատկացվել են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 32.1%-ով կամ 111.4 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Պետական պահուստից նյութական արժեքների թարմացման, փոխարինման, փոխառման և ապամարագրման գործառնությունների գծով 2014 թվականին ոչ ֆինանսական ակտիվների օտարումից նախատեսված 9.5 մլն դրամի արտաբյուջետային միջոցներն ամբողջությամբ ստացվել են:

Ծախսերի այս խմբում ներառվել են «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն կատարված հատկացումները: ՀՀ պետական բյուջեից առանց սահմանափակման իրականացվել են ավելի քան 1 մլրդ դրամի ծախսեր: Նշված գումարից 808.5 մլն դրամը կազմել են պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գույք առանձնացնելիս գույքն ստացող պետական կառավարչական հիմնարկի կողմից մատակարարին վճարման ենթակա ԱԱՀ-ի պարտավորության կատարման գծով ծախսերը, 240 մլն դրամը՝ ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դատարան տրվող հայցադիմումների, դիմումների և գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրված փաստաթղթերի պատճենների տրամադրման ծախսերը:

### **Շրջակա միջավայրի պաշտպանություն**

2014 թվականին շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 4.7 մլրդ դրամ կամ ծրագրով նախատեսվածի 94.1%-ը: Շեղումը

հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանական դրամաշնորհային ծրագրի և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող օժանդակության ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական կառավարումը, ներառումը և թափանցիկությունն ապահովելու նպատակով ԻԶՀ-ի դրամաշնորհային ծրագրի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ 2014 թվականի ծախսերն աճել են 1.6%-ով կամ 71.6 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի աճով:

Հաշվետու տարում *աղբահանության* գծով նախատեսված 48.3 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ և տրամադրվել է ռադիոակտիվ թափոնների վնասագերծման ծառայությունների ձեռքբերմանը, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 54.8%-ով կամ 17.1 մլն դրամով: Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների նպատակն է միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրումը, ուսումնասիրումը, վնասագերծումը, պահպանումը և թաղումը՝ ըստ առաջացված և հայտնաբերված թափոնների, ինչպես նաև մարդկանց և շրջակա միջավայրի պաշտպանությունը իննացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից:

2014 թվականին *օդի աղտոտման դեմ պայքարի* դասի ծրագրերին ուղղվել է շուրջ 149.9 մլն դրամ՝ 100%-ով կատարելով տարեկան ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ օդի աղտոտման դեմ պայքարի դասի ծախսերն ավելացել են 15.8%-ով՝ հիմնականում պայմանավորված 2014 թվականի հուլիսի 1-ից աշխատավարձերի բարձրացման հանգամանքով: Հատկացված գումարից 14.1 մլն դրամը թափոնների ուսումնասիրության ծառայությունների ֆինանսավորման նպատակով տրամադրվել է «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ին, որն աջակցություն է ցուցաբերել թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման աշխատանքներին, իրականացրել է թափոնների գոյացման, վերամշակման ու օգտագործման օբյեկտների և թափոնների հեռացման վայրերի ուսումնասիրում, թափոնների էկոլոգիապես անվտանգ ոչնչացման, օգտահանման և վնասագերծման, ինչպես նաև սակավաթափոն և անթափոն տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվության հավաքում: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերն ավելացել են 19.9%-ով: Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի իրականացմանն ուղղվել է 135.7 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2014 թվականին ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է մակերևութային ջրերի մուշտաման 131 դիտակետում, որոնք ընդգրկում են հանրապետության մեծ և միջին մեծության մոտ 40 գետ, 6 ջրամբար և Սևանա լիճը: Գետերի ջրերի որակի գնահատումը կատարվել է ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերի համաձայն, իսկ Սևանա լճի, ջրամբարների և Արաքս գետի աղտոտվածությունը գնահատվել է ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների կիրառմամբ:

Լաբորատոր անալիզների ստուգաճշտման նպատակով ՊՈԱԿ-ը 2014 թվականի ապրիլին մասնակցել է Սլովակիայի Ջրերի ազգային ռեֆերենս լաբորատորիայի կողմից կազմակերպվող

միջլաբորատոր ստուգաճշտմանը՝ ստանալով քիմիական ցուցանիշների անալիզի ճշգրտությունը հաստատող սերտիֆիկատներ: Նախորդ տարվա համեմատ ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի ծախսերն աճել են 15.4%-ով:

Կենսաբազմազանության և բնության պաշտպանության դասի ծրագրերին ուղղվել է 2.8 մլրդ դրամ՝ 100.2%-ով կատարելով տարեկան ծրագիրը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է Աբու-Դաբիի Ջարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման վարկային ծրագրի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ կենսաբազմազանության և բնության պաշտպանության խմբի ծախսերում արձանագրվել է ծախսերի 10.7%-ով նվազում՝ հիմնականում պայմանավորված վերոհիշյալ վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերով: Բացի այդ, 2014 թվականի ընթացքում կենսաբազմազանության և բնության պաշտպանության դասի երկու ծրագրերի՝ «Շիկահող» պետական արգելոցի, «Սոսիների պուրակ» ու «Ջանգեզուր» պետական արգելավայրերի պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայությունների» և ««Արևիկ» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայությունների» գծով հատկացումներ չեն եղել՝ պայմանավորված նրանով, որ ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 1465-Ն որոշմամբ «Շիկահող» պետական արգելոց» և «Արևիկ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ները միաձուլվել են «Ջանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի, որը 2014 թվականին ֆինանսավորվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից:

2014 թվականին ձկան պաշարների համալրման ծառայությունների ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով 60 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը չեն փոփոխվել: Ծրագրի շրջանակներում 2014 թվականին Սևանա լիճ է բաց թողնվել ամառային իշխանի 200.0 հազ. հատ (3 և ավելի գրամ) և գեղարքունիի 166.7 հազ. հատ (5 և ավելի գրամ) մանրածուկ:

Սևանա լճի ջրածածկ անտառատնկարկների մաքրման ծառայություններին ուղղվել է 125.4 մլն դրամ՝ 100%-ով կատարելով ծրագիրը: 2014 թվականին ծրագրի շրջանակներում Նորատուսի (17 հա), Մարտունու (34.2 հա) և Վարդենիսի (98.8 հա) տարածաշրջաններում իրականացվել են 150 հա տարածքի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծախսերը կազմել են շուրջ 7.5 մլն դրամ՝ արձանագրելով 97.7% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում 2014 թվականին Սևանա լճում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Սևանա լճի ձկների արդի վիճակի, տարածական տեղաբաշխման, կենսաբանական և էկոլոգիական հատկանիշների բացահայտում,
- Սևանա լճի ջրհավաք ավազանի գետերում էնդեմիկ ձկնատեսակների կենսաբանական տվյալների, բնական ձվադրավայրերի ուսումնասիրություն, դրանց առկա վիճակի գնահատում, վերականգնման ուղիների մշակում և էկոլոգիական ու տնտեսական հիմնավորում:

Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերն աճել են 12.9%-ով, ինչը պայմանավորված է 2014 թվականին նախատեսված աշխատանքների ծավալների ավելացմամբ:

2014 թվականին «Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացման համար նախատեսված 225.3 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Սևան» ազգային պարկի պահպանությանը և տարածքների արդյունավետ օգտագործմանը նպատակաուղղված միջոցառումներ և ծրագրեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.1%-ով, ինչը պայմանավորված է ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 29-ի N 591-Ն որոշմամբ հարկային պարտավորությունների մարման համար միջոցների տրամադրման հանգամանքով:

«Դիլիջան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացման համար պետական բյուջեով նախատեսված 93.7 մլն դրամը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Դիլիջան» ազգային պարկի պահպանությանը և տարածքների արդյունավետ օգտագործմանը նպատակաուղղված, ինչպես նաև գիտական ուսումնասիրությունների գծով համապատասխան միջոցառումներ և ծրագրեր: «Դիլիջան» ազգային պարկում հաշվետու տարում իրականացված անտառտնտեսական աշխատանքների շրջանակներում տնկվել է 5.0 հա անտառ, կատարվել՝ 3.0 հա վրա անտառի լրացում, 46.0 հա վրա անտառի միանվազ խնամք, 450.0 կգ անտառային սերմերի մթերում և 1.0 հա անտառի ցանքս: Պահպանության ռեժիմն ուժեղացնելու նպատակով կառուցվել է 10 նոր ուղեփակոց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 19.5%-ով, ինչը պայմանավորված է 2014 թվականի հուլիսի 1-ից աշխատավարձերի բարձրացմամբ:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող ԲՀՊ (բնության հատուկ պահպանվող) տարածքների պահպանության, տարածքներում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայությունների գծով հատկացվել է 109.8 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2014 թվականին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինման ներքո գտնվող ԲՀՊ տարածքներում կատարվել են ծրագրային աշխատանքներ, այդ թվում՝ «Էրեբունի» պետական արգելոցի և «Որդան կարմիր» պետական արգելավայրի, «Ջրվեժ» անտառապարկի և 4 դենդրոպարկերի տարածքներում կատարվել են պահպանության, անտառտնտեսական և գիտահետազոտական աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 35.5%-ով՝ պայմանավորված 2014 թվականի հուլիսի 1-ից աշխատավարձերի բարձրացմամբ:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի պահպանության, գիտական ուսումնասիրությունների կատարման ծառայությունների իրականացման նպատակով հատկացվել է 99.0 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Հաշվետու տարում «Խոսրովի անտառ» պետական արգելոցում պետական արգելավայրերում էկոտուրիզմի զարգացման նպատակով մշակվել և իրականացվել են համապատասխան ծրագրեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերն աճել են 25.2%-ով՝ պայմանավորված 2014 թվականի հուլիսի 1-ից աշխատավարձերի բարձրացմամբ:

Աբու-Դաբիի Ջարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման վարկային ծրագրի շրջանակներում իրականացվել են ավելի քան 2 մլրդ դրամի ծախսեր՝ ապահովելով ծրագրի 100.3% կատարողական: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է կատարված փաստացի աշխատանքների ծավալով: Հայաստանի Հանրապետության և Աբու Դաբիի զարգացման հիմնադրամի միջև Արփա-Սևան թունելի վերականգնման ծրագրի ֆինանսավորման վարկային համաձայնագիրը կնքվել է 2007 թվականի դեկտեմբերի 12-ին: Ծրագրի իրականացման ժամկետ է սահմանված մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը: Ծրագրի նպատակն է գետերից ջրի մակարդակի բարձրացման և բնապահպանական կայունության պահպանման նպատակով Սևանա լիճ ջուր տեղափոխվող 48 կմ երկարությամբ Արփա-Սևան հիդրոհամակարգային որոշ հատվածների վերականգնումը, վերանորոգումը և շինարարությունը: 2014 թվականի ընթացքում իրականացվել են 302.51 գծմ երեսակների վերանորոգման և 3871.76 քմ տորկրետի ու լցամղման աշխատանքներ:

«Արփի լիճ» ազգային պարկի պահպանության ծառայություններին հատկացվել է 41.7 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, այդ տարածքներում գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների գծով 2014 թվականին ծրագրված միջոցառումները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.7 անգամ՝ պայմանավորված ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ին հաստատված «2011-2015թթ. «Արփի լիճ» ազգային պարկի» կառավարման պլանը հաստատելու մասին» N1854-Ա որոշմամբ սահմանված գործառույթներով, ինչպես նաև 2014 թվականի հուլիսի 1-ից աշխատավարձերի բարձրացմամբ:

2014 թվականին «Զիկատար» պետական արգելավայրի պահպանության, գիտական ուսումնասիրությունների կատարման ծառայությունների նպատակով նախատեսված 15.3 մլն դրամի ծախսերն ամբողջությամբ կատարվել են: «Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2014 թվականին իրականացվել են «Զիկատար» պետական արգելավայրի տարածքում գտնվող բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերի 0.8% աճը նույնպես պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ:

Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հայաստանյան մասնաճյուղի գրասենյակի վարձակալության ծառայությունների նպատակով նախատեսված 6.8 մլն դրամի ծախսերն ամբողջությամբ կատարվել են: Հատկացված միջոցների հաշվին ՀՀ բնապահպանության նախարարության և «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն» հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի միջև կնքված պայմանագրի համաձայն իրականացվել են մասնաճյուղի գրասենյակի վարձակալության և կոմունալ ծառայությունների վճարման ծախսերը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը չեն փոփոխվել:

2014 թվականին *այլ դասերին չպատկանող շրջակա միջավայրի պաշտպանության* դասի ծախսերը կազմել են շուրջ 1.7 մլրդ դրամ կամ ծրագրվածի 84.8%-ը: Շեղումը հիմնականում

պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող որոշ նպատակային դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 28.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերի աճով, որոնք կազմել են 1.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 98.8%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել 30.8%-ով կամ 263.2 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համայնքներին տրամադրվել է 239 մլն դրամ սուբվենցիա կամ ծրագրվածի 94.7%-ը: ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի կատարման շրջանակներում բնապահպանական ծրագրերի իրականացման համար սուբվենցիաներ են հատկացվել 11 համայնքների: Հատկացումները 2013 թվականի համեմատ նվազել են 24.3%-ով կամ 76.9 մլն դրամով:

Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայությունների իրականացման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 18.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ապահովվել են ՀՀ բնապահպանության նախարարության տեղային համակարգչային ցանցի և առկա համակարգչային տեխնիկայի ծրագրային ու տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը: Նախորդ տարվա համեմատ բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայությունների ծախսերն աճել են 9.6%-ով՝ պայմանավորված 2014 թվականի հուլիսի 1-ից աշխատավարձերի բարձրացմամբ:

Հայաստանի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգի ծառայություններին 2014 թվականին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 19.4 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում «Հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2014 թվականի ընթացքում կատարվել է մոնիթորինգ 6 ջրավազանային կառավարման տարածքների ազգային դիտողական ցանցում ընդգրկված ստորերկրյա ջրաղբյուրների 70 դիտակետերում: Հիդրոերկրաբանական մշտադիտարկումների շրջանակներում իրականացվել է ջրի մակարդակի 1368 չափում, ջրի ծախսի 4176 չափում, ջրի ջերմաստիճանի 5040 չափում և տեղազինման 7 ուղիների 304.8 չափում: Աշխատանքների և նրանցից ստացված արդյունքների հիման վրա կատարվել են համապատասխան վերլուծություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերն աճել են 2.9%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Հաշվետու տարում 51.3 մլն դրամ է տրամադրվել ՀՀ բնապահպանության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանման նպատակով, որի ծրագիրը կատարվել է 93.3%-ով՝ հիմնականում պայմանավորված թափուր հաստիքների առկայությամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 70.3%-ով՝ հիմնականում պայմանավորված 2014 թվականի հուլիսի 1-ից աշխատավարձերի բարձրացմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանում անապատացման դեմ պայքարի ազգային միջոցառումների ծրագրի ներդաշնակեցման և ազգային հաշվետվության դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են 60 մլն դրամ կամ նախատեսվածի 101.4%-ը: Ծրագրի շրջանակներում մշակվել են.

- կոնվենցիայի կատարման վերաբերյալ 4-րդ և 5-րդ Ազգային զեկույցները, որոնք ներկայացվել են կոնվենցիայի քարտուղարություն,

- «Հայաստանում անապատացման դեմ պայքարի ռազմավարություն և գործողությունների Ազգային ծրագիր» փաստաթղթի նախագիծը,

- «Հայաստանում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ազգային կենսաբազմազանության ռազմավարության և գործողությունների ծրագրի վերանայման և կոնվենցիայի ներկայացվելիք՝ Հայաստանում կենսաբանական բազմազանության մասին 5-րդ ազգային հաշվետվության կազմման դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են 51.5 մլն դրամ կամ նախատեսվածի 105.9%-ը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Օժանդակության ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը՝ հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական կառավարումը, ներառումը և թափանցիկությունն ապահովելու նպատակով ԻԶՀ-ի դրամաշնորհային ծրագիրը կատարվել է 21.2%-ով կամ 26.5 մլն դրամի չափով: Ծրագիրը հիմնականում խորհրդատվական է և իրականացվում է տեղական և միջազգային խորհրդատուների ներգրավման միջոցով և, համաձայն Համաշխարհային բանկի կանոնակարգի, փորձագետների ընտրությունը իրականացնելու համար տեխնիկական առաջադրանքները և ընտրության արդյունքները համաձայնեցվում են Համաշխարհային բանկի հետ: Ծրագիրը պետք է իրականացնեին միջազգային և տեղական 3 խորհրդատուներ՝ «ՇՄԱԳ-ի դրույթների կիրարկման հետ կապված ուղղորդումների իրականացման խորհրդատու»-ի, «Մեկ պատուհանի» սկզբունքով կայք էջի մշակման խորհրդատու»-ի և «Հանքարդյունաբերության հավաքական (կունուլյատիվ) ազդեցության գնահատման ուղղորդումների իրականացման խորհրդատու»-ի միջոցով: Գնումների պլանի կառուցվածքային փոփոխության հետևանքով փոխվել է խորհրդատուների ընտրության ժամանակացույցը, և հետաձգվել է տեխնիկական առաջադրանքների մշակումը, ինչով էլ պայմանավորված է տվյալ դրամաշնորհային ծրագրի կատարողականը:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանական դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են 9.8 մլն դրամ կամ նախատեսվածի 5.4%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվում են «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտու համայնքների զարգացման երկու ծրագրեր՝ Տեղական անասնաբուծության և մսի վերամշակման բարելավման ծրագիրը և Համայնքների խմելու ջրի մատակարարման համակարգերի բարելավման ծրագիրը: Տեղական անասնաբուծության և մսի վերամշակման բարելավման ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև հիմնադրել արհեստական սերմնավորման և անասնաբուժական կենտրոն: Կենտրոնի կառույցի



նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման արդյունքում կառուցապատման աշխատանքների նախագծային արժեքը գերազանցել է բյուջեով նախատեսված արժեքը: Արդյունքում նախագծանախահաշվային փաստաթղթերի վերամշակման գործընթացը երկարաձգվել է մինչև 2014 թվականի հուլիսի 21-ը, և հետաձգվել է գնման մրցույթի իրականացման համար նախատեսված ժամկետը, ուստի ծրագրի գծով չկատարված աշխատանքները տեղափոխվել են 2015 թվական: Համայնքների խմելու ջրի մատակարարկման համակարգերի բարելավման ծրագրով նախատեսվում է վերակառուցել «Արփի լիճ» ագգային պարկի պահպանման գոտու 11 համայնքների խմելու ջրի մատակարարման առկա համակարգերը: Հետորակավորման ընթացակարգով հայտարարված մրցույթին մասնակցած 2 մասնակիցների՝ մրցույթի սահմանված վարչական համապատասխանության չափանիշներին չբավարարելու պատճառով մրցույթը հետաձգվել է ավելի մեղմ պահանջներով՝ գնային առաջարկների հարցման ընթացակարգով: Աշխատանքների պայմանագիրը KfW-ի կողմից հաստատվել է 2014 թվականի սեպտեմբերի 3-ին, և հաշվի առնելով աշխատանքների համար նախատեսված ժամկետը (4 ամիս) և տարածաշրջանի խստաշունչ բնակլիմայական պայմանները՝ վերակառուցման աշխատանքները տեղափոխվել են 2015 թվական:

«Բնապահպանական նպատակային ֆոնդ» արտաբյուջետային հաշվից նախատեսված 69.2 մլն դրամի միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են: Ծրագրի շրջանակներում կատարվել են 10 հա անտառատնկման աշխատանքներ, տնկվել է 6725 տնկի:

**Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ**

2014 թվականին բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 31.3 մլրդ դրամ՝ 12.8%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ջրամատակարարման ոլորտում արտաքին աջակցությամբ իրականացվող որոշ ծրագրերի կատարողականով: Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բաժնի ծախսերը 44%-ով կամ 9.6 մլրդ դրամով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Բաժնի ծախսերի 91.4%-ն ուղղվել է ջրամատակարարման խմբի ծրագրերի ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են շուրջ 28.6 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրի 114.2%-ը:

Հաշվետու տարում 183.7 մլն դրամ է տրամադրվել ջրային տնտեսության ոլորտում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը, որը հատկացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին: Նշված ծախսերի ծրագիրը կատարվել է 98.8%-ով, ինչը տնտեսումների արդյունք է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 43.6%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

«Հայքրմուղկոյուղի» ՓԲԸ-ի՝ խմելու ջրի մատակարարման ծառայությունների արդյունքում առաջացող ֆինանսական ձեռքվածքի սուբսիդավորման նպատակով նախատեսված 1.5 մլրդ դրամն ամբողջությամբ տրամադրվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.2%-ով կամ 62 մլն դրամով, ինչը մասամբ պայմանավորված է նրանով, որ 2014 թվականին

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից իրականացվել է Վերակառուցման ու զարգացման եվրոպական բանկի և Համաշխարհային բանկի վարկային ծրագրերով տրամադրված վարկերի մայր գումարների մարում, իսկ 2013 թվականին միջոցներ էին հատկացվել միայն Համաշխարհային բանկի վարկային ծրագրերի մարման նպատակով, ինչպես նաև էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից «Նոր Ակունք» ՓԲԸ-ի ընթացիկ գործունեության արդյունքում առաջացած ֆինանսական ճեղքվածքի մարման համար նախատեսված սուբսիդիան նույնպես ամբողջությամբ տրամադրվել է՝ կազմելով 261.1 մլն դրամ: «Նոր Ակունք» ՓԲԸ-ի կողմից 2014 թվականին 233.3 մլն դրամ է հատկացվել Գերմանիայի զարգացման վարկերի բանկի կողմից տրամադրված վարկի մայր գումարի մարման նպատակով: 2013 թվականի նկատմամբ նշված ծախսերն աճել են 2.2%-ով՝ հիմնականում պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ Շիրակի, ՀՀ Լոռու և ՀՀ Արմավիրի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի մասնավոր կառավարման հայեցակարգերի ներդրման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 706 մլն դրամ կամ նախատեսվածից 81%-ով ավելի: Ծրագիրն ավարտվել է 2013 թվականի դեկտեմբերին: 2014 թվականի ընթացքում կատարվել են մասնավոր կառավարչի և ֆինանսական ու տեխնիկական աուդիտորների վերջին եռամսյակային և գնային ճշտումների վճարումները, ինչպես նաև վերջին հասանելի խրախուսման վճարը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է հետևյալով: Քանի որ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Հայջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների մասնավոր կառավարման շարունակականության ապահովման դրամաշնորհային ծրագիրը համարվում է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի, ՀՀ Լոռու և ՀՀ Արմավիրի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ներդրման դրամաշնորհային ծրագրի շարունակությունը՝ KfW բանկի հետ ձեռք էր բերվել համաձայնություն՝ մասնավոր կառավարչի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումները կատարել երկրորդ ծրագրի ազատ մնացորդների հաշվին՝ մինչև առաջին ծրագրի ուժի մեջ մտնելը: Այդ իսկ պատճառով Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Հայջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների մասնավոր կառավարման շարունակականության ապահովման դրամաշնորհային ծրագրի գծով արձանագրվել է 14.9%՝ 189.1 մլն դրամ կատարողական: Գումարն ուղղվել է ավելացված արժեքի հարկի և շահութահարկի գծով պարտավորությունների կատարմանը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման երրորդ վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 2 մլրդ դրամի ծախսեր՝ 90.9%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի մասնավոր կառավարչի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումները 2014 թվականին կատարվել են Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ Շիրակի, ՀՀ Լոռու և ՀՀ Արմավիրի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի մասնավոր կառավարման հայեցակարգերի

ներդրման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Ծրագրի աշխատանքների կատարման հիմնական փուլը սկսվել է 2013 թվականին: Ծրագիրն արդյունավետ է ճանաչվել 2012 թվականի հունիսի 23-ին: 2014 թվականի ընթացքում Մասիս, Աշտարակ, Էջմիածին քաղաքներում և հարակից գյուղերում կատարվել են 6.7 կմ ջրատարի, 120.6 կմ ջրագծի, 45.5 կմ մուտքագծի, 25813 հորերի, 906 ջրաչափական հորերի և 19.7 կմ բաշխիչ ցանցի վերակառուցման ու վերանորոգման աշխատանքներ: Աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

Գերմանիայի գարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի (Գյումրու) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում կատարվել են շուրջ 3.5 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 89.4%-ը: Շեղումը մասամբ պայմանավորված է շինարարական աշխատանքների ծավալների պատվերների փոփոխությամբ, որոնք, ըստ ընթացակարգի, ներկայացվել են KfW բանկ հաստատման, սակայն հաստատումների ուշացման պատճառով նախատեսված աշխատանքների իրականացումը հետաձգվել է: Ծրագրի երկրորդ փուլի աշխատանքներն սկսվել են 2010 թվականի սեպտեմբեր ամսից, որը համարվում է Գերմանիայի գարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագրի առաջին փուլի շարունակությունը: 2014 թվականին ծրագրի շրջանակներում կառուցվել են ընդհանուր երկարությամբ շուրջ 138.3 կմ բաշխիչ ցանցեր, տեղադրվել են 3700 տնային դիտահորեր: «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ծրագրի շրջանակներում ավարտված աշխատանքների արդյունքում նոր վերականգնված գոտիներում ապահովվել է շուրջօրյա ջրամատակարարում, իսկ հին գոտիներում ջրամատակարարման օրական միջին տևողությունը կազմել է 18.6 ժամ:

Գերմանիայի գարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ Լոռու (Վանաձորի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում կատարվել են շուրջ 2.4 մլրդ դրամի ծախսեր, որոնք 65.3%-ով գերազանցել են նախատեսված ցուցանիշը: Վարկային միջոցներից ավել կատարված ծախսերը հանդիսանում են նախորդ տարիների ընթացքում ավարտված շինարարական աշխատանքների դիմաց վճարման ենթակա բանկային երաշխիքի և հետավարտական երաշխիքային գումարների վճարումները: Ծրագրի երկրորդ փուլն ուժի մեջ է մտել 2010 թվականի սեպտեմբեր ամսից և համարվում է Գերմանիայի գարգացման վարկային բանկի աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրի առաջին փուլի շարունակությունը: Ծրագրի շրջանակներում 2014 թվականին կառուցվել են ընդհանուր երկարությամբ շուրջ 86 կմ ջրագծեր և շուրջ 3 կմ կոյուղու ցանցեր: «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ծրագրի շրջանակներում ավարտված աշխատանքների արդյունքում նոր վերականգնված գոտիներում ապահովվել է շուրջօրյա ջրամատակարարում, իսկ հին գոտիներում ջրամատակարարման օրական միջին տևողությունը կազմել է 19.6 ժամ:

2014 թվականին Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող՝ Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող

տեխնիկական աջակցության վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 2.9 մլրդ դրամի ծախսեր՝ 22.6%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը՝ պայմանավորված ծրագրվածից ավել աշխատանքների կատարմամբ (ջրագծերի, դիտահորերի նորոգում, պողպատյա խողովակների ձեռքբերում): Ծրագրի շրջանակներում կատարվել են նաև Երևան քաղաքի ջրամատակարարման ու ջրահեռացման ծրագրերի գծով աշխատանքների նախագծման, մրցութային փաթեթի նախապատրաստման և մրցույթի հայտարարման աշխատանքներ:

Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի շրջանակներում ծախսվել է 6.1 մլրդ դրամ՝ 19.9%-ով գերազանցելով ծրագրված ծախսերը: Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագիրը համարվում է մեկ ամբողջական ծրագիր, որը ֆինանսավորվում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Եվրամիության և Եվրոպական ներդրումային բանկի կողմից տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին: Եվրամիության աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը 2014 թվականին կազմել են 3.1 մլրդ դրամ՝ 54.3%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը, ինչը պայմանավորված է փաստացի կատարված աշխատանքներով: 2014 թվականին կնքվել են շինարարական աշխատանքների պայմանագրեր, որոնց հիման վրա ծրագրի շրջանակներում իրականացվել են Բյուրեղավան, Աբովյան, Սևան, Դիլիջան, Տաշիր, Ճամբարակ, Սպիտակ, Ջրաշեն, Ախթալա, Արթիկ, Ջերմուկ, Իջևան քաղաքներում և հարակից տարածքներում 151 կմ ջրագծի, 3411 հատ ջրաչափական հորերի, 147 հատ կոյուղու դիտահորերի, 1.1 կմ կոյուղաջրերի վերակառուցման և վերականգնման աշխատանքներ: Աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի շրջանակներում կատարվել են 2.8 մլրդ դրամի ծախսեր՝ 68.5%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում 2014 թվականի ընթացքում Բյուրեղավան, Աբովյան, Դիլիջան, Տաշիր, Ճամբարակ, Սպիտակ, Ջրաշեն, Ախթալա, Կապան, Արթիկ, Ջերմուկ, Իջևան քաղաքներում և հարակից համայնքներում իրականացվել են 139.4 կմ ջրագծի, 3150 հատ ջրաչափական հորերի, 136 հատ կոյուղու դիտահորերի, 1.1 կմ կոյուղագծերի վերակառուցման և վերանորոգման աշխատանքներ: Աշխատանքները կրում են շարունակական բնույթ: Ծրագրի կատարողականը պայմանավորված է նրանով, որ 2013 թվականին նախատեսված աշխատանքները տեղափոխվել էին 2014 թվական:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 244.5 մլն դրամ կամ ծրագրվածից 56.3%-ով ավելի: Վերջինս պայմանավորված է նրանով, որ շինարարական աշխատանքների ընթացել են նախատեսվածից արագ տեմպերով: Ծրագրի շրջանակներում կատարվել են նախագծման աշխատանքներ, և իրականացվել է տեխնիկական վերահսկողություն 2014 թվականի ընթացքում կատարված շինարարական աշխատանքների նկատմամբ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի շրջանակներում նախատեսված շուրջ 1.3 մլրդ դրամի ծախսերը չեն կատարվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ, համաձայն վարկային

համաձայնագրի պայմանների, աշխատանքների իրականացումը փոխկապակցված է Եվրամիության և Եվրոպական Ներդրումային բանկի ծրագրերի հետ, և տվյալ ծրագրի կատարումը կվերսկսվի հիշյալ ծրագրերի շրջանակներում որոշակի տոկոսային հարաբերությամբ աշխատանքների իրականացումից հետո:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում ծախսվել է շուրջ 8 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 171.6%-ը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է նրանով, որ աշխատանքներն ընթացել են արագ տեմպերով: Հաշվետու տարվա ընթացքում ծրագրի շրջանակներում կնքվել են թվով 14 շինարարական աշխատանքների պայմանագրեր, որոնց մասով կատարվել են շուրջ 16.5 մլն ԱՄՆ դոլար գումարի աշխատանքներ: ՀՀ Կոտայքի, Լոռու, Տաշիրի, Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց Ձորի և Արագածոտնի մարզերում 2014 թվականի ընթացքում կառուցվել են մոտ 724.7 կմ ջրագծեր, ջրատարներ, ներքին ցանցեր, տան մուտքագծեր, ինչպես նաև 18887 հատ ջրաչափական հորեր:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի (Գյումրի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է 486 մլն դրամ՝ նախատեսված գումարի 99.5%-ը: Ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքները շարունակվել են առանց ընդհատումների: 2014 թվականին կատարվել են վարկային և դրամաշնորհային ծրագրերի 1-ին փուլի շրջանակներում ավարտական շինարարական աշխատանքների դիմաց բանկային երաշխիքների և ետերաշխիքային գումարների վճարումները:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ջրային ոլորտի ուսումնասիրության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2014 թվականին կատարվել են 247.9 մլն դրամի ծախսեր՝ 86.3%-ով ապահովելով տարեկան ծրագրային ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ վճարումների մասով հաստատումները ստացվել են 2014 թվականի տարեվերջին: Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ջրային ոլորտի կառավարման առկա իրավիճակի, այդ թվում՝ ոլորտի կառավարման ու համակարգի միասնական հաշվառման խորացված վերլուծությունը, ներառյալ դրա հետագա զարգացման հեռանկարների ուսումնասիրությունը: Ոլորտի վերլուծությունը և դրա հիմնական խնդիրները պետք է վերաբերեն գործառնական բնութագրերին՝ ընդգրկելով ինստիտուցիոնալ, ֆինանսական և սոցիալ-տնտեսական բնագավառները: 2014 թվականի դեկտեմբեր ամսին ծրագիրն ավարտվել է:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարար ընկերությունների կողմից չսպասարկվող համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավմանն ու զարգացմանն ուղղված կիրառելիության ուսումնասիրության դրամաշնորհային ծրագրի ծախսերը կատարվել են 68.7%-ով և կազմել 167.4 մլն դրամ: Հայաստանի Հանրապետության մոտ 560 գյուղական համայնքներ գտնվում են ջրամատակարար ընկերությունների սպասարկման տարածքից դուրս: Նշված համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման նպատակն է գտնել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի շահագործման և պահպանման ինստիտուցիոնալ լուծումներ,

հստակեցնել իրավական դաշտի փոփոխությունների ուղղությունները, ինչպես նաև իրականացնել անհրաժեշտ ներդրումների գնահատումն ու առաջնահերթության սահմանումը: Հայաստանի Հանրապետության և KfW բանկի միջև ստորագրված դրամաշնորհային համաձայնագրի հիման վրա տրամադրվել է 500000 եվրո գումարի դրամաշնորհ՝ բնակավայրերում առաջին անգամ լայնածավալ ուսումնասիրություններ իրականացնելու համար: 2014 թվականին այս ծրագրի ծախսերի կատարողականը պայմանավորված է նրանով, որ որոշ հաշվետվությունների մասով պարզաբանումներ կատարելու հետևանքով վճարումները հետաձգվել են:

2014 թվականին Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիրը չի կատարվել՝ կապված միջազգային պայմանագրերի բացակայության հետ:

2014 թվականին պետական բյուջեի ծախսերի՝ *փողոցների լուսավորման* խմբում համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրման համար նախատեսված շուրջ 2 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների իրականացմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 7.5%-ով՝ պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

*Այլ դասերին չպատկանող բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների* բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 726.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 97.6%-ը: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերն աճել են 26.8%-ով՝ պայմանավորված հիմնականում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերի աճով: Ծրագրի շրջանակներում 540.4 մլն դրամ է տրամադրվել ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանմանը՝ 98.3%-ով ապահովելով տարեկան ծրագրային հատկացումները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 37.4%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է 2014 թվականի հուլիսի 1-ից պետական ծառայողների աշխատավարձերի բարձրացմամբ:

Հաշվետու տարում 184.3 մլն դրամ է տրամադրվել ՀՀ քաղաքաշինության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանման նպատակով, որից 155.4 մլն դրամը հատկացվել է պետական բյուջեի, 28.9 մլն դրամը՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին: Նշված ծախսերը կատարվել են համապատասխանաբար 97.1%-ով և 94.5%-ով՝ պայմանավորված գնումների արդյունքում առաջացած տնտեսումներով:

Եվս 1.4 մլն դրամ հատկացվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կարողությունների զարգացման նպատակով՝ կազմելով ծրագրի 45.9%-ը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ վարչական սարքավորումների ձեռքբերման համար հայտարարված մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցել են գնման առարկների նախահաշվային արժեքը,

և ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, ինչի արդյունքում գնման ընթացակարգերը հայտարարվել են չկայացած:

**Առողջապահություն**

2014 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցներով *առողջապահության* ոլորտում կատարվել են ավելի քան 76.6 մլրդ դրամ ծախսեր՝ ապահովելով ծրագրի 90.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի և պետական հիմնարկների ու կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովման ծրագրում ընդգրկված առողջապահական փաթեթի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրման ծախսերի կատարողականով:

Բաժնի ծախսերի 47.2%-ն ուղղվել է հիվանդանոցային ծառայությունների, 33.5%-ը՝ արտահիվանդանոցային ծառայությունների, 10.5%-ը՝ այլ դասերին չպատկանող առողջապահական ծրագրերի, 6%-ը՝ հանրային առողջապահական ծառայությունների ֆինանսավորմանը և 2.8%-ը՝ բժշկական ապրանքների, սարքերի և սարքավորումների ձեռքբերմանը: 2013 թվականի համեմատ առողջապահության ոլորտի ծախսերն աճել են 19.1%-ով կամ 12.3 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված հիվանդանոցային ծառայությունների ծախսերի աճով:

Հաշվետու տարում դեղագործական ապրանքների ձեռքբերման ծախսերը կազմել են ավելի քան 2.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 96.5% կատարողական:

Ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրման նպատակով ծախսվել է ավելի քան 2.1 մլրդ դրամ՝ 96.5%-ով ապահովելով ծրագիրը: Միջոցներն օգտագործվել են սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված ազգաբնակչությանը դեղորայքով ապահովելու նպատակով: 2013 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 20.3%-ով՝ պայմանավորված գնումների արդյունքում առաջացած տնտեսումներով, որի արդյունքում ծրագիրը կրճատվել է: Դրանով է հիմնականում պայմանավորված նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերի 19.6%-ով նվազումը:

Պետական պահպանության ծառայությանը դեղորայքի տրամադրման նպատակով հատկացվել է 1.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 91.9%-ով՝ պայմանավորված 2013 թվականին նախատեսված միջոցներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով:

ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող իմունականիսարգելման ազգային ծրագրի ծառայությունների աջակցության դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են ավելի քան 17.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել են պնևմակոկային պատվաստումների ներդրման դասընթացների և խորհրդակցությունների կազմակերպման ու իրականացման, մասնավորապես՝ դասավանդողների մեկնագամյա վճարումների, ինչպես նաև «ԳԱՎԻ («Հանուն պատվաստումների և իմունիզացիայի» միջազգային դաշինք) առողջապահական

համակարգի հզորացման ծրագրի» ղեկավարման աշխատանքներ, ինունականխարգելման գործընթացի մոնիթորինգի գործուղման ծախսեր, մարզերի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ինունականխարգելման գործընթացի մոնիթորինգ: Ծրագիրը մեկնարկել է 2014 թվականից:

2014 թվականի պետական բյուջեից *արտահիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերմանը տրամադրվել է շուրջ 25.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 98.9%-ով կատարում: Արտահիվանդանոցային ծառայությունների ծախսերի 36.2%-ը կամ շուրջ 9.3 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի, 27.1%-ը կամ շուրջ 7.0 մլրդ դրամը՝ մասնագիտացված բժշկական, 3.3%-ը կամ 845.6 մլն դրամը՝ ստոմատոլոգիական և 33.4%-ը կամ 8.6 մլրդ դրամը՝ պարաբժշկական ծառայությունների ծախսերը:

Արտահիվանդանոցային ծառայությունների խմբում ընդգրկված *ընդհանուր բնույթի բժշկական ծառայությունների* դասի ծախսերը կատարվել են 99.3%-ով և կազմել 9.3 մլրդ դրամ: Միջոցներն ուղղվել են բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայությունների ֆինանսավորմանը: Ծրագրի շրջանակներում տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժշկի, բուժամանակաբարձական կետերի քույրերի, դպրոցների աշակերտներին սպասարկող քույրերի կողմից բժշկական օգնություն և սպասարկում է իրականացվել հանրապետության ամբողջ բնակչությանը, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատված բնակչության խմբերին անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվել է 1.2 մլրդ դրամ ընդհանուր արժեքով դեղորայք: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 12.9%-ով կամ 1.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Շուրջ 7.0 մլրդ դրամ է օգտագործվել *մասնագիտացված բժշկական ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ 99.2%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը և 17.6%-ով կամ ավելի քան 1.0 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայությունների ձեռքբերման համար հատկացվել է 234 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է մատուցվել շուրջ 2000 հաշմանդամ երեխաների՝ նախորդ տարվա 1700-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 18.2%-ով:

Հենդիկալիզի անցկացման ծառայությունների ծախսերը 2014 թվականին կազմել են ավելի քան 1.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Այս ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2014 թվականին իրականացվել է 100.3 հազար սեանս՝ 2013 թվականի 90.9 հազար սեանսի դիմաց: Ծախսերի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 9.9% կամ 163.8 մլն դրամ:

Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններին 2014 թվականի պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 1.3 մլրդ դրամ՝ 98.5%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում նախածննդյան և հետծննդյան հսկողություն է իրականացվել



հանրապետության շուրջ 49.4 հազար հղինների նկատմամբ՝ նախորդ տարվա 49.3 հազարի փոխարեն, ինչպես նաև բուժօգնություն են ստացել զինեկոլոգիական հիվանդություններով կանայք: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 9.5%-ով կամ 116.6 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Հաշվետու տարում սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ծառայությունների համար նախատեսված 83.7 մլն դրամ պետական աջակցությունն ամբողջությամբ օգտագործվել է, որը տրամադրվել է «Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 14.8%-ով կամ 10.8 մլն դրամով, ինչը պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ:

ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններին տրամադրվել է 132.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում դիսպանսերային հսկողություն է իրականացվել շուրջ 1300 հիվանդների նկատմամբ, ինչպես նաև հիվանդների հայտնաբերման նպատակով իրականացվել է շուրջ 69.4 հազար հետազոտություն: 2013 թվականի պետական բյուջեում տվյալ ծրագիրն ընդգրկված է եղել հանրային առողջապահական ծառայությունների խմբում: Ծախսերի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 13.8%՝ հիմնականում պայմանավորված բժշկական և սպասարկող անձնակազմի աշխատավարձերի բարձրացմամբ:

Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերմանը տրամադրվել է 3.2 մլրդ դրամ՝ 98.9%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է մատուցվել հանրապետության ամբողջ բնակչությանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 22.2%-ով կամ 583 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններին տրամադրվել է շուրջ 140.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 98.6% կատարողական: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2013 թվականի 8.1 հազար հիվանդի դիմաց 2014 թվականին բուժօգնություն է ստացել 8.0 հազար հիվանդ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.1%-ով կամ 1.5 մլն դրամով:

*Ստոմատոլոգիական ծառայությունների* դասում ընդգրկված են 2 ծրագրեր՝ «Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» և «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ», որոնց շրջանակներում օգտագործվել է 845.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.3%-ը: Մասնավորապես՝ 765.6 մլն դրամ տրամադրվել է ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը՝ ապահովելով ծրագրի 100%-ը և 3.1%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում բուժօգնության դեպքերի քանակը կազմել է 282.7 հազար՝ նախորդ տարվա 279.6 հազարի դիմաց:

Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 80 մլն դրամ՝ ապահովելով 93.2% կատարողական, որը պայմանավորված է բուժօգնության դեպքերի քանակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.8%-ով:

Ծրագրի շրջանակներում հետազոտվել են 66.7 հազար երեխաներ՝ 2013 թվականի 62.4 հազարի դիմաց: Նախորդ տարվա համեմատ ստոմատոլոգիական ծառայությունների դասի ծախսերն ընդհանուր առմամբ աճել են 3.4%-ով կամ 28.1 մլն դրամով:

Ստոմատոլոգիական ծառայությունների դասի ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 3.4%-ով՝ հիմնականում պայմանավորված ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայությունների ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

*Պարաբժշկական ծառայությունների* շրջանակներում 2014 թվականին օգտագործվել է 8.6 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.3%-ը: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 3.5%-ով՝ պայմանավորված շտապ բժշկական օգնության ծառայությունների և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում 3.2 մլրդ դրամ տրամադրվել է շտապ բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը, որը կատարվել է 100%-ով: Ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2014 թվականին սպասարկվել է 467 հազար կանչ՝ 2013 թվականի 456.5 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.1%-ով:

Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծախսերը ևս կազմել են 3.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.4%-ը, որը պայմանավորված է առանձին կազմակերպություններում հետազոտությունների՝ կանխատեսվածից քիչ թվով: Ծրագրի շրջանակներում 2014 թվականին իրականացվել է 4.0 մլն հետազոտություն, ինչպես և 2013 թվականին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 16%-ով կամ 440.0 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Ջորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայությունների գծով 2014 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 2.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 95.7%-ը: Ծրագրի շրջանակներում բժիշկ-մասնագետների կողմից մատուցվել են 15-17 տարեկան պատանիների առողջության առաջնային պահպանման և շարունակական հսկողության ծառայություններ, ապահովվել է զինկոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովներում ընդգրկված բժիշկ-փորձագետների և բուժքույրերի աշխատավարձերի վճարումը, ինչպես նաև նշված տարիքի անձանց փորձաքննության նպատակով հիվանդանոցային բուժհաստատություններ ուղեգրման ճանապարհածախսի փոխհատուցումը: Ծրագրից շեղումը պայմանավորված է առանձին կազմակերպություններում զորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց ուղեգրման ճանապարհածախսի տնտեսմամբ և ամբուլատոր բուժման դեպքերի փաստացի քանակով: Արդյունքում արձանագրվել է նաև ծախսերի նվազում նախորդ տարվա համեմատ, որը կազմել է 14.1%:

2014 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերը *հիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերման նպատակով կազմել են 36.2 մլրդ դրամ՝ 94.7%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Հիվանդանոցային ծառայությունների ծախսերի 41.2%-ը կամ 14.9 մլրդ դրամը կազմել են մոր և մանկան բժշկական ծառայությունների, 37.7%-ը կամ 13.6 մլրդ դրամը՝ ընդհանուր բնույթի

հիվանդանոցային ծառայությունների, 21.1%-ը կամ 7.7 մլրդ դրամը՝ մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների ծախսերը:

*Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների* դասում ընդգրկված՝ անհետաձգելի բժշկական օգնության ծախսերը կազմել են շուրջ 2.2 մլրդ դրամ՝ 98.7%-ով կատարելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2013 թվականի 22.3 հազար հիվանդի դիմաց 2014 թվականին բուժօգնություն է ստացել 22.4 հազար հիվանդ: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 4.4%-ով՝ հիմնականում պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Հաշվետու տարում պետական բյուջեից շուրջ 6.6 մլրդ դրամ է տրամադրվել բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին տրամադրվող բժշկական օգնության ֆինանսավորմանը՝ 99.4%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության շրջանակներում 2014 թվականին բուժօգնություն է ստացել 61.4 հազար հիվանդ՝ 2013 թվականի 46 հազարի դիմաց: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 52.5%-ով կամ 2.3 մլրդ դրամով:

Զինծառայողների, ինչպես նաև փրկարար ծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են ավելի քան 3.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: 2014 թվականին ծրագիրն իրականացվել է առաջին անգամ: Նշված ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բուժօգնություն է մատուցվել 15.0 հազար հիվանդի:

«Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրում ընդգրկված առողջապահական փաթեթի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրման ծախսերը կազմել են ավելի քան 1.4 մլրդ դրամ՝ 42.4%-ով ապահովելով ծրագրի կատարումը, որը պայմանավորված է շահառուների նվազ դիմելիությամբ, ինչպես նաև գնումների գործընթացում առաջացած տնտեսումներով: 2014 թվականին ծրագիրն իրականացվել է առաջին անգամ: Նշված ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2014 թվականին բուժօգնություն է մատուցվել 5.5 հազար հիվանդի:

Վերոհիշյալ երեք ծրագրերի գծով հատկացումների հետ կապված՝ ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների դասի ծախսերն աճել են 2.1 անգամ:

Հաշվետու տարում շուրջ 7.7 մլրդ դրամ է օգտագործվել *մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ 99.9% կատարողական: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 6.1%-ով՝ հիմնականում պայմանավորված հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման ծախսերի աճով: Տվյալ դասի շրջանակներում ֆինանսավորվել է 7 ծրագիր:

Տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կազմել են ավելի քան 1.2 մլրդ դրամ՝ 99.6%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Եթե 2013 թվականին ծրագրի շրջանակներում բուժօգնություն էր ստացել 5.9 հազար հիվանդ, ապա 2014 թվականին հիվանդների թիվը կազմել է 5.6 հազար: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 3.1%-ով:

Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման նպատակով 2014 թվականի բյուջեից տրամադրվել է ավելի քան 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2014 թվականին բուժօգնություն է ստացել 13.1 հազար հիվանդ՝ 2013 թվականի 10.8 հազարի դիմաց: 2013 թվականի համեմատ տվյալ ծախսերն աճել են 11.6%-ով:

Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների գծով պետական բյուջեից տրամադրվել է 181.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 1.1 հազար հիվանդ՝ 2013 թվականի 1.0 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 7.2%-ով:

Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններին 2014 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 2.3 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 6.7 հազար հիվանդ՝ 2013 թվականի 6.4 հազարի փոխարեն: 2013 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 26%-ով՝ պայմանավորված դեպքերի քանակի ավելացմամբ և նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով ծախսվել է 936.1 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 53.2 հազար հիվանդ՝ 2013 թվականի 56.2 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 22.9%-ով կամ 277.6 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ 2014 թվականին նախկինում տվյալ ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող որոշ ծառայություններ մատուցվել են զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայությունների շրջանակներում:

Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների ծախսերը նույնպես կատարվել են 100%-ով՝ կազմելով ավելի քան 1.1 մլրդ դրամ: Նշված ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նախորդ տարվա 11.5 հազար հիվանդի փոխարեն 2014 թվականին բուժօգնություն են ստացել 11.8 հազար հիվանդ: 2013 թվականի համեմատ տվյալ ծախսերն աճել են 8.3%-ով, որը, բացի հիվանդների թվի աճից, պայմանավորված է նաև նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Վերականգնողական բժշկական օգնության ծառայությունների համար նախատեսված միջոցները ևս ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով շուրջ 606.7 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 4.3 հազար հիվանդ՝ 2013 թվականի 4.1 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 7.9%-ով՝ պայմանավորված հիվանդների թվի աճով և նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Հաշվետու տարում թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայությունների գծով նախատեսված 2.2 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել՝ դեպքերի բացակայության պատճառով:

Մոր և մանկան բժշկական ծառայությունների դասի շրջանակներում իրականացվել են 3 ծրագրեր, որոնց ծախսերը կատարվել են 99.9%-ով՝ կազմելով 14.9 մլրդ դրամ: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 9.3%-ով կամ շուրջ 1.3 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված երեխաներին մատուցվող բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման ծախսերի աճով:

Հաշվետու տարում 6.9 մլրդ դրամ է տրամադրվել մանկաբարձական բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերմանը՝ 100%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2013 թվականի 60.2 հազար դեպքի դիմաց 2014 թվականին արձանագրվել է 61.8 հազար դեպք: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.8%-ով՝ պայմանավորված դեպքերի թվի աճով և նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններին ուղղվել է շուրջ 334.1 մլն դրամ կամ նախատեսվածի 97.4%-ը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2013 թվականի 5.1 հազար դեպքի դիմաց 2014 թվականին արձանագրվել է 4.9 հազար դեպք: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.1%-ով:

Հաշվետու տարվա ընթացքում երեխաներին բժշկական օգնության ծառայությունների մատուցման ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով շուրջ 7.7 մլրդ դրամ: Պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2014 թվականին բուժօգնություն է ստացել 62.4 հազար հիվանդ՝ 2013 թվականի 56.3 հազարի փոխարեն: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 13.5%-ով կամ 913.3 մլն դրամով:

2014 թվականին պետական բյուջեից շուրջ 4.6 մլրդ դրամ է օգտագործվել *հանրային առողջապահական ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ ապահովելով ծրագրի 97.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 41.7%-ով՝ հիմնականում պայմանավորված Իմունականխարգելման ազգային ծրագրի և Հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայությունների ծախսերի աճով: Տվյալ խմբի շրջանակներում կատարվել են 7 ծրագրեր:

Նշված ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեն հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայությունների գծով տրամադրված միջոցները, որոնք կազմել են ավելի քան 2.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.7%-ը: Ծրագրի նպատակն էր 2014 թվականին ապահովել.

- Հայաստանի Հանրապետության տարածքում հիգիենիկ և հակահամաճարակային պետական հսկողության միջոցառումների իրականացումը,
- ինֆեկցիոն հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով հիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը,
- բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ ուսումնասիրությունների կազմակերպումը,

- բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման կազմակերպական-մեթոդական կանոնակարգումը,

- հիգիենիկ-համաճարակաբանական նորմերի և կանոնների պատշաճ համակարգի ստեղծումը,

- բնակչության հիգիենիկ և բժշկական գիտելիքների մակարդակի բարձրացումը:

Ծրագրի` Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորվող միջոցառումները ներառում են.

1. Նախազգուշական և ընթացիկ սանիտարական հսկողության գծով`

ա) կառուցվող և վերակառուցվող օբյեկտների, բնակավայրերի հատակագծման և կառուցապատման, արդյունաբերական արտադրանքի, ներդրվող նոր տեխնոլոգիաների, սննդամթերքի և պարենային հումքի արտադրության բնագավառում սննդի նոր հավելումների և հատուկ կենսաբանական ակտիվ նյութերի ներմուծման նկատմամբ նախազգուշական հսկողության իրականացումը.

բ) գործող օբյեկտների, խմելու ջրի, ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի, մթնոլորտային օդը, հողը աղտոտող աղբյուրների, անբարենպաստ ֆիզիկական գործոնների, արտադրական հումքի և սննդամթերքի փորձաքննության, ինչպես նաև փակ շինությունների օդային միջավայրի և աշխատանքային գոտու օդի, մարդու վրա շրջակա միջավայրի ֆիզիկական գործոնների ազդեցության ու այլ գործոնների նկատմամբ ընթացիկ սանիտարական հսկողության իրականացումը.

2. Համաճարակաբանական հսկողության գծով`

ա) ինֆեկցիոն և զանգվածային ոչ ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելման միջոցառումների իրականացումը.

բ) հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման միջոցառումների իրականացումը.

3. Համաճարակաբանական հատուկ ծրագրերի գծով`

ա) մալարիայի դեմ պայքարի և կանխարգելման միջոցառումների իրականացումը.

բ) մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման միջոցառումների իրականացումը.

4. Հիգիենիկ և համաճարակաբանական նորմերի ու կանոնների համակարգի կատարելագործման գծով հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի հիմնական բազայի մշակման ապահովումը (ներառյալ ԱՊՀ անդամ պետությունների միասնական համակարգի ընդունումը` կիրառելով սանիտարական նորմեր և կանոններ, համաճարակային հսկողության ստանդարտներ և ցուցումներ).

5. Բնակչության կանխարգելիչ պատվաստումների գծով`

ա) պոլիոմելիտի վերջնական վերացումը, դիֆթերիայի, կապույտ հազի, փայտացման, կարմրուկի, էպիդեմիկ պարոտիտի, տուբերկուլյոզի, հեպատիտ «Բ»-ի, այլ հիվանդությունների դեմ կանխարգելիչ պատվաստումների հետ կապված նախապատրաստական աշխատանքների կազմակերպումը և հսկողության իրականացումը.

բ) համաճարակային ցուցումներով զանգվածային պատվաստումների արշավների անցկացման կազմակերպումը և հսկողության ապահովումը:

Ծրագրի շրջանակներում հակահամաճարակային միջոցառումների իրականացման նպատակով կատարվել են 4298.4 հազար փորձագիտական լաբորատոր ախտորոշիչ հետազոտություններ՝ 2013 թվականի 4239.8 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 24.8%-ով՝ հիմնականում պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Հաշվետու տարում հիգիենիկ հակահամաճարակային ծառայությունների ձեռքբերմանը տրամադրվել է 217.9 մլն դրամ՝ ապահովելով 84% կատարողական, որը պայմանավորված է ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերակազմակերպման արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում ինֆեկցիոն հիվանդությունների հաշվառման և դրանց նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով կատարվել են 1311.6 հազար լաբորատոր ախտորոշիչ հետազոտություններ՝ 2013 թվականի 1244.3 հազարի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.4%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

2014 թվականին 245 մլն դրամ է տրամադրվել հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման ծառայությունների ֆինանսավորմանը, որը կատարվել է 96.2%-ով՝ պայմանավորված ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերակազմակերպման արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հանրապետության տարածքում ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի և այլ հատուկ վտանգավոր վարակների հայտնաբերման և կանխարգելման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 4.6%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Ամբողջությամբ օգտագործվել են վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման ծառայությունների համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են 71 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման աշխատանքներ՝ մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության բացառման և նվազեցման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11.4%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Արյան հավաքագրման ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 237.5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ապահովվել է արյան փոխներարկման կայանների պահպանումը, որոնց ֆունկցիոնալ խնդիրն է արյան հավաքագրումը, բաց թողումը և բուժկանխարգելիչ հիմնարկներին արյունով ու դրա բաղադրիչներով ապահովումը Հայաստանի տասը մարզերում: Երևան քաղաքը սպասարկում է «Ռ.Յոյանի անվ. արյունաբանության կենտրոն» ՓԲԸ-ն: Կենտրոնի առաջնային խնդիրներից են՝ դիսպանսեր հսկողության տակ գտնվող արյան չարորակ հիվանդություններով տառապող հիվանդների ամբուլատոր հետազոտումը և բուժումը, արյան փոխներարկման կայանների կողմից կատարվող աշխատանքների արտագնա ստուգումը և մեթոդական օգնությունը, ինչպես նաև հղի կանանց

հակառեզուս իմունոգլոբուլինի ապահովումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 9.3%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Իմունականխարգելման ազգային ծրագրին տրամադրվել է շուրջ 1.4 մլրդ դրամ՝ ամբողջությամբ ապահովելով նախատեսված ծավալը: Ծրագրի շրջանակներում ազգաբնակչության, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության համար ձեռք են բերվել պատվաստանյութեր և ներարկիչներ կարմրուկի, խոզուկի և այլ վարակիչ հիվանդությունների կանխարգելման համար: 2014 թվականին նախորդ տարվա համեմատ նվազել է դոնոր կազմակերպությունների աջակցությունը, և ավելացել՝ ՀՀ պետական բյուջեի միջոցներով պատվաստանյութերի ձեռքբերման ծավալը: Դրանով է բացատրվում նախորդ տարվա համեմատ ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի 198.2%-ով աճը:

Ծխելու դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 75.3 մլն դրամ՝ 97.9%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը, որը պայմանավորված է միջոցների տնտեսմամբ: Ծրագրի շրջանակներում անցկացվել են մի շարք դրամաշնորհային մրցույթներ, որոնց միջոցով Երևան քաղաքում և ՀՀ մարզերում ֆլեշմոբերի, դասախոսությունների, հեռուստատեսությամբ հեռարձակվող հաղորդումների և այլ միջոցառումների անցկացման միջոցով իրագրվել է ծխելու և դրա վնասակար ազդեցությունների, անչափահասների շրջանում ծխելու վտանգի, առողջ ապրելակերպ վարելու վերաբերյալ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 51.6%-ով՝ պայմանավորված անցկացված միջոցառումների քանակի աճով:

*Այլ դասերին չպատկանող առողջապահական ծախսերի* խմբի շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են ավելի քան 8 մլրդ դրամի ծախսեր, որոնց կատարողականը կազմել է 59.8%: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերն աճել են 1.2%-ով:

2014 թվականին պետական բյուջեից 25.3 մլն դրամ է տրամադրվել հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհածախսի փոխհատուցման նպատակով՝ ապահովելով ծրագրի 62.7% կատարողական, որը պայմանավորված է փոխհատուցում ստանալու համար դիմած քաղաքացիների փաստացի քանակով: Ծրագրի շրջանակներում այն հիվանդները, որոնց ախտորոշումը հնարավոր չէ կատարել հանրապետությունում, ուղեկցողով գործուղվում են Մոսկվա կամ ԱՊՀ երկրներ՝ ախտորոշման և հետագա բուժում նշանակելու համար: Մեկ հիվանդի ճանապարհածախսը ուղեկցողով գնալու և վերադառնալու համար կազմում է միջին հաշվով 400 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 36.9%-ով: 2014 թվականին մեկնածների թիվը կազմել է 203՝ նախորդ տարվա 222-ի դիմաց:

Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների շրջանակներում ծախսվել է շուրջ 466.8 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 100%-ը: Այն ուղղվել է սոցիալապես անապահով խավի հիվանդների՝ յուրահատուկ, բացառիկ բուժարքավորումներով և տեխնոլոգիաներով անվճար ախտորոշիչ 33173 հետազոտությունների իրականացմանը (միջուկա-մագնիսական տոմոգրաֆ, համակարգչային



տոնոգրաֆիա, կորոնարոգրաֆիա, հորմոնալ հետազոտություններ և այլն)՝ 2013 թվականի 27213-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 13.7%-ով:

Ամբողջությամբ օգտագործվել են դեղաքաղաքականությունից բխող փորձագիտական և մեթոդաբանական ծառայությունները, որոնց տրամադրվել է շուրջ 20.8 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են մարդասիրական կարգով ներմուծվող դեղերի և «որբ դեղերի» ցանկում ընդգրկված դեղերի պետական գրանցման նպատակով փորձաքննություններ, հոգեմետ և հսկվող դեղերի պահանջարկի հաշվարկ և այլ ծառայություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Դատաբժշկական և գենետիկ ծառայությունների ձեռքբերման համար 2014 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 371.2 մլն դրամ՝ ամբողջությամբ կատարելով ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 9.1%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

«Պաթանատոմիական ծառայություններ» ծրագրի գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը և նախատեսված ծավալով կատարվել են՝ կազմելով ավելի քան 53.2 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 34.8%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է մանկական մահերի և հիվանդությունների պատճառների բացահայտում՝ մանկամահացության մակարդակը նվազեցնելու նպատակով:

Հաշմանդամ և կարիքավոր երեխաների՝ օրթեզներով և կորսետներով ապահովման ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 96.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի հատկացումներն ուղղվում են հենաշարժական խնդիրներով հիվանդ երեխաների բուժմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 18.3%-ով: Ծրագրի շրջանակներում 2014 թվականին պատրաստվել է 1858 օրթեզ և կորսետ՝ յուրաքանչյուրը համապատասխանաբար 50 հազար և 80 հազար դրամ արժեքով՝ 2013 թվականի 1595-ի դիմաց:

Շուրջ 82.2 մլն դրամ է տրամադրվել առողջ ապրելակերպի խթանման և հանրային իրազեկման ծառայություններին՝ ապահովելով 99% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել է բժշկական վիճակագրության և բժշկասանիտարական տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն: ՀՀ առողջապահության համակարգում շարունակվել են ներդրվել համակարգչային տեխնոլոգիաներ և ցանցեր: Ներդրվել են նաև առողջապահական տեղեկատվական համակարգեր և ինտերնետային կապ: Առողջապահության համակարգի գործունեության զանգվածային տեղեկատվության, բնակչության լայն շրջանակներում հավաստի բժշկական գիտելիքների տարածման համար տպագրվում է հանրամատչելի գրույցների հավելված: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 8.9%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Բժշկական օգնության մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության ծառայություններին տրամադրվել է ավելի քան 251.2 մլն դրամ՝ ապահովելով 99.7% կատարողական: Միջոցներն ուղղվել են 2013 թվականի Առողջապահության ազգային հաշիվների զեկույցի կազմման, Հայաստանի առողջապահության արդյունավետության գնահատման 2013 թվականի տարեկան զեկույցի կազմման, 2014 թվականի կլինիկական, բժշկատնտեսագիտական ստանդարտի մշակման, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և

սպասարկման կազմակերպման, ֆինանսավորման մեխանիզմների բարելավման նպատակով նորմատիվ փաստաթղթի մշակման ծառայությունների ձեռքբերմանը, սիրտ-անոթային, սպինալ և պրոֆեսիոնալ հիվանդություններով, շաքարային դիաբետով, ասթմայով տառապող հիվանդներին, ինչպես նաև ուրոլոգներին և նեֆրոլոգներին ուռուցքաբանական, նարկոլոգիական, մաշկավեներական, հոգեբուժական և հակատուբերկուլյոզային ծառայությունների գծով կազմակերպչամեթոդական օգնությանը: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 13.6%-ով՝ պայմանավորված կազմմեթոդական օգնության ծավալի ավելացմամբ:

Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսագերծման և բաշխման ծառայությունները ևս ամբողջությամբ ֆինանսավորվել են՝ կազմելով շուրջ 42.7 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.5%-ով, որը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Հաշվետու տարում ամբողջությամբ ֆինանսավորվել են նաև տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի համակարգման ծառայությունները, որոնց տրամադրվել է 94.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում մատուցվել են տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի պահպանման աջակցության ծառայություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

ՀՀ մարզային առողջապահական կազմակերպություններում բժշկական ծառայությունների մատուցման նպատակով բժիշկ-մասնագետների ժամանակավոր ուղեգրման ծախսերի փոխհատուցման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 18.7 մլն դրամ, որը կազմել է նախատեսված միջոցների 46.5%-ը՝ պայմանավորված ըստ ցանկության մարզեր ուղեգրված բժիշկ-մասնագետների քանակով: Ծրագրի շրջանակներում 2014 թվականին ՀՀ մարզեր են ուղեգրվել 12 բժիշկ-մասնագետ՝ 22 ամիս տևողությամբ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը չեն փոփոխվել:

ՀԲ աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում ծախսվել է 1.6 մլրդ դրամ, որը կազմել է 78.7%-ով: Շեղումը պայմանավորված է Հիվանդանոցային ենթակառուցվածքների օպտիմալացման և արդիականացման բաղադրիչի շրջանակներում իրականացված աշխատանքների ընթացքում առաջացած խնդիրներով: Մասնավորապես՝ Տավուշի մարզի Բերդի բժշկական կենտրոնին բժշկական սարքավորումների և կահույքի, ինչպես նաև Ապարանի ԲԿ դիարանի, Գյումրու ախտաբանաանատոմիական լաբորատորիայի և ՀՀ ԱՆ Ղատաբժշկական գիտագործնական կենտրոնի (ԴԲԳԿ-ի) համար բժշկական սարքավորումների գնման նպատակով հայտարարված մրցույթների արդյունքները ՀԲ կողմից չեն ընդունվել, և հայտարարվել են նոր մրցույթներ: Արդյունքում նշված կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների մատակարարման գործընթացը տեղափոխվել է 2015 թվական: Բացի այդ, «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի շինարարական աշխատանքներն ընթացել են նախատեսվածից դանդաղ տեմպերով, ինչի արդյունքում նախատեսված գումարի մի մասի վճարումը տեղափոխվել է 2015 թվական: 2014 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները: Շահագործման են հանձնվել ՀՀ Կոտայքի մարզի

Աբովյանի բժշկական կենտրոնը, ՀՀ Լոռու մարզի «Ալավերդու ԲԿ» ՓԲԸ հիվանդանոցային մասնաշենքը, ավարտվել են ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա» ՓԲԸ-ի նոր շենքի կառուցման աշխատանքները, ՀՀ մարզերի 5 գյուղական համայնքների ամբուլատորիաների կառուցման և 1 ամբուլատորիայի հիմնանորոգման աշխատանքները, 21 համայնքային ամբուլատորիաների համար կահույքի մատակարարման գործընթացը, շտապ օգնության թվով 10 ավտոմեքենաների հիմնանորոգման և բաշխման գործընթացը: 2015 թվականի հունվարին ավարտվել են ՀՀ Արմավիրի մարզի «Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկական հատվածի հիմնանորոգման շինարարական աշխատանքները: Ընթացքում են ՀՀ Տավուշի մարզի «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգման և նոր կցակառույցի կառուցման, ՀՀ Գեղարքունիքի մարզի «Ճամբարակի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգման, ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ շենքի հիմնանորոգման, ՀՀ Սյունիքի մարզի «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ նոր շենքի և ՀՀ Տավուշի մարզի «Ոսկեվանի ԱԱՊԿ» ՓԲԸ-ի շենքի կառուցման աշխատանքները, որոնց ավարտը նախատեսված է 2015 թվականին:

ԱՄՆ Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կենտրոնի աջակցությամբ իրականացվող սեզոնային գրիպի համաճարակաբանական ցանցի հիմնման և արձագանքման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 101.5 մլն դրամ, որը կատարվել է 59.8%-ով: Շեղումը հիմնականում պայմանավորված է բժշկական սարքավորումների և գործիքների, համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովումների մշակման և սպասարկման ծառայությունների, ինչպես նաև գրիպի կանխարգելման ու բուժման վերաբերյալ հանրակրթական և նախակրթական կազմակերպություններում, բժշկական օգնություն, սպասարկում իրականացնող հաստատությունների բժշկական անձնակազմի հետ իրականացվող իրազեկման արշավի ծառայությունների ձեռքբերման նպատակով անցկացված գնման ընթացակարգերի չկայանալու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում շեղումները պայմանավորված են նաև տնտեսված գումարներով, քանի որ մի շարք պայմանագրեր կնքվել են նախահաշվային գներից ցածր գներով: Ծրագրի շրջանակներում 2014 թվականին սկսվել են Կապան քաղաքի «ՀԿԿ» ՊՈԱԿ-ի մասնաձյուղի գազաֆիկացման շինարարական աշխատանքները: Ավարտվել են ավտոմեքենայի, պատվաստանյութերի, օդորակիչների ձեռքբերման, տպագրական, ՀԿԿ գրիպի վիրուսաբանական լաբորատորիայի վերանորոգման նախագծային աշխատանքները: 2014 թվականի հունվարի 1-ից մինչև ապրիլի 20-ն ընկած ժամանակահատվածում կնքվել և ավարտվել են ծրագրով նախատեսված մի շարք պայմանագրեր՝ բժշկական, համակարգչային և պատճենահանման սարքավորումների ու նյութերի ձեռքբերման, սարքերի ու սարքավորումների սպասարկման, թարգմանչական ծառայությունների, տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման, գրիպի համաճարակաբանական հսկողության համակարգի պահպանման նպատակով ամենամյա լաբորատոր նմուշների որակի, հիմնական կարողությունների գնահատման ծառայությունների, Երևան, Կապան և Վանաձոր քաղաքներում սեզոնային գրիպի դետեքային համաճարակաբանական հսկողության համակարգի և լաբորատոր գործունեության պարբերաբար մշտադիտարկման ու

վերահսկման ծառայությունների, գրիպի կանխարգելման և բուժման վերաբերյալ նորմատիվային փաստաթղթերի մշակման ու ներդրման ուղղություններով:

ՀԲ աջակցությամբ իրականացվող Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 851.3 մլն դրամ, որը կատարվել է 15.9%-ով: Շեղումը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

- ԱԱՊ օղակում աշխատող բժշկական անձնակազմի վերապատրաստումը պետք է ավարտվեր 2014 թվականի առաջին կիսամյակում՝ մինչև սքրինինգային գործընթացի մեկնարկը, սակայն ուղեցույցների և կրթական ձեռնարկների մշակման աշխատանքների ուշացման պատճառով այն ավարտվեց 2014 թվականի հոկտեմբերին: Վերապատրաստումներն իրականացվել են Երևանում և ՀՀ մարզերում, որոնցում ընդգրկվել են ԱԱՊ օղակի շուրջ 2700 բժիշկներ:

- 2014 թվականի սեպտեմբերի 20-ին մեկնարկել է սքրինինգային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների մատակարարման մրցութային գործընթացը: Մատակարար ընկերության ընտրության նպատակով հայտարարվել է միջազգային մրցույթ: Գնման գործընթացն ավարտվել է նախատեսվածից ուշ, հաշվի առնելով գնվող սարքերի տեխնիկական բնութագրերի և հետերաշխիքային սպասարկման առանձնահատկությունները: Արդյունքում բժշկական սարքավորումների ձեռքբերումը տեղափոխվել է 2015 թվական:

- վերը նշված հանգամանքներից ելնելով՝ աշխատանքների մշտադիտարկման նպատակով ծրագրով նախատեսված աշխատանքային խմբի գործունեությունը կմեկնարկի 2015 թվականին:

ՀԲ աջակցությամբ իրականացվող «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի շրջանակներում առողջապահության կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման ծրագրի նախապատրաստման համար» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է 87.4 մլն դրամ, որը կատարվել է 82.1%-ով: Դրամաշնորհային համաձայնագիրը հաստատվել է 2013 թվականի հուլիսի 2-ին:

Վերոհիշյալ վարկային և դրամաշնորհային ծրագրերի «Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում ԱԱՊ հաստատություններում ոչ վարակիչ հիվանդությունների և մոր և մանկան առողջության ծառայությունների բարելավման նպատակով» բաղադրիչի շրջանակներում ՀՀ բնակչության ռիսկային խմբերում նախատեսվում է իրականացնել ոչ վարակիչ հիվանդությունների (հիպերտոնիա, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ) զանգվածային սքրինինգներ՝ ուղղված այդ հիվանդությունների վաղ հայտնաբերմանը, վերահսկմանը և մահացության նվազեցմանը: Սքրինինգային գործընթացի մեկնարկը նախատեսված է 2015 թվականի հունվարից:

«Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում ԱԱՊ հաստատություններում ոչ վարակիչ հիվանդությունների և մոր և մանկան առողջության ծառայությունների բարելավման» բաղադրիչի շրջանակներում՝

- ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտի հետ կնքված պայմանագրի շրջանակներում մշակվել են «Արգանդի պարանոցի նախաքաղցկեղային վիճակների վաղ հայտնաբերում, վարում և քաղցկեղի կանխարգելում» և «Ոչ վարակիչ հիվանդությունների կառավարում և բուժում» գործնական ուղեցույցները: Վերոնշյալ ուղեցույցները տպագրվել են 1700 և 1400 օրինակով և բաշխվել են վերապատրաստումներում ընդգրկված բժշկական անձնակազմին:

- Մշակված ուղեցույցների և կրթական նյութերի հիման վրա 2014 թվականին Երևանում և ՀՀ մարզերում ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտի կողմից իրականացվել են ԱԱՊ օղակում աշխատող բժշկական անձնակազմի հնգօրյա վերապատրաստումները, որոնցում ընդգրկվել են ԱԱՊ օղակի շուրջ 2700 բժիշկներ:

- Մշակվել է Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման վարկային ծրագրի առողջության առաջնային պահպանման հաստատությունների գործունեության վրա հիմնված ֆինանսավորման ձեռնարկը, որը հավանության է արժանացել ՀԲ-ի կողմից: Ծրագրով նախատեսված աշխատանքները կանոնակարգվելու են վերոնշյալ ձեռնարկում ամրագրված սկզբունքների հիման վրա:

- 2014 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին իրականացվել են «Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի շրջանակներում նախատեսվող սքրինինգային հետազոտությունների և ըստ կատարողականի խրախուսական վարձատրման ֆինանսավորման հիմնական սկզբունքների վերաբերյալ» դասընթացները՝ ԱԱՊ հաստատությունների ադմինիստրատիվ և բժշկական անձնակազմի համար: Դասընթացներն իրականացվել են հանրապետության բոլոր մարզերում և Երևանում, ընդհանուր առմամբ դասընթացներին մասնակցել են 950 հոգի:

- ՀՀ ԱՆ պետական առողջապահական գործակալության կարողությունները ամրապնդելու համար մրցութային կարգով ձեռք են բերվել և տրամադրվել համակարգչային սարքավորումներ:

- 2014 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացվել են ԱԱՊ ծառայությունների և կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման ծրագրի առցանց հաշվետվական կայքէջի և ծրագրային փաթեթի մշակման աշխատանքները:

- Մեկնարկել է սքրինինգային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների մատակարարման համար անհրաժեշտ մրցութային գործընթացը:

- Մշակվել է մոր և մանկան առողջության (ՄՄԱ) և ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) կանխարգելման և վերահսկման ծրագրի հանրային իրազեկման ռազմավարությունը: 2014 թվականի հոկտեմբերի 31-ին Աղվերանում կազմակերպվել է «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրի մեկնարկին նվիրված համաժողով, որին մասնակցել են ՀՀ առողջապահության նախարարության, Երևանի քաղաքապետարանի, մարզպետարանների, բժշկական կազմակերպությունների, Համաշխարհային բանկի առողջապահական թիմի և մի շարք միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

«Ընտրված հիվանդանոցների արդյունավետության և որակի բարելավում» բաղադրիչն իրականացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման վարկային ծրագրի շրջանակներում: Բաղադրիչի շրջանակներում՝

- 2014 թվականին մեկնարկել են պրոֆ. Ռ.Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոնի հիմնանորոգման և կցակառույցի կառուցման աշխատանքները:

- Կենտրոնում ոսկրածուծի և ցողունային բջիջների փոխպատվաստման ու բարձր դեղաչափային քիմիաթերապիայի բաժանմունքի ստեղծման նախագծանախահաշվային

փաստաթղթերի մշակման, կառուցման, սարքավորումների մատակարարման աշխատանքների միասնական մրցութային փաթեթի վերաբերյալ իրականացվել է միջազգային խորհրդատվություն: Ոսկրածուծի և ցողունային բջիջների փոխապատվաստման ու բարձր դեղաչափային քիմիաթերապիայի բաժանմունքի նախագծումը, կառուցումը, սարքավորումների մատակարարումն իրականացնող կազմակերպության ընտրության մրցութային փաթեթը ներկայացվել և հաստատվել է ՀԲ կողմից:

- Մշակվել և շահագրգիռ կողմերի համաձայնությանն է ներկայացվել Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի ճառագայթային բուժման մասնաշենքի նախագծման և սարքավորումներով հագեցման առաջադրանքը՝ վերջինների տեխնիկական մասնագրերով:

- 2014 թվականին մեկնարկել են Հայաստանում չարորակ նորագոյացությունների միասնական ռեգիստրի ստեղծման աջակցության, բժշկական ծառայությունների որակի բարելավման, ինչպես նաև նորագոյացությունների բուժման ուղեցույցերի ներդրման ծրագրերի աշխատանքները:

ՀԲ աջակցությամբ իրականացվող Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 180.4 մլն դրամը չի օգտագործվել, քանի որ սքրինինգային գործընթացը տեղափոխվել է 2015 թվական:

Հաշվետու տարում արտակարգ իրավիճակներում բուժօգնության ծառայություններ ծրագրի գծով տրամադրվել է շուրջ 8.5 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ով կատարողական: Նախորդ տարի տվյալ ծրագիրը ֆինանսավորվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին:

Այլ դասերին չպատկանող առողջապահական ծախսերը 2014 թվականին կազմել են 3.8 մլրդ դրամ կամ ծրագրի 96.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացման և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնման արտաբյուջետային դրամաշնորհային ծրագրի և գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրերի գծով արձանագրվել է ծախսերի զգալի աճ, որով հիմնականում պայմանավորված է տվյալ դասի ծախսերի 31.3%-ով աճը:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պահպանումը, որի ծախսերը կազմել են շուրջ 1.6 մլրդ դրամ՝ ապահովելով 97.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 39.3%-ով, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ:

ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ ՀՀ-ում ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցության շրջանակներում ծախսվել է շուրջ 604 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.3%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում 2014 թվականին իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

- ՄԻԱՎ-ի ախտորոշման համար թեստ-հավաքածուների և հակառետրովիրուսային բուժման նպատակով դեղամիջոցների ձեռքբերում,
- օպորտունիստական վարակների բուժման նպատակով դեղամիջոցների, ախտորոշիչ նյութերի և լաբորատոր ծախսանյութերի ձեռքբերում,
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակի վերաբերյալ դասընթացների կազմակերպում,
- ներուժի զարգացման նպատակով սեմինար-վարժանքների կազմակերպում,
- ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության աշխատակիցների կողմից 9 քրեակատարողական հիմնարկներում կրթական միջոցառումների, ՄԻԱՎ-ի նկատմամբ խորհրդատվության և հետազոտության իրականացում,
- ՀՀ ԱՆ նարկոլոգիական հանրապետական կենտրոնում, Լոռու մարզային հոգեոնյարդաբանական դիսպանսերում, Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում, ինչպես նաև 7 քրեակատարողական հիմնարկներում մեթադոնային փոխարինող բուժման ծրագրի իրականացում,
- մեթադոնային փոխարինող բուժման համար դեղորայքի ձեռքբերում,
- ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության կետերին և լաբորատորիաներին տեխնիկական աջակցության տրամադրում,
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ համաճարակաբանական հետազոտությունների իրականացում,
- մոնիթորինգի և գնահատման ազգային միասնական համակարգի հզորացում,
- ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի 5-րդ հարկի վերանորոգման աշխատանքներ:

Ծրագրի շրջանակներում 2014 թվականին ավելի քան 46000 հղիների շրջանում իրականացվել է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն, 741 հիվանդ ստացել է հակառետրովիրուսային բուժում, 430 ներարկային թմրամիջոցներ գործածողներ ստացել են մեթադոնային փոխարինող բուժում, 3068 դատապարտյալ ստացել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման մինիմալ փաթեթը: Իրականացվել է 221 բուժաշխատողների, 13 լաբորատոր մասնագետների և 12 պետական և ոչ պետական ոլորտի աշխատողների վերապատրաստում:

ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող` «Առողջապահության համակարգի հզորացում» ծրագրի շրջանակներում 2014 թվականին ծախսվել է 77.5 մլն դրամ` կազմելով նախատեսվածի 95.4%-ը, որը հիմնականում պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից իրականացվել է առողջապահական համակարգի զարգացման հայեցակարգի վերջնականացում և Հիվանդությունների միջազգային դասակարգման (ՀՄԴ) ընթացակարգային ծածկագրերի թարգմանություն և ադապտացում,
- «Պացիենտների իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ-ն շարունակել է ծառայություններ մատուցել պալիատիվ/ամոքիչ խնամքի ոլորտում, շարունակվել են իրականացվել պալիատիվ խնամքի փորձարարական աշխատանքները պիլոտային տեղամասերում, կազմակերպվել են պալիատիվ խնամքի դասընթացներ բժիշկների և բուժքույրերի համար,

- «Պրոֆ. Ռ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի միջոցով իրականացվել է արյան անվարձահատույց դոնորությունը խրախուսող կրթական նյութերի մշակման և տրամադրման գործընթաց,

- «Ղեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի միջոցով կազմակերպվել է հակատուբերկուլյոզային դեղերի որակի գնահատման գործընթաց:

Արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացման և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնման ծրագրին տրամադրվել է շուրջ 1.5 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 94.1%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է միջոցների տնտեսման արդյունքում: Հաշվետու տարվա ընթացքում ծրագրի շրջանակներում բազմադեղակայուն տուբերկուլյոզի բուժման համար ներմուծվել են անհրաժեշտ քանակով 1-ին և 2-րդ շարքի հակատուբերկուլյոզային դեղորայք, բժշկական ծախսանյութեր և ժամանակակից ախտորոշիչ սարքավորումներ: «Հայկական կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպության և «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի հետ կնքվել են դրամաշնորհային պայմանագրեր և իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- տուբերկուլյոզով հիվանդներին տրամադրվել է սոցիալական աջակցություն՝ սննդային և հիգիենիկ փաթեթների տեսքով,

- ծայրահեղ կարիքավոր տուբերկուլյոզով հիվանդներին ձմռան 3.5 ամիսների համար տրամադրվել է ջեռուցման ծախսերի փոխհատուցում,

- Հանրապետական տուբերկուլյոզային դիսպանսերում բուժվող հիվանդներին տրամադրվել են թարմ սննդի փաթեթներ,

- ուղղակիորեն վերահսկվող բուժման ռազմավարության շրջանակներում դեղորայքի ընդունումը բուժաշխատողի ներկայությամբ կազմակերպելու նպատակով հիվանդներին կամ բուժաշխատողներին տրամադրվել է տրանսպորտային ծախսերի փոխհատուցում,

- տուբերկուլյոզի ազգային գրասենյակի աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով տրամադրվել է լրացուցիչ ֆինանսական աջակցություն, գրասենյակի աշխատակիցների կողմից իրականացվել են ստուգայցեր տուբերկուլյոզային հաստատություններ, ներդրվել է տուբերկուլյոզային ծառայությունների կառավարման (ETB) էլեկտրոնային ծրագիրը, իրականացվել են մասնագետների վերապատրաստման դասընթացներ տուբերկուլյոզի ոլորտում,

- գնվել են լաբորատոր և վարակի վերահսկման պարագաներ,

- պերիֆերիկ լաբորատորիաներից իրականացվել է խորխի նմուշների տեղափոխում ազգային ռեֆերենս լաբորատորիա, ինչպես նաև վերազգային ռեֆերենս լաբորատորիա, որը գտնվում է Գերմանիայի Բորստել քաղաքում:

ԱՄՆ ՄՁԳ կողմից ՀՀ առողջապահության նախարարությանը տրամադրված դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող՝ «Աջակցություն շտապ բուժօգնության ծառայություններին» ծրագրի շրջանակներում նախատեսված 101.4 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են շտապ բուժօգնության ծառայությունների գրասենյակի պահպանմանը, ձեռք են բերվել վեբ կայքի և տեղեկատվական համակարգի մշակման ծառայություններ, շտապ բուժօգնությանը ոչ բնորոշ կանչերի տարանջատման չափանիշների և ըստ կատեգորիաների



դասակարգման, հանրային առողջապահության կրթական նյութերի մշակման, շտապ բուժօգնության ծառայությունների հետագա ռազմավարության և կրեդիտային համակարգի մշակման ոլորտում ծառայություններ, գրասենյակի համար համակարգչային տեխնիկա:

**Հանգստ, մշակույթ և կրոն**

2014 թվականին *հանգստի, մշակույթի և կրոնի* ոլորտի ծրագրերի իրականացմանը ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 21.4 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի 100.3%-ը՝ պայմանավորված Ավստրիական «Վագներ Բիրո Ստեյջ Սիստեմս» ընկերության կողմից Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի և Ա.Խաչատրյանի անվան համերգասրահի դահլիճների տեխնիկական վերազինման ծրագրի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ ոլորտի ծախսերի 14.8%-ով աճը հիմնականում պայմանավորված է մշակութային ծառայությունների և հեռուստառադիոհաղորդումների ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում *հանգստի և սպորտի* ծառայություններին տրամադրվել է շուրջ 1.8 մլրդ դրամ՝ 98%-ով ապահովելով տարեկան ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերն աճել են 14%-ով՝ հիմնականում պայմանավորված՝ շախմատիստների պատրաստման ծառայությունների ծախսերի աճով, ինչպես նաև 2014 թվականի Նան Զինգի (Չինաստան) ամառային 2-րդ պատանեկան օլիմպիական խաղերին և 2014 թվականի Սոչիի ձմեռային օլիմպիական խաղերին մասնակցության ապահովման նպատակով միջոցների հատկացմամբ:

2014 թվականին ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստմանը և առաջնությունների անցկացմանը տրամադրվել է 929.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Հատկացված միջոցները նպատակաուղղվել են միջոցառումների քանակի ավելացմանը և որակի բարձրացմանը, մարզիկների բժշկական հետազոտման աշխատանքների բարելավմանը, մարզաձևերի ՀՀ ազգային հավաքական թիմերը երիտասարդ հեռանկարային մարզիկներով համալրմանը և օլիմպիական վարկանիշային միջազգային մրցումներին նախապատրաստմանը: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում անցկացվել են Հայաստանի Հանրապետության 90 առաջնություններ, որոնց մասնակցել է 9440 մարզիկ: Աշխարհի, Եվրոպայի առաջնություններին, գավաթի խաղարկություններին և միջազգային մրցաշարերին նախապատրաստվելու նպատակով ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված մարզիկների համար կազմակերպվել են 133 ուսումնամարզական հավաքներ, որոնց մասնակցել է 2550 մարդ: ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված 1900 մարզիկ մասնակցել են աշխարհի և Եվրոպայի 156 առաջնությունների ու միջազգային մրցաշարերի: Նախորդ տարվա համեմատ ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ծախսերը փոփոխություն չեն կրել:

2014 թվականին շախմատիստների պատրաստման նպատակով 254.4 մլն դրամ տրամադրվել է «Հայաստանի շախմատային ակադեմիա» հիմնադրամին՝ կազմելով ծրագրի 93.5%-ը՝ պայմանավորված տնտեսումներով: Հիմնադրամի նպատակներն ու խնդիրներն են Հայաստանի ամբողջ տարածքում տաղանդաշատ երեխաների բացահայտումը, նրանց անվճար կրթումը,

միջազգային մրցաշարերի և միջոցառումների կազմակերպման շնորհիվ շախմատի մասսայականացումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.4 անգամ, որը պայմանավորված է 2014 թվականի մարտի 2-ից 15-ն ընկած ժամանակահատվածում Եվրոպայի շախմատի անհատական առաջնության անցկացմամբ:

Միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնման նպատակով պետական աջակցությունը կազմել է 50 մլն դրամ, որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել: Ծրագրի շրջանակներում դրամական մրցանակներ են հանձնվել օլիմպիական խաղերում, աշխարհի, Եվրոպայի առաջնություններում և գավաթի խաղարկություններում հաղթած մարզիկներին, նրանց անձնական մարզիչներին, հավաքականի գլխավոր մարզիչներին, երկրորդ մարզիչներին, բժիշկներին և մարզադպրոցներին:

Նախատեսված ծավալով իրականացվել են նաև հետևյալ 8 ծրագրերը:

Ուսանողական մարզական միջոցառումներին տրամադրվել է 4.4 մլն դրամ: 2014 թվականին անցկացվել են ՀՀ 15-րդ ուսանողական մարզական խաղերը՝ 9 մարզածևերից, որոնց մասնակցել են 19 բուհերի և Արցախի պետական համալսարանի 1176 մարզիկներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 80.6%-ով, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2013 թվականին Հայաստանի ուսանողական մարզական պատվիրակությունը մասնակցել է 27-րդ համաշխարհային ունիվերսիադային, որն անցկացվում է 2 տարին մեկ անգամ:

Նավամոդելային սպորտի զարգացման նպատակով տրամադրվել է 5.5 մլն դրամ: 2014 թվականին Բուլղարիայում կայացած նավամոդելային սպորտի աշխարհի առաջնությանը մասնակցելու համար պատրաստվել են «Նավիգա» համաշխարհային կազմակերպության պահանջներին համապատասխան մրցունակ մոդելներ, որոնք առաջնությանը շահել են արծաթե ու բրոնզե մեդալներ: Տվյալ ծախսերը նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

Հակադոպինգային համաշխարհային գործակալությանն անդամակցելու նպատակով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 3.1 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ նախագահի անվանական թոշակ հատկացնելու նպատակով տրամադրվել է 160 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.7%-ով, ինչը պայմանավորված է մրցանակակիրների թվի ավելացմամբ:

ՀՀ հավաքական թիմերին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովման նպատակով տրամադրվել է շուրջ 48 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.5%-ով, որը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում ապրանքները ցածր գներով ձեռք բերելու հանգամանքով:

2014 թվականի Նան Ջինգի (Չինաստան) ամառային 2-րդ պատանեկան օլիմպիական խաղերին մասնակցության ապահովման նպատակով տրամադրվել է 54.1 մլն դրամ: Օլիմպիական խաղերին մասնակցել են 14 մարզիկներ, որոնք նվաճել են ծանրամարտից՝ 2 ոսկե մեդալ,

հունահռոմեական ըմբշամարտից և հրաձգությունից՝ մեկական արծաթե, ազատ ոճի ըմբշամարտից՝ 2 բրոնզե և բռնցքամարտից՝ 1 բրոնզե մեդալներ:

2014 թվականի Սոչիի ձմեռային պարաօլիմպիկ խաղերին մասնակցության ապահովման նպատակով տրամադրվել է 6.9 մլն դրամ: Ապահովվել է ՀՀ մարզական պատվիրակության (1 մարզիկ, 1 մարզիչ, 1 բժիշկ, 1 պատվիրակության ղեկավար) մասնակցությունը մարտ ամսին Սոչիում անցկացված ձմեռային պարաօլիմպիկ խաղերին:

2014 թվականին Խորվաթիայում կայացած խուլերի շախմատի օլիպիական առաջնությանը մասնակցության ապահովման նպատակով տրամադրվել է 8.1 մլն դրամ: 2014 թվականի հունիսի 18-28-ը խուլ շախմատիստների ՀՀ հավաքական թիմը (պատվիրակության կազմը՝ 8 մասնակից) մասնակցել է Խորվաթիայի Օպատիա քաղաքում կայացած խուլերի շախմատի օլիմպիական առաջնությանը:

Նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացման նպատակով տրամադրվել է շուրջ 7 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.9%-ը: Խաղերն անցկացվել են ՀՀ մարզերի 38 տարածաշրջաններում և Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում, 4 փուլով, 6 մարզաձևերից, մասնակցել են հանրակրթական դպրոցների աշակերտներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացման ծախսերը կազմել են ծրագրի 98.9%-ը կամ 6.9 մլն դրամ՝ պահպանելով նախորդ տարվա մակարդակը: Ծրագրում ընդգրկված է 7 մարզաձև: Փառատոնն անցկացվել է ՀՀ մարզերում և ԼՂՀ-ի Ստեփանակերտ քաղաքում, որին մասնակցել է 22000 մարդ:

ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացման նպատակով տրամադրվել է 151.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 97.5%-ը: Տնտեսումն առաջացել է 1 համայնքում միջոցառում չանցկացնելու, ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքներն ու ծառայությունները՝ նախատեսվածից ցածր գներով ձեռք բերելու և գործուղման ծախսերից առաջացած խնայողությունների արդյունքում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.2%-ով:

Մանկապատանեկան սպորտի մասսայականացման միջոցառումների իրականացման նպատակով հատկացվել է շուրջ 8 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.8%-ը: Ծրագրի նպատակը մանկապատանեկան սպորտի, մասնավորապես՝ ֆուտբոլի մասսայականացումն է, որի շրջանակներում կազմակերպվել են 3 փուլով դասընթացներ՝ մարզիչների և ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների համար: Ծրագրին մասնակցել են 180 մարզիկներ և հանրակրթական դպրոցների ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներ՝ ՀՀ տարբեր մարզերից: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 8.9%-ով, ինչը պայմանավորված է տրանսպորտային ծախսերի ավելացմամբ:

Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններին պետական աջակցությունը կազմել է 8.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.3%-ը: Ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել 4 հասարակական կազմակերպությունների, իրականացված միջոցառումներին մասնակցել են 379 հաշմանդամ մարզիկներ: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ գրեթե չեն փոփոխվել:

Հավաքական թիմերի ավագ մարզիչների վարձատրության և աշխարհի չեմպիոններին թոշակի հատկացման նպատակով «ՀՀ հավաքական թիմերի կենտրոն» ՓԲԸ-ին տրամադրվել է 36.8 մլն դրամ պետական աջակցություն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 41.6%-ով՝ պայմանավորված աշխարհի չեմպիոնի թոշակ ստացող մարզիկների թվի ավելացմամբ:

Եվրախորհրդի սպորտի մասին համաձայնագրին անդամակցության նպատակով տրամադրվել է 3.8 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.9%-ով՝ պայմանավորված արտարժույթի փոխարժեքի աճով:

2014 թվականին Սոչիի ձմեռային օլիմպիական խաղերին մասնակցության ապահովման նպատակով տրամադրվել է 23.6 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 97%-ը, որը տնտեսման արդյունք է: Սոչիում կայացած 22-րդ ձմեռային օլիմպիական խաղերին մասնակցել են 12 մարզիկ, մարզիչ և ղեկավար:

Երևանում կայանալիք միջազգային մարաթոնյան վազքի անցկացման ապահովման ծրագիրը (12.7 մլն դրամ) չի իրականացվել, քանի որ աթլետիկայի միջազգային ֆեդերացիան սահմանափակել է մարաթոնների անցկացումը այն երկրներում, որոնք չունեն մարզիկների անվտանգությունն ապահովելու միջազգային պայմանագրեր:

2014 թվականին ՀՀ պետական բյուջեից 12.1 մլրդ դրամ տրամադրվել է *մշակութային ծառայությունների* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 101.2%-ը: 2013 թվականի համեմատ մշակութային ծառայությունների ծախսերն աճել են 14.9%-ով՝ հիմնականում պայմանավորված արվեստի, թանգարանների ու ցուցասրահների և գրադարանների ծախսերի աճով:

Հաշվետու տարում 1.5 մլրդ դրամ ուղղվել է *գրադարանների* դասի ֆինանսավորմանը, որն իրականացվել է 100%-ով: Նախորդ տարվա համեմատ գրադարաններին պետական բյուջեից տրամադրված միջոցներն ավելացել են 21.4%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձի և էլեկտրաէներգիայի ու գազի սակագների բարձրացմամբ:

2014 թվականին 1.4 մլրդ դրամ ուղղվել է 16 գրադարանների կողմից իրականացվող գրադարանային ծառայություններին: Հաշվետու տարում գրադարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել նրանց գործունեության պայմանների բարելավումն ու մշակութային ժառանգության պահպանության ապահովումը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման գործընթացների իրականացումը, գրադարանային հավաքածուների պետական հաշվառման աշխատանքները: Տեղեկատվության և ծառայությունների մատչելիության ապահովման ուղղությամբ նորացվել են գրադարաններից օգտվողներին տրամադրվող էլեկտրոնային-տեղեկատվական աղբյուրները: Հաշվետու տարում մշակութային ծառայությունների մատչելիությունն ապահովելու նպատակով «Բիբլիոբուս» շրջիկ գրադարան-ավտոմեքենան շրջել է Արագածոտն, Շիրակ, Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք մարզերի քաղաքային և գյուղական համայնքներում՝ բնակչության գրադարանային տեղեկատվական սպասարկման ծառայություն իրականացնելու և գրադարանային հավաքածուները համալրելու նպատակով: «Հայաստանյան գրադարանների միացյալ ավտոմատացված ցանց» ծրագրի շրջանակներում մասնակից 12 գրադարանների կողմից համահավաք քարտարանների տվյալների շտեմարանում շարունակվել են

մուտքագրվել մատենագիտական գրառումներ: Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնում հաշվետու ժամանակահատվածում գիտատեխնիկական գրականության հիմնապաշարների արդիականացման նպատակով բաժանորդագրությամբ ստացվել է 500 օրինակ գիտատեխնիկական գրականություն: Նախորդ տարվա համեմատ գրադարանային ծառայությունների ծախսերն ավելացել են 21.6%-ով:

2014 թվականին հրատարակությունների գրանցման, հաշվառման և մատենագիտական ծառայությունների մատուցման համար պետական բյուջեից Հայաստանի ազգային գրապալատին հատկացվել է 69.4 մլն դրամ: Ծրագրով նախատեսված հատկացումներն ուղղվել են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության մաս հանդիսացող` ՀՀ-ում ու արտերկրում լույս տեսած և լույս տեսնող հրատարակությունների անձեռնմխելի ֆոնդերի պահպանման, մատենագիտական տեղեկությամբ ապահովման, գիտության զարգացման և հանրության կրթական մակարդակի բարձրացման խնդիրների իրագործմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 16.8%-ով:

2014 թվականին *թանգարանների և ցուցասրահների* դասի ծրագրերին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 2 մլրդ դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15.9%-ով, որը նույնպես պայմանավորված է աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացմամբ:

Նշված միջոցներից 1.8 մլրդ դրամը տրամադրվել է թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների ֆինանսավորմանը: Թանգարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանությունը, հանրահռչակումը, բացառիկ ցուցանմուշների կրկնատիպերի պատրաստումը, թանգարանային առարկաների կոնսերվացումը և վերականգնումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15.7%-ով կամ 241.9 մլն դրամով:

Թանգարաններին և ցուցասրահներին աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին տրամադրվել են 234.2 մլն դրամ սուբվենցիաներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 17.1%-ով կամ 34.3 մլն դրամով:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից 165.2 մլն դրամ է տրամադրվել *մշակույթի տների, ակումբների և կենտրոնների* ֆինանսավորմանը, որն օգտագործվել է ամբողջությամբ: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 4.6 անգամ` հիմնականում պայմանավորված 2014 թվականին տվյալ դասում ընդգրկված մշակութային օբյեկտների շինարարության նպատակով միջոցների հատկացմամբ:

Հաշվետու տարում 40.2 մլն դրամն ուղղվել է համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպմանը: Ծախսերն իրականացվել են նախատեսված ծավալով և 12.2%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը` պայմանավորված աշխատավարձի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ: Ծրագիրն իրականացվել է Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոնի գործունեության խթանման, մշակութային միջոցառումների և ժամանցի կազմակերպման, մշակույթի զարգացման, հասարակության հոգևոր պահանջների բավարարման, համայնքի բնակչությանը մշակութային կյանքին հաղորդակից դարձնելու նպատակով:

Մշակութային օբյեկտների շինարարություն ծրագրով 2014 թվականի պետական բյուջեից հատկացվել է 125 մլն դրամ, որն ամբողջությամբ ծախսվել է: Հատկացումների հաշվին իրականացվել են ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակի մշակույթի տան կառուցման աշխատանքները:

*Այլ մշակութային կազմակերպությունների* դասին ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 759.3 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 100%-ը: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 16.5%-ով, որը հիմնականում պայմանավորված է արխիվային ծառայությունների և Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման ծախսերի աճով՝ կապված աշխատավարձի և էլեկտրաէներգիայի ու գազի սակագների բարձրացման հետ:

Շուրջ 459.6 մլն դրամ տրամադրվել է Հայաստանի Ազգային արխիվի սուբսիդավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 17.7%-ով:

«Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին 2014 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 33.9 մլն դրամ աջակցություն: Ծրագրի նպատակը մշակութային արժեքների փորձագիտական ուսումնասիրության, մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների մշակութաբանական ու արվեստաբանական փորձաքննության իրականացումն է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը աճել են 7.5%-ով:

2014 թվականին տվյալ դասում ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման շրջանակներում ՀՀ պետական բյուջեով նախատեսված 231.4 մլն դրամն ամբողջությամբ ուղղվել է Երևանի կենդանաբանական այգու սուբսիդավորմանը, որը նախորդ տարվա համեմատ աճել է 17.4%-ով:

Հայրենիք-սիյուռք գործակցության ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 34.5 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.8%-ով:

*Արվեստի* բնագավառի ծրագրերի ֆինանսավորմանը ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 6.6 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 102.3% կատարողական: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է ավստրիական «Վագներ Բիրո Ստեյջ Սիստեմս» ընկերության կողմից Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի և Ա. Խաչատրյանի անվան համերգասրահի դահլիճների տեխնիկական վերազինման ծրագրի կատարողականով: 2013 թվականի համեմատ արվեստի բնագավառում պետական բյուջեի ծախսերն աճել են 12.8%-ով:

Օպերային և բալետային արվեստի ներկայացումներին աջակցության նպատակով Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնին հաշվետու տարում տրամադրվել է 1 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական և 46.8%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացմամբ: Ծրագիրն իրականացվել է օպերային և բալետային արվեստի ավանդույթների պահպանման, տարածման և զարգացման, դասական ու ժամանակակից օպերային և բալետային ստեղծագործությունների բեմադրման նպատակով:

Ամբողջությամբ տրամադրվել է նաև Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի համար նախատեսված սուբսիդիան՝ կազմելով 300 մլն դրամ: Ծրագիրն իրականացվել է ազգային թատերարվեստի ավանդույթների պահպանման, տարածման և զարգացման, թատերարվեստի բնագավառում հանդիսատեսի հոգևոր պահանջների ձևավորման և բավարարման, դասական և ժամանակակից լավագույն դրամատիկական ստեղծագործությունների բեմադրման նպատակով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերի 12.2%-ով աճը նույնպես պայմանավորված է աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացմամբ:

Մշակութային միջոցառումների իրականացմանը տրամադրվել է 1.5 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 99.8%-ը: Ժամանակակից արվեստի զարգացման գործում 2014 թվականին առաջնահերթություն է համարվել երիտասարդ ստեղծագործական ներուժի ներգրավումը, նոր մրցունակ մշակութային արտադրանքի ստեղծումը, հայ ժամանակակից ստեղծագործություններով խաղացանկերի և երկացանկերի համալրումը, սփյուռքահայ արվեստագետների ներգրավումը Հայաստանի մշակութային դաշտ: Առանձնակի կարևորվել է դեբյուտային գործընթացներին պետական աջակցությունը՝ արվեստի տարբեր ոլորտներում երիտասարդ ստեղծագործական ներուժի հայտնաբերման, խթանման, մշակութային կյանքում նրանց ներգրավման և ժամանակակից մտածողության խրախուսման, ինչպես նաև սերնդափոխության շարունակականության ապահովման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.4%-ով՝ պայմանավորված «Իմ Հայաստան» փառատոնի անցկացմամբ, որը տեղի է ունենում 2 տարին մեկ անգամ:

Տվյալ դասում ընդգրկված՝ մշակութային օբյեկտների շինարարության ծրագրի գծով 2014 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 131 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ողջ ծավալով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի թատրոնի շենքի կառուցման և Երևանի կամերային թատրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության աշխատանքները: Նշենք, որ 2013 թվականին արվեստի բնագավառում մշակութային օբյեկտների շինարարության նպատակով միջոցներ չէին հատկացվել:

Օտարերկրյա պետություններում հայալեզու թատերական ներկայացումներին աջակցության շրջանակներում Թբիլիսիի Պ. Աղամյանի անվան թատրոնին հատկացվել է 20 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է և պահպանվել է նախորդ տարվա մակարդակին:

«Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովձարների համար օգտագործվել է 37.5 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 82.2%-ը: Տնտեսումը պայմանավորված է որոշ արվեստագետների կողմից ամենամսյա պատվովձար ստանալու իրենց իրավունքը չիրացնելու, ինչպես նաև պատվովձարը միանվագ (մի քանի ամիսը մեկ անգամ) ստանալու հանգամանքներով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 2.1%-ով՝ պայմանավորված պատվովձար ստացողների փաստացի թվաքանակի աճով:

«Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովձարի վճարման ծառայությունների համար տրամադրվել է 216.8 հազար դրամ, որը կազմել է նախատեսված ծախսերի 47.5%-ը և 5.7%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: Միջոցների տնտեսումը պայմանավորված է պատվովձարներն ամբողջությամբ չստանալու, ինչպես նաև

վճարումների ծառայության տոկոսադրույքի նվազմամբ (շահառուները ներգրավվում են անկանխիկ վճարումների համակարգ):

Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման ծրագրի շրջանակներում 307.8 մլն դրամ է հատկացվել թատերական ներկայացումների սուբսիդավորմանը, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 25.4%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացմամբ:

Թատերական ներկայացումների ծախսերը կազմել են 1.4 մլրդ դրամ, որոնք օգտագործվել են նախատեսված ծավալով: Ծրագիրն ուղղվել է թատերարվեստի զարգացմանն ու տարածմանը, թատերարվեստին հաղորդակցմանը, թատերարվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 30.3%-ով: Հատկացումների ավելացումն ուղղվել է աշխատավարձի բարձրացմանը, սակագների բարձրացմամբ պայմանավորված էլեկտրաէներգիայի և գազի ծախսերի ավելացմանը:

2014 թվականին երաժշտարվեստի և պարարվեստի համերգների ծրագրի շրջանակներում նախատեսված շուրջ 1.2 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագիրն ուղղվել է երաժշտարվեստի և պարարվեստի պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը, երաժշտադրամատիկական, երաժշտական կատարողական, երգի-պարի արվեստին հաղորդակցմանը, երաժշտարվեստի ու պարարվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 17.8%-ով, որն ուղղվել է աշխատավարձի բարձրացմանը, սակագների բարձրացմամբ պայմանավորված էլեկտրաէներգիայի և գազի ծախսերի ավելացմանը:

Հայ մշակույթի միջազգային կենտրոններին նախատեսված 27.4 մլն դրամ աջակցությունն ամբողջությամբ տրամադրվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.5%-ով՝ պայմանավորված արտարժույթի փոխարժեքի բարձրացմամբ:

Տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացմանը տրամադրվել է 20 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 48.2%-ով՝ պայմանավորված միջոցառումների քանակի նվազմամբ: Ծրագրի նպատակն է տարածքային համագործակցության և մշակութային միջոցառումների իրականացումը, որոնց արդյունքում լուծվում են մի շարք հայապահպանական խնդիրներ, մասնավորապես՝ իրականացվում են հայ համայնքների հետ համագործակցության ծրագրեր և միջոցառումներ:

Աջակցությունը երիտասարդ երաժիշտների կատարողական արվեստի զարգացմանը հաշվետու տարում կազմել է 141.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ը: Հատկացումներն ուղղվել են Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի գործունեության ապահովմանը: Հարկ է նշել, որ նախորդ տարի տվյալ ծախսերն ընդգրկված են եղել կրթության բաժնի ծախսերում և կազմել են 86.2 մլն դրամ:



Ազգային ակադեմիական խմբերգային համերգների ծրագրով նախատեսված 135.8 մլն դրամ հատկացումներն ուղղվել են «Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ» ՊՈԱԿ-ի գործունեության ապահովմանը՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: 2013 թվականին նշված ծախսերը ֆինանսավորվել են «Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ» ծրագրի շրջանակներում:

2014 թվականին ավստրիական «Վագներ Բիրո Ստեյջ Սիստեմս» ընկերության կողմից Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի և Ա. Խաչատրյանի անվան համերգասրահի դահլիճների տեխնիկական վերազինման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 325.3 մլն դրամ՝ կազմելով ծրագրվածի 200.1%-ը: Միջոցներն ուղղվել են «Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի տեխնիկական, ծայնային և լուսային վերազինման նպատակով ապրանքների և ծառայությունների ձեռք բերմանը:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից *կինեմատոգրաֆիայի* բնագավառին տրամադրվել է 647.8 մլն դրամ, որը կազմել է նախատեսված ծախսերի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.9%-ով:

Կինոնկարների արտադրությանը տրամադրվել է 454 մլն դրամ: Կինոարվեստի բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության ռազմավարությունը պայմանավորված է կինոարվեստի պահպանման, տարածման և զարգացման, կինոարտադրությունն ապահովող տեխնոլոգիայի մշտական կատարելագործման, միջազգային կինոփառատոններին և կինոշուկաներին Հայաստանի Հանրապետության մասնակցության ապահովմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել: 2014 թվականին նկարահանվել են 19 խաղարկային, 13 վավերագրական ֆիլմեր և 6 մուլտֆիլմեր:

Ազգային կինոծրագրերի իրականացման համար հատկացումներն ուղղվել են Հայաստանի Ազգային կինոկենտրոնի գործունեության ապահովմանը: 2014 թվականին այդ ուղղությամբ բյուջետային ծախսերը կազմել են 144.4 մլն դրամ՝ 4.8%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Հատկացումների ավելացումն ուղղվել է սակագների բարձրացմամբ պայմանավորված՝ էլեկտրաէներգիայի և գազի ծախսերի ավելացմանը, և աշխատավարձի բարձրացմանը:

Հաշվետու տարում 7.2 մլն դրամ է տրամադրվել կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանման ծառայություններին: Ծրագրի շրջանակներում 2014 թվականին վերականգնվել է 2 ֆիլմ, իրականացվել է 5 ֆիլմի թվայնացում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Փաստավավերագրական կինոծրագրերը ֆինանսավորվել են 42.2 մլն դրամի չափով: Հատկացված միջոցների հաշվին ապահովվել է «Փաստավավերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիա» ՊՈԱԿ-ի գործունեությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 14%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի ու գազի սակագների բարձրացմամբ:

*Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման ու պահպանման* դասին ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 381.4 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 98.7%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 7.9%-ով՝ հիմնականում պայմանավորված հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման ծախսերի աճով:

Հաշվետու տարում 4 մլն դրամ պետական աջակցություն է տրամադրվել Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանման նպատակով՝ կազմելով նախատեսված հատկացումների 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրվել է 77 մլն դրամ, որը կազմում է նախատեսված ծախսերի 100%-ը: Ծրագրի նպատակներն են պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրումը, վավերագրումը, պահպանական փաստաթղթերի փաթեթի ստեղծումը և դրանց շնորհիվ հուշարձանների պահպանության ապահովումն ու հետագա սերունդներին փոխանցումը: Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են նախատեսված 400 հուշարձանների պահպանական գոտիների նախագծման և թողարկման, 2000 հուշարձանների հաշվառման և ցուցակագրման, 250 հուշարձանի հաշվառման և վկայագրման, ինչպես նաև հայկական պատմամշակութային ժառանգության գիտատեղեկատու շտեմարանի 390 վավերագրերի կազմման և թվայնացման աշխատանքներ: Պատմամշակութային ժառանգության վերաբերյալ հանրությանն իրազեկելու նպատակով հրատարակության է պատրաստվել «Հուշարձան» տարեգրքի «Ժ» հատորը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11.5%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացմամբ:

Հուշարձանների տեխնիկական վիճակի մոնիթորինգի նպատակով տրամադրվել է 8.3 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը փոփոխության չեն ենթարկվել: Հաշվետու տարում իրականացվել է 25 հուշարձանի տեխնիկական վիճակի մոնիթորինգ:

Հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը տրամադրվել է 60 մլն դրամ աջակցություն՝ կազմելով նախատեսվածի 100%-ը և պահպանվելով նախորդ տարվա մակարդակին: ՀՀ մշակույթի նախարարության պատվերով ծրագիրն իրականացվել է «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» ՀԿ-ի կողմից, որը հաշվետու տարվա ընթացքում իրականացրել է 470 պատմամշակութային հուշարձանի վավերագրում:

Հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների իրականացմանը տրամադրվել է 232.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 97.9%-ը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 9.5%-ով՝ պայմանավորված նախագծահետազոտական ծախսերի ավելացմամբ: Հուշարձանների պահպանության բնագավառում իրականացվող գործընթացները նպատակաուղղված են եղել պատմամշակութային հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, վերականգնման և օգտագործման գործում առկա հիմնախնդիրների բացահայտմանն ու դրանց լուծմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 11 հուշարձանի վերականգնման, 5 հուշարձանի հրատապ ուսումնասիրման, ամրակայման և վերականգնման, 13 նախագծային աշխատանքներ, 4 հուշարձանի պեղումների կատարում:

2014 թվականին *ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների* ծախսերը կազմել են 6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.7%-ը: Նախորդ

տարվա համեմատ տվյալ խմբի ծախսերն ավելացել են 13.5%-ով՝ հիմնականում պայմանավորված հեռուստառադիոհաղորդումների դասի ծախսերի աճով:

Հաշվետու տարում *հեռուստառադիոհաղորդումների* դասի գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 4.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը աճել են 16.2%-ով՝ հիմնականում պայմանավորված հեռուստատեսային ծառայությունների հատկացումների աճով:

Ոլորտի պետական կառավարման մարմինների՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի պահպանմանը տրամադրվել է 359.5 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.4%-ը և 14.7%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի, էլեկտրաէներգիայի, գործուղումների և ծառայությունների ձեռքբերման ծախսերի աճով:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են ներքոհիշյալ 12 ծրագրերը:

Հեռուստառադիոհաղորդումների դասի հատկացումների գերակշիռ մասը՝ շուրջ 2.6 մլրդ դրամ, հեռուստատեսային ծառայությունների ծրագրի շրջանակներում հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով տրամադրվել է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին՝ որպես դրամաշնորհ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 9.6%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի, հեռուստահաղորդումների արտադրության և ձեռքբերման, հեռուստահաղորդումների հեռարձակման իրավունքների ձեռքբերման և հեռարձակման ծախսերի ավելացմամբ:

Հաշվետու տարում ռադիոծառայությունների շրջանակներում 666.7 մլն դրամ դրամաշնորհ է տրամադրվել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ին՝ ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով, որը նախորդ տարվա համեմատ աճել է 2.7%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի և ռադիոթատրոնների պատրաստման և/կամ ձեռքբերման ծախսերի ավելացմամբ:

Ուղիղ և հեռուստատեսային հաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով 27.3 մլն դրամ է տրամադրվել «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ին, որը 6.3%-ով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված աշխատավարձի բարձրացմամբ:

ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակման ծրագիրը նախատեսված է հեռուստառադիոհաղորդումների միջոցով ԱՊՀ երկրներում տեղեկույթ տարածելու և ստանալու համար: Այս ծրագիրը հնարավորություն է տալիս ԱՊՀ երկրներում ծանոթանալ Հայաստանի մշակութային, քաղաքական և տնտեսական կյանքին: Նշված ծրագրի գծով հաշվետու տարվա պետական բյուջեի ծախսերը կազմել են 119.9 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 10%-ով՝ հիմնականում պայմանավորված եթերային (հեռուստատեսային) ժամերի ավելացմամբ:

Հասարակական կարծիքի ուսումնասիրման նպատակով «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ին հատկացվել է 9.4 մլն դրամի պետական աջակցություն, որը նախորդ տարվա համեմատ աճել է 15%-ով՝ հիմնականում պայմանավորված համակարգչային տեխնիկայի ձեռքբերմամբ:

2014 թվականի պետական բյուջեից տնտեսական վերլուծությունների ծառայությունների շրջանակներում 191.2 մլն դրամ պետական աջակցություն է հատկացվել «Տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ին, որը պահպանվել է նախորդ տարվա մակարդակին: 2014 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ հիմնական աշխատանքները.

- պատրաստվել են ՀՀ կառավարության գործունեությունը լուսաբանող «Հրապարակում» հեռուստահաղորդաշարի թողարկումները, ՀՀ վարչապետի այցերի և հանդիպումների, ՀՀ կառավարությունում տեղի ունեցող միջոցառումների նկարահանումն ու տեսագրված նյութերի արխիվացումը: Հանրապետական տարբեր հեռուստաընկերություններին ըստ անհրաժեշտության տրամադրվել են օպերատիվ տեսագրված նյութեր: Ընդամենը պատրաստվել է «Հրապարակում» հեռուստահաղորդաշարի 80 թողարկում.

- իրականացվել են ՀՀ կառավարության ինտերնետային կայքի խմբագրական աշխատանքները, տեղադրվող նյութերի՝ հայերենից անգլերեն և ռուսերեն լեզուներով ամենամսյա (ընթացիկ) թարգմանությունները.

- կազմակերպվել է ՀՀ կառավարության գործունեության լուսաբանումը հանրապետական և մարզային ՋԼՄ-ներում: Պատրաստվել է 450 հաղորդում հանրապետական մամուլում և սոցիալական ցանցերում: Մարզային հեռուստահաղորդումների քանակը կազմել է 168, որոնք պատրաստվել են Տավուշի, Սյունիքի, Շիրակի, Արարատի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում:

- կենտրոնին հատկացված տարածքում կատարվել են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, իրականացվել են համապատասխան աշխատատեղերի կազմակերպման հետ կապված միջոցառումներ, և գործարկվել է Տեղեկատվական դաշտի մոնիտորինգի առանձնացված ծառայությունը.

- կատարվել են հեռուստատեսային հաղորդումների, ինտերնետ կայքերի, հանրապետական թերթերի առանձին մոնիտորինգ, համակարգում և վերլուծություն, ռիսկերի կառավարում և տեղեկությունների հրապարակում: Տեղական և միջազգային տեղեկատվական ռեսուրսի ամենօրյա, նաև որոշակի ժամանակահատված ընդգրկող թեմատիկ մոնիտորինգ, այդ թվում՝ տպագիր մամուլում, էլեկտրոնային կայքերում, սոցիալական ցանցերում և հեռուստաթերթում: Իրականացվել է ՀՀ կառավարության գործունեության և հասարակության պահանջումներին առնչվող թեմաների շարունակական բնույթ կրող մոնիտորինգ.

- իրականացվել են տնտեսական վերլուծություններ և ուսումնասիրություններ մամուլում զետեղելու, ինչպես նաև մասնագիտական վերլուծություններ՝ ծառայողական օգտագործման համար, որոնց հիման վրա պատրաստվել են տեղեկատվական և վերլուծական հոդվածներ ու հրապարակումներ, ապահովվել է պատրաստի նյութերի տեղաբաշխումը հեռուստաթերթում, սոցցանցերում և տպագիր ՋԼՄ-ներում:

Հայաստան-սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստման, հեռարձակման, ձեռքբերման և բազմացման նպատակով հաշվետու տարվա պետական բյուջեից տրամադրվել է 49.8 մլն դրամ՝ որը 5.3%-ով զիջել է նախորդ տարվա ցուցանիշը, ինչը պայմանավորված է ավելի մոտ տարածաշրջաններում նկարահանումների

հրականացմամբ, որի արդյունքում առաջացել է տնտեսում: Ծրագրի շրջանակներում պատրաստվել են հայապահպանություն քարոզող ֆիլմաշարեր և տեսահոլովակներ սփյուռքի համայնքներին տրամադրելու և հեռարձակելու նպատակով:

Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայությունների ծախսերը կազմել են 147.8 մլն դրամ, որոնք նախորդ տարվա համեմատ փոփոխության չեն ենթարկվել:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգմանը պետական բյուջեից տրամադրվել է 220 մլն դրամ դրամաշնորհ, իսկ տեխնիկական վերազինմանը՝ 122 մլն դրամ:

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգմանը պետական բյուջեից տրամադրվել է 50 մլն դրամ դրամաշնորհ:

«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինմանը պետական բյուջեից տրամադրվել է 2 մլն դրամ դրամաշնորհ:

Վերջին 4 ծրագրերի գծով 2013 թվականին հատկացումներ չեն եղել:

2014 թվականի պետական բյուջեում շուրջ 1.1 մլրդ դրամ են կազմել *հրատարակչությունների և խմբագրությունների* դասի ծախսերը՝ 99.1%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ հրատարակչությունների և խմբագրությունների ծախսերն աճել են 5.6%-ով՝ հիմնականում պայմանավորված թարգմանչական ծառայությունների ծախսերի աճով:

Պետական մամուլի հրատարակմանը տրամադրվել է 70.8 մլն դրամ (100%), որը հատկացվել է «Հանրապետություն» ՓԲԸ-ին՝ «Հայաստանի Հանրապետություն» թերթի հրատարակման համար, և «Հայաստանի Հանրապետություն-Ռեսպուբլիկա Արմենիա» ՓԲԸ-ին՝ «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթի հրատարակման համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.4%-ով՝ պայմանավորված աշխատավարձի բարձրացմամբ:

Գրականության հրատարակմանը տրամադրվել է 102 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ծավալով: Ծրագրի շրջանակներում 2014 թվականին հրատարակվել է 55 անուն գիրք՝ նախորդ տարվա 58-ի դիմաց: 2013 թվականի համեմատ տվյալ ծախսերը չեն փոփոխվել:

Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակման համար նախատեսված միջոցները նույնպես ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 75.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 20.3%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Տնտեսագիտական հրապարակումների շրջանակներում «Էկոնոմիկա» հանդես ՓԲԸ-ին տրամադրվել է 43.4 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: 2013 թվականի համեմատ նշված ծախսերի 10.6%-ով աճը նույնպես պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ:

Ոչ պետական մամուլի հրատարակմանը տրամադրվել է 47.7 մլն դրամ (99.8%): Ծրագրի շրջանակներում պետական հոգածություն է ցուցաբերվում ոչ պետական մամուլին, ինչի միջոցով բնակչությանը հնարավորություն է ընձեռվում տեղեկույթ ստանալ տեղերից: Պետական աջակցություն է ցուցաբերվում նաև ազգային փոքրամասնությունների լեզվով լույս տեսնող գրական և մշակութային մամուլին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել: 2014 թվականին, ինչպես և 2013 թվականին, հրատարակվել է 67 անուն թերթ և ամսագիր:

Մանկական, մանկապատանեկան թերթերի և ամսագրերի հրատարակմանը տրամադրվել է 43 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական և 4.4%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են 401.3 մլն դրամ կամ ծրագրվածի 99.1%-ը: Միջոցները տրամադրվել են ՀՀ արդարադատության և արտաքին գործերի նախարարություններին: Ծրագրի շրջանակներում իրականացվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր», «Երևանի իրավական ակտերի տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» (ռուսերեն) և «Քաղաքային ու գյուղական համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածու» պարբերականների հրատարակման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման, «Առլիս» տեղեկատվական համակարգի պահպանման և շահագործման աշխատանքները, ինչպես նաև ՀՀ մուտքի վիզայի բլանկների ու միջազգային պայմանագրերի տպագրությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.8%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2013 թվականին լրացուցիչ գումար էր հատկացվել մուտքի վիզայի բլանկի տպագրության համար, և, բացի այդ, 2014 թվականին պակասել են ՀՀ միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագրի քանակները:

Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին աջակցության շրջանակներում 10 մլն դրամ է հատկացվել «Վրաստան» թերթի հրատարակմանը, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2013 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Թարգմանչական ծառայությունների համար նախատեսված գումարը նույնպես օգտագործվել է 100%-ով՝ կազմելով 172.5 մլն դրամ և նախորդ տարվա համեմատ աճելով 41.1%-ով, որը պայմանավորված է աշխատանքների ծավալների աճով:

Մասնավորեցվող պետական գույքի վերաբերյալ տեղեկությունների հրապարակմանը տրամադրվել է 687.1 հազար դրամ: Տվյալ ծախսերը կատարվել են 10.9%-ով՝ պայմանավորված հայտարարությունների հրապարակման փաստացի ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.6 անգամ:

Գրականության հրատարակմանը տրամադրվել է 39.6 մլն դրամ աջակցություն՝ կազմելով ծրագրի 98.9%-ը: Հատկացումների հաշվին հրատարակվել է 53 անուն գիրք՝ նախատեսված 54-ի փոխարեն, և իրականացվել են 7 լազերային սկավառակի պատրաստման աշխատանքներ: 2013 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 1.1%-ով:

Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայությունների ծախսերը կազմել են 33 մլն դրամ (100%): Միջոցները հատկացվել են «Հայերն այսօր» էլեկտրոնային բազմալեզու օրաթերթի հրատարակման, էլեկտրոնային գրադարանի ստեղծման ու արևելահայերենից արևմտահայերեն և հակառակը փոխարկիչը համալրելու և սպասարկելու աշխատանքներին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Ուսումնական և հանրամատչելի գրականության հավաքագրման և սփյուռքի համայնքներին առաքման նպատակով հատկացվել է 10 մլն դրամ, որն ամբողջությամբ ծախսվել է: Նախորդ

տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել: 2014 թվականի ծրագրի շրջանակներում մոտ 100 ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների առաքվել է 41258 կտոր գրականություն՝ 2013 թվականի 42000 կտորի դիմաց:

«Հայկական սիյուռք» տարեգրքի հրատարակման նպատակով օգտագործվել է 7.9 մլն դրամ կամ նախատեսվածի 96.3%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 38.3%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2013 թվականին նախատեսված միջոցներն ամբողջությամբ չէին օգտագործվել՝ ծառայությունն ավելի ցածր գնով ձեռք բերելու արդյունքում:

Գրական ժառանգության պահպանման և տարածման համար նախատեսված 26.3 մլն դրամի միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են: Ծրագրի շրջանակներում ապահովվում է «Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.5%-ով՝ պայմանավորված աշխատավարձի, էլեկտրաէներգիայի, գազի և շենքի սպասարկման ծախսերի ավելացմամբ:

Հաշվետու տարում տեղեկատվության ձեռքբերման գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 393.3 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով նախատեսված հատկացումները: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 6.1%-ով՝ հիմնականում պայմանավորված հանրային իրազեկման ապահովման ծախսերի աճով:

Տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման ծառայությունները մատուցվել են «Արմենպրես» ՓԲԸ-ի կողմից, որը տեղեկույթ է տրամադրել հանրապետության ՋԼՄ-ներին և արտերկրում գտնվող ՀՀ դեսպանատներին: Այս նպատակով հատկացվել է 78.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.8%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Հանրային իրազեկման ապահովմանը տրամադրվել է 314.4 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ծավալով: 2013 թվականի համեմատ նշված ծախսերի 6.7%-ով աճը նույնպես պայմանավորված է աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ: Ծրագրի շրջանակներում «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են տպագիր մամուլի ամենօրյա մշտադիտարկում և մամուլի տեսության պատրաստում, հեռուստատեսային լրատվական հաղորդումների ամենօրյա տեսագրում և դիտարկում, թեմատիկ ու քաղաքական վերլուծությունների պատրաստում, ցանցային լրատվամիջոցների և տեղեկատվական այլ հարթակների մշտադիտարկում ու վերլուծություն, թուրքալեզու, արաբալեզու, պարսկալեզու և անգլիալեզու տեղեկատվական դաշտի ամենօրյա մշտադիտարկում, ՀՀ շահերին առնչվող միջազգային կառույցների դիրքորոշումների մոնիթորինգ և վերլուծական նյութերի պատրաստում, պետական կառավարման մարմինների հանրային կապերի ստորաբաժանումների գործունեության խթանման միջոցառումներ, տարածաշրջանային զարգացումների վերաբերյալ տեղեկանքների կազմում, թեմատիկ ֆիլմերի ստեղծում, հանրային իրազեկմանն ուղղված այլ աշխատանքներ:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից 819 մլն դրամ է տրամադրվել *կրոնական և հասարակական այլ ծառայությունների* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը, որոնք կատարվել են 98.7%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 10.5%-ով, ինչը հիմնականում

պայմանավորված է պետական բյուջեից քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին աջակցության ծախսերի աճով:

Հաշվետու տարում 601.3 մլն դրամ է տրամադրվել *երիտասարդական ծրագրերի* դասին, որի ծախսերը կատարվել են 98.4%-ով և նախորդ տարվա համեմատ գրեթե չեն փոփոխվել: Նշված գումարից 249.4 մլն դրամն ուղղվել է «Երիտասարդական ծրագրեր»-ին՝ ապահովելով 96.6% կատարողական և 2.5%-ով գիջելով նախորդ տարվա ցուցանիշը:

Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներին տրամադրվել է 5.7 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 29.2%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 29-ի N 568-Ն որոշման՝ նախատեսված գումարից 2.3 մլն դրամը նվիրաբերության պայմանագրի հիման վրա տրամադրվել է «Ինֆորմացիոն ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) երևույթի դեմ պայքարի վերաբերյալ լավագույն լրագրողական լուսաբանման համար 2014 թվականին մրցանակաբաշխություն կազմակերպելու նպատակով:

«Արի տուն» ծրագրի շրջանակներում Սփյուռքի երիտասարդության՝ Հայաստան ճանաչողական այցելությունների կազմակերպման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 84.4 մլն դրամ՝ ապահովելով 99.3% կատարողական: Ծրագրի շրջանակներում կազմակերպվում են 13-20 տարեկան սփյուռքահայ երիտասարդների 14-օրյա ճանաչողական շրջայցեր հայրենիքում: Երիտասարդները 10 օր բնակվում են հայ ընտանիքներում, 4 օր՝ ճամբարում: 2014 թվականին ծրագրին մասնակցել են 1300 երիտասարդներ՝ 2013 թվականի 1250-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

2014 թվականին պետական բյուջեից Հայաստանում ինտելեկտուալ խաղերի զարգացմանը տրամադրվել է 12 մլն դրամ աջակցություն՝ ապահովելով 100% կատարողական: 2013 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորման նպատակով նախատեսված միջոցներն օգտագործվել են 99.8%-ով՝ կազմելով 249.8 մլն դրամ և 2.8%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

*Քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին աջակցության* ծախսերը 2014 թվականին կազմել են 218 մլն դրամ՝ 99.6%-ով ապահովելով ծրագիրը և 57.4%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: Աճը պայմանավորված է իրականացված միջոցառումների քանակով:

*Այլ դասերին չպատկանող հանգստի, մշակույթի և կրոնի* դասի շրջանակներում տրամադրվել է 681 մլն դրամ աջակցություն՝ ապահովելով 97.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 32.9%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) նպատակով տրամադրվել է 581.8 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 97.4%-ը: Միջոցները



հատկացվել են ՀՀ մշակույթի ու ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների աշխատակազմերի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 32.9%-ով:

ՀՀ մշակույթի ու ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների՝ ծրագրերի իրականացման գրասենյակների պահպանման նպատակով տրամադրվել է 99.3 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 95.1%-ը՝ պայմանավորված տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 28.4%-ով:

**Կրթություն**

2014 թվականին կրթության բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 115.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 97.2% կատարողական: Ծրագրից շեղումը հիմնականում առաջացել է կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ծախսերում: 2013 թվականի համեմատ կրթության բնագավառի ծախսերն աճել են 12.3%-ով կամ 12.7 մլրդ դրամով:

2014 թվականի պետական բյուջեի կրթությանը հատկացված միջոցներից 481.5 մլն դրամն ուղղվել է նախադպրոցական կրթությանը՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 99.7% կատարողական և 74%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված երեխաների թվաքանակի աճով, նվազագույն աշխատավարձի և մանկավարժների աշխատավարձի բարձրացմամբ, ինչպես նաև ծրագրի ընդլայնմամբ: Ծրագիրը մեկնարկել է 2011 թվականից՝ ՀՀ Լոռու, Արարատի և Արագածոտնի մարզերում, և ուղղված է մանկապարտեզ չունեցող համայնքների ավագ տարիքի երեխաների կրթության կազմակերպմանը: 2012 թվականից այն ներդրվել է ՀՀ Արմավիրի, Գեղարքունիքի, Շիրակի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում, 2013 թվականի սեպտեմբերի 1-ից՝ Տավուշի մարզում, իսկ 2014 թվականից՝ նաև Կոտայքի մարզում և ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ գործող 4 հաստատություններում:

Հաշվետու տարում տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում հանրակրթական ուսուցման ծախսերը կատարվել են 100%-ով՝ կազմելով շուրջ 69.6 մլրդ դրամ, որից ավելի քան 21.5 մլրդ դրամը կազմել են տարրական, 27.3 մլրդ դրամը՝ հիմնական, 20.7 մլրդ դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերը: Հանրակրթության համակարգում 2014 թվականին գործել է 1359 դպրոց 345.5 հազար աշակերտով (2013թ.՝ 1363 դպրոց և 351.8 հազար աշակերտ): Նախորդ տարվա համեմատ հանրակրթական ուսուցման ծախսերն աճել են 6.1%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացմամբ:

Երաժշտական դպրոցներում ուսուցմանը տրամադրվել է 328.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ը: Հատկացումների հաշվին ապահովվել է «Երևանի Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ի գործունեությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 20.3%-ով կամ 55.5 մլն դրամով՝ պայմանավորված աշխատավարձերի, էլեկտրաէներգիայի ու գազի սակագների բարձրացմամբ:

Շուրջ 7.9 մլն դրամ է կազմել երաժշտական դպրոցներում սովորողների կրթաթոշակը: Նշված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

2014 թվականին տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում հատուկ կրթության ծախսերը կատարվել են 99.7%-ով՝ կազմելով 3.1 մլրդ դրամ, որից ավելի քան 1 մլրդ դրամն ուղղվել է տարրական, 1.4 մլրդ դրամը՝ հիմնական, 648.2 մլն դրամը՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությանը: Հաշվետու տարում հատկացված միջոցներով գործել է 23 դպրոց շուրջ 2.4 հազար աշակերտով՝ նախորդ տարվա 2.3 հազարի դիմաց: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 13.7%-ով կամ 373.2 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացմամբ:

Հաշվետու տարում տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում մասնագիտացված հանրակրթական ուսուցման կազմակերպման համար ծախսվել է շուրջ 1.9 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 94.3%-ը: Տնտեսումը հիմնականում պայմանավորված է Ապարանի ռազմամարզական վարժարանի՝ նախատեսված ծավալով չգործելու հանգամանքով: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 5.7%-ով կամ 101.6 մլն դրամով՝ պայմանավորված աշխատավարձերի, էլեկտրաէներգիայի ու գազի սակագների բարձրացմամբ:

2014 թվականին 2.7 մլն դրամ է տրամադրվել մասնագիտացված հանրակրթական հաստատությունների սաների կրթաթոշակների վճարմանը, որը կատարվել է 19.9%-ով և նախորդ տարվա համեմատ նվազել 80.1%-ով, պայմանավորված այն հանգամանքով, որ կրթաթոշակ տրամադրվել է միայն որոշակի չափանիշների բավարարող սաներին:

2014 թվականին տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում ներառական կրթության ծախսերը կատարվել են 99.2%-ով՝ կազմելով ավելի քան 1.6 մլրդ դրամ, որից 797.8 մլն դրամը՝ տարրական, 745.6 մլն դրամը՝ հիմնական ընդհանուր կրթության և 72.6 մլն դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերն են: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 32.1%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի, էլեկտրաէներգիայի ու գազի սակագների բարձրացմամբ:

Հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում ընդգրկված՝ երեկոյան ուսուցման ծրագրերի շրջանակներում ֆինանսավորվել են ՀՀ Շիրակի մարզի և Երևան քաղաքի երեկոյան դպրոցները, որոնց տրամադրվել է շուրջ 41.4 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ նվազելով 8.9%-ով՝ պայմանավորված աշակերտների թվաքանակի նվազմամբ:

2014 թվականին նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության դասի ծախսերը կազմել են շուրջ 7.5 մլրդ դրամ կամ նախատեսված հատկացումների 95.7%-ը, որից ավելի քան 2.5 մլրդ դրամը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական), 4.9 մլրդ դրամը՝ միջին մասնագիտական կրթության ծախսերն են: Նշված դասերի գծով ծրագրված ցուցանիշները կատարվել են համապատասխանաբար 99%-ով և 94%-ով:

Հաշվետու տարում նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ծրագրի շրջանակներում կատարվել են ավելի քան 2.1 մլրդ դրամ ծախսեր՝ ապահովելով 99.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 10.5%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի, էլեկտրաէներգիայի ու գազի սակագների բարձրացմամբ: Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական

հաստատություններում սովորող ուսանողներին տրամադրվել է 394.2 մլն դրամ կրթաթոշակ՝ 98.4%-ով ապահովելով նախատեսված հատկացումները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6%-ով՝ պայմանավորված կրթաթոշակ ստացող սովորողների թվի աճով:

2014 թվականին միջին մասնագիտական կրթության ոլորտում 4.5 մլրդ դրամ է տրամադրվել միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների, 447 մլն դրամ՝ միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակների վճարմանը: Նշված ծրագրերը կատարվել են համապատասխանաբար 93.6%-ով և 99.3%-ով՝ հիմնականում պայմանավորված սովորողների՝ նախատեսվածից պակաս թվաքանակով: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են համապատասխանաբար 28.3%-ով և 20.6%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի, էլեկտրաէներգիայի ու գազի սակագների աճով:

2014 թվականին ՀՀ պետական բյուջեից շուրջ 9.5 մլրդ դրամ տրամադրվել է բարձրագույն կրթության բնագավառին, որից շուրջ 8.7 մլրդ դրամը բարձրագույն մասնագիտական կրթության ծախսերն են, 799.8 մլն դրամը՝ հետբուհական մասնագիտական կրթության ծախսերը: Բարձրագույն կրթության ծախսերի տարեկան ծրագիրն ապահովվել է 96.3%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 19.1%-ով կամ 1.5 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման ծախսերի աճով:

Բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են երեք ծրագրեր: Դրանցում մեծ տեսակարար կշիռ ունեն բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման համար կատարված հատկացումները, որոնք օգտագործվել են 96.6%-ով՝ կազմելով ավելի քան 6.5 մլրդ դրամ: Տնտեսումը կապված է հիմնականում ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցման համար նախատեսված միջոցների տնտեսման հետ. փոխհատուցում ստացել են սահմանված շենք հաղթահարած 1080 ուսանող՝ նախատեսված 1500-ի դիմաց: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 26.3%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ և 2014 թվականին ուսանողների ուսման վարձի փոխհատուցման համար միջոցներ նախատեսելու հանգամանքով:

Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակներին տրամադրվել է 887.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ը և 4.8%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է կրթաթոշակ ստացող ուսանողների թվի նվազմամբ:

Շուրջ 1.3 մլրդ դրամ են կազմել բարձրագույն մասնագիտական կրթության ծրագրի ծախսերը, որոնք կատարվել են 92.1%-ով և 8.4%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Հաշվետու տարում հետբուհական մասնագիտական կրթության բնագավառի ծախսերը կատարվել են 96.5%-ով՝ կազմելով ավելի քան 799.8 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ հետբուհական մասնագիտական կրթության ծախսերն աճել են 16.3%-ով, ինչը պայմանավորված է հետբուհական մասնագիտական կրթության, ինչպես նաև հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակների ծախսերի աճով: Մասնավորապես՝ 17.9 մլն դրամ

տրամադրվել է գիտական կադրերի պատրաստման գծով նպաստներին, որը կատարվել է 61.2%-ով՝ պայմանավորված ասպիրանտների թվաքանակի նվազմամբ՝ կապված օտար լեզվի ընդունելության քննությունը չհաղթահարելու հետ: Արդյունքում նշված ծախսերը 25.6%-ով նվազել են նաև նախորդ տարվա համեմատ:

Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակների համար 2014 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 35.7 մլն դրամ, որը կատարվել է 89.4%-ով: Շեղումը պայմանավորված է ասպիրանտների և դոկտորանտների թվի փոփոխությամբ: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 1.3%-ով:

Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման և հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակի ծախսերը համապատասխանաբար կազմել են 523.8 մլն և 222.5 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 98.1%-ով և 98.4%-ով: Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման ծրագրի կատարողականը պայմանավորված է օտար լեզվի ու ինֆորմատիկայի դասընթացների կազմակերպման համար նախատեսված միջոցների տնտեսմամբ: Ծրագիրն իրականացվել է 14 բարձրագույն ուսումնական հաստատություններում, ասպիրանտների թիվը կազմել է 913: Վերապատրաստվել են թվով 1200 բժիշկներ և բուժքույրեր: Նախորդ տարվա համեմատ նպաստների գծով ծախսերն ավելացել են 14.8%-ով՝ հիմնականում պայմանավորված նվազագույն աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացմամբ: Կրթաթոշակի գծով ծախսերն աճել են 30.9%-ով՝ պայմանավորված ասպիրանտների և դոկտորանտների թվի աճով:

Հաշվետու տարում ըստ մակարդակների չդասակարգվող կրթության խմբի ծախսերը կազմել են ավելի քան 4.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.4%-ը, որից 3.6 մլրդ դրամը արտադպրոցական դաստիարակության, 1.2 մլրդ դրամը՝ լրացուցիչ կրթության ծախսերն են: 2013 թվականի համեմատ ըստ մակարդակների չդասակարգվող կրթության ծախսերն աճել են 22.2%-ով կամ շուրջ 862 մլն դրամով: Ընդ որում՝ 26.5%-ով կամ 746.9 մլն դրամով ավելացել են արտադպրոցական դաստիարակության, 10.8%-ով կամ 115 մլն դրամով՝ լրացուցիչ կրթության ծախսերը:

Արտադպրոցական դաստիարակությանը 2014 թվականի պետական բյուջեից հատկացված 10 մլն դրամ աջակցությունն ամբողջությամբ տրամադրվել է: Ծրագրի շրջանակներում անցկացվել են ՀՀ դպրոցականների շախմատի 8-րդ օլիմպիադայի 3 փուլերը՝ թվով 300 մասնակցով, ՀՀ դպրոցականները մասնակցել են Թուրքմենստանում կայացած «Դպրոցական մշակութային մարզական փառատոնին»՝ լողափնյա վոլեյբոլ և սեղանի թենիս սպորտաձևերով: 2013 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Շուրջ 2.2 մլրդ դրամ է հատկացվել արտադպրոցական դաստիարակության ծրագրի ֆինանսավորմանը՝ ապահովելով 100% կատարողական: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 29.8%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի, գազի ու էլեկտրաէներգիայի սակագների բարձրացմամբ:

Շախմատի մրցույթների պատրաստման ծառայություններին 2014 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 15.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2013 թվականի

համեմատ նշված ծախսերն աճել են 23.1%-ով, որը նույնպես պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ:

«Արտադարձական դաստիարակություն հասարակական կազմակերպությունների կողմից» ծրագրի համար նախատեսված շուրջ 635.3 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 29.8%-ով՝ պայմանավորված մարզական միջոցառումների քանակի ավելացմամբ և աշխատավարձերի բարձրացմամբ:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման նպատակով 2014 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 340.3 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 49.3%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ և երաժշտական ու արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով սովորող երեխաների ուսման վարձավճարների փոխհատուցման չափի փոփոխությամբ. այն 2014 թվականին կազմել է 16186 դրամ՝ 2013 թվականի 10455 դրամի դիմաց:

Արտադարձական դաստիարակության գծով ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման համար նախատեսվել է շուրջ 167.3 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 40.5%-ով՝ կապված աշխատավարձերի և գազի ու էլեկտրաէներգիայի սակագների բարձրացման հետ:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքներին տրամադրվել է ավելի քան 64.7 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում Մշակութային կրթության աջակցության հիմնադրամը մեթոդիստ-մանկավարժների և հանրապետության առաջատար մասնագետների միջոցով հանրապետության երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների 8800 մանկավարժների և սովորողների ցուցաբերել է մեթոդական օգնություն՝ նախատեսված 6400-ի դիմաց, որը պայմանավորված է մանկապանեկան երգչախմբերի «Երգող Հայաստան» 7-րդ հանրապետական մրցույթում մասնակցող երգչախմբերում և «Երաժշտական և արվեստի դպրոցների ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում» ծրագրում ընդգրկված աշակերտներին և մանկավարժներին մեթոդական օգնության ցուցաբերմամբ, որը նախատեսված չէր: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 25.3%-ով՝ կապված աշխատավարձերի բարձրացման հետ:

2014 թվականի պետական բյուջեով երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների համար ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակման և հրատարակման համար նախատեսված 17.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում 2014 թվականին տպագրվել են 27 անուն դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ՝ նախորդ տարվա 24-ի դիմաց: Հրատարակված գրականության մի մասն անվճար տրամադրվել է հանրապետության մշակութային կրթությանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Արտադարձական դաստիարակության բնագավառում «Վինդսերֆինգ մարզաձևին առնչվող ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվել է 47.4 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել

է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.2%-ով, որը պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ:

Մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման կազմակերպման նպատակով հատկացվել է 4.5 մլն դրամ կամ նախատեսվածի 61.7%-ը, որը տնտեսման արդյունք է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

«Հակոբ Կոջոյան» կրթահամալիր» ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպման նպատակով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորման համար նախատեսված 7.2 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11.3%-ով, որը պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ:

Իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացմանը աջակցության նպատակով 2014 թվականին տրամադրվել է 20.1 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 46.8%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

2014 թվականին պետական բյուջեից «Դպրոցահասակ երեխաների մասնակցություն դպրոցական խաղերին» ծրագրով նախատեսված 49.5 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում ՀՀ դպրոցականները մասնակցել են Ֆրանսիայում կայացած սեղանի թենիսի, Պորտուգալիայում կայացած վոլեյբոլի, Իտալիայում կայացած ֆուտ-զալի, Թուրքիայում կայացած հանդբոլի դպրոցականների աշխարհի առաջնություններին, անցկացվել են ֆուտբոլ և բասկետբոլ մարզաձևերից հանրապետական մրցումներ, որոնց մասնակցել է 336 դպրոցական: Կատարվել է 2015 թվականի միջազգային միջոցառումներին մասնակցելու նպատակով կանխավճար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերման նպատակով տրամադրվել է 18.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 94.7%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի հաշվին երաժշտական դպրոցների համար նախատեսված 18 անուն 110 գործիքի դիմաց ձեռք է բերվել 16 տեսակի 73 երաժշտական գործիք: Քանակական ցուցանիշների տարբերությունը պայմանավորված է ձեռքբերված երաժշտական գործիքների բարձրորակ և համերգային, ինչպես նաև որոշ գործիքների ձեռքով պատրաստված լինելու հանգամանքով:

2014 թվականին շնորհալի պատանի երաժիշտ-կատարողների մասնագիտական կարողությունների զարգացմանը և կատարելագործմանը աջակցության նպատակով նախատեսված 15.9 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագիրը ներդրվել է 2014 թվականից: Ծրագրում ընդգրկված 15 շնորհալի պատանի երաժիշտ-կատարողները 2014 թվականին մասնակցել են շուրջ 40 նախագծերի՝ մրցույթներ, փառատոներ, մենահամերգներ, վարպետության դասեր և այլ նպատակային ծրագրեր:

2014 թվականին պետական բյուջեից շուրջ 1.2 մլրդ դրամ է տրամադրվել *լրացուցիչ կրթությանը*՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 98%-ը: Նախորդ տարվա համեմատ լրացուցիչ

կրթության ծախսերն աճել են 10.8%-ով՝ հիմնականում պայմանավորված վերապատրաստման ծառայությունների գծով ծախսերի աճով:

ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գծով պետական պատվերի շրջանակներում 2014 թվականին օգտագործվել է շուրջ 24.4 մլն դրամ՝ ապահովելով 89.7% կատարողական: Ծրագրից շեղումը պայմանավորված է մի շարք պատճառներով՝ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին վերապատրաստումներով (միջազգային կազմակերպությունների կողմից, վարկային և դրամաշնորհային ծրագրերով), օրենքով նախատեսված համապատասխան մարմիններում տեղի ունեցող վերակազմավորումներով, կադրերի հոսունությամբ (թափուր պաշտոնների առկայությամբ): 2014 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի հաշվին վերապատրաստվել է 1710 քաղաքացիական ծառայող՝ նախորդ տարվա 1919-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.2%-ով, որը պայմանավորված է դասախոսական մեկ ժամի արժեքի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

«Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսված 92.4 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագիրն իրականացվում է ՀՀ ՖՆ «Ուսուցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից և նախատեսված է բյուջետային բարեփոխումների և պետական ֆինանսների կառավարման զարգացումների բնագավառում հանրային ծառայողների վերապատրաստման արդյունավետ իրականացման համար: Ծրագրի ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 7.9%-ով՝ պայմանավորված աշխատավարձի բարձրացմամբ:

Լրացուցիչ կրթության ուսուցման գծով պետական պատվերի գծով ծախսվել է ավելի քան 17.7 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով նախատեսված ծավալը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Միջոցները հատկացվել են ՀՀ դատախազությանը: Այս ծրագրով նախատեսված փորձաքննությունների նշանակման մասնագիտական վերապատրաստման 40 դասընթացի դիմաց իրանակացվել է 28 դասընթաց, սակայն դասընթացում նախատեսված 40 թեմաների փոխարեն ընդգրկվել է 81 թեմա, իսկ մասնակիցների նախատեսված քանակը պահպանվել է՝ կազմելով 360 մարդ:

ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման նպատակով ծախսվել է 344.3 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.8%-ով: 2014 թվականին վերապատրաստվողների և հատուկ ուսուցում անցնողների թվաքանակը կազմել է 3030՝ 2013 թվականի 3125-ի դիմաց:

Հաշվետու տարում ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպման ծախսերը կազմել են 56.5 մլն դրամ կամ նախատեսվածի 98%-ը, որը տնտեսման արդյունք է: Նշված ծախսերը 90.7%-ով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է նրանով, որ 2013 թվականին ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացները կազմակերպվել են նաև «Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի» կողմից, ինչպես նաև 2014 թվականի հուլիսի 1-ից աշխատավարձերի բարձրացմամբ:

Կադրերի պատրաստման և վերապատրաստման ծառայությունների գծով նախատեսված 111.9 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է և տրամադրվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը: Նախորդ տարվա համեմատ ծախսերի աճը կազմել է 39.3%՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

2014 թվականին օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական ծառայողների ուսուցման ծախսերը կազմել են 14.1 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծախսերը ներառում են ՌԴ ԱԻՆ քաղաքացիական պաշտպանության ակադեմիա գործուղված փրկարարական ծառայողների ճանապարհածախսը, կրթաթոշակը և բնակավարձը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.8%-ով, որը պայմանավորված է ուսանողների թվի աճով:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստման նպատակով տրամադրվել է 480 հազար դրամ՝ ապահովելով 88.9% կատարողական: Շեղումը պայմանավորված է փաստացի վերապատրաստվածների՝ նախատեսվածից քիչ քանակով: Ծրագրի շրջանակներում 2014 թվականին վերապատրաստվել է 30 աշխատակից՝ 2013 թվականի 35 աշխատակցի դիմաց: Արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 19.9%-ով:

Շուրջ 386.5 մլն դրամ է տրամադրվել «Վերապատրաստման ծառայություններ» ծրագրին՝ 95.4%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Միջոցներն ուղղվել են ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ արտաքին գործերի նախարարության, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, Ազգային անվտանգության խորհրդի աշխատակիցների և համայնքային ծառայողների վերապատրաստմանը: Շեղումը պայմանավորված է պետական գնումների գործընթացի արդյունքում առկա տնտեսումներով, ինչպես նաև փաստացի վերապատրաստված համայնքային ծառայողների թվաքանակով: Վերապատրաստման ծառայությունների ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 87.9%-ով՝ կապված մեկ դասաժամի վճարի ավելացման և վերապատրաստվողների փաստացի թվաքանակի հետ:

«Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ» ծրագրի գծով նախատեսված 41.8 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 7.1 անգամ, որը մասամբ պայմանավորված է ունկնդիրների թվի աճով:

Դիվանագիտական դպրոցում ներդրումների նպատակով 2014 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 1.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 76% կատարողական: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել համակարգչային սարքավորումներ: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարի այս նպատակով միջոցներ չէին նախատեսվել:

Լրացուցիչ կրթության դասում հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման ծառայություններին տրամադրվել է 88 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 21.9%-ով, որը պայմանավորված է վերապատրաստման ընթացքում ուսումնական ծրագրերի և դասաժամերի ավելացմամբ: 2014 թվականին վերապատրաստում են անցել 3586 հարկային և մաքսային տեսուչներ՝ 2013 թվականի 4341-ի փոխարեն:



ՀՀ ֆինանսների նախարարության «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ում ներդրումների համար նախատեսված 300.0 հազ դրամը չի օգտագործվել, որը պայմանավորված է գնումների գործընթացով:

2014 թվականի պետական բյուջեի կրթության ոլորտի ծախսերի 14.1%-ն ուղղվել է *կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների* ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են ավելի քան 16.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 87.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող կրթության որակի և համապատասխանության երկրորդ ծրագրի և կրթական օբյեկտների հիմնանորոգման ծախսերի կատարողականով: 2013 թվականի համեմատ կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ծախսերն աճել են 29.5%-ով՝ հիմնականում պայմանավորված տվյալ դասում ընդգրկված ուսումնական հաստատությունների հիմնանորոգման, կրթական ու մարզական օբյեկտների շինարարության, ինչպես նաև ՀԲ աջակցությամբ իրականացվող կրթության որակի և համապատասխանության երկրորդ ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

2014 թվականին սիյուռքի հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծախսերը կազմել են շուրջ 15 մլն դրամ՝ ապահովելով 48.1% կատարողական: Տնտեսումը կապված է ուսուցիչների՝ պակաս թվով ժամանման հետ: Ծրագրի շրջանակներում 2014 թվականին վերապատրաստվել են 48 ուսուցիչներ՝ 2013 թվականի 26-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 267.3%-ով:

Տվյալ խմբում ընդգրկված՝ կրթական օբյեկտների հիմնանորոգման ծախսերը կազմել են շուրջ 4.3 մլրդ դրամ՝ 83.9%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը, որը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագիրն իրականացվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության և ՀՀ տասը մարզպետարանների կողմից: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում հիմնանորոգվել են 117 օբյեկտներ՝ 2013 թվականի 73-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 18.2%-ով:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման ծախսերին տրամադրվել է 117 մլն դրամ՝ ապահովելով 99.6% կատարողական: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել է մեկ միջին մասնագիտական կրթական օբյեկտ և իրականացվել են մեկ միջին մասնագիտական կրթական օբյեկտի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 284.2%-ով՝ պայմանավորված կատարված աշխատանքների ծավալների աճով:

Ուսանողներին գեղչային գներով հանրակացարանային պայմանների տրամադրման ծախսերը կատարվել են 55%-ով և կազմել ավելի քան 23 մլն դրամ: Ծրագրից օգտվել է 180 ուսանող՝ նախատեսված 300-ի և նախորդ տարվա 200-ի դիմաց: Արդյունքում նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 5%-ով:

Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների խմբում ընդգրկված՝ կրթական օբյեկտների շինարարությանը ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 2.0 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 97.1%-ը: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից կատարվել են շինարարական աշխատանքներ 9

կրթական օբյեկտներում, ՀՀ Արարատի և Արմավիրի մարզպետարանների կողմից՝ 5-ական կրթական օբյեկտներում, ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից մեկ դպրոցի ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ, ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից՝ 5 դպրոցների ջեռուցման համակարգի, մեկ դպրոցի արտաքին կոյուղագծի կառուցման աշխատանքներ, կազմվել են 6 դպրոցների համար նախագծանախահաշվային փաստաթղթեր: Նախորդ տարվա համեմատ ծրագրի գծով բյուջետային ծախսերն աճել են 30.6%-ով՝ պայմանավորված աշխատանքների ծավալների աճով:

2014 թվականին 709.1 մլն դրամ է տրամադրվել մարզական օբյեկտների շինարարությանը՝ ապահովելով 98.6% կատարողական: Ծրագրի շրջանակներում կառուցվել է 4 մարզադպրոց՝ 2013 թվականի 3-ի դիմաց և իրականացվել մեկ մարզադպրոցի նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 329.8%-ով՝ պայմանավորված օբյեկտների թվի, ինչպես նաև մեկ օբյեկտի հաշվով շինարարական աշխատանքների ծավալների ավելացմամբ:

Ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգման ծախսերը կատարվել են 68.1%-ով և կազմել 354.2 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է Երևանի թիվ 198 դպրոցի հիմնանորոգման աշխատանքների հետաձգմամբ, ինչպես նաև տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում կատարվել են 4 ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգման և 3 ավագ դպրոցների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ՝ նախորդ տարվա 9-ի դիմաց: 2013 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 14.9%-ով:

Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպմանն ուղղվել է 374.2 մլն դրամ, ապահովելով 100% կատարողական: 2014 թվականին ծրագրի շրջանակներում կազմակերպվել է 4500 երեխայի ամառային հանգիստը՝ 2013 թվականի 3000-ի փոխարեն: Արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 56.8%-ով:

Ավարտական փաստաթղթերի՝ գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ձեռքբերման նպատակով ծախսվել է 284.1 մլն դրամ՝ ապահովելով 99% կատարողական: Նախորդ տարվա համեմատ ծախսերը նվազել են 11.8%-ով՝ պայմանավորված 2014 թվականին ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների քիչ քանակությամբ ձեռքբերման հանգամանքով:

Տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովման ու ավագ դպրոցների դասագրքերի հրատարակման ծրագրի շրջանակներում ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից կատարվել են շուրջ 967.1 մլն դրամի ծախսեր՝ 99.8%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 28.2%-ով՝ պայմանավորված նրանով, որ 2014 թվականին ձեռք են բերվել դասագրքեր նաև ավագ դպրոցների համար:

ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին փոխհատուցման նպատակով տրամադրվել է շուրջ 40.4 մլն դրամ, որը կազմել է նախատեսված ծախսերի 63.9%-ը: Ծրագրի շրջանակներում

գործուղված մանկավարժների թիվը կազմել է 253՝ նախատեսված 310-ի և նախորդ տարվա 270-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.2%-ով:

Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցման նպատակով տրամադրվել է շուրջ 53.6 մլն դրամ՝ ապահովելով 97.2% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Երևան քաղաքի և 7 մարզերի գյուղական բնակավայրերից մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տեղափոխումը: Տնտեսումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ ծախսերի 2.1%-ով անկումը պայմանավորված են այն հանգամանքով, որ տրանսպորտային ծառայություններից օգտվել են նախատեսվածից պակաս թվով աշակերտներ:

Ռազմագիտության կաբինետների վերականգնման համար 2014 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 15.3 մլն դրամ, որը կատարվել է նախատեսված ծավալով: Ձեռք են բերվել 2325 հատ «Առաջին օգնություն» տեսասկավառակ ու համանուն ձեռնարկ և 2325 հատ «Արտակարգ իրավիճակներ» տեսասկավառակ ու համանուն ձեռնարկ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը մնացել են անփոփոխ:

Դպրոցականների հանրապետական սպարտակիադայի անցկացման համար տրամադրվել է 35 մլն դրամ, որը կատարվել է 100%-ով: Անց են կացվել ՀՀ անկախության 23-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 23-րդ խաղերը 9 մարզածևերից, յուրաքանչյուր մարզածև անցկացվել է չորս փուլով: Խաղերին մասնակցել է 1026 մասնակից՝ 2013 թվականի 2804-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը ևս չեն փոփոխվել:

Դպրոցականների օլիմպիադաների անցկացման ծախսերը կազմել են շուրջ 59.7 մլն դրամ՝ 100%-ով կատարելով ծրագիրը: 2014 թվականին անց են կացվել հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլերը հանրակրթական 16 առարկաներից, որոնց մասնակցել է 1461 դպրոցական՝ 2013 թվականի 1468-ի դիմաց, և համահայկական բնագիտական 2-րդ օլիմպիադան. որին մասնակցել է 100 դպրոցական: Հանրապետական փուլի հաղթող դպրոցականներից 37 լավագույնները մասնակցել են նաև միջազգային 8 օլիմպիադաներին՝ 6 առարկաներից: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.8%-ով:

Համակարգչային և ինտերնետային կապի ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 861.7 մլն դրամ, որոնք ամբողջությամբ կատարվել են: Ծրագիրն իրականացվել է 1420 դպրոցում՝ նախորդ տարվա 1396-ի դիմաց: Ուսումնական հաստատություններին տրամադրվել են պահուստային կապի միջոցներ և անվճար բջջային կապի հեռախոսահամարներ: Շահագործվել է ինտերնետային-համակարգչային կայանը: ՀՀ 4 և ԼՂՀ 22 համայնքներում կազմակերպվել են դասընթացներ 235 աշակերտի և 389 ուսուցիչների համար: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Ավելի քան 413.2 մլն դրամ տրամադրվել է գնահատման և թեստավորման ծառայություններին, որոնք մատուցվում են «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են, իսկ նախորդ տարվա համեմատ նվազել են 2.5%-ով՝ պայմանավորված 2014 թվականին ավարտական և միասնական քննություններ հանձնողների թվի

կրճատմամբ: «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ը 2014 թվականի ընթացքում աշխատանքներ է իրականացրել հետևյալ հիմնական ուղղություններով.

- պետական ավարտական և միասնական քննությունների կազմակերպում, մրցույթի իրականացում, արդյունքների վերլուծություն և հրապարակում,
- տարրական, միջին և ավագ դպրոցների ավարտական քննությունների քննական թեստերի մշակում և դպրոցներին տրամադրում, արդյունքների վերլուծություն և հրապարակում,
- հանրակրթական ուսումնական հաստատություններում արտաքին ընթացիկ գնահատումների իրականացում, արդյունքների վերլուծություն և հրապարակում,
- սովորողների գիտելիքների ստուգման ազգային ստուգատեսի կազմակերպում, արդյունքների վերլուծություն և հրապարակում,
- մաթեմատիկայից և բնագիտական առարկաներից սովորողների միջազգային ստուգատեսի (TIMSS) փորձնական փուլի կազմակերպում և իրականացում,
- էքստեռն քննությունների թեստերի մշակում և տրամադրում ԿԳՆ-ին,
- Միջպետական համաձայնագրերով արտասահմանյան բուհերում սովորելու հավակնող շրջանավարտների քննական թեստերի մշակում և տրամադրում ԿԳՆ-ին:

Հանրակրթությունում փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացմանը տրամադրվել է 111.7 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրում ընդգրկված աշակերտների թիվը 2014 թվականին, ինչպես և 2013 թվականին կազմել է ավելի քան 10000: Հեղինակային կրթական ծրագրով մշակվել և վերամշակվել են ավելի քան 60 ծրագիր և դրանց իրականացման համար 200-ից ավելի ուսումնական նախագծեր, ուսուցման կազմակերպման 30-ից ավելի կարգեր, հրապարակվել են մոտ 100 մեթոդական մշակումներ և ուսումնական նյութեր, իրականացվել են մանկավարժական աշխատողների կարողությունների զարգացման սեմինարներ, վերապատրաստումներ և այլն, պատրաստվել են մեդիանյութեր, մեդիաբլոգեր և այլն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 14.8%-ով՝ պայմանավորված 2014 թվականի հուլիսի 1-ից հանրապետությունում նվազագույն աշխատավարձի և մանկավարժական դրույքաչափի, ինչպես նաև էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացմամբ:

Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակման և տրամադրման համար 2014 թվականի պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 79.4 մլն դրամ՝ ապահովելով նախատեսվածի 99.3%-ը: Ծրագրի նպատակներն են՝ աջակցել սփյուռքահայության լեզվամշակութային ուժացման դեմ պայքարին, հայեցի կրթության ու դաստիարակության, հայ ինքնության ճանաչմանը, ազգային ինքնագիտակցության ձևավորմանը, սփյուռքի հայապահպանության ծրագրերի իրականացմանը, նպաստել համայնքներում կրթական ծրագրերի իրականացմանը, աջակցել կրթօջախներում ուսումնական գործընթացի կազմակերպմանն ու որակի բարելավմանը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 3.4%-ով:

2014 թվականի պետական բյուջեից հատուկ դպրոցների համար նախատեսված ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակման և հրատարակման համար կատարվել են շուրջ 14 մլն դրամի ծախսեր՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 87.4%-ը:

Տնտեսումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ ծախսերի 12.5%-ով անկումն առաջացել է տպագրական աշխատանքների գծով որոշ մրցույթների չկայացման պատճառով: Ծրագրի շրջանակներում մշակվել են թվով 20 ուսումնական ծրագրեր և տպագրվել են 4295 օրինակ 6 անուն ուսումնական այլ նյութեր, ձեռք են բերվել 2000 օրինակ բրայյան տետրեր:

2014 թվականին ակադեմիական փոխձանաչման և շարժունության ծառայությունների ծրագրին պետական բյուջեից նախատեսվել և տրամադրվել է շուրջ 42.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում ուսումնասիրված գործերի ընդհանուր քանակը կազմել է 1498, տրամադրվել է 124 խորհրդատվական տեղեկանք՝ 2013 թվականի 165-ի դիմաց: Վերջին ցուցանիշի անկումը մեծապես կախված է Իրանի Իսլամական Հանրապետությունից եկող ուսանողների թվի կրճատմամբ՝ ելնելով Իրանի ներքաղաքական վիճակից և այնտեղ, մասնավորապես, իրավագիտական և բժշկական մասնագիտությունների որակավորումների ձանաչման հետ կապած խնդիրներից: Ճանաչման վերաբերյալ որոշում է կայացվել 18 օտարերկրյա որակավորումների մասին: Տրամադրվել է 1356 տեղեկատվություն տեղական և միջազգային շահառուներին, որի գերակշիռ մասը կազմում է Վրաստանին տրամադրված տեղեկատվությունը՝ կապված Վրաստանում օրենսդրական փոփոխությունների հետ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումների նպատակով հաշվետու տարում ծախսվել է 140 մլն դրամ (100%): Ծրագրի շրջանակներում 2014 թվականին անցկացվել է Եվրոպական ուսումնական հաստատությունների ասոցիացիայի 24-րդ տարեկան համաժողովը, կազմակերպվել է «Կրթություն առանց խտրականության» միջազգային ժողովը, կատարվել է բարձրագույն կրթության բարեփոխումների մասին հանրային իրազեկում, թարգմանվել են անհրաժեշտ գրականություն և իրավական ակտեր, հրատարակվել են գրականություն և ուղեցույցեր, սպասարկվել է անգլալեզու կայքը, իրականացվել են գործուղումներ, կազմակերպվել են Բոլոնիայի քարտուղարության աշխատանքները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների դասում ընդգրկված՝ մարզական օբյեկտների հիմնանորոգման համար հատկացվել է 140.6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 99.7%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Երևան քաղաքի «Տորք Անգեղ» մարզական միության շենքի հիմնանորոգման և Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային մասնաշենքի փլուզված հատվածամասի վերակառուցման և նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ: 2013 թվականի համեմատ այս ծախսերը նվազել են 11.7%-ով՝ պայմանավորված շինարարական աշխատանքների ծավալով:

Հաշվետու տարում պետական բյուջեից 502.4 մլն դրամ է տրամադրվել կրթության բովանդակային և մեթոդական սպասարկման ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծրագրին, որն ամբողջությամբ օգտագործվել է: Վերապատրաստման դասընթացներին մասնակցած ունկնդիրների թիվը կազմել է 9099՝ 2013 թվականի 10031-ի դիմաց, կազմակերպվել են 19 հանրակրթական առարկաների գծով սեմինարներ, որոնց մասնակցել է 6014 մարդ՝ 2013 թվականի 9365-ի դիմաց, մշակված և փորձագիտական եզրակացություն ստացած էջերի թիվը կազմել է 44403՝ 2013 թվականի 48001-ի դիմաց, մշակվել են

հանրակրթական ուսումնական տարբեր չափորոշիչներ, մոդուլներ, հրատարակվել են հոդվածներ, ուղեցույցեր, ընդհանուր առմամբ 141 հատ` 2013 թվականի 149-ի դիմաց: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.2%-ով` պայմանավորված նվազագույն աշխատավարձի և էլեկտրաէներգիայի ու գազի սակագների բարձրացմամբ:

Երեխաների ֆիզիկական, մտավոր և (կամ) հոգեկան զարգացման առանձնահատկությունների բացահայտման և գնահատման ծախսերը կազմել են 181.9 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.0%-ով` կապված նվազագույն աշխատավարձի և մանկավարժների միջին ամսական աշխատավարձի, ինչպես նաև էլեկտրաէներգիայի ու գազի սակագների բարձրացման հետ: 2014 թվականին կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների կրթության կարիքների գնահատման մասով երեխաների ճշտված միջին տարեկան թիվը կազմել է 140` 2013 թվականի 150-ի դիմաց:

2014 թվականի պետական բյուջեից նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումների ուղղությամբ կատարվել են ավելի քան 166 մլն դրամի ծախսեր, որը կազմում է նախատեսվածի 100%-ը: Ծրագրի շրջանակներում մշակվել են 16 մասնագիտությունների որակավորման չափորոշիչների նախագծեր և մասնագետի գնահատման չափորոշիչ, կազմվել են 16 մասնագիտությունների ուսումնական պլաններ և մոդուլային ծրագրեր, վերանայվել են ՄԿՈՒ 10 մասնագիտությունների չափորոշիչներ, ուսումնական պլանները և մոդուլային ծրագրերը, ուսումնական ձեռնարկներ, վերապատրաստվել են հաստատությունների տնօրեններ, փոխտնօրեններ, դասախոսներ, փորձագետներ, կատարվել են հետազոտական, բարեփոխումների արդյունքների գնահատման աշխատանքներ: 2013 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

2014 թվականին 67.1 մլն դրամ է տրամադրվել մասնագիտական կրթության որակի ապահովման ծառայություններին, որոնք ամբողջությամբ օգտագործվել են: Ծրագիրն իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից, որը հետապնդում է մասնագիտական կրթության ոլորտում ուսումնասիրություններ, վերլուծություն, խորհրդատվություն և գնահատում իրականացնելու նպատակներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.5%-ով:

2014 թվականի պետական բյուջեից միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ներդրումների նպատակով նախատեսված 10.0 մլն դրամը չի օգտագործվել գնման մրցույթում մասնակիցների բացակայության պատճառով:

2014 թվականին 97.1 մլն դրամ է տրամադրվել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցմանը, որոնք ամբողջությամբ օգտագործվել են: Եվս 22.9 մլն դրամ հատկացվել է Երևանի քաղաքապետարանին` պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորման շրջանակներում` ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում դասագրքեր են բաշխվել սոցիալապես անապահով ընտանիքների` 5-12-րդ դասարանների աշակերտներին: Նախորդ տարի տվյալ ծրագիրն իրականացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության միջոցով, իսկ 2014 թվականին` նաև ՀՀ մշակույթի նախարարության,

ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի միջոցով: Ընդհանուր առմամբ տվյալ ծախսերը նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

2014 թվականին ՀԲ աջակցությամբ իրականացվող Կրթության որակի և համապատասխանության երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 2.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 69.9%-ը: Տնտեսումը կապված է հիմնականում Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) կողմից բուհերին դրամաշնորհների տրամադրման գործընթացի ժամկետի երկարացմամբ, քանի որ այդ գործընթացի շրջանակում բուհերի համար առանձնահատուկ (մեծ ծավալի) սարքավորումների գնման ընթացակարգը, համաձայն ՀԲ-ի գնումների ուղեցույցերի, պահանջում է երկար ժամանակ: Կնքված դրամաշնորհային ծրագրերի վերջնաժամկետը երկարացվել է: Նաև մեկ անգամ չի կայացել ՀՀ մանկավարժական կրթություն իրականացնող բուհերի համար լաբորատոր սարքավորումների գնման մրցույթը, որի պատճառով կատարվել է ցանկերի վերանայում: Ծրագրի «Հանրակրթության որակի բարելավում» ենթածրագրի շրջանակներում իրականացվել են աշխատանքներ հետևյալ բաղադրիչների գծով.

- Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում,

- Կրթության որակի հետագա բարելավում՝ ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցով,

- Ուսումնական գործընթացում ՏՀՏ-ի ներդրում,

- Աջակցություն ավագ դպրոցի բարեփոխումներին:

«Բոլոնիայի գործընթացի համատեքստում աջակցություն բարձրագույն կրթության բարեփոխումներին» ենթածրագրի շրջանակներում իրականացվել են աշխատանքներ հետևյալ բաղադրիչների գծով.

- Որակի ապահովման ազգային համակարգի ստեղծում և ամրապնդում՝

- Բարձրագույն կրթության որակի արտաքին գնահատման և ապահովման համակարգի ամրապնդման համար՝ փորձագիտական աջակցության տրամադրում Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնին (ՄԿՈԱՊԱԿ),

- ՄԿՈԱՊԱԿ-ի կողմից բուհերի 400 ներկայացուցիչների վերապատրաստում՝ որակի արտաքին և ներքին ապահովման մեխանիզմների շուրջ,

- ՄԿՈԱՊԱԿ-ի կողմից բուհերի ինստիտուցիոնալ փորձնական հավատարմագրում,

- որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման նպատակով պետական և ոչ պետական բուհերին դրամաշնորհների տրամադրում,

- Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի մշակում և ներդրում,

- Աջակցություն բարձրագույն կրթության կայուն ֆինանսական համակարգի ներդրմանը՝

- Աջակցություն նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) կողմից դրամաշնորհների տրամադրմանը բուհերին,

- Աջակցություն բարձրագույն մանկավարժական կրթության բարեփոխման ծրագրին՝

- Բարձրագույն մանկավարժական կրթության բարեփոխման նպատակով ՀՊՄՀ-ի և եվրոպական բուհի հետ համագործակցություն,

- Լաբորատոր սարքավորումների գնում մանկավարժական կրթություն իրականացնող ՀՀ բուհերի համար:

Համահայկական կրթական խորհրդաժողովի անցկացման նպատակով նախատեսված 13 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագիրն անցկացվում է երկու տարին մեկ անգամ: Խորհրդաժողովը նվիրված է եղել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ կազմակերպվելիք կրթական միջոցառումներին: Միջոցառմանը մասնակցել են շուրջ 140 կրթական գործի պատասխանատուներ, համայնքների նախագահներ, թեմական խորհրդի անդամներ և ուսուցիչներ 19 երկրներից: Աշխատանքն իրականացվել է 17 լիազումար և 4 մասնախմբերում: Հնչել են Սփյուռքի տարբեր հատվածներում 100-ամյակին նախապատրաստվելու վերաբերյալ զեկույցներ, քննարկվել են տարբեր դպրոցական առարկաների շրջանակներում Հայոց ցեղասպանության դասավանդման հոգեբանական և մանկավարժական առանձնահատկություններ, դասավանդման մեթոդաբանություն:

Ուսուցիչների ատեստավորման գծով ծախսերը կազմել են ավելի քան 1.9 մլն դրամ կամ ծրագրի 44.6%-ը: Տնտեսումը պայմանավորված է ուսուցիչների ատեստավորման կարգի մեջ կատարված փոփոխության արդյունքում գործուղումների քանակի նվազմամբ, ինչպես նաև գնումների մրցույթների արդյունքում գումարի տնտեսմամբ: 2014 թվականին տարակարգ ստացած ուսուցիչների թիվը հասել է 303-ի` 2013 թվականի 87-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 14.9%-ով:

2014 թվականին «Հայ ասպետ» հեռուստամրցաշարի անցկացմանը պետական բյուջեից հատկացվել է 67.5 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: ՀՀ հանրային հեռուստաալիքով հեռարձակվող հեռուստամրցաշարին մասնակցել են թվով 96 դպրոցների 1056 աշակերտներ 2013 թվականի 81 դպրոցների 567 աշակերտների դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Արտասահմանում սովորող ուսանողներին հաշվետու տարում հատկացվել է 100 մլն դրամ աջակցություն, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2013 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել: Ծրագիրն իրականացվում է «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի կողմից, որի առաքելությունն է`

- ստեղծել ու համախմբել առաջադեմ և ստեղծագործ մտածելակերպ ունեցող ուսանողների սերունդ` բազմապատկելով աշխարհի լավագույն համալսարաններ հաճախող հայ ուսանողների թիվը` նրանց տրամադրելով նյութական, մենթորական և այլ աջակցություն,
- ստեղծել ենթակառուցվածք, որն ի մի կերբի «Լույսի»-ի ուսանողների գիտելիքները, փորձառությունն ու կապերը, և կառաջարկի ծրագրեր, որոնք կօգնեն ուսումնական ձեռքբերումներից անցում կատարել իրական աշխարհի նվաճումներին` ի բարօրության Հայաստանի:

Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչների հավելավճարների տրամադրմանն ուղղվել է 33.7 մլն դրամ` կազմելով ծրագրի 67.5%-ը: Տնտեսումն առաջացել է տարակարգերի շնորհման համար իրականացված ատեստավորումները նախատեսվածից ավելի



ուշ ժամկետներում անցկացնելու հանգամանքով: Տարակարգ է շնորհվել ընդամենը 303 ուսուցչի՝ 2013 թվականի 87-ի դիմաց: 2013 թվականի համեմատ ծախսերն աճել են 3.7 անգամ՝ պայմանավորված տարակարգերի շնորհման համար դիմած ուսուցիչների թվով:

Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովման նպատակով նախատեսված 120.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: ՀՀ կառավարության որոշմամբ 2014 թվականին այն ներդրվել է նաև ՀՀ Սյունիքի և ՀՀ Վայոց ձորի մարզերում: Ծրագրից շրջանակներում սնունդ են ստացել ՀՀ Սյունիքի մարզի 112 դպրոցների տարրական դասարանների 5948 և նախակրթարանների 88 աշակերտներ, իսկ ՀՀ Վայոց ձորի մարզում՝ տարրական դասարանների 2382 աշակերտներ: 2013 թվականին այն նախատեսված էր տրամադրել ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակին, սակայն միջոցները չեն փոխանցվել, քանի որ նախորդ տարվանից վերջինիս մոտ մնացել էր չիրացված գումար, որն էլ ծախսվել է 2013 թվականի ընթացքում:

2014 թվականին 9.2 մլն դրամ է տրամադրվել կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման ծրագրին՝ կազմելով ծրագրի 92%-ը: Ծրագրի նպատակն է տարատարիք ուսումնական խմբերում մաթեմատիկա առարկայի դասավանդման հայեցակարգային դրույթների մշակումը, ուսուցման կազմակերպման համար նախատեսված ուսումնադիդակտիկ նյութերի մշակումն ու փորձարկումը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 8%-ով:

Բուխարեստի համալսարանում հայոց լեզվի դասավանդման կազմակերպմանը տրամադրվել է 3.6 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում մեկ դասախոս իրականացրել է հայոց լեզվի դասավանդում Բուխարեստի համալսարանում: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 2.1 անգամ: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2013 թվականին դասախոսի վարձատրությունը, համաձայն պայմանագրի, կատարվել է փաստացի աշխատած ժամանակահատվածի համար:

Սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրմանը հատկացվել է 3.6 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում մեկ դասախոս իրականացրել է դասախոսություն սփյուռքագիտության ոլորտում Զալցբուրգի համալսարանում: 2013 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

2014 թվականին 60.0 մլն դրամ է տրամադրվել հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման ծրագրին՝ ապահովելով 100% կատարողական: Բուհերի և հանրակրթական ուսումնական հաստատությունների 2013-2014 ուսումնական տարվա վարկանիշավորման իրականացման համար.

- կազմակերպվել են հանդիպումներ և քննարկումներ,
- իրականացվել են վարկանիշավորման մեթոդաբանության լրամշակման աշխատանքներ և վարկանիշավորման մեթոդաբանության լրամշակման հիման վրա իրականացվել են ծրագրային փոփոխություններ էլեկտրոնային համակարգերում,
- հրապարակվել է «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ազգային վարկանիշավորման համակարգ» հարցաթերթիկների լրացման ուղեցույցը, իրականացվել է

ընտրանքային հետազոտություն բուհերի դասախոսների, ուսանողների և գործատուների շրջանակներում,

- կատարվել են տեղեկատվության հավաքագրման և մուտքագրման աշխատանքներ:

2014 թվականին կազմակերպվել է բուհերի 6 ցուցանիշներով 49 վարկանիշավորում: Կատարվել է 1389 դպրոցների 5 ցուցանիշներով վարկանիշավորում, որոնցից 1357-ը՝ պետական և 32-ը՝ ոչ պետական:

Աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաների բուժման, վերականգնման, կրթության և զբաղվածության ապահովման ծրագրին տրամադրվել է 67.6 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրով նախատեսվել և իրականացվել են թվով 58 երեխաների կրթաբուժական ծառայություններ՝ 2013 թվականի 50 երեխայի դիմաց: Ծախսերի աճը կազմել է 19.9% կամ 11.2 մլն դրամ՝ կապված երեխաների թվի ավելացման, նվազագույն աշխատավարձի, էլեկտրաէներգիայի ու գազի սակագների բարձրացման հետ:

2014 թվականին «Ուսանողներին ուսումնական վարկերի տրամադրում» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորման ծրագրի գծով նախատեսված 38.0 մլն դրամի դիմաց տրամադրվել է 14.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 37.2% կատարողական, որը պայմանավորված է վարկավորմամբ զբաղվող ֆինանսական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի քանակով:

«Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխման շարունակություն և զբաղվածության հայեցակարգի մշակում» ծրագրի շրջանակներում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման ծախսերը կազմել են 1.1 մլրդ դրամ կամ 92.4%: Իրականացվել են հիմնանորոգման և նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ թվով 7 արհեստագործական ուսումնական հաստատություններում՝ Հայաստանի Հանրապետության մարզերում (Լոռի, Շիրակ, Սյունիք և Տավուշ) և Երևան քաղաքում:

ՀԲ աջակցությամբ իրականացվող հանրակրթության բարելավման ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2014 թվականին օգտագործվել է շուրջ 78.3 մլն դրամ կամ նախատեսվածի 66.5%-ը: Տնտեսումը պայմանավորված է նրանով, որ ծրագիրն ընդգրկվել է հիմնական վարկային ծրագրի մեջ և կշարունակվի այլ ծրագրային փաթեթի ներքո: Ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի 14 հաստատություններում ստեղծվել են նախակրթարաններ, իրականացվել են համապատասխան տարածքների բարեկարգման, գույքով համալրման աշխատանքները, ձեռք են բերվել անհրաժեշտ ուսումնամեթոդական համալիր, խաղալիքներ, պիտույքներ և այլն: Նոր նախակրթարաններում ընդգրկված են մոտ 400 երեխա: Նախադպրոցական կրթական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկան և դրա վրա ազդող գործոնների ուսումնասիրման նպատակով հետազոտություն է իրականացվել Կոտայքի մարզում և Երևանում: 2013 թվականի համեմատ ծախսերի աճը կազմել է 49.4%, որը պայմանավորված է 2013 թվականին ծրագիրը ուշ հաստատելու հանգամանքով:

2014 թվականին պետական բյուջեից շուրջ 748.4 մլն դրամ տրամադրվել է այլ դասերին *չպատկանող կրթության* բնագավառում գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի (623.5 մլն դրամ կամ ծրագրի 98.4%-ը) և ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (124.8 մլն դրամ կամ ծրագրի 98.6%-ը) պահպանմանը: Տվյալ ծախսերի տարեկան ծրագիրը կատարվել է 98.5%-ով, իսկ 2013 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 33.5%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ, դրանց բնականոն աճով և էլեկտրաէներգիայի ու ջեռուցման սակագների բարձրացմամբ:

**Սոցիալական պաշտպանություն**

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի 27.7%-ն ուղղվել է *սոցիալական պաշտպանության* ոլորտին: Կատարված հատկացումները կազմել են 342.5 մլրդ դրամ՝ ապահովելով 97.3% կատարողական, որը հիմնականում պայմանավորված է «Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)», «Ընտանիքի անդամներ և զավակներ» և «Ծերություն» դասերի կատարողականով: 2013 թվականի համեմատ սոցիալական պաշտպանության ծախսերն ավելացել են 15.2%-ով կամ 45.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված կենսաթոշակների և նպաստների ծախսերի ավելացմամբ, ինչպես նաև կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման հետ կապված ծախսերով:

Հաշվետու տարում ավելի քան 1.2 մլրդ դրամ տրամադրվել է *վատառողջության և անաշխատունակության* խմբին՝ ապահովելով 98.2% կատարողական: Նշված ծախսերը 2013 թվականի համեմատ աճել են 1.3%-ով:

*Վատառողջության* դասին տրամադրվել է 195.7 մլն դրամ, որի կատարողականը կազմել է 93.8%: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 5.7%-ով: Հաշվետու տարում 92.8 մլն դրամ տրամադրվել է աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցմանը, որը կազմել է ծրագրի 93%-ը: Տնտեսումը բացատրվում է նպաստառուների թվի կրճատմամբ՝ նախատեսված 575 անձի փոխարեն փոխհատուցում են ստացել 524-ը: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերի 12%-ով աճը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի աճի հանգամանքով:

Բժշկա-սոցիալական վերականգնման ծառայությունների շրջանակներում կատարված ծախսերը կազմել են 102.9 մլն դրամ կամ նախատեսվածի 94.6%-ը, որը տնտեսումների արդյունք է: Այս ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվում է նախապրոթեզավորման և հետպրոթեզավորման, աշխատունակության վերականգնման կարիք ունեցող հաշմանդամ քաղաքացիների բուժումը: Ծրագրի շրջանակներում 2014 թվականին նախատեսված 4 հիվանդությունների գծով 643 քաղաքացու բուժման փոխարեն փաստացի անվճար բժշկական օգնություն է տրամադրվել 691 հիվանդի: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

2014 թվականին ավելի քան 1 մլրդ դրամ տրամադրվել է *անաշխատունակության* դասին՝ ապահովելով 99.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ անաշխատունակության դասի ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Ղարոցն ավարտած, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայությունների ձեռքբերման համար տրամադրվել է 10.5 մլն դրամ (99.9%): 2013 թվականի համեմատ այս ծախսերը փոփոխություն չեն կրել:

Հաշմանդամներին անվճար պրոթեզատրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման համար ծախսվել է 854 մլն դրամ՝ ապահովելով 99.3% կատարողական: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել են անվճար բժշկական օգնության և սպասարկման իրավունք ունեցող հաշմանդամ քաղաքացիների համար գերմանական և հայրենական տեխնոլոգիաներով արտադրվող պրոթեզատրթոպեդիկ պարագաների և վերականգնման տեխնիկական միջոցների պատրաստումը, վերանորոգումը, տրամադրվել են նաև ձայնաստեղծ սարքեր և աչքի պրոթեզներ: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ գրեթե փոփոխություն չեն կրել:

Հոգեկան առողջության վերականգնման ծառայություններին հատկացվել է 66.5 մլն դրամ՝ ապահովելով 96.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3%-ով: Ծրագրի շրջանակներում 4 հիվանդությունների գծով անվճար բժշկական օգնություն է տրամադրվել 336 հիվանդի:

Մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասներին և երիտասարդներին սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցման համար օգտագործվել է 21.3 մլն դրամ՝ տնտեսումների արդյունքում կազմելով նախատեսվածի 97.5%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 19.5%-ով, որը պայմանավորված է աշխատավարձի աճով:

Հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 85.9 մլն դրամ կամ նախատեսվածի 99.4%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.3%-ով, որը պայմանավորված է գների աճով:

*Ծերության* դասի ծրագրերին հատկացվել է 240.5 մլրդ դրամ՝ ապահովելով 99.1% կատարողական: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 20.3%-ով՝ հիմնականում պայմանավորված կենսաթոշակների գծով ծախսերի աճով:

Սպայական անձնակազմի ու նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների ծախսերը կազմել են 21.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.5%-ը, որը տնտեսումների արդյունք է: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 12.5%-ով կամ 2.4 մլրդ դրամով: Աճը պայմանավորված է ՀՀ-ում 2014 թվականի հունվարի 1-ից հիմնական կենսաթոշակի չափի բարձրացմամբ, որը ՀՀ կառավարության որոշմամբ 2014 թվականի հունվարի 1-ից սահմանվեց 14000 դրամ՝ նախկին 13000 դրամի դիմաց, կենսաթոշակների վերահաշվարկի, ինչպես նաև ուժային որոշ կառույցներում կենսաթոշակառուների թվաքանակի աճի հանգամանքներով:

Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովման ծախսերը կազմել են 990.6 մլն դրամ՝ ապահովելով 98.9% կատարողական: 2013

թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 9.6%-ով կամ 105.3 մլն դրամով: Ծախսերի նվազումը, ինչպես նաև ծրագրային ցուցանիշից շեղումը, բացատրվում է բացառապես Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամ և մասնակից կենսաթոշակառուների թվաքանակի կրճատման հանգամանքով:

Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստների ծախսերը կատարվել են 99.9%-ով և կազմել շուրջ 11.5 մլրդ դրամ: 2013 թվականի համեմատ դրանք աճել են 10.5%-ով կամ 1.1 մլրդ դրամով: Սոցիալական նպաստների ծախսի աճը 2013 թվականի համեմատ բացատրվում է ոչ միայն հիմնական կենսաթոշակի աճի, այլ նաև սոցիալական նպաստառուների թվի աճով:

ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակների ծախսերը կազմել են 391.4 մլն դրամ, ապահովելով 97.3% կատարողական: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.8%-ով, որը պայմանավորված է դատավոր կենսաթոշակառուների թվաքանակի աճի, ինչպես նաև առանձին դատավորների կենսաթոշակների չափերի՝ դատական կարգով վերահաշվարկի հանգամանքով:

Տարեցների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված տարեցների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցությունը կազմել է 1.6 մլրդ դրամ՝ ապահովելով 94.6% կատարողական, որը պայմանավորված է նախատեսվածի նկատմամբ փաստացի պակաս թվաքանակով տարեցների սպասարկում իրականացնելու (1090 շահառուի փոխարեն 1045 շահառու) հանգամանքով, ինչպես նաև հաստատուն ծախսերի գծով առաջացած տնտեսումներով, որոնք պայմանավորված են գնումների գործընթացով և կոմունալ ծախսերը նախատեսվածից պակաս լինելու հանգամանքներով: Ծախսերը նախորդ տարվա նկատմամբ աճել են 15.7%-ով, որը պայմանավորված է աշխատավարձի և էլեկտրաէներգիայի սակագների բարձրացմամբ:

Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկման նպատակով նախատեսված հատկացումներն օգտագործվել են 99.9%-ով՝ կազմելով 122.9 մլն դրամ: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 25.5%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձի և էլեկտրաէներգիայի սակագների բարձրացմամբ:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի նպատակով 2014 թվականին տրամադրվել է 17.4 մլն դրամ պետական աջակցություն, որը կատարվել է 89.3%-ով: Սույն ծրագրով «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում իրականացվում է հոգեկան առողջության հետ խնդիրներ ունեցող անձանց ցերեկային սպասարկում: Շեղումը պայմանավորված է 50 շահառուի փոխարեն փաստացի 44 շահառու սպասարկելու հանգամանքով: Ծախսերը նախորդ տարվա նկատմամբ աճել են 38.8%-ով, որը պայմանավորված է աշխատավարձի և էլեկտրաէներգիայի սակագների բարձրացմամբ:

ՀՀ մարզերում միայնակ տարեցներին և հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկման նպատակով «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը տրամադրվել է 171.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.7%-ը: Ծրագիրը նախատեսված է տնային պայմաններում և

տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում միայնակ տարեցների և հաշմանդամների սպասարկման, ինչպես նաև անապահով անձանց շաբաթվա աշխատանքային օրերին ճաշարաններում մեկ անգամ սննդի տրամադրման համար: Ծախսերը 2013 թվականի նկատմամբ աճել են 7.7%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի աճով:

Աշխատանքային կենսաթոշակների ծախսերը, որոնք կազմել են 194.7 մլրդ դրամ և օգտագործվել են 99.8%-ով, տվյալ դասում ամենամեծ կշիռն ունեն: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 16.4%-ով կամ 27.4 մլրդ դրամով, որը պայմանավորված է հիմնական կենսաթոշակի և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի աճի հանգամանքով:

Վանաձորի տարեցների տանը խնամվողների շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման ծրագրին հատկացված միջոցները կազմել են 19.8 մլն դրամ՝ ապահովելով 97.4% կատարողական: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 36.6%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի աճով:

Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման նպատակով 2014 թվականի ՀՀ պետական բյուջեից առաջին անգամ տրամադրվել է 9.5 մլրդ դրամ՝ ապահովելով 90.5% կատարողական: Միջոցները նախատեսվել են «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն մասնակցի համար կուտակային վճարի սահմանված չափը լրացնելու նպատակով:

2014 թվականին ՀՀ պետական բյուջեից «Հարազատին կորցրած անձինք» խմբի շրջանակներում կատարված ծախսերը կազմել են ավելի քան 4.9 մլրդ դրամ՝ ապահովելով 97.3% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.9%-ով:

Հայաստանի զոհված ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձանց ընտանիքներին նպաստի վճարման ծախսերը կազմել են 138.5 մլն դրամ, որոնք, տնտեսումների հետ կապված, իրականացվել են 89.5%-ով: Նշված ծախսերը նախորդ տարվա նկատմամբ աճել են 5.4%-ով՝ պայմանավորված պարգևատրվածների թվի աճով:

Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, սոցիալական նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստը կազմել է 4.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.5%-ը՝ պայմանավորված տնտեսումներով: Ծախսերը նախորդ տարվա նկատմամբ աճել են 1.8%-ով:

«Ընտանիքի անդամներ և գավակներ» խմբի ծախսերը հաշվետու տարում կազմել են 57.2 մլրդ դրամ՝ ապահովելով 96.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերն աճել են 12.5%-ով, որը հիմնականում պայմանավորված է երեխայի ծննդյան միանվագ նպաստի, հղիության և ծննդաբերության նպաստի ու ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ծախսերի աճով: Խմբի ծախսերի զգալի մասը՝ 35.4 մլրդ դրամ, տրամադրվել է ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ֆինանսավորմանը, որը կազմել է նախատեսվածի 98.9%-ը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 2.5%-ով, որը պայմանավորված է նպաստի չափի բարձրացման հանգամանքով: 2014 թվականի օգոստոսի 1-ից նպաստի բազային մասը բարձրացել է 1000 դրամով:

ՀՀ պաշտպանության և փրկարարական ծառայության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ու փրկարար ծառայողների

ընտանիքներին հաշվետու տարում տրամադրվել են 90.4 մլն դրամ միանվագ սոցիալական ապահովագրության վճարներ, որոնք կազմել են նախատեսվածի 15%-ը և 8.3%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

2014 թվականին մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների գծով ծախսերը կազմել են շուրջ 3.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.6%-ը: 2013 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 1.5%-ով՝ պայմանավորված փաստացի նպաստառուների թվաքանակի ավելացման հանգամանքով:

ՀՀ մանկատների շրջանավարտներին 2014 թվականին պետական բյուջեից տրամադրվել է 8.7 մլն դրամի աջակցություն և խորհրդատվություն, որը կատարվել է 53.4%-ով: Սույն ծրագրի նպատակն է մանկատների 18 տարին լրացած շրջանավարտների ինտեգրումը հասարակությանը: Ծրագիրը 2014 թվականին ենթարկվել է բովանդակային փոփոխության, որի արդյունքում կատարող կազմակերպության հետ պայմանագիրը կնքվել է ապրիլ ամսին: Նշված կատարողականը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ ծախսերի 67.7%-ով անկումը պայմանավորված են ծրագիրն ուշ սկսելու, ինչպես նաև նախորդ տարիներին ձեռք բերված որոշ ապրանքներ շրջանավարտներին տրամադրելու հանգամանքով:

Հղիության և ծննդաբերության նպաստի գծով ծախսերը կազմել են 7 մլրդ դրամ, որոնք կատարվել են 100%-ով: 2013 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 38.9%-ով, որը պայմանավորված է 2013 թվականի չորրորդ եռամսյակի պարտավորությունների մարումը 2014 թվականին կատարելու, ինչպես նաև նպաստառուների թվաքանակի և նվազագույն ու միջին աշխատավարձի աճի հետ կապված՝ նպաստների չափերի աճով:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարումը կազմել է շուրջ 8 մլրդ դրամ, որը կատարվել է 92.9%-ով: 2013 թվականի նկատմամբ նշված ծախսերն աճել են 75.3%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2014 թվականից 3-րդ և 4-րդ երեխայի ծննդյան դեպքում նպաստի չափը սահմանվել է 1 մլն դրամ, իսկ 5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1.5 մլն դրամ:

2014 թվականին վարժական հավաքների և զինծառայության ու փրկարարական ծառայության ընթացքում մահացած (զոհված) զինծառայողների ու փրկարար ծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 70.9%-ով, որը կազմել է 262.4 մլն դրամ՝ նախորդ տարվա 364.6 մլն դրամի դիմաց:

Երեխաների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով երեխաների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցության ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 2.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 92.2%-ը: Շեղումը պայմանավորված է երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող հաստատությունների կողմից նախատեսվածի նկատմամբ փաստացի պակաս թվաքանակով երեխաների սպասարկում իրականացնելու հանգամանքով (շահառուների թիվը կազմել է 722՝ նախատեսված 745-ի փոխարեն), ինչպես նաև որոշ ծախսերի գծով առաջացած տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.7%-ով, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

« Երեխաների շուրջօրյա խնամքի և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափման) ծառայությունների ձեռքբերման ծախսերը կատարվել են 94.3%-ով՝ կազմելով 20.9 մլն դրամ: Շեղումը բացատրվում է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 81.4%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2014 թվականից ծրագիրն ընդլայնվել է. նախկինում այն իրականացվում էր Լոռիում, իսկ 2014 թվականից՝ նաև Գյումրիում:

Ռիսկի գոտում հայտնված երեխաներին սոցիալական հոգածության ծառայությունների ծախսերը կազմել են 214 մլն դրամ կամ նախատեսվածի 95.3%-ը: Ծրագրի շրջանակներում երեք ցերեկային կենտրոններում իրականացվել է 267 երեխաների ցերեկային խնամք՝ նախատեսված 300-ի փոխարեն: Ծախսերի տարբերությունը նախատեսվածի նկատմամբ պայմանավորված է նաև տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.1%-ով՝ կապված աշխատավարձի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման հետ:

« քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 05-1680 գործով 15.07.2005թ. վճռի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողին կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցման ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 1.1 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայություններին տրամադրվել է 954.6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 91.7%-ով կատարում, որը պայմանավորված է 8 գիշերօթիկ հաստատությունների կողմից 800 շահառուի փոխարեն փաստացի տարեկան միջինը 536 շահառու խնամելու հանգամանքով: Իսկ փաստացի խնամվողների պակասը նախատեսվածի նկատմամբ պայմանավորված է շահառուների ժամանակավոր բացակայությամբ. շահառուների մեծ մասը հանգստյան օրերին գնում է տուն, կամ գտնվում է ճամբարներում և հանգստյան տներում: Տվյալ ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 4.2%-ով՝ պայմանավորված աշխատավարձի և էլեկտրաէներգիայի սակագների բարձրացմամբ:

2014 թվականին երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից դժվար իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական հոգածության ծառայությունների շրջանակներում տրամադրվել է 63.3 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ով կատարում: Սույն ծրագիրն իրականացվում է համաֆինանսավորման սկզբունքով, և ծրագիրն իրականացնող ՀԿ-ին « Կետական բյուջեից հատկացվում են միայն աշխատավարձերը: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 22.2%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման ծառայությունների ծախսերը կազմել են 23.4 մլն դրամ՝ ապահովելով 65% կատարողական, որը պայմանավորված է խնամատար ընտանիք տեղափոխվող փաստացի երեխաների թվաքանակը նախատեսվածից 8 շահառուով պակաս լինելու հանգամանքով. 25 շահառուի փոխարեն ծրագրից օգտվել է 17 շահառու: Նշված ծախսերը 2013 թվականի նկատմամբ աճել են 2.6%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

« մանկատներում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին հաշվետու տարում տրամադրվել է շուրջ 4.9 մլն դրամ աջակցություն կամ նախատեսվածի 77.2%-ը: Ծրագրի



շրջանակներում միջոցներ են հատկացվում դպրոցական տարիքի երեխաների գրպանի ծախսերի համար: Շեղումը պայմանավորված է 196 երեխաների փոխարեն տարեկան միջին փաստացի 169 դպրոցահասակ երեխաների դրամական աջակցություն տրամադրելու հանգամանքով: Արդյունքում նշված ծախսերը նվազել են նաև 2013 թվականի նկատմամբ՝ 2.3%-ով:

ՀՀ մանկատների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրման ծախսերը կազմել են 950 հազար դրամ կամ նախատեսվածի 33.9%-ը և 25.8%-ով նվազելով նախորդ տարվա համեմատ: Ծրագրից շեղումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ ծախսերի անկումը պայմանավորված է շահառուների փաստացի քանակով. այն կազմել է 18՝ նախատեսված 35-ի և նախորդ տարվա 28-ի դիմաց:

Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին դրամական օժանդակության փաթեթի տրամադրման ծախսերը կազմել են 16.4 մլն դրամ, որն իրականացվել է նախատեսված ծավալով: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերն աճել են 68.6%-ով, որը պայմանավորված է ծրագրի ընդլայնման հանգամանքով՝ նախկինում այն իրականացվում էր Վանաձորում, իսկ 2014 թվականից՝ նաև Գյումրիում:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 07-3832 գործով 2007 թվականի նոյեմբերի 3-ի վճռի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողին կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցումը կազմել է 2.3 մլն դրամ (100%): 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 7.4%-ով:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի գործերով վճիռների համաձայն կրած վնասների փոխհատուցումը և ամբողջությամբ կատարվել է՝ կազմելով 6.3 մլն դրամ: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերն աճել են 18.2%-ով:

Անօթևան երեխաների համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայությունների ծախսերը կազմել են 31.9 մլն դրամ կամ տարեկան ծրագրի 84.6%-ը: Ծրագրից շեղումը պայմանավորված է նախատեսված 20 երեխայի փոխարեն 13 երեխա խնամելու հանգամանքով, ինչի հետևանքով էլ 2013 թվականի համեմատ տվյալ ծախսերը նվազել են 10.4%-ով:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության 1-ին ատյանի դատարանի 08.06.2012թ. Գործ N ԵԴԿ /1247/02/10/ վճռի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողը կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցումը կազմել է 369.4 հազար դրամ, որը կատարվել է նախատեսված գումարի չափով:

2014 թվականին պետական բյուջեից 1.5 մլրդ դրամ տրամադրվել է *գործազրկության* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 65.8%-ը: 2013 թվականի նկատմամբ նշված ծախսերը նվազել են 33.4%-ով՝ հիմնականում պայմանավորված գործազրկության նպաստի ծախսերի կրճատմամբ:

Ինքնազբաղվածության խթանման նպատակով փոքր ձեռնարկատիրության աջակցությունը կազմել է շուրջ 47 մլն դրամ կամ նախատեսվածի 62.6%-ը: Շեղումը պայմանավորված է զբաղվածության նոր ռազմավարության ներդրման հետ կապված՝ ծրագիրը 2014 թվականի հուլիս ամսից իրականացնելու հանգամանքով: Տվյալ ծախսերը նախորդ տարվա համեմատ ավելացել են 46.3 մլն դրամով, աճը պայմանավորված է զբաղվածության նոր ռազմավարության իրականացմամբ,

որով նախատեսվում է գործազրկության նպաստ հատկացնելու փոխարեն օգնել գործազուրկներին զբաղվել փոքր ձեռնարկատիրությամբ:

Գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծախսերը կազմել են 110.8 մլն դրամ կամ նախատեսվածի 58.9%-ը: Շեղումը պայմանավորված է ծրագրում ընդգրկված անձանց քանակով՝ նախատեսված 330 անձի փոխարեն ծրագրում ընդգրկվել է ամսական միջին հաշվով 235 անմրցունակ անձ: Նշված ծախսերը նախորդ տարվա նկատմամբ ավելացել են 19.4%-ով՝ պայմանավորված աշխատաշուկայում անմրցունակ անձանց թվի ավելացմամբ և նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Մասնագիտական ուսուցման կազմակերպման նպատակով տրամադրվել է 199.7 մլն դրամ կամ նախատեսվածի 82.2%-ը: Սույն ծրագրի կատարողականը պայմանավորված է ծառայությունների մատուցման գնման ընթացակարգի արդյունքում միավորի գների տնտեսման հանգամանքով, ինչպես նաև 4-րդ եռամսյակում մասնագիտական ուսուցման ծրագրում ընդգրկված անձանց համար նախատեսված գումարները 2015 թվականին փոխհատուցելու հանգամանքով՝ ելնելով ծառայության մատուցման պայմանագրերով նախատեսված ժամկետներից:

Մասնագիտական կողմնորոշման, համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայությունների գծով ծախսերը կազմել են 25.6 մլն դրամ՝ ապահովվելով 94.6% կատարողական, որը պայմանավորված է ծրագիրն իրականացնող «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ում կոմունալ ծախսերի տնտեսմամբ: 2013 թվականի նկատմամբ նշված ծախսերն ավելացել են 15.5%-ով, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման հանգամանքներով:

2014 թվականին գործազրկության նպաստի վճարմանն ուղղվել է 676 մլն դրամ, որը կատարվել է 95.3%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 65.3%-ով կամ 1.3 մլրդ դրամով: Ծախսերի անկումը պայմանավորված է այն հանգամանքով, որ զբաղվածության նոր ռազմավարությամբ նախատեսվել է գործազրկության նպաստի համար հատկացված միջոցներն ուղղել գործազուրկների համար ակտիվ ծրագրերի իրականացմանը:

Այլ վայր աշխատանքի տեղավորման աջակցությունը կազմել է 28.7 մլն դրամ կամ նախատեսվածի 72.9%-ը: Կատարողականը մասամբ պայմանավորված է պահանջվող մասնագետների բացակայությամբ: Ծրագրի շրջանակներում այլ բնակավայր աշխատանքի է գործուղվել 37 անձ՝ նախատեսված 42-ի փոխարեն: «Զբաղվածության մասին» ՀՀ նոր օրենքի և օրենքի կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության 2014 թվականի 17 ապրիլի N 534-Ն որոշմամբ, որն ուժի մեջ է մտել 2014 թվականի հունիսի 1-ից, բարելավվել են ծրագրում ընդգրկող շահառուներին առաջարկվող պայմանները:

Աշխատաշուկայի հետազոտման աշխատանքների կազմակերպմանը պետական բյուջեից տրամադրվել է 4.8 մլն դրամ: Տնտեսումների արդյունքում նշված ծախսերը կատարվել են 95.4%-ով և նախորդ տարվա համեմատ նվազել 4.6%-ով:

Աշխատանքի տոնավաճառի կազմակերպմանը տրամադրվել է 7.7 մլն դրամ, որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով և նախորդ տարվա համեմատ մնացել նույն մակարդակի վրա:

Աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 16.7 մլն դրամ կամ նախատեսվածի 94.8%-ը՝ կապված տնտեսումների հետ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.2%-ով, որը պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ:

Մասնագիտական աշխատանքային փորձ չունեցող անձանց աշխատանքային պրակտիկայի կազմակերպման համար տրամադրվել է 100.9 մլն դրամ՝ ապահովվելով 94.3% կատարողական: 2014 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել էր ծրագրում ընդգրկել 350 անձ, փաստացի ընդգրկվել է 349 գործազուրկ: Ծրագիրը հիմնականում իրականացվել է 4-րդ եռամսյակում, իսկ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների համար միջոցների վճարումը տեղափոխվել է 2015 թվական՝ ելնելով ծառայության մատուցման պայմանագրերով նախատեսված ժամկետներից: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 51.4%-ով՝ պայմանավորված շահառուների թվաքանակի և նվազագույն ամսական աշխատավարձի աճով: 2013 թվականին ծրագրում ընդգրկվել էր 305 անձ:

2014 թվականին աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման համար գործատուներին տրամադրվել են 75.2 մլն դրամ միանվագ փոխհատուցումներ: Ծախսերը կատարվել են 49%-ով, որը պայմանավորված է «Ձբաղվածության մասին» ՀՀ նոր օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերը 2014 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակներում ընդունվելու հանգամանքներով. արդյունքում ծրագիրն իրականացվել է ընդամենը 5 ամիս: Ծրագիրը բաղկացած է 2 ենթածրագրերից: Առաջինը աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար փոխհատուցումն է, որում նախատեսված 410 անմրցունակ անձի փոխարեն ընդգրկվել է 350 անձ: Երկրորդ՝ «Հաշմանդամություն, այդ թվում տեսողական խնդիրներ ունեցող անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման ու աշխատատեղերի հարմարեցման» ենթածրագրում նախատեսված 123 անձի փոխարեն ընդգրկվել է 9 հաշմանդամություն ունեցող անձ: Երկրորդ ենթածրագրի իրականացման ընթացքում ի հայտ են եկել մի շարք լուծում պահանջող խնդիրներ (հաշմանդամություն ունեցող անձանց աշխատելու մոտիվացիայի բացակայությունը, ոչ մատչելի աշխատատեղեր՝ տեղաշարժման սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց համար, աշխատատեղերի գնահատման և հարմարեցման չափորոշիչների, աշխատանքային կարողությունների գնահատման մեխանիզմների բացակայություն և այլն), որոնք դժվարացրել են ծրագրի իրականացումը:

Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով աջակցությունը գյուղացիական տնտեսություններին կազմել է 240.9 մլն դրամ կամ նախատեսվածի 38.2%-ը: Ծրագիրն իրականացվում է 2014 թվականից, իսկ ցածր կատարողականը պայմանավորված է «Ձբաղվածության մասին» ՀՀ նոր օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերը 2014 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակներում ընդունվելու հանգամանքներով: Հաշվետու տարում ծրագրի շրջանակներում հանրապետության 10 մարզերի 248 համայնքում իրականացվել է 2583 ծրագիր:

2014 թվականից նախատեսված՝ աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության ծառայություններից օգտվելու համար աջակցության ծրագիրը գրեթե չի կատարվել (ծախսերը կատարվել են 0.4%-ով և կազմել 35 հազ. դրամ), որը պայմանավորված է «Զբաղվածության մասին» ՀՀ նոր օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերը 2014 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակներում ընդունվելու հանգամանքներով: Ծրագրի շրջանակներում 9 ամսվա համար նախատեսվել էր 75 անձի աշխատանքի տեղավորում ոչ պետական կազմակերպությունների միջոցով: Կազմակերպությունների հետաքրքրվածությունը ծրագրի նկատմամբ խիստ ցածր է: Չնայած այն հանգամանքին, որ այն ներկայացվել է շուրջ 20 աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների՝ դրանցից ընդամենը չորսն է ցանկություն հայտնել համագործակցել, որոնց հետ կնքվել է համագործակցության հուշագիր: Կազմակերպություններին խորհրդատվության տրամադրման, ծրագրի էությունը ներկայացնելու աշխատանքները տարածքային կենտրոնների կողմից շարունակվում են: Ծրագիրն ընթացքի մեջ է, և Երևանի տարածքային կենտրոնների կողմից անմրցունակ անձինք հավաստագրերով ուղղորդվում են դեպի հուշագիր կնքած կազմակերպություններ:

Հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցումը կազմել է 3.2 մլն դրամ կամ նախատեսվածի 2.5%-ը: Նախատեսված 2301 անձի փոխարեն ծրագրում ընդգրկվել է աշխատաշուկայում անմրցունակ 1000 անձ, քանի որ ծրագրի իրականացումը սկսվել է 2014 թվականի հուլիս ամսից: Բացի այդ, ծրագրում ընդգրկվողների թիվը փոքր է աշխատաշուկայում հարմար աշխատանքի սակավության պատճառով՝ հատկապես մարզերում:

*Բնակարանային ապահովման* խմբի ծրագրերին ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 499.8 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Միջոցներն ուղղվել են զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքների բնակարանով ապահովմանը և բնակարանային պայմանների բարելավմանը: Նախորդ տարի այս նպատակով տրամադրվել էր շուրջ 2 մլրդ դրամ: 2013 թվականին միջոցներ էին հատկացվել նաև երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարության նպատակով՝ 641.1 մլն դրամի չափով: Նշված հանգամանքներով պայմանավորված՝ նախորդ տարվա համեմատ բնակարանային ապահովման ծախսերը նվազել են 81.1%-ով:

*Այլ դասերին չպատկանող սոցիալական հատուկ արտոնությունների* խմբում ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 10.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 97.6% կատարողական և 11%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, որը հիմնականում պայմանավորված է «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման ծախսերի աճով:

2014 թվականի պետական բյուջեից վետերանների պատվով ձարներին տրամադրվել է 400.5 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 79.2%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 23.5%-ով՝ պայմանավորված պատվով ձար ստացող վետերանների (Հայրենական Մեծ

պատերազմի հաշմանդամներ, մասնակիցներ) թվաքանակի նվազման (մահացության) հանգամանքով:

Փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներին տրամադրվել է 27.8 մլն դրամ, որը կատարվել է 97.3%-ով: Շեղումը պայմանավորված է փախստականների՝ կանխատեսվածից պակաս թվով: Ծրագրի շրջանակներում հատկացվող գումարը նախատեսվում է փախստականների բնակվելու հետևանքով կացարանների կրած վնասի փոխհատուցման համար: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 32.7%-ով, որը պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ:

Փախստականների կեցության խնդիրների լուծման նպատակով 2014 թվականին տրամադրվել է 19 մլն դրամ (81.1%), որի միջոցով իրականացվել է ժամանակավոր ապաստան հայցող փախստականների սպասարկումը՝ կացարանի, սննդի և այլ ծառայությունների տրամադրման միջոցով: Ժամանակավոր ապաստան հայցող փախստականների սպասարկումը կատարվում է «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ի միջոցով: 2014 թվականի ընթացքում սպասարկվել են 37 ապաստան հայցողներ՝ նախատեսված 40-ի դիմաց, որոնք ապահովվել են միջին հաշվով 93 օր կեցությամբ՝ նախատեսված 150 օրվա փոխարեն: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.8%-ով:

ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածի 1-ին մասով սահմանված պարգևավճարները կազմել են 8.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.4%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.9%-ով պայմանավորված է համապատասխան շահառուների թվի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայությունների շրջանակներում 55.5 մլն դրամ պետական աջակցություն է ցուցաբերվել «Հանս Քրիստիան Կոֆոեդ» ՀԿ-ին, որի միջոցով իրականացվել է 100 անօթևանների շուրջօրյա խնամք և սպասարկում: Այս ծախսերը կատարվել են 99%-ով և նախորդ տարվա համեմատ աճել 8%-ով, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

ՎՏԲ-Հայաստան ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների՝ նախկին ԽՍՀՄ խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են 1.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.5 անգամ, որը պայմանավորված է 2013 թվականին ավանդատուների շրջանակը իրավական ակտերով փոփոխվելու հետևանքով ֆինանսական միջոցները ՀՀ պետական բյուջեում վերաբաշխում կատարելու միջոցով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ տեղափոխելու և այնտեղից ֆինանսավորվելու հանգամանքով:

Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայություններին տրամադրվել է 41 մլն դրամ, որն իրականացվել է նախատեսված ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 40.2%-ով, որը պայմանավորված է սոցիալական բնակարանների թվի ավելացման հանգամանքով:

Այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանության խմբի ծրագրերի գծով 2014 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 26 մլրդ դրամ կամ նախատեսվածի 85.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման համար նախատեսված միջոցների պակաս օգտագործմամբ: 2013 թվականի համեմատ խմբի ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

Հաշվետու տարում 1.8 մլրդ դրամ են կազմել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության պահպանման ծախսերը, որոնք կատարվել են 95.6%-ով: Խնայողությունը հիմնականում պայմանավորված է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության ծախսերի տնտեսումներով, որոնք հիմնականում առաջացել են ծառայության աշխատակազմի տարածքային 14 բաժիններն ինտեգրված տարածքներ տեղափոխելու արդյունքում: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 15.3%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերը կատարվել են 84.4%-ով և կազմել շուրջ 1.8 մլրդ դրամ: Ծրագրի գծով շեղումը կապված է նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների պահպանման ծախսերի տնտեսման, ինչպես նաև համալիր սոցիալական ծառայության տարածքային կենտրոններում տնտեսական սպասարկում իրականացնող անձնակազմը ապրիլ ամսից համալրելու հետ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 13.3%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ և համալիր կենտրոնների պահպանման ծախսերը 2014 թվականից ամբողջությամբ ֆինանսավորելու հանգամանքով, քանի որ վերջիններս լիարժեք գործունեություն են ծավալել 2014 թվականից սկսած:

Հաշվետու տարում 407.9 մլն դրամ տրամադրվել է սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման նպատակով, որն իրականացվել է 98.6%-ով: 2013 թվականի նկատմամբ նշված ծախսերն աճել են 48.9%-ով, որը պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության և ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի Հայաստանյան գրասենյակի միջև կնքված ենթահամաձայնագրերի շրջանակներում հատկացվող ֆինանսական աջակցությունը կազմել է 39 մլն դրամ՝ ապահովելով 95% կատարողական, որը պայմանավորված է պլանավորված գործուղումների և որոշ աշխատանքների չկայացմամբ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 3.6 անգամ, որը պայմանավորված է ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությանն ամրագրված շենքերի վերանորոգման աշխատանքների կատարմամբ, ինչպես նաև ծառայությանը ենթակա «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի՝ սիրիահայերի համար նախատեսված սենյակների վերանորոգման աշխատանքներով և գույքի ձեռքբերմամբ:

2014 թվականից սկսել է գործել ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության և Նիդերլանդների անվտանգության և արդարադատության նախարարության միջև կնքված համաձայնագրի (Նիդերլանդներից վերադարձող Հայաստանի քաղաքացիներին վերաինտեգրման օգնության շրջանակներում խորհրդատվության և ուղղորդման ծառայության մատուցման մասին) դրամաշնորհային ծրագիրը: Ծրագիրը նախատեսված է Նիդերլանդներից հարկադիր վերադարձող Հայաստանի քաղաքացիներին վերաինտեգրման շրջանակներում փոքր բիզնես սկսելուն կամ աշխատաշուկա մուտք գործելուն աջակցելու, ուսումնական կամ մասնագիտական վերապատրաստման, սոցիալական, իրավական, բժշկական աջակցության, ժամանակավոր կացարանի տրամադրման, օդանավակայանում դիմավորման և անահատական այլ կարիքների համար: 2014 թվականին ծրագրի շրջանակներում ծախսվել է 6.4 մլն դրամ կամ նախատեսվածի 20.6%-ը, որը պայմանավորված է վերադարձած անձանց փաստացի քանակով:

*Այլ դասերին չպատկանող՝ սոցիալական պաշտպանությանը տրամադրող օժանդակ ծառայությունների* դասի ծախսերը կազմել են ավելի քան 21.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 85.2%-ը, որը հիմնականում պայմանավորված է պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման համար նախատեսված միջոցների պակաս օգտագործմամբ: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն ավելացել են 4.7%-ով՝ հիմնականում պայմանավորված ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարման ծախսերի աճով:

2014 թվականին պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման ծրագրին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 14 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 79.7%-ը և 6.5%-ով զիջել են նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված շահառուների փաստացի թվով:

Փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվության կուտակման նպատակով տրամադրված 46.7 մլն դրամն օգտագործվել է «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ից փախստականների վերաբերյալ արխիվային տեղեկատվության ձեռքբերման նպատակով՝ ապահովելով 89.8% կատարողական, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձի ֆոնդի տնտեսմամբ: 2013 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 1.8%-ով:

Բժշկասոցիալական փորձաքննության (ԲՄՓ) ձևաթղթի տպագրության ծառայությունների ձեռքբերման և սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների (ՍԾՏԳ) ձևաթղթերի տպագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով հաշվետու տարվա ընթացքում տրամադրվել է համապատասխանաբար 3.3 մլն դրամ և 10.8 մլն դրամ: Տնտեսումների արդյունքում նշված ծախսերը կատարվել են համապատասխանաբար 80.2%-ով և 77.8%-ով: 2013 թվականի համեմատ առաջին ծրագրի ծախսերն էապես չեն փոփոխվել, իսկ երկրորդի գծով ծախսերն աճել են 36.9%-ով՝ հիմնականում կապված ձևաթղթերի գների բարձրացման հետ:

Մեթոդաբանական ձեռնարկների մշակման, հետազոտությունների անցկացման և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 89 մլն դրամ՝ ապահովելով 99.5% կատարողական: Նախորդ տարվա համեմատ

նշված ծախսերն աճել են 3.6%-ով, ինչը պայմանավորված է մեթոդաբանական ձեռնարկների մշակման, հետազոտությունների անցկացման և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստման ծավալների ավելացմամբ:

Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստների, պարզևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների իրականացմանը տրամադրվել է 1.6 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրված ծախսերի 90.9%-ը, որը տնտեսումների արդյունք է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 9%-ով աճը պայմանավորված է կենսաթոշակների և նպաստների ծախսերի աճով:

Հանրային իրազեկման միջոցառումների իրականացմանը տրամադրվել է 20.9 մլն դրամ, որը կատարվել է 80.3%-ով՝ պայմանավորված մրցույթի արդյունքում գնման ենթակա ապրանքների գների նվազմամբ, ինչպես նաև որոշակի տպագրական աշխատանքների գծով գնման պահանջ չլինելու հանգամանքով: Նշված պատճառով տվյալ ծախսերը նվազել են նաև նախորդ տարվա համեմատ՝ 11.7%-ով:

2014 թվականին պետական բյուջեից ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարը կազմել է 4.8 մլրդ դրամ, որը կատարվել է 100%-ով: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն ավելացել են 41.5%-ով, ինչը պայմանավորված է ինչպես նախորդ տարվա պարտավորությունները 2014 թվականին մարելու, այնպես էլ նպաստների միջին չափերի աճի հանգամանքներով (կապված նվազագույն և միջին աշխատավարձերի աճի հետ):

Ընտանեկան նպաստի և դրամական օգնության տրամադրման հետ կապված վարչարարական ծառայություններին տրամադրվել է 14.4 մլն դրամ: Տնտեսումների արդյունքում ծախսերը կատարվել են 75.8%-ով և 12.1%-ով նվազել նախորդ տարվա համեմատ:

Ժամանակավոր անաշխատունակության թերթիկների տպագրության ծախսերը կազմել են 7 մլն դրամ, որը կատարվել է 32.3%-ով և 36.6%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: Տնտեսումը պայմանավորված է ձևաթղթերի անհրաժեշտ թվաքանակի պահանջով, իսկ նախորդ տարվա նկատմամբ ծախսերի նվազումը պայմանավորված է ձևաթղթերի պահանջի և տպագրության հետ կապված ծախսերի նվազմամբ:

Կենսաթոշակի նշանակման և վճարման համար անհրաժեշտ ձևաթղթերի տպագրությանը տրամադրվել է 1.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 55.1%-ը և 65.3%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: Տնտեսումը պայմանավորված է ձևաթղթերի մնացորդի առկայությամբ, ինչպես նաև տպագրությունն ավելի մատչելի գնով իրականացնելու հանգամանքով: Նախորդ տարվա նկատմամբ ծախսերի աճը պայմանավորված է որոշ ձևաթղթերի պահանջի ավելացմամբ:

Թրաֆիքինգի գոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների մատուցման նպատակով նախատեսված միջոցներն օգտագործվել են 100%-ով և կազմել 17.2 մլն դրամ: Ծրագիրն իրականացվում է «Ամբոր» ՀԿ-ի հետ համաֆինանսավորման սկզբունքով: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 159.4%-ով, քանի որ 2013 թվականին փոխհատուցվել էին միայն «Ամբոր» ՀԿ-ի վարձակալած տարածքի վարձակալության ծախսերը, 2014 թվականից ֆինանսավորվել են նաև 14 աշխատողների աշխատավարձերը:



Հաշվետու տարում 7 մլն դրամ է տրամադրվել գինվորական կենսաթոշակառուների տեղեկատվական համակարգի ներդրման, վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին, որը կատարվել է 99.3%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների կրթական կարիքների գնահատման, դրանց համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրման համար նախատեսված միջոցները, որոնք կազմում են 4.6 մլն դրամ, չեն օգտագործվել:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 355.4 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ դրանց 33%-ով աճը պայմանավորված է սոցիալական պաշտպանության ոլորտում վարվող էլեկտրոնային համակարգերի (բազանների) ավելացմամբ:

Կենսաթոշակառուների հաշվառման միասնական տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 42 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ ծախսերի 75%-ով աճը պայմանավորված է «Էլեկտրոնային կենսաթոշակ» համակարգի ծրագրային հնարավորությունների ընդլայնման հանգամանքով:

Սոցիալական ապահովության պետական ծառայության տեղեկատվական ներքին պորտալի սպասարկման գծով 2014 թվականին բյուջեով առաջին անգամ նախատեսված 18.2 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է:

«ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման վճարման հետ կապված ծառայությունների համար նախատեսված միջոցները նույնպես նախատեսված ծավալով օգտագործվել են՝ կազմելով 17.3 մլն դրամ:

Ջոհված՝ հետմահու Հայաստանի ազգային հերոսների և Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի անդամներին տրվող պարգևավճարի վճարման հետ կապված ծառայությունների ծախսերը կազմել են 893.6 հազ. դրամ կամ նախատեսվածի 48.1%-ը: Տնտեսումը պայմանավորված է ծրագրի պակաս իրացման հետ, ինչպես նաև վճարումների որոշակի մասը բանկային համակարգով (անվճար) իրականացնելու հանգամանքով:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների վճարման հետ կապված ծառայությունների ծրագրի շրջանակներում տրամադրվել է 425.7 մլն դրամ ապահովելով 99.5% կատարողական:

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի վճարման հետ կապված ծառայությունների ծրագրի շրջանակներում տրամադրվել է 36.9 մլն դրամ՝ ապահովելով 98.9% կատարողական:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարման հետ կապված ծառայությունների ծրագրի շրջանակներում տրամադրվել է 54.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 53.2%-ը, որը

պայմանավորված է փոստային և բանկային ծառայությունների համար նախատեսված միջոցների տնտեսմամբ, ինչպես նաև վճարումների որոշակի մասը բանկային համակարգով (անվճար) իրականացնելու հանգամանքով:

Գործազրկության նպաստի վճարման հետ կապված ծառայությունների ծրագրի շրջանակներում տրամադրվել է 8.5 մլն դրամ՝ ապահովելով 92.2% կատարողական:

Նախորդ տարի վերը նշված 6 ծրագրերն իրականացվել են Սոցիալական ապահովության առանձին ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների ծրագրի միջոցով, որի շրջանակներում ծախսերը կազմել էին 538.8 մլն դրամ, իսկ 2014 թվականին նշված 6 ծրագրերի շրջանակներում ընդհանուր առմամբ կատարվել են 544 մլն դրամի ծախսեր:

Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսության աջակցության իրականացման ապահովմանը տրամադրվել է 7.4 մլն դրամ՝ ապահովելով 78.6% կատարողական, որը պայմանավորված է «Զբաղվածության մասին» ՀՀ նոր օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերը 2014 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակներում ընդունվելու արդյունքում ծրագիրը 2014 թվականի հուլիս ամսից սկսելու հանգամանքով: Ծրագիրն իրականացվում է 2014 թվականից:

Աջակցությունը կենսաթոշակային իրազեկման և ֆինանսական գրագիտության բարձրացման գործընթացին կազմել է 45 մլն դրամ՝ ապահովելով 92.6% կատարողական: 2013 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 2.3 անգամ, որը հիմնականում պայմանավորված է աշխատանքների ծավալների, աշխատողների թվաքանակի, աշխատավարձի և այլ ծախսերի ավելացման հանգամանքով:

Աջակցությունը ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի և անձնակազմի կարողությունների զարգացման նոր տեղեկատվական տեխնոլոգիաների գործիքների ներդրմանը կազմել է 107.4 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական:

ՀՀ աշխատանքի ել սոցիալական հարցերի նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին «Երեվանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի տարածքում անկողնային խնամք ստացող անձանց սպասարկման նպատակով կառուցվելիք նոր մասնաշենքի շինարարական աշխատանքների իրականացմանը տրամադրվել է 161.3 մլն դրամ՝ ապահովելով 99.6% կատարողական:

### ***Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր***

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից օգտագործվել է 47 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.9%-ը: Տրամադրված միջոցներից 32.8 մլրդ դրամն ուղղվել է ընթացիկ ծախսերին՝ կազմելով նախատեսվածի 98.7%-ը, 14.2 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին՝ ապահովելով 99.6% կատարողական: 2013 թվականի համեմատ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի ծախսերն աճել են 8.8%-ով:

**ՀՀ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐՂԸ**

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեն կատարվել է 90.3 մլրդ դրամ պակասուրդով՝ կազմելով ճշտված ծրագրով նախատեսված 105.7 մլրդ դրամի 85.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարման հետ կապված՝ վարկային միջոցները պակաս ստանալու հանգամանքով: Նշենք, որ 2013 թվականին ՀՀ պետական բյուջեն կատարվել էր 71.5 մլրդ դրամ պակասուրդով, այսինքն՝ 2013 թվականի համեմատ պակասուրդի մեծությունն աճել է 26.2%-ով: Պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը 2014 թվականին կազմել է 2%՝ կանխատեսված 2.34%-ի<sup>12</sup> և 2013 թվականի 1.7%-ի դիմաց:

Հաշվետու տարվա ընթացքում պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են շուրջ 70 մլրդ դրամ՝ նախատեսված 63.8 մլրդ դրամի դիմաց: Նշենք, որ նախորդ տարի նշված ցուցանիշը կազմել էր -10.9 մլրդ դրամ:

Ներքին աղբյուրներում շուրջ 15 մլրդ դրամ (100%) են կազմել փոխառու զուտ միջոցները: Ներքին պետական պարտքի կառավարման նպատակների շրջանակներում 2014 թվականի ծրագրով նախատեսվում էր գանձապետական պարտատոմսերի հաշվին բյուջեի պակասուրդ ֆինանսավորել 18 մլրդ դրամով, որը տարվա ընթացքում ճշտվեց՝ սահմանվելով 16.7 մլրդ դրամ: Տարվա ընթացքում նախատեսվում էր տեղաբաշխել 107.5 մլրդ դրամ ծավալով պարտատոմսեր և մարել 80.8 մլրդ դրամի պարտատոմսեր: Բացի թողարկումների ծրագրից նախատեսվում էր շարունակել նաև ամենամսյա հետգումումների քաղաքականությունը: Գանձապետական պարտատոմսերով դեֆիցիտի ֆինանսավորման փաստացի ցուցանիշը կազմել է 16.7 մլրդ դրամ՝ 80.5 մլրդ դրամ ծավալով պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված 79.6 մլրդ դրամ հասույթի և 62.96 մլրդ դրամի մարման պարագայում: Տարվա վերջին արտարժույթի շուկայում գրանցված տատանումները և դրամավարկային քաղաքականության խստացումն էապես կրճատեցին պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը: Դրա հետևանքով դեկտեմբեր ամսին կարճաժամկետ պարտատոմսերի բոլոր աճուրդներին գրանցվեց գրոյական պահանջարկ:

2014 թվականի սկզբին ևս ՀՀ ֆինանսների նախարարությունը հրապարակել է պետական պարտատոմսերի տեղաբաշխումների տարեկան օրացույցը՝ պարտատոմսերի շուկայի մասնակիցների համար հստակեցնելով պարտատոմսերի տեղաբաշխման օրերը՝ ըստ ժամկետայնության: Թեև այս պարագայում նվազում է թողարկողի ձկունությունը՝ պարտատոմսերի շուկայում նպաստավոր պայմանների ժամանակ լրացուցիչ տեղաբաշխումների իրականացման առումով, մյուս կողմից հրապարակային և թափանցիկ գործելակերպը նպաստում է պարտատոմսերի շուկա նոր ներդրողների ներգրավմանը:

2014 թվականին թողարկվել են 2.04 մլրդ դրամ ծավալով պետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր, որոնցից տեղաբաշխվել են 690.3 մլն դրամի պարտատոմսեր, մուտքը կազմել է 691.9 մլն դրամ:

2014 թվականին ներքին պետական պարտքը բնութագրող հիմնական ցուցանիշները հետևյալն են. շրջանառության մեջ եղած պետական գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունը

<sup>12</sup> ՀՀ 2014 թվականի բյուջետային ուղերձում կանխատեսված ցուցանիշ:

կազմել է 13.49%` 2013 թվականի 13.96%-ի դիմաց, պարտքի ժամկետայնությունը` 2003 օր (2013թ.` 1901 օր), մարման բեռի բաշխվածությունը մինչև 2032 թվականն է: Տարեվերջին շրջանառության մեջ եղած ՀՀ պետական գանձապետական պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով կազմել է 289.9 մլրդ դրամ (2013թ.` 274.2 մլրդ դրամ): Ընդ որում, շրջանառության մեջ գտնվող կարճաժամկետ պարտատոմսերի ծավալը կազմել է 12.5 մլրդ դրամ կամ 4.3% (2013թ.` 22.9 մլրդ դրամ կամ 8.3%), միջին ժամկետայնության պարտատոմսերինը` 150.8 մլրդ դրամ կամ 52.0% (2013թ.` 147.4 մլրդ դրամ կամ 53.8%), երկարաժամկետ պարտատոմսերինը` 125.5 մլրդ դրամ կամ 43.3% (2013թ.` 102.8 մլրդ դրամ կամ 37.5%), խնայողական պարտատոմսերինը` 1.1 մլրդ դրամ կամ 0.4% (2013թ.` 1.1 մլրդ դրամ կամ 0.4%):

2014 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին պետական պարտքն անվանական արժեքով կազմել է 311.7 մլրդ դրամ, այդ թվում`

- Ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսերի ծավալը կազմել է 289.4 մլրդ դրամ.
- Ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 19.4 մլրդ դրամ (40.8 մլն ԱՄՆ դոլար).
- Ռեզիդենտ բանկից ներգրավված առևտրային վարկի ծավալը կազմել է 1.9 մլրդ դրամ (4.0 մլն ԱՄՆ դոլար).
- ՀՀ կառավարության կողմից տրամադրված ներքին երաշխիքների ծավալը կազմել է 1.0 մլրդ դրամ (2.1 մլն ԱՄՆ դոլար):

Մուրհակների մարման նպատակով նախատեսված շուրջ 35.4 մլն դրամի վճարումներն ամբողջությամբ կատարվել են: Ամբողջ ծավալով վճարվել է նաև «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ից ստացված վարկի մարման գծով ծրագրված գումարը` կազմելով 1.6 մլրդ դրամ:

Հաշվետու տարվա պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներքին ֆինանսական զուտ ակտիվները կազմել են շուրջ 55.0 մլրդ դրամ` տարեկան ճշտված ծրագրով նախատեսված 48.8 մլրդ դրամի դիմաց:

Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերմանն ուղղվել է 5.8 մլրդ դրամ, որը կատարվել է 98.9%-ով: Նշված գումարից շուրջ 4.1 մլրդ դրամը հատկացվել է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի, 995.4 մլն դրամը` «ՖՈԿ» ՍՊԸ-ի, 765.1 մլն դրամը` «Սալսա Դիվելոպմենթ» ՓԲԸ-ի և 15.8 մլն դրամը` «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կապիտալում ներդրման նպատակով:

2014 թվականին ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 38.6 մլրդ դրամի վարկեր` կազմելով նախատեսվածի 92.4%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է արտաքին աղբյուրներից ստացվող վարկային և դրամաշնորհային նպատակային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի շրջանակներում տնտեսավարող սուբյեկտներին տրամադրվող վարկերի գծով: Նշված վարկային ծրագրերի շրջանակներում տրամադրվել են 4.5 մլրդ դրամի վարկեր` կազմելով նախատեսվածի 67.9%-ը: Նշված գումարից 3.6 մլրդ դրամը (նախատեսվածի 63%-ը) տրամադրվել է ՎՋՄԲ աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի, 893.9 մլն դրամը (88.1%)` Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ

իրականացվող Գյուճի-2 ենթակայանի վերականգնման ծրագրի, 4.8 մլն դրամը (100%)՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի ծրագրի շրջանակներում: Ղանիական թագավորության աջակցությամբ իրականացվող Գյուղական կարողությունների ստեղծում դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 721.8 մլն դրամը չի օգտագործվել:

2014 թվականին 25.0 մլրդ դրամ է ստացվել տրամադրված ներքին վարկերի վերադարձից՝ կազմելով նախատեսվածի 101.3%-ը: Նշված գումարից 15.1 մլրդ դրամը ստացվել է 2009 թվականին Ռուսաստանի Ղաշնության հատկացրած վարկային միջոցների հաշվին տրամադրված վարկերի վերադարձից:

Հաշվետու տարում պետական բյուջեի ազատ միջոցներից նախատեսված 71.8 մլրդ դրամի դիմաց զուտ օգտագործումը կազմել է 74.4 մլրդ դրամ, որից 48.6 մլրդ դրամը՝ կայունացման դեպոզիտային հաշվից, 28.3 մլրդ դրամը՝ ելքերի ֆինանսավորմանն ուղղվող 2014 թվականի տարեսկզբի ազատ միջոցներից, միաժամանակ 2.6 մլրդ դրամով ավելացել են արտաբյուջետային միջոցների հաշիվների մնացորդները:

2014 թվականին պետական բյուջեի պակասուրդն *արտաքին աղբյուրներից* ֆինանսավորվել է ավելի քան 20.3 մլրդ դրամով՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 48.6%-ը:

Արտաքին փոխառու միջոցներից բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը կազմել է շուրջ 68.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 81.3%-ը, որը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող նպատակային ծրագրերի համար ստացված վարկերի ծավալով:

Տարվա ընթացքում արտաքին աղբյուրներից ստացվել են ավելի քան 106.7 մլրդ դրամի վարկային միջոցներ՝ կազմելով ծրագրված գումարի 87%-ը: Ստացված վարկերից շուրջ 68.7 մլրդ դրամը ստացվել է նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում՝ նախատեսված 84.6 մլրդ դրամի դիմաց, 30.4 մլրդ դրամը ստացվել է ՀԲ Ջարգացման քաղաքականության իրականացման երկրորդ ծրագրի շրջանակներում՝ նախատեսված 20.3 մլրդ դրամի դիմաց և 7.7 մլրդ դրամը՝ ԱԶԲ ենթակառուցվածքների կայունության աջակցման ծրագրի շրջանակներում, որը պետական բյուջեով նախատեսված չէր:

Արտաքին պարտավորությունների մարմանն ուղղվել է շուրջ 38 մլրդ դրամ, որը կազմել է տարեկան ծրագրի 99.8%-ը: Մասնավորապես՝ 24.4 մլրդ դրամը հատկացվել է Արժույթի Միջազգային Հիմնադրամի, 8.2 մլրդ դրամը՝ Ջարգացման Միջազգային Ընկերակցության, 2.0 մլրդ դրամը՝ այլ միջազգային կազմակերպությունների, 3.3 մլրդ դրամը՝ օտարերկրյա պետությունների նկատմամբ ունեցած պարտավորությունների մարմանը:

Արտաքին ֆինանսական ակտիվների գծով բյուջեի պակասուրդը ֆինանսավորվել է 113.4%-ով՝ կազմելով 48.4 մլրդ դրամ: Մասնավորապես՝ ամբողջությամբ տրամադրվել է ԼՂՀ-ի միջպետական վարկը, որը կազմել է 42.8 մլրդ դրամ: Վրաստանի կողմից Հայաստանի նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների մարումը նույնպես կատարվել է նախատեսված ծավալով՝ կազմելով 388.9 մլն դրամ:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարմանն ուղղվել է շուրջ 881.5 մլն դրամ կամ նախատեսվածի 99.5%-ը:

Ավելի քան 107.6 մլն դրամ է տրամադրվել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալի համալրման նպատակով, որը կատարվել է 100%-ով:

Հաշվետու տարում 5.1 մլրդ դրամով ավելացել է արտաքին աղբյուրներից ստացված վարկային և դրամաշնորհային միջոցների մնացորդը, որից 228.7 մլն դրամով՝ արտաբյուջետային միջոցների մնացորդների հաշվին:

2014 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 1,797.9 մլրդ դրամ (3,785.2 մլն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 39.7%-ը՝ 2013 թվականի 1,581.6 մլրդ դրամի (3,899.1 մլն ԱՄՆ դոլարի) և 37.0%-ի դիմաց: Պարտքի հիմնական մասը՝ 3,345.3 մլն ԱՄՆ դոլարը, ՀՀ կառավարության պարտավորություններն են, շուրջ 440.0 մլն ԱՄՆ դոլարը՝ ՀՀ կենտրոնական բանկի վարկային պարտավորությունները:

Հաշվետու տարում ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը կազմել է 266.0 մլն ԱՄՆ դոլար, որից 162.7 մլն ԱՄՆ դոլարը՝ կառավարության և 103.3 մլն դոլարը՝ ԿԲ պարտավորությունների գծով: Արտահանման նկատմամբ արտաքին պետական պարտքի սպասարկման հարաբերակցությունը կազմել է 8.1%, նախորդ տարվա 14.5%-ի դիմաց, իսկ պետական բյուջեի եկամուտների նկատմամբ՝ 9.7%, նախորդ տարվա 15.5%-ի դիմաց<sup>13</sup>:

2014 թվականի վերջի դրությամբ արտաքին պետական պարտքի զուտ ներկա արժեքի ցուցանիշը (ՋՆԱ) նվազել է՝ 2013 թվականի 3740.8 մլն ԱՄՆ դոլարի դիմաց կազմելով 2981.4 մլն ԱՄՆ դոլար: 2014 թվականին ՀՀ արտաքին պետական պարտքի զուտ ներկա արժեքի (ՋՆԱ) հաշվարկման մեթոդաբանությունը փոփոխվել է ԱՄՀ-ի հետ գործող ծրագրին համապատասխան, և որպես զեղչման տոկոսադրույք է կիրառվել 5% դրույքաչափը: Նվազել է նաև ՋՆԱ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 2013 թվականի 35.9%-ի դիմաց կազմելով 27.4%, ինչպես նաև ՋՆԱ/արտահանում ցուցանիշը՝ 2013 թվականի 136.8%-ից հասնելով 90.5%-ի:

<sup>13</sup> 2013 թվականին գրանցվել էր ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկում / արտահանում և ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկում / պետական բյուջեի եկամուտներ ցուցանիշների կտրուկ աճ, որը պայմանավորված էր ռուսական 500 մլն ԱՄՆ դոլար վարկի վաղաժամկետ մարումով: 2013 թվականի ցուցանիշները բերված են՝ չեզոքացնելով այդ գործոնի ազդեցությունը: